

ԳԱՂԿՐԹՈՒԹՅԱՆ

ԴԱՍԱԳՐՖԵՐ

ՅԵՎՀԵԽՈՆԱՐԿՆԵՐ

# ԴԱՍԱԳԻՐՔ

ԳՅՈՒՂԻ ԿՈՄՑԵՐԻՏԱԿԱՆ

ՔԱՂԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

ՊՐԵԿ. Ը.

Թարգմ. Գ. Վոնկանյան

ՀԱՅԵՆԱՐԿԱՆՈՒ Ե ՀԱՅ. 1436Մ-Ի ԿԿ-Ի ԱԳԻՏՈՐՈՌԱԲԻՆԻ  
ԿՈՐԼՈՒՑ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ԵԵՐԵՎԱՆ, 1928

## ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՈԳՏՎԵԼ ԳՐՔԻՑ

1. Այս զիրքը հատկացված և քաղընթերցումների և ինքնակրթության կոմիերիտական խմբակներում պարագող ընկերների համար: Դիրքը կարելի լի ողպագութել նուև քաղզրագիտության կոմիերիտական նախացիոնար զարգացներուն:

2. Քաղընթերցումների խմբակներում ամենից լավ և պարագաներները կատարել միասնական բարձր: Ընթերցանության և զրբի առաջին զբաւցները վերլուծության լենթարկելու միջոցով: Բարձր ընթերցանությունը պետք և կատարեն հերթով: Խմբակի այն անգամները, վորոնք լավ կարգացնեն են:

3. Պետք և կարգալ վոչ թե ամբողջ զրուցը մի անգամից, այլ այն առանձին հատվածների բաժանելով: Հատվածը կարգալուց հետո պետք և ստուգել թե արդյոք նրա բոլոր անգամները հասկացել են կարգացածը և միասին վերլուծության լենթարկել անհատ կանալի տեղերն ու բառերը:

4. Զրուցը վոչ միայն պետք, և կարգալ այլի վերլուծության լենթարկել կարգացածը և համեմատության մեջ դնել այն ամենի հետ: Ինչ վոր կլանքից խմբակի անգամներին հայտնի լի: Դրա համար պետք և խմբակի անգամներին առաջարկություն տալ զրուցի համար տեղական նյութեր հավաքել: Հավաքված նյութերն ողագործման են լենթարկվում հաջորդ պարագաների ընթերցանության մասնակի:

# ԴԱՍԱԳԻՐՔ

ԳՅՈՒՂԻ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ


ՔԱՂԱԿԱՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ Ա.

Թարգմ. Գ. Վոսկանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Ե ՀՀԲ. ԼԵՖԵՎՐԻ ԿԱ- ԱԴՐԵԳՐՈՎԱԿԱՆ ԿՈՎՄԱՆ



Հը. № 897. Գըաւեպվար № 1599 (բ): Տիրութ 40:0

Թիմակառի տառջին տպարան Վաղարշապատում

Պատգեր № 289



Վ. Ի. Ալիքանով—Լենին

---



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐ ԽՆԴԻՐԸ—ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏՈՐԵՆ  
ԿԱՌՈՒՑԵԼՆ Ե

Խորհրդավիճն ։ Սոցիալիստական Հանրապետությունների միությունն ամբողջ աշխարհում առաջմ այն միակ լերկիրն ե, զորտեղ իշխանությունը բանվոր գասակարգին ե պատկանում։

Մլուս բոլոր լերկրներում կապիտալիստներն են իշխում աշխատավորների վրա և ճնշում ու շահագործում են հարյուրավոր միլիոն մարդկանց։

Սակայն ինչժեմն ե կապիտալիստների ուժը։ Ինչու իւ կապիտալիստներին հաջողվում ապրել բանվորների և գյուղացիների աշխատանքով։

Կապիտալիստների ուժը—արտագրուրյան միջոցների մասնավոր սեփականուրյան մեջ եւ կապիտալիստական լերկրներում արտադրության բոլոր միջոցները՝ հողը, անտառները, գործարանները, լերկաթուղիները, եթեկարուկայանները—պատկանում են վոչ թե ամբողջ հասարակությանը, այլ առանձին սեփականատերերին—կապիտալիստներին։

Հասարակության մեծամասնությունը չունի վոչ հող, վոչ մեքենաներ, վոչ դագգահներ, վոչ գործիքներ— մի խոսքով զուրկ ե այն բոլոր բաներից, վորոնց ոժանդակությամբ մարդիկ աշխատում են և վորոնք արտագրուրյան միջոցներ են կոչվում։ Ազդ մարդիկ վարձու բանվորներն են. նրանք ոժտված են միմիայն մի զույգ բանվորական ձեռքերով և ստիպված են իրենց բանվորական ուժը ծախել, իրենց աշխատանքը կապիտալիստներին տալ. Սեփականատիրոջը—կապիտալիստին պատկանող գործարանում աշխատելու իրավունք ունենալու համար, բանվո-

ըլ նրան տալիս և այն ամենը, ինչ վոր արտադրում և, ստանալով նրանից մի աղքատիկ որապահիկ:

Խոշոր սեփականատեր-կապիտալիստները միմիայն բանվորներին չե վոր կողոպտում են (շահագործում են), կապիտալիոմը քայլայում և նույնիսկ մանր սեփականատերերին՝ գլուղացիներին, տնայնագործներին, արհեստավորներին:

Մեքենայի միջոցով մեծ քանակությամբ ապրանքներ արտադրելը կապիտալիստներին ավելի եժան և նստում, քան մանր սեփականատերերին, վորոնք աշխատում են վոչ թե բարդ գործիքներով, այլ աշխատանքի նահապետական գործիքներով։ Խոշոր քանակությամբ գործարանային արտադրությունը մանր, տնայնագործական, ձեռքի արտադրությունից ավելի ձեռնառու չե։ Ձարրիկաներում և գործարաններում մշակվող ապրանքներն ավելի եժան են նստում, քան մանր ձեռնարկություններում, արհեստանոցներում և արտեխներում։ Այդ պատճառով ել խոշոր կապիտալիստները կարողանում են իրենց ապրանքները նույնպես ավելի եժան ծախել, քան մանր տնտեսությունները։

Մանր տնտեսությունների արտադրած ապրանքներն ավելի դժվար են վաճառվում։ Մանր արտադրությունը, խոշոր ձեռնարկությունների գորության գեպքում, ձեռնառու և շահավետ չե։ Մանր տնտեսությունները կապիտալիստական լերկություններում քայլայվում են, և մանր սեփականատերերը զրկվելով արտադրության միջոցներից, դառնում են պրոլետարեներ, վարձու բանվորներ։ Նրանք ստիպված են լինում գնալու և կապիտալիստներին սպասեանող գործարաններում ու խոշոր կալվածատիրական կամ կուլակային տնտեսություններում աշխատելու։

Կապիտալիստական հասարակության մեջ նրա մի մասը հընարավորություն ունի ապրելու ի հաշիվ մյուս մասի կապիտալիստներն ապրում են բանվորների աշխատանքի հաշվին։ Ամբողջ հասարակությունը բաժանված է դասակարգերի։

Կապիտալիստական կեղեքվողների և բանվորների աշխատանքով ապրողների դասակարգն եւ։

Ճիշտ ալդպես ել ուրիշի աշխատանքով են ապրում կալվածատերերը—հին ժամանակներում, ճորտատիրական իրավունքի ժամանակ, հողի խոշոր սեփականատերերը, վորոնք միաժամանակ հանդիսանում ելին նաև գլուղացիների սեփականատերեր։

Հասկանալի լի, վոր բանվորները չեն ցանկանում, վոր կապիտալիստներն իրենց (բանվորների) աշխատանքով հարստա-

նան։ Բանվոր դասակարգն ամեն կերպ կովում և իր հարստահարողների—կապիտալիստների դեմ, ձգտելով տապալելու նրանց տիրապետությունը։

Ծուսաստանում բանվոր դասակարգը կապիտալի իշխանությունը միանգամից չտապայից, կապիտալիստների և կարվածաւորների իշխանությունը տապալելու համար Ծուսաստանի բանվոր դասակարգը Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ տասնյակ տարիներ պալքարել է Բուրժուական իշխանության տապալումը Ծուսաստանում հեղությամբ տեղի չունեցավ, դրա համար զերագույն ջանքեր թափվեցին և մեծամեծ գոհեր արվեցին։ Յեզ այժմ, Հոկտեմբերյան Հեղափոխությունից տասը տարի անց, պալքարը բուրժուազիալի դեմ դեռևս չի դադարել։

Սակայն ինչի՞ և ձգտում բանվոր դասակարգը ի՞նչպիսի խնդիրներ և նա գնում իր առաջ։

Կոմունիստական կուսակցության և ամրող բանվոր դասակարգի հիմնական և զինավոր խնդիրը՝—սոցիալիզմը կառուցելն եւ։

Սոցիալիզմը—այն հասարակարգն ե, վորի ժամանակ չի լինելու արտադրության միջոցների մասնավոր սեփականություն՝ հողի, մեքենաների, գործարանների, լերկաթուղիների վերաբերյալ Բոլոր հարստությունները, արտադրության բոլոր միջոցները պատկանելու լին վոչ թե առանձին մասնավոր սեփականատերերի, այլ բոլոր մարդկանց։ Սոցիալիզմի ժամանակ հասարակությունը չի բաժանվելու հարուստների և աղքատների, ճնշողների և ճնշվողների, շահագործողների և շահագործվողների։ Սոցիալիզմի ժամանակ վերանալու լի մարդկանց՝ դասակարգերի բաժանվելը, այդ բաժանումը հենց այն ե, վոր հասարակության մի մասին հնարավորություն և տալիս ապրելու նրա մյուս մասի հշխատանքի հաշվին։ որինակ, կարվածատերն ապրում և իր հողը մշակող գլուղացու աշխատանքի հաշվին, կապիտալիստ գործարանատերը—իր գործարանում աշխատող բանվորների աշխատանքի հաշվին։ Մարդկի դասակարգերի լին բաժանվում այն պատճառով, վոր նրանց փոքրամասնությունը տիրապետում և արտադրության միջոցներին, իսկ մեծամասնությունը վոչինչ չունի, բացի իր բանվորական ձեռքերից։ Հասարակության այլպիսի բաժանումը հնարավորություն և տալիս փոքրաթիվ խուօր սեփականատերին ենիս կյանք վարել, առանց աշխատելու։ Մյուս կողմից մարդկության ահազին մեծամասնությունն իր ուժերից

վեր աշխատանք կատարելով, աղքատության և չքավորության մեջ և ապրում:

Սոցիալիզմի ժամանակ հասարակության ամեն մի աշխատունակ անդամ պարտավոր և կատարել ամբողջ հասարակության համար անհրաժեշտ վորոշ աշխատանք և հավասար աշխատանքի համար ստանալ հավասար քանակության արտադրանքներ:

Սոցիալիստական հասարակարգում չի կարող մարդկանց մի մասը մյուս մասին շահագործել, վորոշնետե գոյություն չի ունենալու արտադրության մասնավոր սեփականությունն:

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչումն ե կապիտալիստների ուժը:
2. Ի՞նչի համար ե պայքարում բանվոր դասակարգը:
3. Ի՞նչ ե սոցիալիզմը:

### ԳՅՈՒՂՈՒՄ ԽՈՇՈՐ ԿՈՎԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԲ

Ի՞նչ միջոցներով կարելի լի վոչնչացնել դասակարգերն ու մարդկանց՝ մնկը մյուսին ճնշելը, կոմունիստական կուսակցությունը ի՞նչ միջոցով և աշխատավորներին տանում դեպի սոցիալիզմը:

Անինը գրել ե. «Դասակարգերը վոչնչացնելու համար պետք և նախ տապալել կալվածատերերին և կապիտալիստներին»:

Բանվոր դասակարգը գլուղացիության հետ դաշնակցած, այդ խնդիրը լուծեց 1917 թվին. Նախ ամբողջ գլուղացիության հետ զաշնակցած նա տապալեց ցարին, ապա Հոկտեմբերին, հենվելով չքավոր գլուղացիության վրա, տապալեց նաև կապիտալի իշխանությունը. Սակայն ցարի, կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը տապալելով, կալվածատերերի հողերը, կապիտալիստների գործարանները, ֆարբիկաները և բանկերը խընթալով չեր նշանակում թե բոլոր խնդիրները լուծված են: «Դասակարգերը վոչնչացնելու համար լերկորորդը՝ հարկավոր և վոչնչացնել բանվորության և գլուղացիության մեջ լիդած տարրերությունը» (Անին):

Գլուղացիությունն իր կազմով միատարր չե. նա բազկացած և չքավորներից, միջակներից և կուլակներից: Չքավորդպուղացին ունի սովորաբար մի փոքրիկ հողակտոր (ամբողջ ընտա-

նիքի համար 1-2 հեկտար<sup>1)</sup>). չունի վոչ անասուն, վոչ ել ինվենտար։ Զչավոր-գյուղացին լերեք չի կարող միմիայն իր տնտեսությունից ստացվող յնկամուտով ապրել և ստիպված ե տարվամի մասն աշխատել որավարձով կուլակ-գյուղացու մոտ կամ քաղաքի գործարանում ու ֆաբրիկայում։ Զքավոր-գյուղացին համարյա հաց չի ծախում, քանի վոր իր զաշտից ստացվող բերքը չունիսի իր ընտանիքի կարիքները չի բավարարում։ Զքավոր-գյուղացին վոչ վոքի չի շահագործում, ուրիշի աշխատանքով չի ոգտվում։ Ընդհակառակը, չքավորն ինքն և կարլածատիրոջ շահագործմանը յնմիարկվում, հարստացնում և այն կուլակին, վորի մոտ նա աշխատում և, վարձով կամ կապալով նրանից հող, լըծկան և ինվենտար և վերցնում։ Գյուղացիության չքավոր մասն իր կացությամբ և շահերով ամենից մոտ և կանգնած բանվորդասակարգին։

Գյուղացիության մլուս մասը—միջակներն են։ Զքավոր-գյուղացին իր հողը մշակում և իր սեփական լծկանով և մեծ մասմբ հենց իր ինվենտարով։ Միջակն ավելի շատ ցանք և անում, քան չքավորը։ Սովորաբար Ռուսաստանի միջակ գյուղացին ցանում և 2-ից մինչև 6 հեկտար հող (նաևած թե վոր շրջանումն ե)։ Միջակը շատ հազվադեպ և ոգտվում ուրիշների աշխատանքով, այն ել աշխատանքի յեռուն ժամանակ՝ վարուցանքի, խոտհունձի և լերքը հնձելու որերին։ Միջակը հաց և արտադրում վոչ միայն իր և իր ընտանիքի համար, այլև ծախելու համար։ Ծիշած և, մեր միջակը քիչ հաց և ծախում։ ընդամենը լր ամրոջ բերքի 12—15% -ը։ Միջակ գյուղացու տնտեսությունը մանր ապրանքարին տնտեսություն եւ։

Կարվածատերերի հողի համար տըվող հարկերի և տուրքերի, կապի-ուալիստների շահագործման ներքո՝ միջակ-գյուղացիները ցարուան, ան կարգերի ժամանակ չենին կարողանում իրենց տնտեսությունը պահպանել և բարելավել։

Գյուղացիության մեծ մասը տարեցտարի ավելի լեր քարվում, իո՞ն հոր կորցնում, աղքատանում եր։

Միշիայն ունեսոր գյուղացիների մի չնշին մասը, ցարական կառավարության ոժանդակությամբ ի հաշիվ հարեանների քարքարման ամրացնելով իր տնտեսությունը, դառնում եր աշխարհակերպությակ, գյուղական կապիտալիստ, վորը բատրակներ եր վարձում և շահագործում չքավոր գյուղացիությանը։

1) Հեկտարը հավասար է 9/10 դեսիմատինի

Գլուղացիների մեծամասնությունը, ի հարկի, առաջ ել, կապիտալիստների և կալվածատերերի տիրապետության ժամանակ, վոչ թե շահագործողներ են յեզել, այլ՝ աշխատավորներ և վաստակավորներ։ Սակայն նրանք միաժամանակ հանդիսանում ելին իրեն սեփականատերներ և տնտեսատերեր։ Կապված լինելով իր մեկուսացած միանձնյա տնտեսությանը, գլուղացին չի կարողանում իր տնտեսության համար ոգտագործել այն բոլոր նվաճումները, վոր տալիս են զարգացած տեխնիկան և կուլտուրան։ Բաղաքներից և նրանց կուլտուրաններից հեռու գտնվելով, գլուղացին չափազանց յետամեաց կանք և վարում, կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը կուլտուրական քաղաքի և յետամեաց գլուղի միջն յեղած վեճն ավելի ու ավելի խորացնում եր, Այդ տարրերությունը և գլուղի յետամեացությունը վերացնելու համար պետք է կառուցել սոցիալիզմը, ալսինքն ալնպիսի հասարակարգ ստեղծել, վորտեղ վոչնչացված լինի մասնավոր սեփականությունը, վերացած լինի բանվորների և գլուղացիների միջն յեղած տարրերությունը, վորտեղ գլուղացին նույնպես խոշոր ձեռնարկության ալնպիսի մի աշխատավոր գառնա, ինչպիսին բանվոր՝ զործարանում և Փարբիկայում։ Սոցիալիզմը կառուցելու համար գլուղացիներին ազգպիսի աշխատավորներ պետք է դարձնել վոչ թե իր անձնական, մանր տնտեսության, այլ հասարակական—խոշոր սոցիալիստական տնտեսության համար։

Սակայն ինչ կերպ պետք է այդպես անել։ Միանձնյա, կըդղիացած, մանր գլուղացիական տնտեսությունից հաստրակական խոշոր տնտեսությանն անցնելը - անհամեմատ ավելի դժվար և անհրաժեշտաբար ավելի յերկարատե խնդիր է, քան կալվածատերերի և կապիտալիստների իշխանության տապալումը։

Այդ անցումը չի կարող տեղի ունենալ գլուղացիությանը ճնշման յենթարկելով։ Այդպիսի անցում կատարել կարելի յե, յերբ բանվոր դասակարգն ապացուցի գլուղացիությանը խոշոր հասարակական տնտեսության և կոլեկտիվ աշխատանքի առավելությունը։ Այդպիսի անցում կատարելու համար բանվոր դասակարգը գլուղացիության վրա ազդում ե վոչ թե ստիպողական միջոցներով, այլ համոզելով և խրախուսելով, գիտակցելով, վոր գլուղում վորքան ավելի բարձրանա չքավորների և միջակների կուլտուրական և քաղաքական մակարդակը, նրանք ալնքան ավելի կսկսեն հասկանալ խոշոր կոլեկտիվ տնտեսության առավելությունները, այնքան ավելի շուտ կսկսեն մեռնել գլուղացիների սեփականատիրական նախապաշարումները։

Մեր լերկիւը լի լի ահագին հարստություններով, ունի արդականդ հող, վորը հացի և գլուղատնտեսական ալ արտադրանքների առատ բերք և տալիս Խորհրդային Միության հողի ընդհերքում հարլուրավոր միլիարդ փթերով լերկաթ, ածուխ և նավթ և թագնված։ Այն ամենը, ինչ անհրաժեշտ և ժողովրդական տնտեսությունը բարձրացնելու համար՝ մեր լերկրում կա։

Մինչդեռ Ռուսաստանը հեղափոխությունից առաջ ուրիշ կապիտալիստական լերկրների հետ համեմատած լետամնաց և աղքատ մի լերկիր եր։

Սակայն թուն եր մեր ազգագության պատճառը։ Գլխավոր պատճառն այն եր, վոր մենք վաս ելինք ոգտագործում մեր հարստությունները։ Մարդկային մեծ աշխատանք և թափվում, իսկ դրանից ստացվող արդյունքը, ոգուտը (կամ ինչպես ասվում են աշխատանքի արտադրողականությունը) մեր լերկրում շատ ավելի փոքր և, քան արտասահմանում։ Այդ առաջանում և նրանից, վոր մենք դեռևս չենք կարողանում աշխատել այնպես, ինչպես պետքն ե—մեր աշխատանքը վատ և կազմակերպված։ Յեվ մենք հաճախ աշխատում ենք նախաջրենեղեղան ժամանակի աշխատանքի լետամնաց—մանավանդ գյուղատնտեսության մեջ—գործիքներով։ Իզուր և գատարկ տեղն ահազին աշխատանք և վատնվում։

Ամենից շատ ավելորդ աշխատանք և կատարվում մանը գյուղացիական տնտեսության մեջ։ Որինակ, Սյունիսկի նահանգում մանը տնտեսության մեջ մեկ հեկտար վարելանողի մշակման համար ծախսվում և 72 բանվորական որ։ Նույն նահանգում ավելի խոշոր տնտեսություններում մեկ հեկտար վարելանողի մշակման համար ծախսվում և միմիայն 37 բանվորական որ։ այսինքն համարյա լերկու անգամ պակաս։ Իսկ արտասահմանի խոր կալվածներում մեկ հեկտար հողի մշակությունը միմիայն 5—7 բանվորական որ և պահանջում։

Յեվ խոշոր տնտեսություններից անհամեմատ ավելի շատ բերք և ստացվում, քան մանը տնտեսություններից։

Մեր գյուղացիական տնտեսության տեխնիկան վատ և թուլլ Միլիոնավոր գյուղացիներ մինչև այժմ իրենց հողը վարում են արօրով, հողը լավ չեն պարարտացնում և ընտիր սերմեր չեն ցանում։ Գյուղատնտեսական աշխատանքների լերեք քառորդից ավելին կատարվում ե ձեռքով։ Հասկանալի լի, վոր այդպիսի տնտեսություն վարելով գյուղացու աշխատանքն ավելի փոքր արդյունք կտա։

Հայի բերքը մեր լերկում լերկու-լերեք անդամ պակաս ե, քան արտասահմանում:

Մեր գյուղատնտեսությունը բարելավելու համար անհրաժեշտ և անցնել հողը մեքենայով մշակելուն, լավ պարարտանյութ բանեցնել և ընտիր սերմեր ցանել:

Գյուղատնտեսական տեխնիկան ուժեղացնելու համար գյուղատնտեսական աշխատանքը պետք և կատարել մեքենաներով՝ տրակտորներով, կամ ելու և քամելու մեքենաներով—աներածեա և մանր գյուղացիական տնտեսությունները միացնել չեզ գարձնել խոռոր կողեկտիվ տնտեսություններ:

Ուրիշ լելք չկա: Յեթե գյուղացիական տնտեսությունները չմիացվեն և չկողեկտիվացվեն—ինչպես կապիտալիստների տիրապետության ժամանակ եր, նորից գյուղացիական տնտեսությունները կքայքայվեն, նորից կուղակալին տնտեսությունը և գյուղացիության շահագործումը կսկսի աճել:

Խոշոր հասարակական գյուղատնտեսությանն անցնելը գյուղացիների մեծամասնությանը ձեռնտու լի: Սակայն գյուղացիները, հաճախ չհասկանալով, վոր խոշոր տնտեսությունն առաջին հերթին հենց իրենց և ձեռնտու, հայտարարում են, թե՝ «Եթե խոշոր տնտեսություն ե, կնշանակի—լիս ելի բատրակ եմ և վոչ թե տնտեսատեր»:

Վորպեսզի գյուղացին կողեկտիվ տնտեսության անցնի, պետք և հասկանա, վոր իր մանր տնտեսության մեջ «տնտեսատեր» դառնալու այդ ձգտումը դատապարտում են նրան ամենազժրախտ և խավար կլանքի, վոր այդ դրությունից նա դուրս գալ կարող և միմիկայն այն ժամանակ, ուրբ վիրջ կտա անհատ տնտեսատեր զառնալու այդ ձգտումին:

Կոմունիստական կուսակցությունը մանր գյուղացիական տնտեսությունները կամենում ե խոշոր հասարակական տնտեսության վերածել համաձայն լենինի պատգամների, գյուղացիության համար ամենահասարակ, հեշտ և մատչելի լեզանակով:

Կա արդիոք ալդպիսի լեզանակ: Այս, կա: Այդ լեզանակը մանր գյուղացիական տնտեսությունները կոռպերացիայի միջոցով միացնելը չեզ խոռոր հասարակական տնտեսություններ դարձնելն ե: Իրենց տնտեսությունները միացնելուց և կոլտնտեսություններ, արտելներ ու կոմունաներ դարձնելուց գյուղացիների ստացած ոգուանների մասին կկարդանք հետադա զլուխներու:

1. Զեռնո՞ւյի արզու գյուղացուն՝ սոցիալիզմին անցնելը:
2. Վորո՞նի են մեր յերկրի աղբատուրյան պատճառները:

### ԽՍՀՄ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

Գյուղացիական տնտեսությանը դեպի սոցիալիզմն ամենամեծ զարկ տվողը հանդիսանում է մեր սոցիալիստական արդյունաբերության զարգացումը: Թեև Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ յեղած վերջին տասնամյակներում արդյունաբերության զարգացումը Ռուսաստանում առանձնապես արագ թափով և կատարվել, սակայն այդ զարգացումը մեզ մոտ զգալիորեն ավելի ուշ և սկսվել, քան ուրիշ յերկրներում: Այդ պատճառով ել Ռուսաստանը միշտ ել բացառապես յեղել և յերկրագործական (ագրարալին) յերկիր, վորը գեպի արտասահման հաց և գյուղատնտեսական այլ մթերքներ և արտահանում և արտասահմանից ֆարբիկաների ու գործարանների համար մեքենաներ, սարքավորում և արդյունաբերական ապրանքներ և ներմուծում:

Հին, նախահեղափոխական Ռուսաստանը յեղել և տնտեսապես յիտամաց մի յերկիր: Այդ յետամինացությունը յեղել և նրանում, վոր յերկրի արդյունաբերությունը թույլ և զարգացած յեղել: Արդյոք մեր յերկիրը, բանվոր դասակարգի իշխանությունը հաստատվելուց հետո, պետք ե, ինչպես հեղափոխությունից առաջ եր, մնա գլխավորապես իրեն գյուղատնտեսական յերկիր և ունենա թույլ արդյունաբերություն և յիտամաց աեխնիկա: Արդյոք մեր յերկիրն իր տնտեսությունը պետք և այնպես կառուցի, վոր շարունակ գեպի արտասահման արտահանի հաց և գյուղատնտեսական այլ մթերքներ և դրանց փոխարեն այնտեղից ներմուծի կարեոր մեքենաներ, դադդահներ և ֆարբիկա-գործարանալին սարքավորում, թե իր տնտեսության զարգացումը պետք և կառուցի մի այլ ձևով:

Կոմունիստական կուսակցությունն այդ կարեոր հարցի պատասխանը տվի և կուսակցության XIV համագումարում, զննելով յերկրի ինդուստրիալացման խնդիրը: Տնտեսությունը շարունակել հին յեղանակով, կնշանակի հավիտլանս հավիտենից մնալ իրեն գյուղատնտեսական յերկիր, իսկ դա այն հետեանքն և ունալու, վոր մեր յերկիրն ամեն կողմից կապիտալիստական յերկրներով շրջապատված լինելով, թույլ զարգացած սեփական խո-

շոր արդյունաբերության տեր լինելով, բավարար քանակությամբ մեքենաներ, մատորներ, դաղգահներ և այլն չունենալով, ստիպված ե լինելու արդ ըոլորը զնել արտասահմանից: Այդպիսի դեպքում մենք կախման մեջ կլինելինք արտասահմանաւն կապիտալիստներից, վորոնք մեզ իրենց պայմանները կթելադրելին, մեզ կկողոպտելին ու կփերթելին: Ալդպիսի տնտեսական քաղաքականություն վարելով անխուսափելի կլիներ մեր կախումը կապիտալիստական աշխարհից: Ուստի Խորհրդավոր Միությունը պետք է ձգտի ազատվելու արտասահմանյան կախումից, վորպեսզի դառնա տնտեսապես անկախ մի պետություն:

Դրա համար անհրաժեշտ ե ինդուստրիալացման լենթարկել ԽՍՀՄ: Յերկիրը ինդուստրիալացման լենթարկել, կնշանակի նրան յերկրագործական յերկրից դարձնել արդյունաբերական յերկիր: ԽՍՀՄ պետք ե դառնա ալնպիսի մի յերկիր, վորը փոխանակ մեքենաները և սարքավորումն արտասահմանից ներմուծելու, ինքն արտազրի հարկավոր մեքենաներն ու սարքավորումը:

Յերկիրն ինդուստրիալացման լենթարկել, կնշանակի վոչ միայն գործածության ալլրանքներ, ինչպես որինակ, մանուֆակտուրա, կաշի և այլն արտազրելու համար գործարաններ ու ֆաբրիկաներ կառուցել, այլև կառուցել արտազրության միջոցներ, այսինքն մեքենաներ, կաթսաներ, տրակտորներ և այլն արտադրություն ճողորդություն ձեռնարկություններ:

Անհրաժեշտ ե լայն կերպով զարգացնել ծանր արդյունաբերությունը — մետաղագործական: վառելանյութութալին և այլն, վորովհետեւ առանց ծանր արդյունաբերության չի կարելի զարգացնել թեթեւ արդյունաբերությունը, վորը գործածության միջոցներ ե արտադրում:

Միմիայն այդպիսի քաղաքականությունը հնարավորություն կտա ապահովելու սոցիալիզմի հետազայի հաջող կառուցումը:

Ձեռնտու յեւ արդյոք այդպիսի քաղաքականությունը գյուղացիության հիմնական մասսաններին — չքավորությանը և միջակներին:

Այս, ձեռնտու յեւ:

Նա ձեռնտու յեւ գյուղացիության արդ մասսաներին նախայն պատճառով, վոր յերկրի ինդուստրիալացումով — նոր ֆարբեկաների և գործարանների կառուցումով — առաջ եղալու ապրանքների եժանացում և յերկիրն այս կոմ այն ապրանքների պահպառություն չի ունենալու: Ինդուստրիալացումը գյուղացիու-

թիանը ձեռնտու յի նույնպիս նրա համար, վոր արդյունաբերութիան զարգացում՝ իր սեփական ձեռնարկներում հսկայական քանակությամբ հում նյութ վերամշակելու պահանջ և առաջադրելու այնպիսի նյութերի, վորոնց արտադրում և գյուղացիությունը, Յերկրի ինդուստրացումը գյուղացիական տնտեսությանը կտա մեքենաներ, տրակտորներ և այլն, Վերջապես, նա աշխատանք կտա շատ գյուղացիների, վորոնք գյուղական տնտեսության մեջ չեն կարող գործ ունենալ. Սակայն միայն այդ չեղատճառը, վոր գյուղացիությունը շահագրգուված և արդյունաբերության զարգացման, առանց լերկրի ինդուստրացման, հնարավոր չեղատճական տնտեսությունը վերաշինել և նոր լեզանակով վերակառուցել:

Արդյունաբերությունն ունի գյուղատնտեսական հում նյութի կարիք, սակայն լետամնաց, բաժան-բաժան և հին լեզանակով կառուցվող գյուղական տնտեսությունն ավելի կախումն ունի խոշոր արդյունաբերությունից: Ամրող ժողովրդական տնտեսության մեջ առաջնակարգ զեր և խաղում խոշոր արդյունաբերությունը, վորն իր հետեւից քաշ և տալիս գյուղական տնտեսությունը: Գյուղացիական տնտեսությունը կարիք ունի գյուղատնտեսական մեքենաների և գործիքների, նրան հարկավոր են գութաններ, կալսելու, ցանելու, խուրճ կապելու մեքենաներ, տրակտորներ և քիմիական պարարտացում: Այդ բոլորը կարող ետալ քաղաքի արդյունաբերությունը:

Գյուղը սոցիալիստական հիմունքներով վերակառուցել, աղքատությունից, անկուլտուրականությունից և վայրենությունից աղատել կարելի յի միմիայն լերկիրն ինդուստրացման լինթարկելու պայմանով և այն պարմանով, լերը գյուղական տնտեսության դեկավարությունը տեղի ունենա արդյունաբերության կողմից:

## ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

Ա. Հարկավո՞ր և արդյոք գյուղացուն ԽՍՀՄ-ի ինքուսացումը:

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԾԱՄՄԻՆԵՐԸ

Մեր լերկում տեղի ունեցող սոցիալիստական շինարարության գեմ բանվորների և գյուղացիների թշնամիները համառ պարքար են մղում: Այդ պարքարին նույն ատելությամբ մասնակ-

նում են թե ոտարերկրյա կապիտալիստները, և թե մեր յերկրի տապալված բուրժուազիան ու կուլակությունը:

Ոտարերկրյա կապիտալիստները Խորհրդավին միությանն առում են: Այդ ատելությունն առաջացել է հետեւյալ պատճառներից: Հեղափոխությունից առաջ ոտարերկրյա կապիտալիստները մեծ հարստություններ ունեին մուսաստանում: Ոտարերկրյա կապիտալիստներին ելին պատկանում մուսաստանի համարյա բոլոր խոշոր մետաղագործական գործարանները, ածխահանքերը, ելեկտրակայանները, նավթահանքերը: Յեթև հաշվի առնենք հեղափոխությունից առաջ մուսաստանում ոտարերկրյա կապիտալիստներին պատկանող հարստությունների արժեքը, կտացվի մի հսկայական գումար—յերկու միլիարդ (1 միլիարդը=հազար միլիոնի) գումկի ոռորի: Այդ բոլոր հարստությունները չոկտեմբերյան հեղափոխությունից հետո խորհրդավին իշխանությունը կոնֆիսկացիայի ինթարկեց և գրավեց:

Բացի գրանից, ոտարերկրյա կապիտալիստները հսկայական գումարներով (մի քանի տասնյակ միլիարդ ոռորվի) պարտքեր ելին տվել մուսաստանի ցարական կառավարությանը: Ցարական կառավարությունը, վորպեսզի կարողանա վճարել այդ պարտքերը, վորոնց մեծ մասը պատերազմի վրա յեր ձախսված, քայլքաւում և կողովուտի յեր լինթարկում գլուղացիներին՝ նրանց ուսերի վրա ցցելով իր հարկերի և տուրքերի ամերող ծանրությունը:

Խորհրդավին իշխանությունը հրաժարվեց վճարել ցարական այն փոխառությունները, վորոնք գլուղացիներին վոչ թե ոգուաց մել մեաս ելին տվել:

Հոկտեմբերյան հեղափոխությունն ոտարերկրյա կապիտալիստներին մուսաստանի մեծամեծ ոգուաներից զրկեց: Սակայն միմիայն այդ չե պատճառը, վոր կապիտալիստներն առում են Խորհրդավին Միությանը: Ոտարերկրյա կապիտալիստներն ամենից շատ վախենում են նրանից, վոր ուրիշ յերկրների բանվորները կհետեւն Խորհրդավին միության բանվորների և զլուղացիների որինակին, իրենց մոտ նույնպես կտապալին կապիտալիստների իշխանությունը, նույնպես կոնֆիսկացիայի կենթարկեն և կապիտալիստներից կզրավեն Փարբեկաները, գործարանները, բանկերը, յերկաթուղիները: Խորհրդավին Միությունը, իր վրա դարձնելով կապիտալի կողմից բոլոր շահագործվողների հայացքները և իր վրա գնելով նրանց բոլորի հուսերը, հանգիստանում և կապիտալիստների համար իրեւ համաշխարհային պլրու-

իհաւարական հեղափոխության ամենաահռելի ուժը՝ Ադր և գլխավոր պատճառը, վոր բոլոր լերկրների կապիտալիստներն աշխատում են տապալել խորհրդավիճ իշխանությունը, մեր դեմ պատերազմ են պատրաստում և ամեն կերպ վնասում են ԽՍՀՄ-ում կատարվող սոցիալիստական շինարարությանը:

Ուսարերկրյա կապիտալիստներին ոգնում են նախկին ռուսական այն կալվածատերերն ու կապիտալիստները, վորոնք Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո փախել են արտասահման Նրանք գեռես հույս ունեն, վոր գեպի իրենց իշխանությունն են վերադառնալու և իրենց են վերադարձնելու Հոկտեմբերյան հեղափոխության խլած կալվածները, Փարբեկաները և գործարանները:

Այս կամ այն խորհրդավիճ Փարբեկան, ելեքտրոկայանը պարթեցնելու, կումունիստական կուսակցության և խորհրդավիճին իշխանության առաջնորդներից մեկն ու մեկին սպանելու համար արտասահմանից Խորհրդավիճ միություն են սողուկում կալվածատերի տղաները և նախկին սպաները:

Խորհրդավիճ հողից արտաքսված կալվածատերերն ու կապիտալիստները և նրանց պոչի հետեւից գնացողներն արտասահմանում հրատարակվող իրենց լրագրերի և թերթերի միջոցով ամեն կերպ սեացնում են կոմունիստական կուսակցությանն ու Խորհրդավիճ միության բանվոր դասակարգին, գրում են ամեն տեսակի չեղած բաներ այն մասին, վոր իր թե բայց եկանին ավերել են:

Ուսարերկրյա և նախկին ռուսական կապիտալիստներն ոգնականներ ունեն նաև Խորհրդավիճ Միության ներսում։ Վաղուց չե (1928 թ. մայիս և հունիս ամիսներին), ինչ Գերագույն դատարանը դատի լենթարկեց Դոնեցի ավագանում աշխատող մի քանի տասնակ ինժեներների, այն ավագանում, վորտեղից հանվում ե քարածուխ, առանց վորի լերկրի ժողովրդական տնտեսությունը գոյություն ունենալ չի կարող։

Հանքահորերը, հանքերը ղեկավարող այդ ինժեներներին կաշառել են կապիտալիստները և հրամայել ելին ածխային տնտեսությանը վնասել՝ մեքենաները փչացնել, լավագույն հանքահորերը ջրով լցնել, այն հանքահորերը մշակել միայն, վորտեղ ածուխը վատ վորակ ունի, արտասահմանից բերել տալ անպետք և թագարժեք մեքենաներ, վորպեսդի այդպիսով ժողովրդական փողերն իջուր տեղը վատնվեն։



Կապիտալիստների կողմից կաշառված ինժեներները (դրանցից շատերը և զափոխությունից առաջ հարուստ մարդիկ են), իսկ վոմանք ել՝ հանքահորերի տերեր) մի քանի տարի շարունակ կատարել են այն ամենը, ինչ վոր կապիտալիստները նրանցից պահանջել են և մեծամեծ վասաներ են հասցեր և ԽՍՀՄ-ին:

Կապիտալիստներին ել հենց այդ և հարկավոր: Նրանք կամենում են ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսությունը վիճեցնել, վորպեսզի կարողանան իրենց բանվորներին և գյուղացիներին ասել՝ թե տեսեք լերկիրը տնտեսապես կառավարելն առանց մեզ՝ կապիտալիստներին, վորքան վատ ե, տնտեսությունը քայլայվում ե և լերկիրն աղքատանում: Բացի դրանից, ոտարերկրյա կապիտալիստները հավատացած են, վոր սոցիալիստական շինարարությանը վասա հասցնելով և նրան վիճեցնելով նրանք հեշտությամբ և ավելի շուտ կկարողանան տապալել խորհրդավին թշնամությունը, վերադարձնել իրենց կորցրած հարստությունները, գործարանները, ֆարբիկանները, լերկաթողիները և նորից կնօտեն Ռուսաստանի բանվորների և գյուղացիների վզին:

Խորհրդավին իշխանության և սոցիալիստական շինարարության թշնամինը միայն ոտարերկրյա կապիտալիստներն ու նրանց կաշառած լրտեսները և ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության վիճակարները չեն: Բանվոր դասակարգը քիչ դասակարգավին թշնամինը չունի նաև իր լերկիր ներսում, վարոնց ձեռնետու չե սոցիալիստական տնտեսության ամրացումը և ձեռնուու չե աշխատավոր մասսանների շահագործման վերացումը:

Մեր լերկիր սոցիալիստական շինարարության կատաղի թշնամինները գյուղական կուլակներն են: Դժվար չե հասկանալ թե ինչու լի կուլակը սոցիալիստական շինարարությանը թշնամի, կուլակին ձեռնոտու լի, վոր գյուղում թագավորի աղքատությունն ու չքավորությունը, վորպեսզի նրա հարեւանները սերմացի, անասնի և ինվենտարի պակասություն ունենան: Չե վոր միմիայն խիստ կարիքի գեղքում միջակ-գյուղացին կհամաձայնի կուլակից փոխ սերմացու վերցնել փոխարենը նրան իր բերքի մեկ լերը որդը, լերը բմն ել կեսը տալու պայմանով: Դյուզը վորքան շատ աղքատ լինի. կուլակի համար այնքան ավելի հեշտինի այնպիսի բարրակ ճարել վորը կկուացնի իր մեջքը կուլակի առաջ, վորպեսզի վերջինս գերանա:

Դյուզական տնտեսության կուկտիվիզացիալից՝ գյուղացիների ստացած հակալական ողուտները մի-մի սուր գանակներ են, ցցված գյուղական աշխարհակար-կուլակի սիրաը:

Ժողովրդական տնտեսությունը սոցիալիստորեն վերակառւացելը վոչնչացնում և զյուղի աղքատությունն ու չքավորությունը Սոցիալիզմը հետզհետե վորքան ամբանա գյուղում, կուլակներն այնքան ավելի կկորցնեն գյուղի չքավորներին օահազործելու և ուրիշի աշխատանքի հաշվին հարստանալու իրենց հնարավորությունը: Հատկապես այդ և պատճառը, վոր կուլակները—սոցիալիստական շինարարության հակառակորդներն ու թշնամիները, սոցիալիստական շինարարության հաջողություններին զուգընթաց փորձում են իրենց հակաղղեցությունն ուժեղացնել բանվոր գասակարգի վրա: Բացի կուլակներից, սոցիալիստական շինարարությանն իրերն թշնամիներ և հակառակորդներ են հանդիսանում կապիտալիստաները—առեւրականներն ու ֆարբիկաների, գործարների, արենստանոցների տերերը և նեպմանները:

Մենք գիտենք, վոր մեր արդյունաբերությունը բնակչության կարիքները բավարարելու համար գեռևս բավարար քառակի գործարանալին ապրանքներ չունի: Սեփականատեր-գործարանատերերն ու առեւրականներն այդ հանդամանքից ողտվելով՝ բարձրացնում են հաղվագուտա ապրանքների (որինակ՝ մանուֆակտուրալի) գները և ապրանքալին սովոր սպեկուլյացիալի առիթ են ծառայեցնում:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑՑԻ ՀԱՍՏԱՐ

1. Ի՞նչ գործ ունեն ուստիրկրյա կապիտալիստները ԱԽՀԱՄ-ում սոցիալիզմը կառուցելու մեջ:

2. Ի՞նչո՞ւ յեն կուլակները պայմառում գյուղի վերակառւցման գեմ:

#### ԱՌՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ ԻՍՀԱՄ. ում

Թե կուլակների և թե սեփականատեր-կապիտալիստների դեմ բանվոր գասակարգը համառ կոիկի և մղում: Վլաղիմիր Իլլիչ Լենինը գրել ե, վոր այդ կոիկն անհրաժեշտ ե և վոր «կապիտալիզմի ու կոմունիզմի մեջ տեղի ունեցող այդ հանդուզն և կատաղի կոիկը վոչ թե փորի, այլ կյանքի կոիկ հա: Լենինն ասել ե, վոր ամբողջ խնդիրն ալն ե, թե մի, ումբց առաջ կլինի, վմբ անտեսությունն ավելի արագ կզարդանա—կապիտալիստակմնը, թե սոցիալիստականը:

Սոցիալիստական շինարարության առաջին տարիները ցուց

են տալիս, վոր սոցիալիստական տնտեսությունն ասպարիզից դուրս մղում կապիտալիստականին և կապիտալիստին հարվածում եւ Վերցնենք, որինակ, առեսուրը՝ Մանրածախ առեսորի մեջ 1924/25 թվին կոռագերացիալի և պետության շրջանառությունը կազմում եր 4,5 միլիարդ ռուբլի, իսկ մասնավոր առևտրական-ներինը—մոտավորապես 3,5 միլիարդ ռուբլի: Իսկ 1927/28 թվին պետական և կոռագերատիվ առևտուրը համարյա 2,5 անգամ ( $130\%$ -ով) մեծացավ, իսկ մասնավոր առևտուրը՝ միմիայն մեկ լիրորդով ( $32\%$ -ով): Խոշոր մեծածախ առևտրի մեջ կոռագերացիան և պետությունն իրենց շրջանառությունը մեծացրին համարյա լիրկու անգամ ( $193\%$ -ով), իսկ մասնավորները՝ միմիայն մեկ հինգերորդով ( $20\%$ -ով):

1924/25 թվին մեր լերկում արտադրվող բոլոր գործարանացին ապրանքների 4 տոկոսից ավելին պատրաստում ելին մասնավոր-կապիտալիստական ֆաքտիկաներն ու գործարանները, իսկ 1927/28 թվին՝ միմիայն լերկու տոկոսը, այսինքն բոլոր արդյունաբերական ապրանքների մեջ հիսուններորդական մասը:

Ինչպես մենք տեսնում ենք, առևտրի և արդյունաբերության մեջ սոցիալիստական անտեսությունն ավելի արագ և աճում և ընդարձակվում, քան կապիտալիստականը: Կապիտալիստների տեսակարգը կշփոք փոքրանում ե, սոցիալիզմի դեմ ունեցած նրանց ատելությունն աճում ե, իսկ սոցիալիստական տնտեսության ուժն ավելի աճում ու մեծանում եւ:

Ավելի դժվար ե գլուղի կուլակության դեմ պարզաբ մղել: Վերջին տարիներում կուլակային աղքարնակության քանակն աճել է:

Կուլակային տնտեսությունների ցանքերն ընդարձակվել են ու նրա լծկանների ու ինվենտարի քանակը մեծացել է: Բնեթը և ծախու ապրանքային հացը շատացել են, թեև ապրանքային հացի մեծագույն քանակությունը միջակ գրողացիության մոտ է: 1926/27 թվին կուլակների ձեռքում կար 126 միլիարդ փթից ավելի ծախու, ապրանքային հաց: Իսկ այդ թվին և՛Շ՛Մ-ում կար 600 միլիոն փութ ապրանքային հաց: Սակայն մեր սոցիալիստական շինարարության հաջողությունները մեզ հնարավորություն են տալիս սոցիալիզմի շինարարության գործում, հետեւապես և կուլակի վրա հարձակում կատարելու գործում ել ավելի վճռական կերպով առաջ գնալու:

Սակայն բանվոր դասակարգը ինչ միջոցներով և կռվում շահագործողների—կապիտալիստների և կուլակների դեմ:

Նախ և առաջ կապիտալիստներն ու կուլակները Խորհրդավին լերկրում քաղաքական իրավունքներից զուրկ են—խորհուրդներում ընտրելու և ընտրվելու իրավունք չունեն:

Հարկման չենթարկելու նպատակով՝ իրենց հողն ու անասունը թաղցնող կուլակները նույնպես պատասխանատու լին դատարանի առաջ այնպես, ինչպես նեպմանները:

Կուլակներին գլուղատնտեսական մեքենաներ են տրվում միմիայն կանխիկ զրամով և այն ել այն դեպքում միայն, լերը կոլտնտեսությունների, արտելների և կոմունաների մեքենաների բոլոր պահանջները բավարարված են:

Պետական ֆարբիկաներն ու գործարանները վերասարքավորելը, նոր վիթխարի ֆարբիկաներ ու ելեքտրոկայաններ կառուցելը, բանվորների աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելը պահասեցնում ե կապիտալիստների և կուլակների ուժը:

Կոռպերացիալի զարգացումն ու ամրացումը քաղաքում և առանձնապես գլուղում, քայլքայում և կուլակների և մասնավոր առևտրականների ուժը:

Կոլտնտեսություններում, արտելներում, գլուղատնտեսական կոմունաներում գլուղացիության համախմբվելը տասնյակ և հարյուր հազարավոր նորանոր գլուղացիներ և խլում կուլակների թաթերից, բարձրացնում ե լերկրի բերքն ու շատացնում ե ապրանքային հացի քանակը և խոչընդուռ ե հանդիսանում կուլակային տնտեսությունների աճմանը:

Սոցիալիզմի շինարարության համար մզգող կովում բանվոր դասակարգը հենվում է չքավորների վրա և ամուր դաշինք և պահպանում միջակների հետ:

Գյուղի չքավորներն իրենց գրությունը բարելավելու մի այլ միջոց չունեն, բացի շահագործողների—կապիտալիստների և կուլակների դիմ կովելուց, բացի միացած ձեռվ հասարակական, կոլլեկտիվ տնտեսություն կազմելուց:

Սակայն միջակ գլուղացիությունը նույնպես շահագործոված է, վոր մեր լերկրի ժողովրդողների—կապիտալիստների և կապիտալիստի ընդունակության առցիւթյանը սոցիալիստական ուղղիով ընթանալու:

Միմիայն գլուղական տնտեսության միացումով ու կոլլեկտիվացումով միջակ գլուղացիությունը կազմավի աղքատությունից ու քայլքայումից:

Կապիտալիստներն ու կուլակները սոցիալիստական շինա-

մարության և բանվոր դասակարգի թշնամիներն են, Նրանց մեջ պայքար մղելու գործում բանվոր դասակարգի համար զյուղի չքաղաքուները հանդիսանում են իրեն հենարան, իսկ միջակները՝ իրեն դաշնակից:

Մեր յերկրում տեղի ունեցող շահագործումը վերջնականապես վոչնչացնելու, բանվորի և գյուղացու, քաղաքի ու գյուղի մեջ յեղած տարբերությունը վերացնելու համար անհրաժեշտ է վերակառուցել և վերաշննել մեր ամրող ժողովրդական տնտեսությունը, այդ անտեսությունը հիմնել նոր և բարձր տեխնիկայի և մեքնաների աշխատանքի վրա:

Ժողովրդական տնտեսությունն արգեն միքանի տարի լի, ինչ զոյություն ունի: Մեր յերկրում կառուցվել են արգեն միշտաքաղաքական ներ (Վոլխովստրոյը—Լենինգրադի մոտ, Շատուրի կալանը—Մոսկվայի մոտ, Ռուգրանալում կառուցվող Դնեպրոստրոյը), զործարաններ, ֆաբրիկաներ Հարյուր հաշարավոր բանվորներ են արգեն համախմբված կոլլեկտիվներում, աշխատում են տրակտորների, կալոռդ մեքենաների և այլ խոշոր գյուղատնտեսական գործիքների ոգնությամբ և գործ են ածում հանքային պարարտանյութեր և այլն:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՍՏՐ

Ինչո՞վ ենք մենք կովում սոցիալիստական օհնարարության քննամիների գեմ:

#### ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սակայն ժողովրդական տնտեսության վերակառուցման ասպարիզում դեռևս մեծ անելիք կա Յեվ այդ աշխատանքում մենք հսկայական դժվարությունների և խոչընդուների յինք հանդիպում:

Այդպիսի խոշոր և դժվարին խոչընդուների թվին են պատկանում բանվորների յեզ գյուղացիների մեծամասնության ունեցած սպիտակությունները:

Մեքենաներն իրենք իրենց աշխատել չեն կարող: Մեքենաներն ոգտագործելու համար հարկավոր են գիտուն և ուսուցականութիւն, վորպեսզի նրանց կարողանան շարժման մեջ դնել: Իսկ այդպիսի մարդիկ համարլա մենք չունենք և դրանց թիվը մեզանում քիչ ե:

Որինակի համար վերցնենք տրաքտորներով հողը մշակելը:

ԽՍՀՄ. ի ամբողջ գլուղական տնտեսության աշխատանքը տրակտորներով կատարելու համար անհրաժեշտ և ունենալ վոչ թե հարյուր հազարավոր տրակտորներ, այլ և հարյուր հազարավոր տրակտորավարներ, վորոնք ընդունակ լինեն տրակտորները զեկավարելու և փշանալու ու կոտրվելու դեպքում՝ վերջիններիս նորոգելու։ Սակայն ունենք մենք արդյոք արդպիսի տրակտորավարներ, Մենք շատ և շատ քիչ այդպիսի տրակտորավարներ ունենք։ Այժմ ամբողջ ԽՍՀՄ գործում են ընդամենը յերեսուն հազար տրակտորներ և արդեն տրակտորավարների պակաս և զգացվում։

Մենք վոչ միայն բարձր տեխնիկայի, խոշոր ֆարբեկանների, գործարանների, մեքենաների և դազգահների պահանջ ունենք, այլ և մեծ կարիք ունենք մասնագետ, լավ գրադետ, ուսակ և մեքենաները կարդին ոգտագործել կարողացող ու զեկավարող մարդկանց։

Մեր դժբախտությունը—մեր աշխատանքի ցածր և վատ արտադրողականությունն եւ նույնիսկ լավ մեքենա ունենալու դեպքում մեր յերկրի աշխատանքի արտադրողականությունը շատ ու շատ ցածր եւ, քան արտասահմանինը։ Մենք ճիշտ աշխատանք կատարել և բանվորական որը ճիշտ և լրիվ ոգտագործել չենք կարողանում։ Մեր յերկրում իզուր և անոգուտ կերպով ահագին աշխատանք և վատնվում։

Միլիոնավոր աշխատավորներ վոչ միայն մեքենա զեկավարել չեն կարողանում, այլ նույնիսկ չեն հասկանում, թե ինչ ոգուտ և տալիս մեքենան։ Միլիոնավոր գլուղացիներ դեռևս չեն հասկանում, թե ինչ հսկայական ոգուտ կարող եւ տալ իրենց հողը մեքենայորեն մշակելը, սերմի զտումը և կանոնավոր սերմափոխությունը։ «Աշխարհը վոչ մեղնով եւ սկսվել, վոչ ել մեղնով կվերջանա», «ապրենք այնպես, ինչպես մեր նախահայրերն են ապրել»—ահա, թե հաճախ ինչպես եւ դատում խավար և անզրագետ գլուղացին։

Հեղափոխությունից առաջ Ռուսաստանի ամբողջ բնակչության յերեք քառորդից ավելին բոլորովին գրել կարդալ չգիտեր, անզրագետ եր։

Յարական կառավարությունն ամեն կերպ բանվոր և գլուղացի մասսալի կը թությանն արգելք եր հանդիսանում։ Կալվածատերերն ու կապիտալիստները բանվոր և գլուղացի յերեսասարդությանը թույլ չելին տալիս, վոր միջնակարգ և բարձրա-

գուշն դպրոցները (զիմնազիաներն ու համալսարանները) մտնենու ժարական մինխտըներից մեկը բացարձակորեն հայտարարել եր վոր «խոհարարների վորդիները», ալսինքն բանվորների և գյուղացիների վորդիները բարձրագուշն և միջնակարգ դպրոցներում տեղ չունեն:

Բարձրագուշն կրթություն կարող ելին ստանալ միմիայն աղնվականների — կալվածատերերի, վաճառականների, գործարանատերերի, չիսովիկների և աշխատավոր մարդկության այլ շահագործողների վորդիները:

Ժողովրդական տնտեսության բոլոր բնակավառներում մեզ տնհրաժեշտ են տեխնիկական զեկավարներ — մասնագետներ՝ թե՛ շենքերի կառուցման, թե՛ ածխահանքերի, թե՛ երեկորկայալանների, թե՛ գործարանների ու ֆարբիկանների և թե՛ գյուղական տնտեսության համար: Առանց մասնագետների մեր արդյունաբերությունը չեր կարելի շարժման մեջ դնելի Բանվոր դասակարգը քանի դեռ իր համար բավարար թվով կարմիր մասնագետներ չետեղծել, պետք ե ոգտագործի կապիտալիստների ժամանակ ֆարբիկաններն ու գործարանները ղեկավարող հին մասնագետներին: Այս մասնագետների մի մասը ժողովրդական տնտեսության մեջ աշխատում և աղնվորեն և մեր արդյունաբերությանը մեծամեծ ոգուածներ և տալիս իսկ նրանց մի փոքր մասը դեռևս թշնամական վերաբերմունք ունի դեպի բանվոր դասակարգը, շարունակում է յերազել հին կարգերի վերաբերձի մասին, վորի պարզ ապացուցն եր Դնեցի հանքանորերի գործը:

Սոցիալիզմի շինարարության գործի ամենամեծ արգելակներից մեկը՝ բյուրոկրատիզմն եւ:

Պետական հիմնարկներում աշխատանքը հաջող հիմքերի վրա դրված չլինելը, — աշխատանքի կարգի անվերջ նասնաշղոթություն, ավելորդ գրագրություն, ուսուցրած և փթանոց հաշվետվություն, գրասենյակային և անսիրոտ մոտեցում դեպի գործը, թղթապաշտություն, — այդ բոլորն ահազին միջոցներ են կլանում: Մինչդեռ արդ միջոցները կարող են ծախսվել և պետք ե ծախսվեն ժողովրդական տնտեսության վրա:

Ի՞նչ պետք ե անենք, վոր կարողանանք բյուրոկրատիզմը մեր պետական ապարատից դուրս վոնդել: Ընկը Ստալինը Համեկ (բ) Կ-ի ԽՎ համագումարում ալսպես և պատասխանելալոդ հարցին:

«Նրանից (պետապարատից) բյուրոկրատիզմը դուրս վոնդելու համար, — վորը հնարավոր չե մեկ-լերկու որում դուրս վոնդել —

պետք և սիստեմատիկ կերպով բարելավել պետապարատը, նրան  
մուտքնել մասսաներին, նորոգել այն նոր և բանվոր դասակարգի  
գործին նվիրված մարդկանցով, վերակառուցել նրան կոմունիզմի  
վողով և նրան չջարդել և չթուլացնել»:

Բյուրոկրատիզմի գեմ մղվող պատճառին պետք և ոգնության  
համար ինքնաքննադատությունը՝ լերնան հանելով կուսակցու-  
թյան բոլոր թերությունները, բոլոր սխալները և նրա զծի ինե-  
ղաթյուրումները՝ վորտեղ և ում կողմից ել վոր դրանք տեղի ու-  
նեցած լինեն: Բանվորների և գյուղացիական աշխատավոր մաս-  
սաների կողմից պետապարատի բոլոր՝ թերությունների վերա-  
բերյալ կատարած բարձրածայն, ընդարձակ, լուրջ և գործնական  
քննադատությունը կտանի գեպի շինարարության բարելավումը  
և գեպի կլասնքի և աշխատանքի բոլոր բացասական կողմերի հաղ-  
թահարումը: Մեր լերկրի ամբողջ ժողովրդական տնտեսությունը  
սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու ծրագրի հետ  
կապված՝ պրոլետարական պետության առաջ կանգնած խնդիր-  
ները լուծել կարելի յե այն գեպքում միայն, յեթե մասսաները  
գործնականում հանդես գան մեր շինարարության համար իրեն  
ակտիվ մասնակիցներ:

Կուսակցությունն ինքնաքննադատության լոգունգ և տվել  
անխնա կերպով մերկացնելու «այն բոլոր մարդկանց, ովքեր ար-  
գելը կհանդիսանան բանվորների և գյուղացիների կյանքը նոր  
ձևով կառուցելուն»: Ինքնաքննադատությունը հանդիսանում և  
պրոլետարական գեմովկատիպի ամենակարենոր ձևերից մեկը և  
իրեն մեր ամբողջ ապարատը մասսալորեն վերահսկելու և վերա-  
ստուգելու մի ձև:

Ինքնաքննադատության ոգնությամբ պետք և դեպի այդ  
շինարարության գործը և գեպի այդ շինարարության վերստու-  
գումը քաշել բանվորների և գյուղացիների նոր հսկայական մաս-  
սաներ:

Բյուրոկրատիզմից վերջնականապես ազատվելու համար ան-  
հրաժեշտ և բարձրացնել բանվոր և գյուղացի մասսաների կուլ-  
տուրական մակարդակը, վորպեսզի լուրաքանչյուր բանվոր և  
գյուղացի հնարավորություն ունենացած ցածրից հսկողության լին-  
թարկելու պետական ապարատաւը: Անզրագիտությունը, անկուլ-  
տուրականությունը, լետամասացությունը շատ և շատ բանվորների  
և գյուղացիների թույլ չեն տալիս, վոր ակտիվություն հանդես  
բերեն՝ մասնակցեն մեր բոլոր թերությունների գեմ տեղի ունե-

ցող կովին, ակտիվ մասնակցություն ունենան վերահսկողության  
և յերկիրը կառավարելու գործում:

1921 թվին Լենինը գրել է.

«Նախեցեք ՌՍՖԽՀ-ի քարտեզին: Վոլոգդալից հյուսիս, Դոնի Ռոստովից և Սարատովից հարավ-արևելք, Որենը ուրզից և Ամսկից հարավ և Տուսկից հյուսիս՝ ընկնում են անսահման մեծ տարածություններ, վորանդ տասնչորսից հսկայական կուլտուրական պետություններ կարող են տեղափորձել Այդ տարածություններում թագավորում և նահապետականությունը, կիսավայրենությունը և ամենախսկական վայրենությունը: Հապա ամբողջ յետամեաց Ռուսաստանի գյուղացիական լեռ ընկած վայրերնեւմ: Ամենուրեք, ուր գյուղը վատ ճանապարհների—ավելի ճիշար՝ ճանապարհ չունենալու պատճառով կտրված և յերկախուզուց, այսինքն կուլտուրալի, կապիտալիզմի, խոշոր արգյունաբերության, մեծ քաղաքի հետ նյութական կազ ունենալուց, — միթե ալդ բոլոր տեղերում չի գերիշխում միենուլն նահապետականությունը, արլումունչինան և կիսավայրենությունը»:

Այդ որից սկսած մեր յերկիրն առաջադիմական մեծ քայլ ե արել Բայց սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար անհրաժեշտ և անտառապությունը զարգացնելու և մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնելու վրա մեծ աշխատանք թափել

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Ա. Անգրագիտությունն ու անկուլտուրականությունն ի՞նչո՞վ են խանգարում սոցիալիզմի օբյերացությանը:

2. Ի՞նչ կթօնակի բյուրոկրատիզմ յեզ ի՞նչայն պետք է կովել երա զեմ:

ՀԱՄԿ.Կ.Կ. ՎԱՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՂԵԿԱՎԱՐ, ԻՍԿ ԿՈՄՑԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ—ԻԲՐԵՎ  
ՆՐԱ ՈԳՆԱԿԱՆԸ

Բանվոր դասակարգը կոիվ մղելու և հաղթանակ տանելու համար պետք է ունենա իր մարտական հեղափոխական կուսակցությունը: Կոմունիստական կուսակցությունը հանդիսանում է սոցիալիզմի համար կովող բանվոր դասակարգի կազմակերպիչնու ղեկավարը:

Կուսակցությունն իր մեջ և ընդգրկում վոչ թե ամբողջ բանվոր դասակարգին, այլ նրա ամենաառաջավոր, գիտակից և տոկուն մասին։ Կուսակցությունը հանդիսանում է բանվոր դասակարգի առաջամարտիկը—ավանդաբերը։

«Կուսակցությունը—ասում ե ընկ. Ստալինը,—պետք ե կանգնած լինի բանվոր դասակարգի առջևում, նա բանվոր դասակարգից ավելի հեռուն պետք ե տեսնի, նա պետք ե պրոլետարիատին իր յետեից տանի և վոչ թե նրա պոչից քաշ գա»։

Պալքարում կոփված բանվոր դասակարգի կուսակցությունը զինված և հասարակությունը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու հեղափոխական տեսությամբ և ուսմունքով։

Մինչև 1917 թիվը բայց ինկների կուսակցությունը կռվել է ինքնակալությունը տապալիքու և պրոլետարիատի գիտատուրան հաստատելու համար։ 1917 թիվի հոկտեմբերին իշխանությունը գրավելուց հետո կուսակցությունը զեկավարել է պրոլետարիատի գիտատուրայի սլահանան և ամրացման գործը։ Ներքին և միջազգային հականեղափոխության կողմից մեր պետության վզին փաթաթված կռվին վերջ տալուց հետո կուսակցությունը զեկավարում և սոցիալիստական արդյունաբերությունը զարգացնելու և գլուղը սոցիալիստական սկզբունքներով վերակառուցելու համար տեղի ունեցող պալքարը։ Պալքարի արդ բոլոր շրջաններում կոմունիստական կուսակցությունը սերտորեն կապված է յեղել բանվորների և աշխատավոր գյուղացիների ամենալայն մասսաների հետ։

Սոցիալիզմի համար մղվող կռվում կոմիերիտմիությունը կուսակցության ամենաամուսիկ ոգնականն եւ։

Վորպեսդի թե քաղաքի և թե զյուղի կոմիերիտականները իրոք կարողանան ոգնել կոմունիստական կուսակցությանը՝ մեր աղքատ ու խեղճ և կապիտալիստների ու կալվածատերերի շահագործմամբ ճնշված լերկիրը դարձնելու հարուստ սոցիալիստական լերկիր, աներաժեշտ և, վոր յուրաքանչյուր կոմիերիտական ոժտվածքի լինի քաղաքական գիտելիքներով, անհրաժեշտ և, վոր նրանցից յուրաքանչյուրն ինքն իրեն կրթի, վորպեսդի կարողանա ավելի լավ հասկանալ քաղաքական ու տնտեսական խնդիրները, վորպեսդի ավելի կուլտուրական դառնաւ։

Գյուղի կոմիերիտականները պետք ե դառնան առաջամարտիկներ և գյուղը սոցիալիստորեն վերակառուցելու համար կազմակերպիչներ։ Զի կարելի բռնուրյամբ սփափել զյուղացիուրյանը, վոր նոր ձեւվի կյանք վարեն։

Դյուղացիությանը վոչ թե բռնությամբ պետք ե քաշել զեսի կոռպերացիան և կորոնտեսությունը, այլ համոզելով յեվ ապացուցելով նրանց՝ կոռպերացիայի ոգտավետությունը և տնտեսությունը միասնաբար վարելու ոգոււտը:

Պետք ե ցուց տալ գյուղացուն, թե ինչու յե անհրաժեշտ ժողովրդական տնտեսությունը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելը յեթե մենք չենք ցանկանում, վոր կապիտալիստներն ու կարգածատերերը վերականգնեն իրենց իշխանությունը և բնչ յեղանակով և կատարում կոմունիստական կուսակցությունն այդ վերակառուցումը:

Վորպեսզի կարողանանք այդ բոլորը կատարել և ոժանդակել գյուղացիներին՝ հասկանալու կուսակցության ու խորհրդային իշխանության քաղաքականությունը, գյուղի կոմիտեի համար պետք ե ուսումնասիրի, հասկանա այդ բաղաձականությունը յեվ գառնա բաղաձականապես գրագետ—այդ յուրաքանչյուր կոմիտեի համար առաջնակարգ պարագանությունն ե:

Կոմիտեի համար քաղցրագիտությունը միմիայն նրա համար չի սովորում, վոր զարգացած մարդ լինի ։ Ենինն ասել ե, վոր «Յերիտասարդության կոմունիստական միուրյունն այն ժամանակ միայն կարգարացնի իր կոչումը, վոր նա կմնա յերիտասարդ կոմունիստական սերնդի միուրյուն—յերե նա իր ուսման, զասփարակման յեվ կրուրյան յուրաքանչյուր բայլը կկապի շահագործողների գեմ մղվող բնգիանուր պայմանում աօխատագործերի ունեցած մասնակցությանը»:

Ենինն ասել ե, վոր կոմիտեի միությունը պետք ե լինի իրեն մի հարգածող խումբ, վոր պատրաստ լինի ամեն մի աշխատանքում ցուց տալու իր ոգնությունը և հայտնաբերելու իր նախաձեռնությունը:

Վոչ միայն պետք ե մղել կոռպերացիայի համար, այլև աշխատել կոռպերացիայի խանութ բանալ այնտեղ, վորտեղ չկա և կոռպերացիայի մեջ մանել առաջինը:

Վոչ միայն պետք ե խոսքով համոզել գյուղացիներին՝ բազմադաշտ սիստեմի, անասուններին խելացի կերակրելու, ընտիր սկրմելը ցանելու ոգուտները, այլ այդ բարելավումները կիրառելու մեջ պետք ե լինել առաջինը:

Վոչ միայն պետք ե հասկանալ գյուղական տնտեսության կոլեկտիվացման անհրաժեշտությունը, այլ կոլտնտեսություններում, արտելներում և կոմունաներում միասնական հողի մշակ-

մանն անցնելու մեջ պետք է լինել առաջինը—ալսպիսի պարտականություններ ունի գլուղի կոմիերիտականը:

Կոմունիստական կուսակցությունը կամենում և Ռուսաստանն աղքատ յերկրից դարձնել հարուստ և սոցիալիստական մի յերկիր: Յեզ հարկավոր է, ինչպես լենինն և ասել, «Վոր կոմյերիտմիուրյունն իր կրուրյունը, իր ուսումը յեզ իր գաստիարակուրյունը միացնի բանվորների յեզ զյուղացիների տօխաւանինների, վոր նա չփակվի իր զպրոցների պատերում յեզ չափանափակվի միմիայն կուսակցական գրեթե կարզալով: Գրի, զպրոցի յեզ ուսման նպատակն է ավելի զինել մարտիկներին սոցիալիզմի համար, ոգնել նրանց պարզ կերպով սեսնելու այն նպատակները, զետի վորը նրանք զնում են, այն նանապարհը, վորով շարժվում են, այն վանեցները, վորոնց այդ նանապարհները կարող են հանգիպել»:

---

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՍԴԻՐՆԵՐԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունը 1917 թվին գուրա քաշեց Ռուսաստանին այն սպանգից, զոր ստեղծել ելին կապիտալիստներն ու կարվածատերերը: Պատերազմը քայլաբել եր տեղական տնտեսությունը: Ահազին թվով աշխատավորներ ելին կարգի տնտեսությունից ճակատի համար: Նույնպես ահազին քառակությամբ ձիեր ելին հավաքել պատերազմի համար:

Իմակերխալիստական պատերազմը վերջանալուց հետո խորհրդային յերկրի բանվորներն ու գյուղացիներն ստիպված չեղան յերեք տարի քաղաքացիական պատերազմ վարել սպիտակ զվարդիականների—կարվածատերերի և կապիտալիստների դեմ, վորոնք չելին ցանկանում հրաժարվել իրենց այն կարվածներից, զործարաններից ու ֆաբրիկաններից, զոր նրանցից խրիլ ելին բանվոր դասակարգն ու գյուղացիությունը և ստիպված ելին պատերազմ մղել այն ուսարերկրյա կապիտալիստների դեմ, վորոնք ողնություն ելին հասցնում արդ սպիտակ զվարդիականներին:

Յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսությունը, զրա հետնակ գյուղական տնտեսությունը, ե՛լ ավելի անկման դիմեց:

Գյուղական տնտեսության քայլայման հետևանքով առաջացած 1921 թվի անբերիրիությունն ու սովոր առանձնապես խիստ հարված հասցըին Վոլգայի շրջանի գյուղատեսությանը:

### ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱՎԵՐԵՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյուղական տնտեսության քայլայումն ամենից առաջ արտահայտվեց ցանքալին տարածության կրճատումով: Վարուցանքը պակասեց: հողի մշակման համար չկալին բավականաչափ բանվորական ձեռքեր, անասուն, ինվենտար և սերմ:

1922 թվին հողը 37%-ով պակաս եր ցանքած, քան պատերազմից առաջ, 1913 թվին:

Զիերի, խոշոր անասունների, վոչխարների և այծերի քառակը մեկ լեռը որդով պակասից: Խոզերը պատերազմից առաջ լեղածի կիսից ել պակաս ելին:

Յեզ այն հողը, վոր արդ տարիներում եր ցանվում, վատ և պակաս ըերք եր տալիս, քան պատերազմից առաջ, վորովհետեւ հողն ավելի վատ եր մշակվում:

Ազսպիս, որինակ, պատերազմից առաջ մուսաստանում միջն հաշվով մեկ հեկտար ցանքից 900—982 կիլոգրամ (55—60 փութ) բերք ելին ստանում: Իսկ 1918 թվին՝ միմիայն 671 կիլոգրամ (41 փութ), 1920 թվին՝ 474 կիլոգրամ (29 փ.): Պատերազմից առաջ մեկ հեկտարից ստանում ելին 655—688 կիլոգրամ (40—42 փութ) ցորեն, 1918 թ.՝ 622 կիլոգրամ (38 փութ), իսկ 1920 թվին՝ միմիայն 425 կիլոգրամ (26 փութ):

Վատացավ նույնպես գարու, վարսակի և այլ տեսակի հացահատիկների ըերքը:

Հետեւապիս պատերազմը վերջանալու առաջին տարում գյուղատնտեսության տված ամրող հացը և այլ գյուղատնտեսական ձթերքները պատերազմից առաջ լեղածի կիսից մի փոքր ավելի լե (52<sup>0</sup>/<sub>0</sub>):

Խորհրդացին իշխանությունը բոլոր միջոցները ձեռք և առել, վորապեսզի վորքան կարելի լե ավելի արտգ կերպով վերականգնի պատերազմի և սովի պատճառով քայլքայլած գյուղական տնտեսությունը:

Քաղաքացիական պատերազմի տարիներին գյուղացիները պակաս ցանք ելին անում վոչ միայն այն պատճառով, վոր սերմի և անասունի պակաս ունելին, այլև այն պատճառով, վոր հացի վաճառքն արգելված եր: Հացի ամբողջ ավելցուկը գյուղացիներից վերցնում և հատկացնում ելին կարմիր բանակի և քաղաքների կարիքներին: Այդպիս անելին անհրաժեշտ եր, վորովհետեւ այլապես սպիտակ զվարդիականներին հաղթելն ու խորհրդագլին խշանությանը պաշտպանելը հնարավոր չեր լինի: Իսկ ստացած հացի փոխարեն բանվոր դասակարդը չկարողացավ գյուղացուն տալ քիչ թե շատ զգալի քանակությամբ արդյունաբերական արտադրանքներ, վորովհետեւ պատերազմի հետևանքով արդյունաբերությունն ավելի խիստ քայլքայման եր լենթարկվել քան գյուղական տնտեսությունը և վորովհետեւ նա սպասարկում եր գիշավորապես լերկի պաշտպանության կարիքներին:

Իսկ գյուղացին այսպիս և մտածում: ինչո՞ւ ցանեմ, քանի

վոր միհնուցնն և՝ հացի ավելցուկը չի կարելի ծախել և լեթե հացը պարենմասնատրումով վերցնելու լին:

«Թագմական կոմունիզմի» բաղաբականությունը պատերազմի ժամանակի հաճախամանեներից քելազրված հարկադրական մի բաղաբականություն եր: Տնեսական տեսակետից այդ բաղաբականությունն աննպատակահարմար բաղաբականություն եր, վորովինեան նա գլուղացիների մեջ ցանկություն առաջ չեր բերում լիրկրում իրենց տնտեսությունն ընդարձակելու և հացի ու այլ մթերքների արտադրությունը մեծացնելու: Այդ պատճառով ելք բաղաբացիական պատերազմը վերջանալուց հետո կարիք գլուղացից փոխել «ռազմական կոմունիզմի» բաղաբականությունը և անցնել մի այնպիսի բաղաբականության, վորը ցանկություն առաջացներ գլուղացու մեջ ընդարձակելու գլուղատնտեսական արտադրությունը:

Ուստի բաղաբացիական պատերազմը վերջանալուց հետո (1921 թվին) կառավարությունը պարենմասնատրումը վերացրեց: Փոխանակ հացի բոլոր ավելցուկները վերցնելու, խորհրդային կառավարությունը սահմանեց պարենային հարկ: Գլուղացին հարկ տալով հնարավորությունն ստացավ հացը և այլ գլուղատնտեսական մթերքները վաճառելու և նրանց շուկա գուրս բերելով՝ գործարանային ապրանքների հետ փոխանակելու: Այսպիսով գլուղացիները շահագրգռվեցին, վորքան կարելի էր շատ ցանք անել, հողը լավ մշակել և մեծ բերք ստանալ:

Գլուղացիների դրությունն աստիճանաբար լավացավ և գլուղացիական տնտեսության մեջ անասունների և ինվինտարի քանակը մեծացավ:

Բաղաբացիական պատերազմը վերջանալուց հետո չորս-հինգ տարվա ընթացքում հաջողվեց գլուղական տնտեսությունն ընթացիական մթերքները վոչ թե պակաս, այլ դեռ մի քիչ ել ավելի լիին (108'%) նախապատերազմանից: Հատկապես իիստ առաջադիմեցին գլուղական տնտեսության՝ արդյունաբերության համար հում նյութ արտադրող ճյուղերը, այսպես կոչված տեխնիկական մշակույթները (բացառությամբ դրանց առանձին տեսակների, ինչպես որինակ վուշը, վորի մեջ դեռևս մենք չենք հասել նախապատերազման լիակատար վերականգնմանը):

Հացի արտադրության աճումը լիրկրում նկատելիորեն ավելի գանդաղ եր տեղի ունենում և ներկայումս դեռևս նախապատերազման մակարդակից ցածր եւ:

1. Ի՞նչ ե ռազմական կոմունիզմը:
2. Ինչո՞ւ պարենմասնաօրումք փոխարինեցին պարեննեաւկով:

### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Տնայած վոր մեր յերկրի գյուղական տնեսության մեջ յեղած ավերումք վերացվեց յևլ ներկայումս ընդհանուր տռմամբ պակաս բանակուրյամբ զյուղանեսական մրերքներ չի արագրվում, բան պատրազմից առաջ, մեր գյուղացին իր գյուղական տնեսուրյունից շատ քիչ յեկամուռ է ստանում:

Միջին հաշվով՝ գյուղացիական տնտեսությունից գյուղացիական բնակչության մեկ հոգուն ընկնող տարեկան լեկտմուտը կազմում է.

Վատակայի նահանգում . . . . .	36	ոռւրի:
Չերեպովեցի » . . . . .	25	»
Սարատովի » . . . . .	26	»
Որլովի » . . . . .	28	»
Չերնիգովսկի » . . . . .	31	»
Հյուսիսային Կովկասում . . . . .	37	»

Այսպիս ել համարյա ամբողջ Խորհրդակին Միության մեջ:

Բացի գյուղական տնտեսությունից ստացվող լեկամուտներից, գյուղացիների մեծ մասն ունի նաև կողմանկի յեկամուտներ: Համարյա բոլոր չքավոր տնտեսություններն իրենց լեկամուտների կեսը (յերենն ել ավելին) ստանում են իրենց ընտանիքի անդամների՝ կուլակային տնտեսություններում, սեղոնային շինարարական գործերում և գործարաններում ունեցած վարձու աշխատանքից: Հարյուր հազարավոր գյուղացիներ պարագում են տնայնագործական արհեստներով:

Այդու հանդերձ գյուղական բնակչության ունեցած լեկամուտները շատ քիչ են: Գյուղական բնակչության լուրաքանչյուր հոգուն միջին հաշվով տարեկան ընկնում է 40—50 ոռւրլու լեկամուտ:

Գյուղացիական տնտեսության չքավոր և պակաս յեկամտարեր լինելու պատճառները հասկանալի են:

Աշխատանքի յեռուն շրջանում մի փոքր տնտեսության մեջ վոչ միմիայն իրենք՝ տնատերերն են աշխատում, ալլև նրանց կանաչք ու յերեխաները: Գյուղացու գլխավոր մտահոգությունը բերքն

և Գյուղացին բերքի մասին և մտածում և նրա հույսով և ապրում: Յեթե բերքն անհաջող է, վատ ե, գուղացու գործը զբժշկար է:

Իսկ մեր յերկրի բերքատվությունը մինչև այժմ դեռ վատ և. Մեր յերկիրը կարող եք ավելին տալ, քան այժմ և տալիս:

Մեկ հեկտար տարածություն հողից ստացվող տարեկանի (րօյք) միջին բերքը Որլովի և Կալուղայի նահանգներում հասնում և 688 կիլոգրամի (42 փութ), Պակովի նահանգում՝ 802 կիլ. (49 փ.), Վատկայի նահանգում՝ 859 կիլոգրամի Յարոսլավի նահանգում՝ մոտ 950 կիլ. (58 փ.), (52½ փ.), Մոսկվայի նահանգում՝ 1056 կիլոգրամ. (64½ փ.):

Այդպիսի ցածր բերք ունեն նաև ցորենը, գետնախնձորը, (կարտոֆիլը), արևածաղկեր, վուշը և գյուղատնտեսական այլ բույսերը:

Իսկ արտասահմանում, վորոտից հողը մերինից չավ ել չե, իսկ շատ տեղերում ել նույնիսկ վատ ե, ավելի բերք են ստանում, քան ԽՍՀՄ-ում: Որինակ, Անգլիայում տարեկանի մեկ հեկտար ցանքից ստանում են 2.457 կիլոգրամից (150 փ.) ավելին Բելգիայում 2.129 կիլոգրամից (130 փ.) ավելի բերք: Մեկ հեկտար ցորենի ցանքն Անգլիայում և Գերմանիայում տալիս ե 2.293 կիլ. (140 փ.) բերք, Բելգիայում նույնիսկ 2.620,8 կիլ. (160 փութ): Նույն զբությանն են նաև զարու, վարսակի և այլ հացահատիկների ցանքերը:

Բերքը վերցնելով, գյուղացին ամենից առաջ պետք և իր և իր ընտանիքի համար հացի և անասունի համար կերի պաշարի պատրաստություն տեսնի: Գյուղացին վաճառքի համար շուկա կարող և գուրս բերել միմիայն արդ պաշարի պատրաստությունը տեսնելուց հետո մնացած ավելցուկները:

Իսկ շատ ավելորդ և աղատ հաց և թում չքավոր և միջակ գյուղացուն:

Մոտավոր հաշվով միջակ գյուղացիական տնտեսությունը վաճառում և տարեկան 100-ից մինչև 150 ռուբլու գյուղատնտեսական մթերքներ:

ԱՌՐԴԱՆ ԲԵՐՔ ԵՆ ՍՅԱՆՈՒՄ ՄԵԿ  
ԴԵՍՏԱԾԻՆԵԼՑ ՄԵԶՆՈՒՄ ԵՆՎ ԱՐԵՍԱԾՄԱՆՈՒՄ

ԹԵՂԻՄ	ԳԵՐՄԱՆԻԱ	ԽՍՀՄ
Յորեն 156 փ.	110 փ.	38,1 փ.
Տարեկան 149 փ. (րօյք)	110 Ճ	40,3 Ճ

Զքավորական տնտեսությունները վաճառում են դեռ ավելի պակաս: Զքավորական տնտեսությունների մի զգալի մասը բոլորովին չի կարողանում գլուղատնեսական մթերքները վաճառելը հաճախ չքավոր-գլուղացու ունեցած հացն իր ընտանիքին և կերն իր անասուններին չի բավարարում և նաև ստիպած ե լինում այդ պակասը լրացնել գնելով:

Սակայն մեր գլուղական տնտեսության դժբախտությունը միայն նրանում չե, վոր հացի բերքը վատ ե: Դժբախտությունը նրանումն ե, վոր մեր գլուղացիները մեծ մասամբ այնպիսի զլուղատնեսական մշակութներ են ցանում, վորոնք մեծ լիկամուտ տալ չեն կարող:

Մեր յերկրում ամենից շատ ցանում են տարեկան (րօյք) և շատ քիչ ցորեն, վորն ավելի արդունավետ ե: Տեխնիկական բոււկների ցանքերը թեև ավելի արագ են մեծանում, քան հացի ցանքերը, այնուամենայնիվ նրանք շատ քիչ են:

Վատ և զրված նաև անասնապահության—անասունների բազմացման գործը:

Վերջին տարիներում ցանվող տեխնիկական բոււկներն իրենց մակարդակով 25—30% ունի ավելի լին, քան պատերազմից առաջ: Բայց դրա փոխարեն հացահատիկներ, մանավանդ առետրի համար ամենաանհրաժեշտ հացահատիկներ՝ ցորեն, գարի—զգալիորեն պակաս են ցանվում, քան պատերազմից առաջ (որինակ, ցորեն ցանվում ե նախապատերազմանի միմիայն 83% -ի չափով): Հասկանալի լի, վոր այս հանդամանքը պակասեցնում ե յերկը հացի քանակը:

Սակայն ի՞նչն ե պատճառը, վոր գլուղական տնտեսությունը մեր յերկրում այդպես լիտ ե մնացել: Ո՞վ ե մեղավորը, վոր մեր գլուղացին աղքատ ե, անգրագետ ե և անկուլտուրական: Ի՞նչն ե պատճառը, վոր մեր արգավանդ հողը վատ բերք ե ունենում և գլուղական տնտեսությունն այդքան ցածր և քիչ արդյունք ե տալիս:

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

Պատերազմից առաջ ևս մեր գլուղական տնտեսությունը չափից դուրս վատ եր տարվում:

Ուստաստանի գլուղացին պատերազմից առաջ, ցարական հասարակարդի ժամանակ շատ ավելի վատ եր ապրում, քան այ-

Ժըմ: Ավելի լավ եր ապրում միմիայն զյուղական հարուստների— կուլակ-աշխարհակերների փոքրաթիվ վերնախավը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ ամեն տարի հարյուր հազարավոր զյուղացիներ գյուղերից գնում ելին քաղաքները—գործարաններում, ֆաբրիկաներում, ինքաթուղներում և արհեստանոցներում իրենց համար աշխատանք ճարելու Խնչներ ստիլում այդ զյուղացիներին թողնել, հեռանալ իրենց հայրենի գյուղերից: Դրան կարելի է միմիայն մի պատասխան տալ. —կարիքն եր ստիպում: Գյուղում ուժելու վոչինչ չկար: Գյուղացիական տնտեսությունների մեծ մասը տարեց տարի ավելի և ավելի աղքատանում ու քարքարվում եր:

Ցարական կարգերի որոք գյուղի աղքատացման առաջին պատճառը զյուղացիական տնտեսությունների ունեցած հողի սահավությունն եր: Ճորտատիրական իրավունքի հարյուրավոր տարիների գոյության ընթացքում զյուղացին աշխատել եր կարգածատիրոջ համար և վոչ միայն հողի տեր չեր կարողացել դառնալ, այլ ինքն իր տերն ել չեր: Ճորտատիրական կախումից աղատվելուց հետո զյուղացիներն ստացան փոքրիկ, աննշան հողամասեր: Հողի մեծ և լավագույն մասը մնաց կարգածատերերի ձեռքին: Ստացած հողի գիմաց զյուղացիներն ստիպված ելին կարգածատերերին հատուցել իրեք անդամ ավելի: Խերակե Ա—Շ հեկատանոց\*) մի փոքրիկ հողակտոր ունեցող զյուղացիական տնտեսությունը ծանրաբեռնված լինելով ցարական զանձարանին որվելիք հարկերով, բանկերին ունենալիք պարտերով, կալվածատերոց որվելիք ուրբերով, զարգանալ յեվ ամրապնդվել յեր կարող:

Ցառասուն տարի շարունակ յուրաքանչյուր, տարի զյուղացին իր հողամասի համար ցարական գանձարանին տուրք և տվել: Գյուղացիներին տրված կարգածատիրական հողը կառավարությունը լիրեք անզամ ավելի էր գնահատել, քան հողն արժել այն ժամանակ: Քառասուն տարի օսրունակ զյուղացիներն իրենց հողին հարկ են սկսել յեվ այդ ժամանակի ընթացքում ամբողջ Ծովասառանում օվել են հոկտյական մի գումարի հասնող մեկ ու կես միլիարդ (միլիարդը հավասար է հազար միլիոնի) վոսկի ռուբլի:

Գյուղացիներին ել վոչ թե լավագույն, այլ ամենավատ հողըն ելին տալիս ճորտատիրական իրավունքը վերանայուց ա-

\*) Հեկտարը հազարար ե 9/10 դեսյատինի:

ուաշ այն հողերից, վորոնցով գլուղացիներն ոգտվում ելին, կալվածատերերը կտրում և վերցնում ելին վարելահողի, մարգագետինների և արտավայրերի լավագույն կտորները:

Ի՞նչպես կարող եր գլուղացիությունն ալդպիսի պալմաններում իր տնտեսությունը բարելավել:

Սակավահողությունը և հողի պակասը խեղում եր գլուղացիությանը և հնարավորություն չեր տալիս նրան իր տնտեսությունը բարելավելու:

Բավարար քանկությամբ հող չունենալու պատճառով գլուղացիներն ստիպված ելին կալվածատիրոջից կապալով հող վերցնել: Կապալի համար ել ստիպված ելին անազին փողեր տալի կալվածատիրոջից կապալով հող վերցնելով, գլուղացին իրավես դառնում եր կալվածատիրոջ բարբակը, քանի վոր իր բերքի կիսից ազելին տալիս եր կալվածատիրոջն իրեւ հողի վարձ: Հաշվված ե, վոր գլուղացին կալվածատիրոջից կապալով վերցրած հողից ստացված լուրաքանչյուր 100 ռուբլի լեկամուտից մոտ 80 ռուբլի վճարում եր կալվածատիրոջը և միմիայն 20 ռուբլին եր մնում իրեն: Այդ 20 ռուբլու մի մասն ել դեռ ծախսում եր ինվենտարի, թշկանի և այլ կարիքների համար:

Գլուղացին կալվածատիրոջ համար աշխատում եր երի:

Սակայն ցարական կարգերի և կալվածատերերի տիրապետության որոք գլուղացիության ունեցած ամրող գժբախտությունն այդ չեր միայն: Բացի հողի գնման վճարումներից, գլուղացիների վրա բարդգում են ահազին հարկեր: Միջին հաշվով գլուղի բնակչության լուրաքանչյուր արական անդամի՝ տարեկան ընկնում եր 12—15 ռուբլի հարկ:

Ներկայումս, Խորհրդավորն իշխանության որոք գլուղացիները շատ ու շատ պակաս հարկ են տալիս: Միջին հաշվով գլուղի բնակչության լուրաքանչյուր անդամի՝ տարեկան 3—4 ռուբլի հարկ ե ընկնում: Ամբողջ գլուղացիության մեկ լերը բարդգից ավելին (չքավորներն ու սակավազոր միջակները) հարկ վճարելուց միանգամայն ազատ ե:

### ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՔԱՅՐԱՅՈՒՄԸ

Գլուղացիության աղքատանալու և քայլքալվելու պատճառները շատ ու շատ ելին: Նա անզոր եր ցարական կառավարությանը և կալվածատերերին վճարել բոլոր հարկերը, գնման վճարումները, բաժը և կապալավարձը: Յուրաքանչյուր տարի մեծա-

նոում եր պարտքերի և չվճարված հարկերի գումարը։ Պարտքերին ափելանում ելին նաև տոկոսներ և գյուղացիության պարտքերը գնալով աճում և մեծանում ելին։ Ենթասուն տարվա ընթացքում—1871 թվից մինչև 1900 թիվը—գյուղացիության ունեցած պարտքերի գումարը համարյա լիրեք անգամ մեծացել եր։ 1900 թվին գյուղացիական 1 դեստախն հողից ցարական գանձարանին պարտք եր հասնում միջին հաշվով 1ռ. 08 կոպ։

Ցարական գանձարանի հարկերը և կալվածատերերի հողի համար տրվելիք բազմաթիվ տուրքերը վճարելու համար գյուղացինեւն ստիպված ելին բաղցի յենթարկվելով, ծախելու իրենց հացն ու գյուղանենեսական այլ մրերեները։ Հացը վաճառելիու գյուղացին նոր ստրկական վիճակի մեջ եր ընկնում՝ այս անգամ արդեն առետրական-կապիտալիստի և գնորդի մօտ։ Գյուղացիության նեղ զրությունից սպավելով, կապիտալիստները նրանցից հողը գնում ելին ցածր գներով, չնչին կոպեկներով և ծախելով հսկայական ոգուաներ ելին անում։ Կապիտալիստներն են զլիթից, բերքեց գեռ յերկու-մերեք ամիս առաջ մեծ քանակությամբ հաց ելին գնում։ Հասկանալի է, զոր ալգավիսի գեղքերում առետրական-կապիտալիստը հացը ձեռք եր բերում համարյա ձրի։

Գյուղում հացի գնութեներով ելին զրայվում այնտեղի հարստաները, վորոնք հսարավորություն ունելին այդ գործում ավելի հարստանալու։ Գյուղացին մշտապես առետրականին և կուլակին պարտք լինելուց աչք չեր բաց անում և ստիպված եր լինում նրանից թանգ գներով վերցնել քաղաքավին ապրանքներ նապթ, մեխ, շաքար, լուցկի և այլ ապրանքներ։

Գյուղացիների հողի վրա ունեցած կլանքը գնալով ավելի դժվարանում եր և հարյուր հազարավոր գյուղացիներ լքելով իրենց փոքրիկ հողի կառուները, գնում ելին քաղաքները՝ իրենց համար աշխատանք գտնելու։ Սակայն գյուղերից քաղաքները թափող գյուղացիները, վարձվելով գործարաններում, ֆարբեկաներում, հանքերում իրեն բանվորներ, յենթարկվում ելին կապիտալիստների անսիրտ շահտգործմանը։ Կապիտալիստները գյուղի կարիքներից խեղճացած գյուղացիներին պակաս աշխատավարձ ելին տալիս, քան քաղաքի բանվորներին, վորոնք ավելի կազմակերպված ելին և ավելի խիզախ պայքար ելին մղում կապիտալիստների գեմ իրենց վիճակը բարելավելու համար։

Պատերազմից առաջ, 1918 թվին, Թուստանանում արգեն կային միքանի միլիոն հողազուրկ գյուղացիներ։ Ի հարկե,

նրանք բոլորը յեյին կարող լինել իրենց գուռղը յեվ զնալ Շաբ-  
րիկաներն ու գործարանները:

Արդյունաբերությունը ցարական Խուսաստանում քիչ եր  
դարզացած, և այդքան մեծ թվով բանվորական ձեռքերի կարիք  
չեր զգացվում: Ակամալից հողազուրկ և սակավահող գյուղացի-  
ներն իրենց զլուխը մի կերպ պահելու համար ստրկության ելին  
մտնում գյուղի կարվածատիրոջ ու կուլակի մոտ:

Ամաններ, փախից զանազան իրեր, տնալին մանր արդ ու  
զարդ պատրաստող տնախազործ-գյուղացիները նույնպես ստրկա-  
ցումից և աղքատությունից զերծ չելին: Նախ և առաջ նրանք  
իրենց աշխատանքի համար պետք են նույնթ (Материал) ունենաւ  
լին, յերկրորդը՝ տնախազործի համար զժվար եր իր պատրաս-  
տած իրերը վաճառել. դրա համար անհրաժեշտ եր, վոր նա 30—  
40 կիլոմետր և յերբեմն ել ավելի հետազորությամբ շուկաները  
գնարու. Ենով վերջապես չե՞ վոր ամեն անզամ իսկույն չի կարելի  
գնորդ գտնել:

Յերևան յեկան նոր շահագործողները—մեծաքանակ գնող-  
ները: Նրանք տնախազործ գյուղացիներից, ի հարկե, եժան գնե-  
րով գնում ելին նրանց բոլոր պատրաստած իրերը և հասկանալի  
յի, բարձր գներով նրանց նյութ ելին մատակարարում: Տնախա-  
զործին խիստ ստրկացնելու համար խոշոր գնորդը նրան ապա-  
ռիկ նյութ և յերբեմն ել փող եր պարտք տալիս—ապագայում  
աշխատելու համար:

Տնախազործությամբ պարապող գյուղացիները շատ չնշին  
և ավելի քիչ բան ելին աշխատում, քան ֆարբիկաներում և գոր-  
ծարաններում աշխատող բանվորները, վորտեղ կապիտալիստները  
նույնպես շատ քիչ աշխատավարձ ելին տալիս:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՍՏԱՐ

1. Վորո՞ն են զյուղացիական զաօների ցածր բերմանվու-  
րիան պատճառները:

2. Ենչո՞ւ եյին հեղափոխությունից առաջ զյուղացիները  
բայխոյման յենթարկվում:

#### ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ

Ահա, թե ինչ դրության մեջ եր գյուղացիության մեծամաս-  
նությունը հեղափոխությունից առաջ Գյուղացիական տնտեսու-  
թյունների մեծ մասի ամբողջ ինվենտարը կազմում ելին արորն

և ցաքանը։ Վոչ միայն տրակտորներ ու կալսիչներ գոյաւթյուն չունելին, այլ նույնիսկ շատ քիչ գյուղացիներ կային, գորոնք հասարակ գութաններ ունելին։ այդպիսի գութաններ ունելին մեծ մասամբ կուլակները։ Իսկ կանոնավոր սերմափոխության և ընտիր ու լավ սերմերով ցանք կատարելու մասին չքավոր-գյուղացին կարիք ել չեր զգում մտածելու։ Միմիայն ապրել և քաղցից չմեռնել—ահա, թե ինչով եր մտահոգված գյուղացին։

Իսկ այդ աղքատության ու քայլքարման կողքին կուլակային տնտեսությունները գնալով ավելի և ավելի ամրապնդվում ելին։ Ֆարական կառավարությունը, մանավանք 1905 թ. ենթափոխությունից եետո, ամեն կերպ խրախուսում եր կուլակային տնտեսությանը։ Ամուր կուլակային տնտեսություններին ոժանդակելու և նրանց զարգացնելու համար հրատարակված ելին հատուկ որենքներ (ստոլիպինյան)։ Համաձայն այդ որենքների, գյուղացիներն իրավունք ունելին գյուղական համայնքից առանձնանալ և կազմել առանձին խուսոր, մի առանձին տնտեսություն։ Խուսորներին և առանձնացած տնտեսություններին տրվում ելին զանազան արտօնություններ։ Նրանց հատկացվում եր լավ հող։ Նրանք ստանում ելին կալվածատիրական հողի մի մասը (գյուղացիական բանկի միջոցով), վորի անորենը կարգածատերերն ելին), ի հարկե, բարձր վճարով։

Խուսորներ և առանձնացած տնտեսություններ ելին կազմում ամենից ունեոր գյուղացիները, վորոնց ուժից վեր չեր այդ գաղթը կատարելու։ Խուսորները գաղթած կուլակները ցարական իշխանության ոժանդակությամբ արագ կերպով աճում և ի հաշվի գյուղի չքավորների ավերման հարստանում ելին։ Ցարական կառավարությունը խրախուսում եր կուլակներին այն հուսով, վոր հարստացող աշխարհակեր-կուլակը ցարի և կալվածատերերի պաշտպանության համար նրանց լեռներին սարի պես կանգնած կլինի։ Կուլակը քայլքարման գյուղացիների հողը գնելով—ավելի լեր ընդանձակում իր գաշտը։ Եժան բանվորական ուժ—բարեկներ—վորքան ուղեիք։ Կուլակի ունեցած բանվորական ուժը համարյա ձրի լեր։

Կուլակները միմիայն բատրակներին չեր, վոր շահագործում ելին։ Նրանք հարստանում ելին չքավորներին լծկան և մեռլալ ինվենտար վարձու տալով։ Կուլակն աճում ու գիրանում եր գյուղացուն ցանքի համար սերմացու փոխ տալով, վերցինի բերքի մեկ տերորդը, յերբեմն ել կեսն ստանալու պարմա-

նոզ։ Կուշակը հացը գնում եր դեռևս չհնձած, այն ժամակակի, յերք գյուղացու ընտանիքն ուտելու վոչինչ չուներ—հացը մինչև նոր բերքը չեր բավականացնում։

Կալվածատերերի յեվ կապիտալիստների տիրապետությունից ժառանգություն մնացած գյուղացիության ազբանությաւնը,— անու մեր յերկրի գյուղական անեսության յետամնացության զիմանալու պատճառը։

Միմիայն գյուղացու հողում չե, վոր գյուղական տնտեսությունը վատ և տեղի ունենում։ Խուսաստանի կալվածատերերի մեծամասնությունը նույնպես համարյա վոչ մի բարելավում իր կալվածներում չի մտցրել։ Ստանալով ցարական կառավարությունից հսկալական միջոցներ, վորոնք գոյանում ելին հողի համար գյուղացիների տված գնման վճարություններից, կալվածատերերն այդ փողերը ծախսում ելին վոչ թե մեքենաներ, գործիքներ, անսառուն գներու և առհասարակ գյուղական տնտեսությունը բարելավելու վրա, այլ վատնում ելին քեֆերի և ճոխ կյանք անցկացնելու վրա։

Միմիայն կալվածատերերի մի փոքր մասն եր իրոք բարելավում իր անտեսությունը, ձեռք բերելով անհրաժեշտ սարքավորում, ինվենտար և գյուղատնտեսներ հրավիրելով։ Այդպիսի կալվածատերերի տնտեսությունները դառնում ելին խոշոր կապիտալիստական կալվածներ, վորոնք ունենում ելին ահազին թվով վարձու բատրակ-բանվորներ, կատարելագործված մեքենաներ, ճիշտ տնտեսավարություն և առատ բերք։ Այն կալվածատերերը, վորոնք անցնում ելին գյուղական տնտեսությունը կապիտալիստական լեղանակով վարելուն, իրենց կալվածներից մեծամեծ ոգուտներ ելին ստանում։

Սակայն այդ կապիտալիստական տնտեսությունները գյուղացիությանը վոչ մի ոգուտ չելին տալիս։ Ընդհակառակը, կալվածատիրական տնտեսության կապիտալիստական ձեր զարգացումն ել ավելի յեր ուժեղացնում գյուղի չքավորների շահագործումը։ Կալվածատեր-կապիտալիստն իր կալվածում բատրակին պակաս չեր ճնշում ու շահագործում, քան յերը հողը չքավորներին տալիս եր կապալով։

Ցարական իշխանության կողմից պաշտպանության արժանացող կալվածատերերի և կապիտալիստների շահագործումը հսարավորություն չեր տալիս գյուղացիական տնտեսությանը վոտքի կանգնել։ Այդ պատճառով ել մեր գյուղական տնտեսությունը

շատ պակաս արտադրանքներ եր ունենում, քան կարող եր ունենալ լավ մշակելու և տնտեսությունը կանոնավոր վարելու դեպքում։ Այդ և պատճառը, վոր մեր յերկիրն ալղքան աննշան ըերք և տալիս։

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. ԽԵցո՞ւ յեր ցարական կառավարությունն ոժանգակում կուլակներին։

2. Կ՞եզ իիման վրա յեր բում կուլակային տնտեսությունը։

ՀՈԿՏԵՄԲԵՐՑԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՅՈՒԴԱՑԻՌԻ-  
ԹՅՈՒՆԸ

Գյուղացիներն ամբողջ հոգով ատում ելին կալվածատերերին։ Սովի և աղքատության հուսահատ վիճակի հասած գյուղացիները բազմաթիվ անգամներ ապստամբություններ ելին բարձրացրել յերբեմն այս և յերբեմն այն նահանգում և զբանում։

Ճորտատիրական իրավունքի ժամանակ նուսասանում գյուղացիության կողմից հաճտիս ելին ապստամբություններ և բունաեր բռնկում կալվածատերերի դեմ։ Սակայն ճորտատիրական իրավունքը վերանալուց հետո յել դրանք վոչ թե դադարեցին, այլ ընդհակառակն, ավելի աճեցին ու ծավալվեցին։ Գյուղացիներն ամեն կերպ աշխատում ելին վրեժ լուժել քենախնդիր կալվածատերերից։ Նրանք դիտմամբ իրենց անասունները քշում ելին կալվածատերերի մարգագետինները, կոտորում ելին նրանց անտառները, հարձակում ելին գործում կալվածների վրա, կրակի ելին մատնում կալվածատիրական ագարակները, բնակության շենքերը, ախոռներն ու պահեստները։ Դեռ 1905 թվի հեղափոխությունից առաջ շատ գյուղեր բոլիոս ելին հայտարարել կալվածատերերին։ Այդ գյուղերի գյուղացիներն ընդհանուր համաձայնության ելին յեկել՝ հրաժարվել կալվածատերերի տնտեսություններում աշխատելուց, հրաժարվում ելին կալվածատերերի հողը կապալով վերցնելուց և նրանց վորեն մթերք վաճառելուց։

1902 թվին համարյա ամբողջ նուսասանում բռնկվեցին գյուղացիական ապստամբություններ, վորոնք ավերի լենթարկեցին հարյուրավոր կալվածատիրական հողեր։

Սակայն այդ բոլոր ապստամբությունները վերջացան գյուղացիների պարտությամբ։ Մեծ եր կալվածատիրական իշխանու-

թլան ուժը, իսկ գլուղացիները թույլ և վատ ելին կազմակերպված։ Գյուղացիուրյունն իր ամբողջ զքբախուրյան պատճառը համարում եր կալվածատիրոջը, իր զուղի չեվ օքանի ուրյատգնիկին։ Գյուղացիուրյունը դեռևեկս չեր ենսնում չեվ չեր հասկանում, վոր կալվածտերեւի ուժը նրանց կազմակերպվածուրյան մեջ ե, վոր հայր ցարը վոչ թե գլուղացիուրյան պատճառն ե, այլ կալվածատիրական այն շայկայի պարագլուխը, վորն որ որի վրա զյուղացու հոգին հասնում ե:

Գյուղացիությունը դեռևս չեր հասկանում, վոր միմիայն բանվոր զասակարգի հետ դաշն կնքելով կարելի կլինի կալվածտերերին և ցարին—կալվածատիրերի գլխավորին—հաղթել։

Գյուղակից բանվորները համոզվել ելին, մանավանդ 1905 թ. հեղափոխությունից հետո, վոր բանվոր զասակարգի հետ դաշնք կնքելը մի անհրաժեշտություն եւ Գյուղացիությունն ալդ ժամանակ կալվածտատիրական իշխանության դեմ ապստամբեց։ Սակայն գյուղացիական ապստամբությունների և քաղաքներում տեղի ունեցող բանվորական ապստամբությունների միջև իսկական շաղկապ գորություն չուներ։ Գյուղում արդպիսի շաղկապի անհրաժեշտությունն ըմբռնում ելին միմիայն այն առաջադեմ գյուղացիները, վորոնք մեծ մասամբ ինդել ելին քաղաքներում և ֆարբիկաներում ու գործարաններում աշխատել ելին։

Գյուղացիների ապստամբությունները վատ ելին կազմակերպված։ Մի գավառում կրակի ելին մատնում կալվածատիրական տները, ուրյադնիկներին և պրիստաթներին ծեծի ելին թարկում, իսկ հարևան գավառում գյուղացիները վոտքի չելին կանգնում և ոգնության չելին հասնում։ Ցեղ 1905 թ. գյուղացիական շարժումները մեծ մասամբ ենդական շարժումներ ելին, ուղղված իրենց կալվածտատիրոջ և իրենց ուրյադնիկների դեմ։

1905 թ. հեղափոխությունը ցարական կառավարությունը կարողացավ իսեղել այն պատճառով, վոր գյուղացիությունը հեղափոխական շարժման ժամանակ բանվորներին չսկաշտպանեց։ Սակայն 1905 թվին գյուղացիության թափած արյունը զուր չկորավ։ Գյուղացիներն սկսեցին հասկանալ, վոր կալվածտերերին հաղթել կարելի իս այն դեպքում միայն, լեթե բանվոր դասակարգի հետ դաշն կապին և կովեն վոչ թե առանձին կալվածտերերի, այլ ամբողջ ցարական, կալվածտատիրական կարգերի դեմ։

1914 թվին կապիտալիստների և կալվածտերերի սկսած արյունահեղ պատերազմն ել ավելի համոզեց գյուղացիությանը,

վոր ինքնակալությունը տապալելու համար անհրաժեշտ և բանգոր դասակարգի հետ դաշինք կապել:

Ինքնակալության տապալումից հետո (1917 թ. մարտին) իշխանությունը գրավեցին կապիտալիստները: Սակայն կապիտալիստների իշխանությունը չթեթևացրեց զյուղացիության վիճակը: Կապիտալիստները չելին ցանկանում վերջ տալ պատերազմին, վորը հարցուր հազարավոր բանվորների և զյուղացիների կյանքեր եր խլել, վորովհետև նրանք ցանկանում ելին պատերազմի հետևանքով նորանոր լերկըներ գցել իրենց տիրապետության տակ:

Կապիտալիստներն իշխանությանը տեր դառնալով, կարգածատերերից հողը չվերցրին և զյուղացիներին չտվին: Նրանք ցանկանում ելին, վոր գյուղացիները կարվածատերերին փող տան, եսդի գնում կառարեն: Նրանք ցանկանում ելին գյուղական տնտեսությունը դնել կապիտալիստական հունի մեջ, վորի մեջ հաղթանակող կարող ելին լինել միմիայն կուլակները:

Գյուղի չքավորները հասկացան, վոր վոչ միայն կարվածատերերը, այլև կապիտալիստները գյուղացիների թշնամիներն են: Ամենաչքավոր գյուղացիները հասկացան, վոր միմիայն կապիտալիստների իշխանությունը տապալելով, միմիայն բանվոր դասակարգի իշխանությունը հաստատելով կարելի կլինի պատերազմը դադարեցնել, հող ստանալ, և կարվածատիրական ու կապիտալիստական շահագործումից ազատվել:

Ամենաչքավոր գյուղացիության հետ դաշն կապելով՝ բանվոր դասակարգը 1917 թվին տապալեց և վոչնչացրեց կապիտալիստների իշխանությունը:

Իսկ թուչ սպասելիքներ ունելին գյուղացիները հեղափոխությունից ի՞նչ տվեց Հոկտեմբերյան հեղափոխությունը գյուղացիներին:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Ա. Ինչի՞ համար եյին գյուղացիները կովում կալվածատերերի գեմ:

Տ. Ինչո՞ւ 1905 թվին գյուղացիները չկարողացան հաղթել կարվածատերերին:

#### ՀՈՂԸ—ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

Նախ՝ Հոկտեմբերյան հեղափոխությունը գյուղացիներին հող տվեց: Նրա՝ այդ հողի մասին միլիոնավոր գյուղացիներ տաս-

նլակ և հարկուրավոր տարիներ եր, ինչ յերազում ելին: Կալվածատերերի, կուլակների և վոստիկանների կողմից քաղցի յենթարկված, նրանց առաջ ստորացած, նրանց ծաղը ու ծանակի առարկան դարձած և հարկերով ու տուրքերով կաշկանդված գյուղացին իր բոլոր հուլսերով սպասում եր, թե հող կստանա և լավ կյանք կվարի: Տամնակ տարիներ գյուղացիներն այն հուլսն ունելին, թե ցարը կտեսնի, ցարը կհասկանա ուամիկի կյանքի ծանր վիճակը և հրաման կտա կալվածատերերի հողից գյուղացիներին բաժին տալ: Բայց այդ հուլսերը չելին իրականանում և չելին ել կարող իրականանալ, վորովհետեւ նենց ինքը՝ ցարը խորհրդագույն մի կալվածատեր եր (ցարական ազգը տեր եր միլիոնավոր զիսխատին հողի) — չեր տվել և յերբեք ել չեր տա իր հողը գյուղացիներին:

Հողը գյուղացիներին տալ կարող եր և ավեց միմիայն Նոկտեմբերյան հեղափոխությունը: Միմիայն կալվածատերերի և կապիտալիստների իշխանության տապալումով և բանվոր դաստկարգի իշխանության — պղոյիտարիատի դիկտուրայի — հաստատումով եր, վոր գյուղացիները հող ստացան:

Խորհրդագույն իշխանության առաջին գեկրետներից (որինք նորից մեկը հողի գեկրետն եր: Ավտ գեկրետն ընդունեց հենց Հոկտեմբերյան հեղաշրջման մյուս որը (1917 թ. հոկտեմբերի 28-ին) խորհուրդների յերկրորդ համառուսական համագումարը:

Խորհրդագույն իշխանության առաջին գործն այն յեղավ, վոր նա վորոշեց հարցունիս գրավել (վերցնել առանց գնումի) բոլոր կալվածատիրական, վանքապատկան, ցարական և յեկեղեցական հողերը:

Բացի գրանից, խորհրդագույն իշխանությունն ընդհանրապես հողի ամեն տեսակի մասնավոր սիփականությունը վերացրեց: Ինչժամ համար ալղակս արվեց: Այդպես արվեց նրա համար, վորովեսզի հողի առ ու ծախը վոչչացվի: Յեթև խորհրդագույն իշխանությունը թուլլատրեր հողը առ ու ծախի առարկա դարձնելու, այն ժամանակ նորից հարուստները գյուղի չքավորներից հողը կդնելին և հողը նորից կանցներ հարուստների և կուլտակների ձեռքը: Նորից հանդես կդայլին նախ մանր և ապա խոչոր հողի սեփականատերերը — կալվածատերը:

Իսկ ում հասավ կալվածատերերից, վանքերից, յեկեղեցիներից և ցարի աղքականներից վերցրած հողը:

Այդ հողը տրվեց չքավոր և միջակ գլուղացիներին ոգտագործելու:

Միմիայն ՌՍՖՌ-է չքավոր և միջակ-գլուղացիների ձեռքն անցավ 110 միլիոն հեկտար (մոտ 100 միլիոն գետատին) հող:

Այդ 110 միլիոն հեկտար հողից 50 միլիոնից ավելին վերցված եր կալվածատերերից: Ազգչափ հող եր վերցվեց կուլակներից և բաժանվեց, բաշխվեց հողազուրկ և սակավահող գլուղացիներին:

### ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՈՒՄԸ

Իսկ ի՞նչ ստացվեց գրանից: Նախ՝ բոլոր հողազուրկ տնտեսություններն ել հողի մաս ստացան: Մենք արդեմ կարգացինք, վոր հեղափոխությունից առաջ կային միքանի միլիոն այդպիսի տնտեսություններ: Դրանք բոլորն ել հող ստացան: Ապա՝ ավելացավ սակավահող գլուղացիների հողի քանակը: Հեղափոխությունից առաջ փոքրիկ հողամասեր (մինչև 2 հեկտ.) ունեցող բոլոր գլուղական տնտեսությունների յերեք քառորդից ավելին լրացուցիչ կերպով հող ստացավ:

Դրա փոխարեն, հողաշատ և մեծ մասամբ կուլակային տընտեսությունները շատ ու շատ պակասեցին: Նրանց հողի մի զգալի մասը գրավվեց:

Այսպիսով Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո խորհրդացին գլուղերում գլուղացիության հավասարեցում առաջացավ. հողազուրկ տնտեսություններն անհետացան և խիստ կրճատման յինթարկվեց հողաշատ տնտեսությունների քանակը: Դրա փոխարեն մեծացավ միջակ չափով—4-ից մինչև 8 հեկտար—հողամասունեցող տնտեսությունների քանակը, նայած ուղղոնին:

Կալվածատերերից ու կապիտալիստներից գրավեցին վոչ միայն հողը, այլ և ինվենտարն ու անասունը, վորը նույնպես բաժանեցին գլուղի չքավորներին:

Հող սահմանվ, չքավոր տնտեսությունները, իհարկե, միանդամից չկարողացան այն ոգտագործել, ցանել Բավարար չափով ինվենտար և անասուններ չկային: Միմիայն քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո, յերբ ԽՍՀՄ-ի ժողովրդական անտեսությունն ամրանալ սկսեց և խորհրդակին կառավարությունը կարողացավ մեծ աջակցություն, ոգնություն ցուց տալ գլուղացիներին, գլուղի չքավորներն աստիճանաբար սկսեցին լուրացնել, ոգտագործել և ցանել քաղաքացիական պատերազմի ժամանակ ստացած հողը:

Յեկ արդեն քաղաքացիական պատերազմի վերջին տարում ցանքագուրկ տնտեսությունները շատ ու շատ քիչ ելին, քան հեղափոխությունից առաջ:

Հաշվված է, վոր լուրաքանչյուր 1000 գլուղացիական տընտեսությունից՝

	1917 թ.	1920 թ.
Ցանքագուրկ ելին . . .	110 տնտ.	50 տնտ.
2 հեկտարից վոչ ավելի		
ցանք ունելին . . .	300 »	480 »
2-ից մինչև 4 հեկտար		
ցանք ունելին . . .	300 »	320 »
4-ից մինչև 10 հեկտար		
ցանք ունելին . . .	250 »	150 »
10 հեկտարից բարձր		
ցանք ունելին . . .	40 »	50 »

Ակսպիսով մենք տեսնում ենք, վոր թե հողի, թե անասունների և թե՛ ցանքերի քանակով գլուղում հավասարեցում և աեղի ունենում: Ֆանքագուրկ լեկ ցանքատակ տնտեսությունները շատ ու շատ են պակասում, քան հեղափոխությունից առաջ կային: Տնտեսությունների մեծ մասը դարձավ միջակների տնտեսություն: Ուրիշ խոսքով՝ միջականացավ:

#### Ն Ա Ր Ց Ե Ր Զ Ր Ո Ւ Ց Ց Ի Ց Ս Մ Ա Ր

1. Խնդյա՞ն ԽՍՀՄ-ում արգելված և հօղի առ ու ծախը:

2. Կ՞եզ և ճամակում զյուղացիուրյան հավասարեցում լին ինչո՞ւ այդ ենցի ունեցավ:

#### Ո՞Վ ե՞ր ՀԱՅ ԾԱԽՈՒՄ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

Հեղափոխությունից առաջ Ծուսաստանը հողագործական մի լերկիր եր: Գործարանալին ապրանքների, մանավանդ մեքենաների, դադահների, գլուղատնտեսական մեքենաների մի զգալի մասը դնվում եր արտասահմանից: Խսկ արտասահմանին վաճառվում ելին հաց և գլուղատնտեսական այլ մթերքներ: Ցարական պատերազմից առաջ Ծուսաստանից արտասահման արտօահանվող միմիացն հացահատիկների քանակը (ցորեն, գարի և այլ) կազմում եր 9.828—11.460 հազ. տոնն (600—700 միլ. փութ), չհաշված տեխ-

Նիկական բուլսերը (վուշ) և անասնապահության մթերքները (խոզի մազ, կաշի, լուղ),

Իսկ վժրտեղից եր արտահանության համար արդքան հացը, չերը մեր գյուղական տնտեսությունը յետամեաց եր և գյուղացիների մեծամասնությունն աղքատ ու չքավոր դրության մեջ եր:

Այդ բանը հասկանալու համար, տեսնենք, ինչ տնտեսություններ և վորքան հաց ելին արտադրում պատերազմից առաջ Հաց տարեկան ստացվում եր ընդամենը՝

Կարվածատիրական տնտ. 9.828 հազ. տոնն (600 միլ. փութ):

Կուլակալին տնտեսութ. 31.100 » » (1.900 » » ):

Չքավոր, և միջակ տնտ. 40.900 » » (2.500 » » ):

Ասպիսով, ամբողջ հացի կեսն արտադրում ելին կարվածատիրական և կուլակալին տնտեսությունները, Մյուս կեսն արտադրում ելին միջակ և չքավոր տնտեսությունները: Սակայն այդ դեռ բոլորովին չի նշանակում, վոր միջակներն ու չքավորները վաճառքի ելին դուրս բերում շուկա այնքան հաց, վորքան կուլակներն ու կարվածատերերը Շատ հասկանալի իր, վոր արդպես չեր ել կարող լինել: Չքավոր տնտեսությունների մեծամասնությունը և միջակների մի զգալի մասը հազիվ-հազ եր կերակրվում իր տնտեսությունից ստացած հացով: Յեթե չքավորը ծախում ել եր իր հացը, այդ վոչ թե այն պատճառով, վոր տընտեսության մեջ ավելորդ հաց ուներ, այլ այն պատճառով, վոր պետք և մեծ հարկեր, գնման վճարումներ և կարգարավարձ տար: Չքավոր-գյուղացին և միջակների մեծ մասն ստիպված ելին կուրշ փորով հացի կարոտ մնալով, և իր ընտանիքի ընըսանից հացը կարելով, հացը ծախել:

Այլ և կուլակալին տնտեսությունը և մասնավոր՝ կարվածատիրականը: Կուլակն ու կարվածատերը կարող ելին իրենց բերքին մի զգալի մասը բաղակ օտնել յավ վանառել:

Ցուրաքանչյուր 100 փութ բերքից միջակ և չքավոր տնտեսությունները շուկա վաճառքի ելին դուրս բերում 15 փթից միքիչ պակաս, իսկ կուլակալին տնտեսությունները լուրաքանչյուր 100 փութ բերքից ծախում ելին 34 փութ, կարվածատիրական տնտեսություններն ել ավելին—լուրաքանչյուր 100 փութ բերքից՝ 47 փութ:

Բուսաստանի գյուղական տնտեսության ամբողջ բերքը պատերազմից առաջ տարեկան միջին հաշվով հասնում եր 81,9 միլ. տոննի (1 միլիարդ փթի), Դրանից 60,5 միլ. տոննը (3.700

միլ. ֆութը) գործ եր ածում ինքը՝ զլուղը, իսկ մնացած 21,4 միլ. տոննը (1.300 միլ. ֆութ) քաղաք և շուկա լեռ գնում. շուկաի հացի մոտավորապես կեսն ուստում եր մուսաստանի քաղաքացին բնակչությունը, իսկ մյուս կեսը տարվում եր արտասահման:

### ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՅԻ ՔԱՆԱԿԸ ՊԱԿԱՍԵԼ Ե

Ամբողջ ծախու հացի (կամ ինչպես ասում են ապրանքալին հացի) լեռնք քառորդը տալիս ելին կուլակալին և կարվածատիւրական անտեսությունները:

Ազգակես եր պատերազմից և հեղափոխությունից առաջ: Իսկ ինչ ենք տեսնում մենք ալժմ, լերը կարվածատիրական տնտեսություններ չկան և կուլակներին ել լավ զգել են: Ալժմ ամբողջ բերքի չորս հինգերորդից ավելին ստանում են միջակ և չքավոր տնտեսությունները:

1926/27 թ. ԽՍՀՄ-ում լեղած ամբողջ 78,6 միլ. տոնն (4.800 միլ. ֆութ) հացի բերքի 65,5 միլիոն տոննից (4 միլիարդ ֆութ) ավելին տվել են միջակներն ու չքավորները. 9 միլիոն տոնն (600 միլիոն ֆութ) հացը տվել են կուլակալին անտեսությունները, իսկ 1,3 միլիոն տոնն (80 միլ. ֆութ) տվել են խորհրդապետները և կոլանտեսությունները:

Մենք տեսնում ենք, վոր համարյա այնքան հաց ե ստացվել, վորքան նախապատերազմէան տարիներին: Իսկ շուկաներում, քաղաքներում լերկու անզամ պակաս հաց ե ծախվել, քան պատերազմից առաջ: Իսկ վերջին տարիներում արտասահման շատ քիչ հաց ե տարված: Որինակ, 1927—1928 թ. թ. արտասահմանում ծախված ե 409 հազ. տոնն (25 միլիոն ֆութ):

Իսկ ինչու լեռ ալղպես: Ինչու համարյա նույն բերքն ստանալով, ինչ վոր պատերազմից առաջ, շուկա լեռ գուրս բերվել վաճառքի համար միմիայն 10 միլիոն տոնն (630 միլիոն ֆութ), և վոչ թե 18,3 միլիոն տոնն (1.300 միլիոն ֆութ), ինչպես պատերազմից առաջ եր:

Ալժմ ավելի քիչ հաց ե տարվում քաղաք, քան պատերազմից առաջ, ուղղակի այն պաճառով, վոր գլուղական տնտեսությունը բաժան-բաժան և լեղել: Կարվածատիրերի տնտեսությունները չքացել են, իսկ կուլակներինը քչացել:

Բացի դրանից, վերջին տարիներում ուղղակի գլուղում ավելացել ե բնակչության քանակը: Շատ մարդ, շատ ել հաց ե ուտվում գլուղում և քաղաքը հաց չի մտնում:

Ինքը գյուղացին ներկայումս ավելի լավ և անվում, քան պատերազմից առաջ, գյուղի բնակչության լուրաքնչուր մարդուն ներկայումս ավելի շատ հաց և ընկնում, քան պատերազմից առաջ:

Հետեւապես, հենց գյուղում շատ ավելի հաց և ծախսավում, քան պատերամից առաջ, իսկ հացի բերքատվությունը վոչ թե լավացել և բարձրացել է, այլ նույնիսկ վատացել և իջել է: Մենք արդեն կարգացինք, վոր այժմ նույնպես մեր գյուղացին 1 հեկտար (1 գերատին) ցանքից ստանում և 652—819 կիլոգրամ (40—50 փութ) հաց: Յեզ այդ վոչ թե այն պատճառով, վոր հողը վատ և և անպատճարեր: Վոչ: Միենաւն հողը, վորն առաջ, մինչև հեղափոխությունը, կարվածատիրոջ ու կուլակի սեփականությունն եր համարվում, մեր գյուղացուն ավելի քիչ բերք և տալիս, քան կարվածատերերին ու կուլակներին:

Այդ առաջ և գալիս երանեց, վոր գյուղացին ավելի վատ և մօակում հողը, բան կուլակն ու կալվածաերը: Մենք արգեն կարգացինք, վոր մեր յերկի հինգ միլիոն գյուղացիական սենսուրյունները մինչեվ այժմ հողը վարում են վոչ թե գուբանով, այլ արորով:

Զքավոր և միջակ գյուղացին ներկայումս ել իր տնտեսությունն ավելի վատ և վարում, քան կուլակներն ու կարվածատերերն ելին վարում: Կարվածատիրական և խոշոր-կուլակալին տնտեսությունները գործ ելին ածում կալսիչներ, հնձող և քամող մեքենաներ. հողը վարում ելին վոչ թե արորով, այլ գութանով, և նույնիսկ տրակտորով: Հասկանալի լի, վոր կուլակալին տնտեսությունն ավելի լավ և շատ բերք եր տալիս (և ներկայումս տալիս ե), քան չքավորի և միջակի տնտեսությունը: Յեզ վորովնետե ներկայումս գյուղական տնտեսությունը քիչ հաց և այլ գյուղատնտեսական մթերքներ և տալիս, այդ պատճառով, թե ինքը՝ գյուղացիությունը և թե մեր յերկրի ժողովրդական տնտեսությունը տուժում են:

Մեր արգունաբերությունը տարեցտարի ածում, մեծանում ե. Փարբիկաների, գործարանների, լերկաթուղիների և արհեստանոցների բանվորների թիվը՝ նույնպես Բաղաքներն արագ կերպով ածում են: Այդ պատճառով ել տարեցտարի քաղաքներն ավելի շատ հացի և այլ գյուղատնտեսական մթերքների կարիք են զգում: Այն հացը, վոր գյուղացիությունը շուկա լի տանում, քաղաքների բնակչության կարիքներին հազիվ և բավարարում:

իսկ արտասահման տանելու համար չափազանց քիչ հաց և մոռում: Մենք ներկայումս արտասահման 8—10 անգամ ավելի քիչ հաց ենք արտահանում, քան պատերազմից առաջ, իսկ մոտակա տարում բնդհանրապես մենք արտասահման հաց արտահանելու մտադրություն չունենք:

Միաժամանակ պարզ հասկանալի լե, վոր գյուղատնտեսական մթերքներ արտասահման արտահանելը մեր լերկրի համար ծայր անհրաժեշտություն եւ Ցեխե մենք չմեծացնենք մեր եքսպորտը (արտասահման ապրանքներ արտահանելը), մենք մեր գործարանների, ֆարբիկաների և գյուղական տնտեսության համար չենք կարող արտասահմանից անհրաժեշտ մեքենաներ ստանալ:

Գյուղացիությունը ներկայումս վոչ միայն քիչ հաց, այլև քիչ տեխնիկական բուլսեր (վուշ, կանեփ) և անասնապահական մըթերքներ և շուկա դուրս բերում, քան պատերազմից առաջ, թեև ներկայումս ցանգող տեխնիկական բուլսերն իրենց ցանքս սալին տարածությամբ ավելի շատ են (համարյա 30% -ով), քան պատերազմից առաջ:

Պատերազմից առաջ արտասահման շատ տեխնիկական բուլսեր և անասնապահության մթերքներ ելին արտահանվում: Իսկ ներկայումս մեր արդյունաբերությունը նույնիսկ հումուկի մի շարք տեսակների պակաս և զգում: Շատ ֆարբիկաներ ու գործարաններ (կաշու և վուշի) ներկայումս արդեն չեն կարողանում իրենց ցանքների արտադրությունը շատացնել գլխավորապես այն պատճառով, վոր հում նյութի պակաս ունեն:

Այս գրուրյունից գուրս գալու մի յելք կա միայն: Գյուղանենեսական մթերքների բանակը մեծացնելու համար, անհերաժեշտ և անցնել գյուղական ենեսնուրյան խմբակային ձեզին, գյուղանենեսնուրյան սիստեմները մերենաներով կառաւելուն: Մերենայի աշխատանքն ավելի ոգտավետ է, ավելի խնայողական յեզ ավելի հարմար:

Որինակ, տրակտորն անհամեմատ ավելի ոգտակար և վոչ միայն արորից, այլև գութանից: Ամեն մի գյուղացի լել գիտե, վոր հողը վորքան ավելի խոր վարվի, այնքան ավելի շատ բերք կտա: Լավ տրակտորը վարում ե 22—26 սանտիմետր խորությամբ. ի հարկե արորով կամ նույնիսկ ձիու գութանով հողն ալդքան խորը վարել չես կարող: Բացի դրանից, տրակտորն ավելի արագ և աշխատում, հետևապես և տրակտորի ուժն ոգտագործող տնտեսության արտադրած մթերքները ավելի եժան են նոտում:

Ալգուկես ել այլ գլուղատնտեսական մեքենաների՝ հնձող, հավաքող, բարդ կալսիչների և խոռ հնձող մեքենաների միջոցով գործ կատարելիս:

Իրեն գլուղատնտեսական մեքենաներով արագ և եժան աշխատանք կատարելու որինակ, կարելի է ցուց առաջ խոշոր ամերիկան կապիտալիստ Ֆորդի կալվածք: Այդ կալվածում միքանի տարի առաջ բոլոր գլուղատնտեսական աշխատանքները՝ վարելը, ցանելը, բերքը հավաքելը, խոռը հնձելը, հացը քաղելը և ծեծելը կատարում ելին բացառաբար մեքենաներով: Խոկ ինչ եր ստացվում գրանից: 327 հեկտարից (300 դեկտարին) ավելի հող ունեցող կալվածի բոլոր աշխատանքները կատարում ելին 21 որվա մեջ: Յեթե նույն աշխատանքը կատարվեր առանց մեքենաների, հարկավոր կիներ գրա վրա կորցնել վոչ թե 21 որ, այլ մի քանի ամիս:

Մեքենայի աշխատանքին անցնելը կլավացնի մեր գլուղացիական տնտեսությունը, կրարձրացնի հողի բերքատվությունը և կրարելավի չքավոր և միջակ գլուղացիության դրությունը:

Մեր գլուղական տնտեսությունը գտնդադ կերպով և աստիճանաբար անցնում և մեքենաների աշխատանքին չեղափոխության տարիներում Խորհրդային Միության գլուղերին բաժանվել է 30.000-ից ավելի տրակտոր, մի քանի հազար հատ կալսիչներ և այլ գլուղատնտեսական մեքենաներ:

30.000 տրակտորն այնպիսի մի հակալական լերկրի գլուղական տնտեսության համար, ինչպիսին ԽՍՀՄ-ն է գեռես չափազանց քիչ եւ չուուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, վորտեղ հողն ավելի պակաս եւ, քան Խորհրդային Միության մեջ, գեռես 1920 թվին գլուղացիական տնտեսության մեջ աշխատում եր 250 հազար տրակտորից ավելի:

Ի հարկե, ԽՍՀՄ-ի գլուղացիական տնտեսությունը շատ ու շատ տրակտորների և այլ գլուղատնտեսական մեքենաների պահանջ և զգում, քան ներկալում ունի: Խորհրդային կառավարությունը բոլոր միջոցները ձեռք եւ առնում, վորպեսզի մեծացնի տրակտորների, կալսիչների և գլուղատնտեսական այլ գործիքների քանակը: Ներկալում ԽՍՀՄ-ում կառուցվում են տրակտորների նոր գործարաններ. մի քանի մետաղագործական գործարաններ արդեն ներկալում գլուղական տնտեսության համար տրակտորներ են պատրաստում: Բացի գրանից, լուրաքանչյուր տարի հար ուրավոր տրակտորներ և կալսիչներ են գնվում արտասահմանից:

ԽՈՇՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՎԵԼԻ  
ԶԵՄՆՏՈՒ ՅԵ

Այստեղ նկատի պետք ե ունենալ հետեւալ կարևոր հանգա-  
մանքը: Առանձին միջակ կամ չքավոր տնտեսությունը արակտո-  
րով կամ կարիչով ոգտվել չի կարող նախ և առաջ տրակտոր  
գնելը տուանձին միջակ գյուղացու, մանավանդ չքավոր գյուղա-  
ցու ուժից վեր և Յերկրորդը, վոր ավելի գյուղավորն է, առանձին  
գյուղացիական միջակ տնտեսության համար տրակտորն անո-  
գուս ե: Յեկ վոչ միայն տրակտորը, այլև կարիչը, հնձող և խո-  
տի մեքենան (հնձող): Առանձին հետեսության համար զյուղա-  
նետական մեթենաներն անզուս են այն պատճառով, վոր այդ-  
պիսի հետեսության մեջ յեղած աշխատանքը մեթենաներին չի  
բավարարի: Անպիսի մեքենան, ինչպիսին տրիերն է, վորով  
սերմն և մաքրվում, կարող և որական մաքրել 100 փութ սերմ:  
Պարզ է, վոր միանձնյա տնտեսության մեջ արդ մեքենան կաշ-  
խատի մի քանի որ միայն, իսկ ամրող տարին մնալու յի առանց  
գործի: Գյուղատնտեսական մեքենան հարկ յեղած չափով և  
լրիվ կերպով ոգտագործելու համար անհրաժեշտ և ընդարձակ  
դաշտ, և մեկ ցանքալին տարածություն: Որինակ, մեկ ցանող մե-  
քենան կարող է ցանել 50 հեկտարից ավելի հող: Մեկ խոս հըն-  
ձող մեքենարով կարելի յի հնձել 90 հեկտար տարածությամբ  
մարդագետին: Մեկ տրակտորը մշակում է 100 հեկտարից ավե-  
լի հող:

Հասկանալի յի, վոր մանը գյուղացիական տնտեսության  
մեջ գործադրվող վորեն մեքենա իր ծախսերը չի կարող ծածկել:  
Միմիայն մեքենայի նորոգման, նրա համար վորեն շենք կամ ծածկ  
կառուցելու վրա գյուղացու կատարած ծախսն ավելի շատ կլինի,  
քան մեքենայից ստացած ոգուտը:

Գյուղատնտեսական մեքենաները մեծ ոգուտ են տալիս, սա-  
կայն փոքր տնտեսության մեջ մեքենան իր ծախսերն արդարացնել  
չի կարող:

Յեկ վոչ միայն մեթենան, այլ նույնիսկ ձին մանր զյուղա-  
ցիական հետեսության համար ձեռնեսու չե: Համարյա 8 միլիոն  
գյուղացիական տնտեսության մեջ (իհարկե, ամենամանը, չքավո-  
րական և սակավազոր տնտեսությունների մեջ) ձին իր ծախքերն  
արդարացնել չի կարողանում: Մանր տնտեսության մեջ ձին աշ-  
խատում է միմիայն աշխատանքի լեռուն (ցանքի և հնձի) ժամա-  
նակ, իսկ նրան կերակրում են ամրող տարին: Ի հարկի, գյու-

զացուն ձին անհրաժեշտ է: Առանց ձիու միանձնյա գլուղացիական տնտեսությանը գծվար և իր գուղությունը պահպանել: Խորհրդագլուխն կառավարությունն ամեն տարի հարցուր հազար ոռորդիներով վարկ և առջև գլուղացիներին, վոր ձիեր գնեն: Սակայն ձիու՝ գլուղացուն պատճառած վնասն ավելի լի, քան նրան աված ովուտք:

Մեր լերկում գլուղացիական տնտեսությունները մեծ մասմբ մանր – 2-ից մինչև 6 հեկտար ցանք ունեցող տնտեսություններ են: Ազգպիսի անտեսության մեջ գլուղատնտեսական մեքենան և շատ անտեսություններում ել ձին՝ իրենց ծախքերը չեն արգարացնում և արգարացնել ել չեն կարող:

Մանր անտեսության մեջ նույնպես հողը քիչ ըերք և տալիս, քան խոշոր անտեսության մեջ: Որինակ Պըսկովի նահանգում տարեկանի մեկ հեկտար ցանքից մանը տնտեսություններում ստացվում և 523 կիլոգրամ (32 փութ), իսկ խոշոր անտեսություններում մոտ 1.310 կիլոգրամ (80 փութ): 30 փութ ըերք ստանալու համար չքաղաք ու միջակ գլուղացին հողի մշակության համար ավելի շատ աշխատանք են թափում, քան խոշոր անտեսությունը: Ազսպես, որինակ, մի հեկտար տարեկանի մշակման համար Սմոլենսկի նահանգում մանր տեսական մեջ ծախսվում և 61 րանվորական որ: Իսկ խոշոր անտեսության մեջ արդպիսի մեկ հեկտար տարեկանի մշակման համար ծախսվում և միմիայն 37 բանվորական որ:

Հասկանալի լի, վոր խոշոր անտեսությունը լուրաքանչյուր բանվորի համար նույնպես ավելի շատ արդյունք և ստանում, քան մանր անտեսությունը: Միենուկն Սմոլենսկի նահանգում մանր անտեսության մեջ մեկ բանվորավան որին ընկնում և ընդունենք 40 կոպեկ: Իսկ խոշոր անտեսության մեջ 1ու. 25 կոպեկ, այսինքն լերեք անգամ ավելի:

Մենք տեսնում ենք, վոր ամեն կողմից ել խոռոր անեկությունը մանրից ավելի ձեռնուր:

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ա՞վ եր հեղափոխությունից առաջ զիսավոր հաց վաճառողը յեվ ինչո՞ւ:

2. Ի՞նչ հետեվանք ունեցավ զյուղացիական անեկությունների բաժան-բաժան:

3. Ի՞նչու յե խոռոր անեկությունն ավելի ձեռնուր, քան մանր անտեսությունը:

ԿԱՐՈՊԴ, Ե ԱՐԴՅՈՒԹ ԳՅՈՒՂԱՑԻՆ ԻՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ  
ԲԱՐԵԼԱՎԵԼ

Ի հարկե,մեր յերկրի առանձին մանր գյուղացիական տնտեսություններում շատ բան կարելի յե բարելավել: Որինակ, գյուղացիության մեծամասնությունը մինչև ալժմ իր ցանքերը քնիք սերմերով չի կատարում: Միմիայն ընտիր սերմերով ցանք կատարելով ԽՍՀՄ-ի ամբողջ գյուղական տնտեսության բերքը տասնակ միլիոնավոր փթերով կշատանար: Մանր գյուղացիական տնտեսությունների հողի բերքատվությունը նույնպես կարելի յե բարձրացնել յեթե բոլոր տնտեսություններում արորդ փոխարինվի գութանով, յեթե յեռադաշտ սերմափոխության, յեթե մանր տնտեսություններում սկսենք մեծ չափերով հանքալին պարարտանլութեր գործածել: Լիակատար հողաշինարարություն կատարելով, հողացրվածությանը վերջ տալով նույնպես զգալի չափով կարելի յե բարձրացնել գյուղացու հողից ստացվող յեկամուտը և բարձրացնել ապրանքային հացի քանակը:

Խորհրդային իշխանությունն ամեն կերպ աշխատում ե ողանել գյուղացիությանը, վորպեսզի վերջինս կարողանա իր տընտեսությունը բարձրացնել: Վերջինս տարիներս ցանելու համար գյուղացիներին միլիոն փթերով բարձրորակ սերմեր են արվել: Կատարված ե 100 միլիոն դեսլատինից ավելի հողաշինարարություն: Խորհրդային կառավարությունը մեծամեծ դումաբներով հարկեր ե տալիս չքավոր և միջակ տնտեսություններին, վորպեսզի նրանք ինվենտար և ձի գնեն:

Մակարն այդ բոլոր միջոցներն անկարող են ամբողջովին լուծել գյուղական տնտեսության բարձրացման խնդիրները: Զքավորությունից և աղքատառությունից միանգամից և ճիշտ կերպով ձեռք քաշելու, մեր յերկրի գյուղական տնտեսությունն իրապես հարստացնելու և արագորեն զարգացնելու համար--անհրաժեշտ ե անցնել խուռ տնտեսության:

Հեշտ ե ասել մանր, աղքատ, լաժան-բաժան գյուղացիական տնտեսություններից անցնել՝ մեքենաներ, ճիշտ հողոգուազործում, բաղմադաշտ սերմափոխություն և գյուղական տնտեսության ալլ տեսակի բարելավումներ ունեցող խոշոր գյուղական տնտեսության:

Հապա ի՞նչպես անել ալլ: Ի՞նչպես պետք ե խոշոր տնտեսության անցնել:

Խոշոր անտեսության անցնելու համար կա լերկու միջոց, լերկու ուղի Մեկ ճանապարհով մինչև հեղափոխությունը, կալվածատերերի և կապիտալիստների տիրապետության որոք անդի յի ունեցել զբուղական անահետության զարգացումը, իերբ գյուղացիական անտեսությունների հիմնական մասսայի քայլքարման հաշվին տեղի իեր ունենում գլուղի կուլակալին վերնախալի անտեսությունների վերելք: Այդ ուղին կատիթալիստական ուղին եղան Խոշոր անտեսությունների քանակը հեղափոխությունից առաջ իրոք վոր մեծանում էր: Շուկա գուրս ըերվող թե՛ հացը, և թե այլ գյուղատնտեսական մթերքներն ավելի շատ ելին, քան այժմ, խորհրդագլին իշխանության որոք:

Յեթև խորհրդագլին իշխանությունը ներկայումս ապատություն տա կուլակներին, հարկերով չսեղմի նրանց, թուլլ տա հողը վաճառելու, թուլլ տա, վոր կուլակները գյուղացիներին շահագործեն, կուլակներին վարկեր տա—գյուղական անտեսությունն անպայմանորեն կրաքարանար, կրաքելավվեր, կամրանար, սակայն չքավոր և միջակ անտեսությունների հաշվին: Ի հարկե կուլակալին անահետությունը խոշոր անտեսություն եւ Ապրանքային հացը մեր լերկրում նույնպես կշաանար և գյուղական տընտեսությունն աստիճանաբար կանցներ մեքենայի աշխատանքին: Սակայն այդ բարելավումից կոգավելին միջիայն կուլակները: Գյուղացիների մեծամասնությունը կմնար նույնպես աղքատ, մերկ և կաշխատեր կուլակալին հողում իրսի բատրակ:

Խորհրդագլին իշխանությունը թուլլ չի տա, վոր գյուղական անտեսությունն այդ ուղիով զարգանա:

Խորհրդագլին իշխանությունը կուլակալին խոշոր անտեսությունների զարգացմանը նպաստել չի կարող և չի նպաստի:

Կմ արդուոք գյուղական անտեսությունը Խորհրդագլին լերկը բում բարձրացնելու մի այլ ուղի: Այս, կա:

Թյօ ուղին զյուղական սննդառյութը միացնելու (կամ ինչպես ասում են կոլեկտիվացնելու, հասարակականացնելու), չքավոր յեվ միջակ մանր սննդառյութները միացնելու յեվ խուռ կոլեկտիվ սննդառյութներ զարձնելու ուղին եւ: Այս ուղիով ընթանալ կարելի յե միմիայն Խորհրդագլին յերկրում:

Այն գյուղատնտեսական մեքենան, (տրակտոր, կալսոդ, սերմագտիչ մեքենա և այլն), վոր անհատ գյուղացին անզոր և գնելու, կարող ե գնել կոլեկտիվը, կարող են գնել տասնկակներով և հարյուրներով միացած գյուղական ծխերը:

Այն գլուղատնտեսական գործիքը, վորն իր ծախսերը չի հանում անհատ շքավոր կամ միջակ գլուղացու միջոցով մշակվող փոքրիկ հողակտորում, ձեռնուու էն և շատացնում և կոլտնտեսությունների և կոմունաների գլուղացիական տնտեսությունների լիկամուտը:

Ներկայում արգեն գործիքուն ունեն մի քանի տասնչակ հազար կոլեկտիվ տնտեսություններ և ամեն տեսակի գլուղատնտեսական ընկերություններ: Տարեցտարի նրանց թիվը մեծանում եւ ինչնու Վորովինակ գլուղացիներն իրենք են տեսնում իրենց տնտեսությունների միացումից և կոլեկտիվացումից ստացվող ոգուտները:

Որինակ, Հյուսիսային Կովկասում կոլեկտիվ տնտեսությունների մեջ յուրաքանչյուր ուստողին 10 ուստրի ավելի լիկամուտ և ընկնում, քան անհատ գլուղացիական տնտեսություններում:

Կոլտնտեսություններում անստուններին և ինվենտարն ավելի յավ են ոգուագործում:

Կոլտնտեսությունների մեծ մասն արդեն անցել եւ բազմագաշա սերմափոխության, մինչդեռ անհատ-գլուղացիների տնտեսությունների մեծ մասը մինչև այժմ յեռադաշա սիստեմն և կիրառում:

Համարյա բոլոր կորոնտեսություններն ել գործ են ածում լավորակ սերմեր:

Դրա հետեանքն այն և լինում, վոր կոլտնտեսությունները համարյա շարունակ բարձր և շատ բերք են տալիս, քան անհատ-գլուղացիների տնտեսությունները: Կոլտնտեսությունները զարգացնելը կարենոր և այն պատճառով, վոր նրանք անհամեմատ ավելի մեծ տոկոսով ապրանքալին հաց են տալիս, քան անհատ տնտեսությունները ( $12\%$  ի փօխարեն՝  $30\%$ ):

Գլուղատնտեսական միավորումներից ստացվող ոգուտն այնքան մեծ է և ակներե, վոր վերջերս հարյուրներով նորանոր միավորումներ են առաջանում: 1928 թվի գարնանը, ցանքից առաջ, միմիայն Սիրիբում կազմակերպվել են 510 նոր կոլտնտեսություններ:

Մոգիլիի շրջանում, վորտեղ կոլտնտեսությունների թերքը  $15-20\%$ -ով ավելի բարձր է, քան անհատ տնտեսություններինը, 1928 թվի գարնանը կար 320 կոլտնտեսություն:

Խորհրդալին կառավարությունն ամեն կերպ ոժանդակություն և ցուց տալիս հոգի կոլեկտիվ մշակմանը և միասնական

անտեսավարությանն անցնող գլուղացիներին կոլտնտեսություններում առաջին հերթին կատարվում և հողաշինարարություն։ Անսասուն և ինքնինտար գնելու համար վարկեր են արվում և փոխառվություններ արվում առաջին հերթին զյուղատնտեսական կոլլեկտիվներին, ընկերություններին և արտելներին։ Յեզ կոլլեկտիվ անտեսություններին առաջին հերթին արվում են գյուղական անտեսությանն անհրաժեշտ արզյունաբերական ապրանքներ։ գլխավորապես զյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ՝ գութաններ, տրակտորներ, կալիչներ և ցանող մեքենաներ։

Մեր յերկրի գյուղական անտեսությունը միմիայն միավորման և կոլլեկտիվացման միջոցով իրոք կկարողանա հաստատքայիրով։ առաջ գնալ, միմիայն գյուղացիական անտեսությունների միավորումով կարելի կլինի չքավոր և միջակ գյուղացիների դրությունը բարելավել։

Ուստի և կոմիերիտմիությունը գյուղում ամեն կերպ պետք է աջակցի գյուղացիական անտեսությունների միավորմանը և գյուղացիներին բացատրի միավորման բոլոր ոգուանները։

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Վորո՞ն են զեպի խօսու անտեսությունը տանող զյուղի ուղիները։

2. Կ՞նչ ուղիի համար և պայքար մղում խորհրդային իշխանությունը լեզ ինչո՞ւ։

#### ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՍՀՄ-ի գյուղական անտեսության վերակառուցման գործում մեծ նշանակություն ունեն խորհեսնեսությունները ու պետական խոշոր անտեսությունները։ Խորհտնտեսություններն առաջ լիկան Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ նախկին մի շարք կալվածատիրական անտեսությունների տեղերում։ Խորհտնտեսություններին հատկացվեց մոտ և միլիոն դեսլատին հող (3,6 միլիոն հեկտար)։

Ի՞նչ ոգուաններ կարող են տալ խորհտնտեսությունները։

Նախ և առաջ խորհտնտեսություններն ունեն խոշոր զյուղական անտեսությունների բոլոր առավելությունները, նրանցում լեղած աշխատանքը կատարվում և լավագույն զյուղատնտեսա-

կան մեքենաների միջոցով, յանքը՝ ընտիր սերմերով և ունեն բարձր բերքատվություն: Խորհենենսուրյունները տալիս են մեծ սոկոսի ապրանեալին հաց: Խորհանտեսություններից շատերում զործ և ածվում միմիայն բերքի  $40\%$ -ը. իսկ մնացած  $60\%$ -ը ապրանքալին հացը վաճառում են:

Մենք արդեն կարդացինք, թե ԽՍՀՄ-ի ժողովրդական տընտեսության համար ներկայումս ինչ նշանակություն ունի ապրանքալին հացի քանակն ավելացնելը: Ուստի, վերջին ժամանակներս կոմունիստական կուսակցությունն ու խորհրդալին իշխանությունը հատուկ ուշագրություն են դարձել յեղած խորհանտեսությունների աշխատանքները բարելավելու և նորերը կառուցելու վրա:

Համ. Կ. Կ. (ը) Կ. Կ.-ի հուլիսան (1928 թ.) պլենումը վորոշել ե մոտակա հինգ տարիների ընթացքում կազմակերպել նոր և խոշոր խորհանտեսություններ, վորոնցից կարելի կլինի ստանալ տարեկան վոչ պակաս, քան 100 միլիոն փութ ապրանքալին հաց և այդ խորհանտեսությունների կառուցման աշխատանքն սկսել արդեն 1928 թվից:

Խորհանտեսությունները լինելու յեն տասնյակ հազար զեսլատիններով հող ունեցող հսկայական տնտեսություններ, իսկական հացի ֆարբիկաներ, վորոնք կտան ապրանքալին հացի  $65-70$  տոկում և ավելին:

Բացի զրանից, խորհանտեսությունները մեծապես ուղնում են գյուղացիական տնտեսությունների վերակառուցման գործին, գյուղացիությանը սերմեր մատակարարելով և գյուղացիական դաշտերն իրենց տրակտորներով վարելով:

#### ԴԱՐԵՒՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Խ՞նշու խորհրդային խօսանուրյաներ խորհենենսուրյունների հողերը չի բաժանելու գյուղացիներին:

2. Խորհենենսուրյուններն ինչո՞վ են ոգենում ժողովրդական անենսուրյան ամրացմանը:

ՉԹԱՎՀՈՐԸ, ՄԻԶԱԿԻԸ ՅԵՎ, ԿՈՒԼԱԿԻԸ

Գյուղում հաճախ կարելի է այսպիսի խոսքեր լսել. Ինչ կարեք կա գյուղացիներին առանձին առանձին խմբերի բաժանել: Դե գյուղացին գյուղացի յև ելի. ինչ նշանակություն ունի, վորմեկը միուսից քիչ ավելի հարուստ և կամ քիչ ավելի աղքատ. Նրանք բոլորն եւ իրար իշղալրներ են, նույն գյուղացիական միաւ արյունից: Ինչու գյուղացիների ամբողջական ընթանիքը մասաւ անել, ինչու նրա մեջ ինքանակություն մտցնել և գյուղացիների ճակատին չքավոր և կուլակ անունները կպցներ:

Սակայն գյուղացիներին խմբերի բաժանելը ճիշտ է, քանի վոր գյուղացիությունն իր կազմությամբ միասուրը չեւ նաև ուրիշի աշխատանիւզ ոգովող յեվ այդ աշխատանիւզ հարցածանող հաւրուս գյուղացիներ, վորոնի կազմում են զյուղի փոերամասնուրյութը: Երանե կուլակներն են յեվ զյուղի բուժմաւագիան: Կան ահազին բլուզ զյուղացիներ, վորոնի մանր սնեկամեներ են յեվ վարձու բանվորական ուժի ոգնուրյան կարու չեն. զրանե միջակ գ ուղացիներն են: Մրանե ուրիշի աշխատանիւզ ապրոյներից սարբերվում են: Կա այնուհենեվ զյուղի շավուների զգալի մի խումբ, զյուղացիուրյան այս խումբն ունի սակավագոր սնենուրյուն: Վոյ լծկան ունի, վոյ ել ինվենարտ: Չքավոր անտեսությունը չնորհիվ իր թուլության այնքան քիչ արդյունք և տալիս, վար: Չքավոր գյուղացին չի կարողանում իր ստացած յեկամուսով իրեն կերակրել և ստիպված և տարվա վորոշ մասը վարձու աշխատանք կատարել: Վերջապես կան զյուղում նայեվ բարեկներ, վորոնի վոյ մի սեփականուրյուն յունեն յեվ բազարի բանվորների նման սփառված վարձու աշխատներ են կատարում: Մրանե արդեն վոյ թե զյուղացիներ են, այլ զյուղաօնենսական բանվորներ են:

Մինչդեռ ցարական կառավարության և կալվածատիրական-կապիտալիստական հասարակարգի հենարանը կուլակությունն ու ուներ գյուղացիությունն եր, Խորհրդավորին իշխանության հենարանը հանդիսանում են բատրակներն ու չքավորները: Միջակ գյուղացիությունը բանվոր դասակարգի գաշնակիցն եւ

Ինչպէս յեր ցարական կառավարությունն ու կալվածատիրական-բուրժուական պետությունը կուլակի վրա հենվում, իսկ Խորհրդավորին իշխանությունը հենվում ե բատրակների ու չքավորների վրա, միաժամանակ դաշն կապելով գյուղացիության ամենամեծ խմբի—միջակների հետ:

Վորովհնետե կուլակը՝ վորպես գյուղի սեփականատեր, վորպես շահագործող, վորպես գյուղացիության ահազին մասսաների կարիքի ու քայլքալման հաշվին հարստացող, կալվածատերերի, կապիտալիստների և ցարական չինովնիկների հետ միասին դեմ եր բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիությանը:

Խորհեզային խօսանությունն ու բանվոր դասակարգը հենվում են բարեկեների յեվ չժավորների վրա, ապրում են միջակ գյուղացիների հետ համերախ յեվ զաօնեակցած, վորովհնետեվ բարեկեներն ու չժավորներն ոզնում են բանվոր դասակարգին՝ պայմանելու նոր սոցիալիստական հիմունքներով հասարակությունը վերակառուցելու համար. իսկ միջակը, թեյեվ իր տեսեսական գրությամբ բուրժուազիայի յեվ բանվոր դասակարգի մեջնեղն ե զենքում, այնուամենայնիվ ամենից ավելի շահագրգությամբ ե բանվոր դասակարգին պատճանելու յեվ վոչ թե բուրժուազիային:

Այս արդեն վկայում ե, վոր գյուղացիներին՝ չքավորների, միջակների և կուլակների բաժնանելը չարամիտ մարդիկ չե վոր հնարել են, այդ այդ բաժնանումը կատարել ե ինքը՝ կլանքը, վոր կան զանազան պայմաններում ապրող գյուղացիության զանազան խմբեր, թեև հաճախ նրանք իրենց հագուստով նույնն են:

Գյուղացիները նոր չե, վոր զանազան խմբերի յեն բաժնաված, այդ բաժնանումը կար նաև հին հասարակարգի որոք. այդ ժամանակ դեռ գյուղություն ունելին գյուղում չքավորներ, միջակներ և կուլակներ:

Սակայն գյուղացիների այդ խմբերի վրությունը գյուղում, Խորհրդավորին իշխանության որոք խիստ փոփոխման լենթարկվեց, ինչպես փոփոխության յենթարկվեցին նաև գյուղի զարգացման պայմանները:

Եին զյուղի տերը հանգիսանում եր կուլակն ու ուժեվոր գյուղացին: Գյուղացիների այդ շերտը գոյանում եր ի հաշիվ այն միջակ գյուղացիական տնտեսությունների, վորոնք շարունակ բարքարկելով դառնում ելին չքավոր տնտեսություններ:

Հեղափոխությունից առաջ գյուղի շերտավորումը կատարվում եր շատ արագ կերպով: Այդ նշանակում եւ վոր միջակ գյուղացիներն անընդհատ քայլքայլում և ավերվում եր: Այդ քայլքայլով և ավերվող միջակ գյուղացիությունն ստեղծում եր իրենից մեկ կողմից կուլակալին տնտեսություններ մըսս կողմից՝ գյուղացիության չքավոր բատրակալին շերտեր:

Գյուղի վերաբաժանումը 1917 թվից մինչեւ 1919 թիւքը

1000 գյուղացիական տնտեսության ընկնում եր: —

1917 թ. 1919 թ.

Զցանված . . . . 113 66

10 դես. ավելի ցանված 51 15

Մեկ կողմից ստեղծվում եր գյուղի բուրժուազիան, մըսս կողմից՝ աղքատանալով, միջակ տնտեսությունների մի զգալի մասը դառնում եր չքավոր տնտեսություն և առաջ ելին դալիս ահազին թվով վարձու բանվորներ ու բատրակներ:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Ա. Խ՞նչ տարեթուրյուն կա չխավոր, միշակ լեվ կուլականին սնեսուրյունների մեջ:

Բ. Ո՞ւր եր տանում եին զյուղին կուլակների օիրապեսուրյունը:

**ԽՈՐՀՀՐԴԱՅԻՆ ԳՅՈՒՂԻ ԶՔԱՎՈՐԸ, ՄԻՋԱԿԸ ՅԵՇ, ԿՈՒԼԱԿԸ**

Ինչպես ե Խորհրդային գյուղի վիճակը:

Իրականուրյունը ցույց ե տալիս, վոր խորհրդային իօլանուրյան որոք գյուղում կարգերը փոխվել են: Նախ և առաջ հեղափոխության հետեանքով կուլակի ուժն զգալիորեն պակասեց, մըսս կողմից չքավոր տնտեսությունների մի մասը, ընդարձակելով իր հողի տիրապետությունը ի հաշիվ կալվածատիրական հողի, հասավ միջակների դրությանը: Բացի դրանից, ներկայումս այլնս միջակ գյուղացիությունը չի աղքատանում, այլ ընդհակառակը, չքավոր տնտեսությունների մի զգալի մասը դառնում է միջակ: Ուրիշ խոսքով, չքավոր տնտեսությունների մի մասը տարնց տարի մոտենում է միջակ տնտեսություններին, վորի շնորհիվ մի-

ջակ տնտեսությունների թիվը լուրաքանչյուր տարի ավելի և ավելի մեծանում եւ:

1924/1925 թվին լուրաքանչյուր 100 գյուղացիական տնտեսություններից միջին հաշվով 65-ը միջակ տնտեսություններ եին, իսկ 1926/1927 թվին—66-ը:

Այստեղ մենք տեսնում ենք, վոր միջակ տնտեսությունների թիվը լուրաքանչյուր տարի աճում եւ:

Իսկ չքափոր տնտեսությունների թիվը, ընդհակառակը, պակասում եւ Արդ իերում և հետեւալ թվերից:

1924/1925 թ. լուրաքանչյուր 100 գյուղացիական տնտեսություններից 24-ը չքափոր եր, իսկ 1926/27 թ.—20-ը:

Խորհրդային իշխանության որոք, ներկայումս միջակ տնտեսությունները կազմում են ԽՍՀՄ-ի ամբողջ գյուղացիական տընտեսությունների յերկու յերրորդ մասը: 1926/27 թվին ԽՍՀՄ-ի 110 միլիոն գյուղական բնակչությունից մոտավորապես 77 միլիոնը միջակներն ու նրանց ընտանիքների անդամներն եին:

Այդ պատճառով ել մենք տսում ենք, վոր ենդափսիուրիան հետեւալենք գյուղը միջակացել եւ: Գյուղացիական տնտեսությունների մեծամասնությունը բաղկացած է միջակ տնտեսություններից:

Կան նաև այլ տվյալներ, վորոնք ցուց են տալիս, վոր Խորհրդային գյուղի կենտրոնական տնտեսական գեմքը հանդիսանում է միջակը:

Յեթե մենք վերցնենք կարևորագույն յերկրագործական շըրջանների գյուղացիական տնտեսությունների ինվենտարի ընդհանուր արժեքը, կտեսնենք, վոր մեռյալ ինվենտարի ամենամեծ արժեքն ընկնում է միջակ տնտեսություններին: Այսպես, որինակ, Ուկրայինալի գյուղացիության միջակ խմբի մեռյալ ինվենտարի արժեքը կազմում է Ուկրայինալի մնացած ամբողջ գյուղացիության մեռյալ ինվենտարի արժեքի մոտ 72<sup>0</sup>/₀-ը, Հյուսիսային կովկասում—մոտ 75<sup>0</sup>/₀-ը, Ուրալում—68<sup>0</sup>/₀-ից ավելի:

Նույնպիսի զրության մեջ եւ այդ շրջաններում նաև լծկաններին վերաբերյալ գործը: Լծկանների հիմնական, ամենամեծ մասը գտնվում է միջակների ձեռքին (Ուկրայինա—76,8<sup>0</sup>/₀, Հյուսիսային—76,5<sup>0</sup>/₀, Ուրալ—74<sup>0</sup>/₀):

Յեթե հեղափսիությունից առաջ արտադրության միջոցների հիմնական մասսան (օրինակ, ինվենտարը, անասունը) գյուղի ըուրժուաղիալին և կարվածատերերին եր պատկանում, Խորհրդ

դաւին իշխանության որոք արտագրության միջոցների ամենամեծ մասը գտնվում է ավելի բազմամարդ մի խմբի՝ միջակ գյուղացիների ձեռքին:

Այդ վկարում և, զոր Խորհրդային իշխանության գյուղի վերաբերալ ունեցած ճիշտ քաղաքականությունը վոչ միայն միջակ-ների քայլալման առաջն և առել, այլ ընդհակառակը մեծացրել և միջակ տնտեսությունների քանակը և միաժամանակ փոքրացրել՝ չքավոր տնտեսությունների քանակը:

Հողի մասնավոր սեփականության վերացումը, հողը պետական սեփականություն դարձնելը, չքավորներին պետական ոգ-նություն հասցնելը, սակավագոր և միջակ դյուլացիներին կոռպերացման լենթարկելն ու վարկավորելը, ճիշտ հարկային քայլաքանությունը, — այդ ամենի շնորհիվ Խորհրդային իշխանության որոք գյուղի շապակուղացիացումը՝ կանգ տուալ:

Կուլակային տնտեսությունը՝ վոչ թե աշխատանքային, այլ օտարագործման ենթասուրյուն և: Կուլակն ել այնպիսի շահագործող և գյուղի չքավորներին, ինչպես կարգածատերը և կապիտալիստը:

Կուլակային տնտեսությունը հենց նրանով և տարրերվում միջակ և չքավոր դյուլացու տնտեսությունից, զոր կուլակը վոչ թե իր կամ իր ընտանիքի անդամների աշխատանքով և հարըստանում, այլ ուրիշի աժիատանելը օտարագործելով: Կուլակը կամ իր տնտեսության աշխատանքի համար կոպեկներով բատրակներ և վարձում և հարստանում և նրանց աշխատանքի հաշվին, կամ իր անասունն ու ինվենտարը վարձով տալիս և գյուղի չքավորներին և զրա գիմաց ստանում և չքավոր գյուղացու արյուն-քըրտինքով ձեռք բերած բերքի մի զգալի մասը, կամ թե չքավորներին վարկով սերմեր և տալիս, զորի գիմաց ստանում և չքավորի բերքի մեկ լեռորդը կամ կեսը: Շատ կուլակներ ել հարըստանում են չքավորներին բերեից առաջ և գամ վաշխառուական տոկոսներով փողի վարկ տալով: Գարնանը և ամառվա սկըզբին գյուղի չքավորներն առանձնապես հացի մեծ կարիքի մեջ են լինում: Չքավորների հացը մինչեւ հաջորդ բերքը չի բավականացնում և նա դիմում և կուլակի «ողնությանը»: Չքավորն աշնանը կուլակին տալիս և՝ մեկին մեկ ու կես, լիրկու և լեռբեմն ել ավելի: Ներջապես շատ կուլակներ հանդիսանում են գյուղում իրեն առևտրականներ և մեծաքանակ դնորդներ: Այդ բոլոր զեպքերում կուլակն ապրում է ի հաշիվ ուրիշի աշխատանքի և հանդիսանում և իրեն շահագործող:

Հեղափոխությունից առաջ, կապիտալիստների յեվ կազմած ասերերի իօխանության որոն վոյ վոյ արգելք յեր հաճդիսանում կուլտուրների՝ զյուղացիներին բալանելուն: Ընդհակառակը ցարական կառավարությունն ամեն կերպ նպաստում եր կուլտուրներին: Կուլտակը յուրաքանչյուր գեալատինի համար պակաս հարկ եր տալիս, քան չքավորը: Ցարական կառավարությունն ուժանդակում եր կուլտակներին առանձին խուսորներ կազմելու, վորի համար նրանց լավ հող եր հատկացնում: Ցարական դատարանը կարգադատերերի կամ կուլտակների և գյուղի չքավորների միջև տեղի ունեցած հողային և մարգագետիններին վերաբերյալ վեճերը լուծելիս, միշտ կարգադատերերի և կուլտակների կողմն եր անցնում: Իսկ չքավորը վոչ մի տեղից ոգնություն չուներ: Վոչ միայն չքավոր գյուղացիների աղքատությունը, այլև նրանց անողնական լինելը նպաստում եր կուլտակներին՝ իրենց տնտեսությունն ամրացնելու և դառնալու գյուղական աշխարհակերպեր: Ահա թե ինչու հեղափոխությունից առաջ արագ կերպով աճում էին կուլտակացին տնտեսությունները, իսկ գյուղացիությունը քայլքարվում եր:

Անցյալ զրուցում մենք կարգացինք, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ գյուղում գյուղացիական տնտեսությունները մեծ մասամբ քայլքայման ելին լինթարկվում և տեղի չիր ունենում կուլտակի աճում: Խորհրդացին իշխանությունն ամեն մի միջոց գործ և դնում, վորպեսզի թույլ չտա, վոր գյուղացիները քայլքայմեն:

Հեղափոխության բոլոր տարիներին Խորհրդացին իշխանությունն ոգնել և ոգնում և գյուղի չքավորներին, նրանց ցանքի համար վարկով սերմացու տալով: 1918 թվից մինչև 1927 թիվը Խորհրդացին իշխանությունը չքավոր և սակավազոր գյուղացիներին ընդհանուր առմամբ տվիլ և մոտ 200 միլիոն ֆուր սերմացու վարեկ: Արդ վարկի կիսից ավելին (հարյուր միլիոն ֆթից ավելի) տրվել և անվիրագարձ:

Սերմվարկելը գյուղացիական տնտեսություններն ամրացը ին և գյուղական տնտեսությունը հետզհետե սկսեց պատերազմի ու անբերերի արիների հեքեանքով առաջ յեկած ավերումից փըրկվելը Որինակ, 1922 թ. յուրաքանչյուր 100 գյուղացիական տընտեսության ընկնում եր 7 չցանված տնտեսություն: 1925 թ. յուրաքանչյուր 100 գյուղացիական տնտեսության ընկնում եր չցանված միմիայն 4 տնտեսություն:

Նույնպես պակասեց սակավ ցանք ունեցող՝ լերկու դեսպա-  
տինից վոչ ավելի ցանող տնտեսությունների քանակը: 1922  
թվին տնտեսությունների 100-ից 46-ն արդարի տնտեսություն-  
ներ եյին, իսկ 1925 թ.—33-ը:

Հետագա տարիներում ցանքազուրկ և սակավացանք գլու-  
զացիական տնտեսությունների քանակը տարեց-տարի պակա-  
սում եւ:

Ցուրաքանչյուր գլուզացու լել հայտնի էն, վոր ցանքազուրկ  
և սակավացանք տնտեսությունների մեծ մասը կազմում ելին  
չբավոր տնտեսությունները:

Հասկանալի լել, վոր գլուզի ցանքազուրկ և սակավացանք  
տնտեսությունների քանակը պակասելով, պակասում և նայել  
գլուզի չբավորները թիվը: Յեզ իսկապես, Խորհրդադին Միության  
գլուզերում քանի գնում, այնքան ավելի յեն պակասում չբա-  
վորները:

Ինարկե, ամեն քիչ ցանք անող ել չբավոր յե: Յերենն  
գլուզացին քիչ ցանք և անում, սակայն շատ անասուն ու ին-  
վինտար և ունենում, վորը նա չքավորներին և միջակներին առ-  
լիս և վարձով: Քիչ ցանք ունեցողների, նույնիսկ ցանք չունե-  
ցողների մեջ կան նաև կուլակներ, վորոնք ապրում են ինվեն-  
տար և լծկան վարձու տալով: Այնպիսի գլուզացի կա, վոր շատ  
ցանք ունի, սակայն լծկան և անասուն չունի, և այգպիսի գլու-  
զացին, չնայած ահապին ցանքի տեր ե, վատ և ապրում, կախ-  
ման մեջ և կուլակից, վորը նրան վարկով սերմացու, լծկան  
ու ինվինտար և տալիս: Սակայն, չնայած զրան, այնուամենայ-  
նիվ ճիշտ կլինի ասել, վոր ցանքազուրկ տնտեսությունների քա-  
նակի փոքրանալը վկայում ե, վոր չքավորների թիվը գլուզում  
պակասում եւ:

Համոզվելու համար, վոր մեր լերկուում իսկապես չքավորու-  
թյունը քանի գնում, պակասում ե, տեսնենք, թե լծկան ունենա-  
լու կողմից ինչ զրության մեջ են գտնվում գլուզացիական  
տնտեսությունները:

ԽՍՀՄ-ի բոլոր գլուզացիական տնտեսությունների մեկ լեր-  
րորդը լծկան բոլորովին չունի: Խնչպես տեսնում ենք, լծկանի  
վերաբերյալ գործը ավելի վատ ե, քան ցանքերի վերաբերյալ:  
Սակայն շատ գլուզացիական տնտեսություններ սեփական ձե  
չունեն վոչ թե միայն այն պատճառով, վոր չեն կարողանում ձի  
գնել, այլ այն պատճառով, վոր դժվար և ձիուն կերակրելը: Զի՞ն

իր վրա արված ծախքերը չի հանում: Ազնուամենանիվ մեր գյուղերի ձիազուրկ սնեսությունների բանակը բեկել դանդաղուեն, սակայն գնալով պակասում ե: Ազագես, որինակ, Սեառող շրջանի լուրաքանչյուր 100 գլուղացիական տնտեսությունից բոլորովին լծկան չունելին:

1925 թվին — 43 տնտեսություն

1927 » — 38 »

Ինչպես տեսնում ենք, լծկան չունեցող տնտեսությունների քանակը նույնպես փոքրանում է: Ուրիշ խոսքով պակասում ե չքավոր տնտեսությունների քանակը: Բացի դրանից, չքավոր տնտեսությունների քանակի պակասելու պատճառն այն չե, վոր նրանց մի մասը քալքալվում է: Այդ չքավոր տնտեսությունների մեծամասնությունը չի քալքալվում և չի լրում հողը, այլ ընդհակառակը, ցանքերն ընդարձակելով, տնտեսությունը բարելավելով, ազքատությունից դուրս ե պրծնում, անցնում և միջակ տնտեսությունների շարքը:

Տարեցտարի գյուղի չքավորները Խորհրդավին իշխանությունից մշակելու համար ավելի շատ հող են ստանում: Տարեցտարի միջակ (2-ից մինչև 6 դեսլատ.) ցանք ունեցող տնտեսությունների քանակն ավելի է և մեծանում:

1922 թվին լուրաքանչյուր 100 գլուղացիական տնտեսություններից 40-ն ուներ միջակ բերք, իսկ 1925 թվին — 49-ից ավելին, այսինքն բոլոր գյուղացիական սնեսությունների մոտավորապես կեսը: Յեզ 1925 թվից հետո միջակ ցանք ունեցող տնտեսությունների քանակը տարեցտարի մեծանում է:

Մեծանում է նաև լծկան ունեցող տնտեսությունների քանակը:

Սակայն միջակ տնտեսությունների քանակի աճման հետ աճում են նաև կուլակները, կուլակային տնտեսությունները: Մենք գիտենք, վոր կուլակն իր տնտեսությունը վոչ թե իր, այլ ուրիշի աշխատանքով և ամրացնում, և հարստանում: Երատրակներին և գյուղի չքավորներին շահագործելու միջոցով: Կուլակը կարողանում է յավորներին օհակործել այն պահառավ, վոր նա սնեսուապես ավելի ամուռ և լիվ ուժեղ, նաև սակավազոր գյուղացին: Նա ունի բե՛ ինքնենար, բե՛ անասուն, յեվ բե՛ հացի ավելցուկ:

Իհարկե, մեր կուլակը շատ ավելի աղքատ և թույլ է, ասենք, քան ամերիկացի կուլակը: Ամերիկացի ունկոր գլուղացին (ֆեր-

մերը) միքանի անգամ ավելի բերք և ստանում, քան մեր կուլակը և ունի շատ ինվենտար՝ թե տրակտոր, թե կալիչ և թե այլ գյուղատնտեսական գործիքները:

### Ա. Եասունների բաժխումը

100 տնտեսության ընկնում եր.—

1923/24 թ. 1925/26 թ.

Առանց անտառնի . . . .	17	15
Մինչև 2 գլուխ ունեցող . . .	63	60
2-ից մինչև 4 գլուխ ունեցող . .	18	22
4 դիմից ավելի ունեցող . . .	2	3

Սակայն գժրախտությունն այն է, վոր մեր միջակ և առանձնապես չքավոր գյուղացին բոլորովին աղքատ և և յերբեմն ըստրկական վիճակի մեջ և ընկնում վարկով 10—15 փութ սերմացու կամ միքանի որով վարձու ձի վերցնելով: Մեր գյուղացիության աղքատ ու չքավոր գրությունից ովավելով քիչ թե շատ ուներ գյուղացին, վորը հողի մշակության համար վարկով միքանի տաններ փութ ցորեն և տալիս կամ մի ձի, հնշությամբ կարող և կուլակ դառնալ, յիթի նրա գոյության զիսավոր աղբուրը դառնա այն աշխատանքը, վոր նրա համար կատարելու յին չքավորն ու միջակը նրանից վերցրած ձիու և վարկ ստացած միքանի փութ հացի համար: Մեր կուլակի տնտեսությունը համեմատած չքավոր և միջակ տնտեսության հետ, այսպես թե այնպես, խոշոր տնտեսություն և իսկ խոշոր տնտեսությունը հանդեպ մանր տնտեսության ունի ահազին առավելություններ:

Այսպես, որինակ, Որլովի նահանգում չքավոր տնտեսության մեջ մեկ հոգուն տարեկան ընկնում և 16 և 40 կ. լիկամուտ: իսկ խոշոր կուլակային տնտեսության մեջ—103 ու Կուլակային ռեսենտըրյան մեջ աշխատավորների աշխատանքի առաջըստականուրյունն ավելի բարեց և—գորովիենել կուլակն ավելի յեւ ապահոված արագուրյան միջոցներով (ձիերով, ինքնենացով), հողն ավելի լավ և մօակվում յեվ օտաքերք և սալիս:

Ինարկե, ամեն մի գյուղացի, վորն իր տնտեսությունը ձիւտ և վարում, չի նշանակում վոր կուլակ և: Վերջին տարիներս շատ գյուղացիներ Խորհրդագլին իշխանության ոմանգակությամբ իրենց տնտեսությունը բարեկավել են. անցել են բազմադաշտ ցանքաջրանառության, ընտիր սերմեր են գործածում, վազ ցել են անում,

անսասունները լավ են պահում և լավ ել կերակրում։ Հասկանալի էն, զոր աբդպիսի տնտեսություններն ուրիշներից թե հարուստ են և թե հաստատուն։

Սակայն իրք աբդպիսի տնտեսության մեջ զյուղացին աշխատում ե ինքը, իր ընտանիքով, մշտապես բատրակներ չե վարձում, առևտրով, վաշխառությամբ չի պարապում, չի ամրկացնում չքավորներին նրանց վարձու ինվենտար և անսասուն տալով, մի խոսքով իր տնտեսությունը բարձրացնում է իր աժիատանով, —աբդպիսի զյուղացին կուլակ չի։

Կուլակային օնտեսությունն ե կուգում այն օնտեսությունը, զորք շահագործում և ուրիշի աժիատանոր յեվ հարցանում և ի համեմ ուրիշի աժիատանորի։

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Վո՞րն ե խորհրդային զյուղի գարզացման առանձնահատկությունը։

2. Ինչո՞ւմն ե կուլակի ուժը։

3. Ի՞նչու յե նա քննամի նոր խորհրդային զյուղին։

### ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԸ

Պրոլետարիատը զյուղացիության ոգնությամբ իր ձեռքը վերցնելով իշխանությունը, կարող ե սոցիալիստական շինարարության իր սկսած գործը հաղթական վախճանին հասցնել զյուղացիության հետ դաշինք կապելով։

Յերբ խոսկում ե պրոլետարիատի՝ զյուղացիության հետ ունեցած դաշինքի մասին, այստեղ չպետք ե հասկանալ ամբողջ զյուղացիությունը։ Բանվոր դասակարգը կուլակի հետ դաշինք չունի և չի լիլ կարող ունենալ։ Բանվոր դասակարգը չքավորների վրա հենակելով և միջակների հետ դաշնակցած՝ կուլակների գեմ կոխի և մզում։ Այսպես և ներկայումս զյուղացիության վերաբերյալ կուսակցության ունեցած լոգունզը։

Բանվոր դասակարգի և զյուղացիության դաշինքի խնդրի վերաբերյալ կուսակցության ունեցած լոգունզները միշտ ել նույնը չեն լեզել այդ լոգունզները փոփոխվել են նայած այն հանգամանքին, թե ինչպիսի խնդիրներ են կանգնած լեզել հեղել հեղափոխության առաջ։

Ի՞նչպիսի լոգունզներ և առաջադրել կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի և զյուղացիության դաշինքի

ինդրի վերարերւալ սոցիալիզմի համար մղվող կովի գանազան դարաշրջաններում:

Բայց ինքան կուսակցությունն այդպիսի լեռեք լոգունգ և ունեցել և այդ լոգունգներն առաջադրվել են տարբեր ժամանակներում, նայած՝ թե նրանք հեղափոխության վոր ըրջանին են վերաբերել:

1905թ. առաջին հեղափոխության ըրջանում, երբ խոսվում եր ինքնակալությունը տապալելու և կալվածատիրական հոգատիրությունը վոչչացնելու մասին, զյուզացիության վերաբերւալ կուսակցության ունեցած լոգունգը խոսում եր ամբողջ զյուզացիաւրյանց կովի գուրս բերելու անհրաժեշտության մասին:

Այդ խնդիրն այլպես եր գրվում, վորովհետեւ նույնիսկ ուներ և կուլակալին տնտեսությունները, ինչպես և քաղաքային բուրժուազիալի մի մասը շահագրգռված եին ցարական ինքնակալության և կալվածատիրերի իշխանության տապալմամբ։ Այդ պատճառով ել բանվոր դասակարգի կուսակցության լոգունգը խոսում եր զյուզացիության բոլոր խավերին կովի գուրս բերելու և քննիանցապես ամբողջ զյուզացիուրյան՝ հին ուժիմից դժուն լինելն ոգտագործելու մասին։

Այլ և իշխանության և պրոլետարիատի դիկտատուրալի համար մղվող պայքարի ըրջանի գործը՝ Յարի և կալվածատիրով զեմ մղվող կովում բանվոր դասակարգի հետ գնում եր ամբողջ զյուզացիությունը, սակայն կապիտալիստների զեմ մղվող կովում, պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու մեջ բանվոր դասակարգի հետ ամբողջ գյուզացիությունն արդեն չեր գնում և չեր կարող գնալը Այստեղ արդեն հարկավոր եր մի ալլ լոգունգ։ Կուլակալին տնտեսությունը շահագրգռված չեր նրանով, վոր պրոլետարիատը բուրժուազիալին հաղթի, քանի վոր ինքը կազմում ե բուրժուազիալի մի մասը և թշնամարար և տրամադրված դեպի պրոլետարիատի դիկտատուրան։ Նրա շահերն այստեղ խստարեն բաժանվում են բանվոր դասակարգի շահերից։

Դեռ ավելին, հեղափոխության այդ ըրջանում միջակ գյուզացիությունն ել չի կարող բանվոր դասակարգի դաշնակիցը լինել, նա տատանվում և բուրժուազիալի և պրոլետարիատի միջև, հաճախ պրոլետարիատին հակառակորդ դառնալով անցնում և բուրժուազիալի կողմը և լավագույն դեպքում պահպանում է չեզոքի (վոչ սրա, վոչ ել նրա կողմը) սպասողական դրություն։

Այդ պատճառով ել պրոլետարիատի դիկտատուրալի համար

մղվող պատքարի շրջանում չեր կարելի առաջադրել ամբողջ գյուղացիության հետ դաշնք կապելու լուսնգը:

Այդ շրջանում բանվոր դասակարգի դաշնակիցը հանդիսանում են միմիայն գյուղի չքավորները, այլ պատճառով ել բանվոր դասակարգի կուսակցությունն առաջադրում և հեղափոխության այլ դարձրջանի հանգամանքներին համապատասխան մի այլ լոգունու նոր լոգունու խոսում եր բանվոր գասակարգի՝ գյուղի չեավորների, - ամենաշահավոր գյուղացիուրյան, — իեթ ունենալիք գաօշինի մասին: Եսկ ինչ վերաբերում եր միջակեներին, այստեղ այն ժամանակ պրոլետարիատի խնդիրն այն եր, վոր նա կարողանուր յեզուացնել միջակ գյուղացիուրյանը, անվանգ գարձնել նրան յեզ այնպիսի պայմաններ ստեղծել, վորոնց շնորհիվ միջակը յդիմադրեր յեզ բանվոր գասակարգի հեղափոխուրյան գեմ գուշ յզար:

Ուստի ճիշտ եր կուսակցության այն քաղաքականությունը, վորով նա պահանջում եր, վոր բանվոր դասակարգը չքավորների հետ դաշնք կոսպի և պահանջում եր չեզոքացնել և անվտանգ գարձնել միջակներին:

Յեզ վերջապես իշխանությունը նվաճելուց հետո, լերը պրոցեսարիատը իտ մզեց բուրժուազիայի առաջին հարձակումները, հնարավորություն ստեղծվեց, վոր բանվոր դասակարգը գյուղի չքավորների հետ միասին միջակ գյուղացիության հետ համաձայնության գա և նրա հետ ամուր դաշնք կապի: Այդ լոգունու խոսում ե բանվոր դասակարգի՝ չքավորների վրա հենվելու, միջակ գյուղացիների հետ ամուր դաշն կապելու և կուլակի դեմ կոիկ մզելու անհրաժեշտության մասին:

Ներկա պայմաններում կուսակցության խնդիրն այն է՝ վորքան կարելի լի լայն կազմակերպել բանվոր դասակարգի հենարանը կազմող չքավորներին և բատրակներին, ամրացնել միջակ գյուղացիության հետ ունեցած դաշնքը և կուլակների դեմ կոիկ մզելու:

Մենք արդեն գիտենք, վոր հեղափոխության ամբողջ ընթացքում, սկսած այն մոմենտից, իերք բանվոր դասակարգն սկսել ե անմիջապես անցնել պրոլետարիատի դիկտատուրայի: Համար կոիկ մզելուն, կուլակության դեմ կոիկ և մզկում: Այդ կոիկը լի կարող տեղի չունենալ բանվոր դասակարգի՝ չքավորների վրա հենվելու և միջակների հետ գաշխնք ունենալու դեպքում: Պրոլետարական պետությունը պաշտպանելով չքավորների և միջակ-

ների շահերը՝ կոիվ և մզում կուլակների դեմ, վորոնք դեմ չելին լինի չքավորներին սարկացնել, միջակ գլուղացիական տնտեսությունը վոշնչացնել, վորպեսզի իրենք չաղանալին, հարստանալին և ուժեղանալին:

Կուլակի դեմ տեղի ունեցող կոիվը միտք չունի, էթե չպետք և հենվել չքավորների վրա և միջակ գլուղացիության հետ դաշինք չկապել Չքավորների վրա հենվելը միտք չունի, էթե կուլակի դեմ չպետք և կոիվ մզել և միջակ գլուղացիության հետ դաշինք չկապել Միաժամանակ չի կարելի միջակ գլուղացիության հետ ունեցած դաշինքը պահպանել և ամրապնդել, էթե չքավորների վրա չհենվեն և կուլակի դեմ կոիվ չմղեն:

#### ՏՐԹԵՐ ՁՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչու յեր կուսակցուրյունը Փոխում իր լոգունգները գյուղացիուրյան վերաբերյալ:

2. Ինչու յև միջակը օտանվում պրոլետարական հեղափոխուրյան ժամանակ:

#### ԿՈՒԼԱԿՆԵՐԸ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՄԱՆ ԱՄԵՆԱՎՐԱԽԵՐԻՄ ԹՇՆԱՄՄԻՆԵՐՆ ԵՆ

Կուլակները բանվոր դասակարգի և Խորհրդալին իշխանության թշնամիներն են: Նրանք թշնամի յեն վոչ թե այն պատճառով, վոր վատ են ծնված, այլ այն պատճառով, վոր կուլակի շահերն այլ են, բանվոր դասակարգինը՝ այլ:

Կուլակներն ամեն կերպ կոիվ են մզում բանվոր դասակարգի և գլուղի չքավորների դեմ: Նրանք փորձում են վիճեցնել բանվոր դասակարգի՝ հացի մթերման վերաբերյալ ունեցած քաղաքականությունը: Նրանք կովում են գլուղացիական դաշտերի հողաշինարարության դեմ, վորպեսզի թուցի չտան, վոր իրենց հողի ավելցուկները վերցնեն և սակավազոր տնտեսություններին լավ հողամասեր տան: Կուլակներն իրենց անպառնաներն ու հերկերը թագցնում են, վոր հարկման չենթարկվեն: Նրանք փորձում են կամ իրենք խցկվել խորհուրդները կամ այնտեղ մտցնել անդիտակց միջակներից և չքավորներից, իրենց դուդուկի տակ պարող և իրենց ձախակցող ցյենթակուլակներին:

Կուլակները թե՛ խոսենվ յեվ, թե՛ զործով կոիվ են մզում, վոր գյուղացիուրյան սենթուրյունը սացիալիստական յեղանակով չկատարվի, վոր գյուղացիական սենթուրյունները չմիաց-

վեն յեվ կունեսեսություններ, արևելներ, ընկերություններ . յեզ  
կամունաներ չկազմեն:

Նրանք այն պատճառով են կոփվ մզում, վրուիհետև նրանց,  
կուլակներին ձեռնոտ չե, վոր գլուղացիական տնտեսությունները  
միացվեն: Չքավորի և միջակի՝ հողի կոլեկտիվ մշակմանն անցնելը  
դրկում և կուլակին սակավազոր գլուղացիներին շահագործելու և  
գլուղացիական տնտեսությունների քարայրական հաշվին հարցա-  
տանալու հնարավորությունից:

Մենք անցյալ գլխում կարգացինք, վոր Խորհրդային Միու-  
թյան գլուղացիական տնտեսությունների մեծամասնությունը կազ-  
մում են միջակ տնտեսությունները: Խորհրդային գլուղի մեծ ուժը  
կազմում են միջակները: Այդ շատ լավ են հասկանում կուլակ-  
ները, և բանվոր զասակարգի ու գլուղի չքավորի գեմ կոփվ մղե-  
լիս նրանք ամեն կերպ աշխատում են իրենց կողմը քաշել միջակ  
գլուղացիությանը:

Կուլակներին ասում են, վոր գլուղի չքավորնելը չբաններ  
ու հարբեցողներ են և միմիայն այդ եպատճառը, վոր իրենց տըն-  
տեսությունը չեն կարողանում բարձրացնել կուլակներն ասում  
են, վոր Խորհրդային իշխանությունն ունում և այդ չբաններին  
և հարբեցողներին և նրանց վրա իզուր փողեր և վատնում: Կու-  
լակներն իրենց վոչ թե շահագործողներ, աշխարհակերներ են  
համարում, այլ աշխատասեր, լավ տնտեսավարներ և հավա-  
տացնում են, վոր չեթե Խորհրդային կառավարությունը նրանց  
չնեղի, նրանցից մեծամեծ հարկեր չվերցնի, հողի վաճառք թույլ  
տա, նրանց՝ կուլակներին վարկեր և մեքենաներ տա, այն ժա-  
մամանակ Խորհրդային գլուղական տնտեսությունը կրարելավիլ:  
Կուլակները համոզում են միջակներին՝ կորեկտիվների, կոռպե-  
րացիալի և «կոմունալի» մեջ չմտներ Անտեղ իրը թե գլուղացին  
դառնում և բատրակ և կորցնում և իր տնտեսությունը:

Կուլակները փորձում են համոզել միջակ գլուղացիությանը,  
վոր նա իր հացը քաղաքում չծախի:

Ճիշտ են արդյոք այդ կուլակալին խոսակցությունները,  
Ճիշտ և արդյոք, վոր միջակին ձեռնոտ չե իր տնտեսությունը  
կոռպերատիվ և սոցիալիստական լողանակով զարգացնելը: Զերն-  
տու լի արդյոք, վոր միջակը կուլակների հետ նույն հանապար-  
հով ընթանա:

Գո՞յ: Գլուղական տնտեսությունը կուլակալին յեվ կապի-  
տալիստական յեղանակով զարգացնելը ձեռնոտ չե վոյ միայն

գյուղի շամպաներին, այլև միջակներին: Մենք զիտենք նույնպես վոր գյուղական տնտեսությունը կապիտալիստական լեռանակով զարդացնելով, միմիայն փոքրաթիվ միջակները կարող են բարելավել իրենց դրությունը և ամրապնդել իրենց տնտեսությունը: Իսկ միջակների մեծամասնությունը տարեցտարի ավելի քայլքայվում եւ:

Վարցնենք գյուղատնտեսական մթերքների՝ հացի, լուղի, վուշի և այլ մթերքների գների հարցը, Խորհրդակին իշխանությունը ձգտում է այն բանին, վոր իերկիրն այդպիսի մթերքներ շատ արտադրի և այդ մթերքները շուկայում եժան լինեն: Այդ անհրաժեշտ ենք նրա համար, վոր քաղաքների բանվորները կարողանան իրենց աշխատավարձով լավ սնվել և լավ ապրել. այդ անհրաժեշտ ենք նրա համար, վորպեսզի մեզ անհրաժեշտ մեքենաներ, տրակտորներ և այլ գործիքներ ստանալու համար կարողանանք արտասահման գյուղատնտեսական մթերքներ արտահանել: Վերջապես անհրաժեշտ են եժանացնել հում նյութի (վուշի, կանեփի, կաշվի) գները, վորպեսզի կարելի լինի եժանացնել գործարանալին ապրանքների ինքնարժեքը և գործարանալին ապրանքները բանվորներին և գյուղացիներին կարելի լինի ավելի և ավելի եժան ծախել:

Գյուղատնտեսական մթերքներն ավելի եժան կարժենան, չեթե կարելի լինի բարձրացնել և ամրացնել ամբողջ գյուղական տնտեսությունը, նրա աշխատանքը կատարել մեքենաներով, թույլ չտալ, վոր միջակ և չքավոր տնտեսությունները քայլքայվեն և նոպատել, վոր մանը, բաժան-բաժան գյուղացիական տնտեսությունները միանան և խոշոր կոլեկտիվներ կազմեն:

Ահա, թե ինչով հն շահագրգուշած բանվոր դասակարգն ու Խորհրդային իշխանությունը:

Կուլակները բոլորովին այլ շահեր ունեն, կուլակին գյուղացիության քայլքայումը ձեռնոտու լի, վորովհետեւ քայլքայված գյուղացւն ավելի հեշտ ե իր թակարդը գցել, թալանել, շահագրծել և իր համար աշխատեցնել: Կուլակն ունի հացի մեծ պաշար և նրան ձեռնոտու լի, վոր հացը և այլ գյուղատնտեսական մթերքները բարձր գին ունենան, վորպեսզի նա ավելի հարստանա և ավելի շատ վաստակ ունենա:

Դրանք են այն գլխավոր պատճառները, վորոնցով գյուղի կապիտալիստը բանվոր դասակարգի վոխերիմ թշնամին եւ:

Կուլակության գեմ կոիվ մղելը՝ Խորհրդային իշխանության՝ գյուղի վերաբերյալ ունեցած հիմնական խնդիրներից մեկն եւ:

Կուլակների դեմ մզվող կովում բանվոր դասակարգը մենակ չէ: Գյուղում բանվոր դասակարգն ունի իր եռասալի հեթառանք: Այդ հենարանը բացրակներն ու գյուղի չբավարեն են:

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ գյուղացիուրյանք ձեռնեու յեկուլակի հետ ճուղեապապարհով զնալ:

2. Ինչո՞ւ յեն կուլակները կովում բանվոր դասակարգի զեմ:

ԱՇԽԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ—ԳՅՈՒՂԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՆԴԻՍԱԿՈՒՄ Ե ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԱՇՆԱԿԻՑԸ

Մեր լերկում ներկայումս ավելի քիչ բատրակներ և գյուղատնտեսական բանվորներ կան, քան հեղափոխությունից առաջ: Ազդ միանդամայն հասկանալի յե, վորովհետեւ շատ բատրակներ Խորհրդավիճն իշխանությունից հող ստանալով և իրենք մշակելով, ստեղծել են իրենց տնտեսությունը: Բացի դրանից, այժմ, Խորհրդավիճն իշխանության որոք, գյուղական տնտեսության համար վարձու բանվորական ուժի վոչ մի կարիք չկա: Կալվածատիրական տնտեսությունները բոլորովին չկան և կուլակային տընտեսությունների թիվը խստորեն պակասել ե:

Գյուղատնտեսական բանվորների մի զգալի մասն աշխատում և պետական տնտեսության մեջ՝ խորհանտեսությունների և անտառային տնտեսությունների մեջ: Մյուս մասը վարձու աշխատանք և կատարում (շարունակ—կլոր տարին կամ սեզոնով) գյուղացիական տնտեսություններում: Բոլոր գյուղատնտեսական բանվորների  $\frac{1}{3}$ -ը վարձու աշխատանք և կատարում կուլակային տնտեսություններում իրեն բատրակներ:

Ինչպես ֆաբրիկաների և գործարանների բանվորները, այնպես ել գյուղատնտեսական բանվորները սեփական տնտեսություն չունեն: Բատրակը և գյուղատնտեսական բանվորը նույն շահերն ունեն, ինչ վոր ամբողջ բանվոր դասակարգը: Բատրակները հանդիսանում են գյուղում բանվոր դասակարգի ամուր հետարանն ու լավագույն ոգնականները:

Գյուղի չքավորները նույն շահերն ունեն, ինչ վոր բանվոր դասակարգն ու բատրակները: Նրանք կուլակներից իրենց շահերով աւրեւելում են: Կուլակները գյուղի չքավորներին այնպիսի թշնամիներ են, ինչպես բանվոր դասակարգին: Ցեղ իրոք, չքա-

Դիմիաներին ձեռնտու չեն հացի բարձր գները, վորովհետեւ չքավորը  
հաց չի ծախում: Հաճախ չքավորի ունեցած հացը իր և իր ըն-  
տանիքին մինչև նոր լիրքը հերթի չի անում: Գարնանը և մա-  
սավանդ ամառը չքավորներն իրենք են հաց զնում: հասկանալի-  
յե, վոր նրանց ձեռնտու չե թանգ գնով հաց առնել:

Միմիան Խորհրդավին իշխանությունը և բանվոր դասակար-  
գի իշխանությունը հող տվեց չքավորներին, ոգնում և չքավոր-  
ներին բարելավելու իրենց դրությունը և չքավորներին ազատում  
և կուրակության ճանկերից:

Չքավորներին ձեռնտու յե, վոր իրենց տնտեսությունները  
դարձնեն խոշոր կոլեկտիվներ և միմյանց միանալով ե, վոր չքա-  
վոր գլուղացին կարող կլինի ազատվել հավիտենական կարիքից,  
աղքատությունից և քայլքայումից:

Հենց դրանով ել զյուղի չքավորները հանդիսանում են գյու-  
ղում բանվոր դասակարգի և Խորհրդավին իշխանության հենա-  
րանը:

### Միջակ գյուղացին աժխատավոր ե:

Նա իր տնտեսությունը վարում և իր աշխատանքով՝ մի-  
ջակների մի մասն և միայն, վոր լերենն աշխատանքի լեռուն  
շրջանում—բատրակներ և վարձում: Միջակը նախ և առաջ ու-  
զում և իր տնտեսությունն ամբացնել և ամենից շատ վախճում և  
քայլքայումից և աղքատանալուց: Միջակ անհատական տնտեսու-  
թյան տեխնիկակի ցածը՝ լինելու գեպքում միթե ոժվար և միջա-  
կի քայլքայումը: Հենց վոր ցանքին կարկուտը խփում ե, լծկանը  
սատկում կամ լերաշտը չորացնում և դաշտը, միջակն աղքատա-  
նում ե, նրա տնտեսությունն ընկնում ե և նա քայլքայվում ե:

Միմիան բանվոր դասակարգի զիկտատուրավի որոք ե, վոր  
միջակներն իրական սպաշտանություն և ոգնություն են սոտա-  
նում: Միմիան Խորհրդավին իշխանությունն ե, վոր միջակներին  
հարկերի, ինվինտար գնելու և ընտիր սերմեր ձեռք բերելու ար-  
տոնություններ և տալիս, վորոնցով միջակն իրոք կարող և իր  
տնտեսությունը բարեկավել:

Խորհրդավին իշխանությունը միջակ գյուղացուն բռնի մի-  
ջոցով չի մզում կոլեկտիվները: Մենք արդեն կարդացինք, թե  
ինչպես իրենք՝ զյուղացիները զյուղատնտեսական կոլեկտիվներ  
են կազմում—վորովհետեւ կոլեկտիվ լեղանակով տնտեսություն-  
վարեին ավելի ձեռնտու յեւ կոլեկտիվում աշխատող լուրաքան-  
չուր զյուղացի, վոչ թե բատրակ, այլ կոլեկտիվի մյուս բոլոր  
անդամներին համահավասար լիակատար տնտեսատեր եւ:

Ինչ կողմից ել վոր վերցնելու լինենք, միջակ գյուղացու շահերը կուլակների շահերից տարբեր են: Միջակներին ձեռնտու չե կուլակների հետ նույն ճանապարհով զնալ:

Միջակները վոչ թե բանվոր դասակարգի ու գյուղի չքավորների թշնամիները, այլ նրանց բարեկամներն ու դաշնակիցներն են:

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՅԻ ՀԱՄԱՐ

1. Ինցու յեն չմավորթերը բանվոր դասակարգի հենարանը գյուղում:

2. Ինցու յե միջակին ծեռնուու բանվոր դասակարգի հետ միասին անցնել գյուղի վերակառուցմանը:

### ՊԱՅՔԱՐ ԿՈՒԼԱԿԻ ԴԵՄ ՅԵՎ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԶԲԱՎՈՐՆԵՐԻՆ

Կուսակցության և Խորհրդավին իշխանության քաղաքականությունը գյուղում ախնակա և դրված, վոր հնարավորություն չի տալիս կուլակին գյուղացիությանը շահագործելու:

Նախ և առաջ կուլակները զրկված են խորհուրդների համար ընտրելու և ընտրվելու իրավունքից: Խորհրդավին Միության սահմանապրության (հիմնական որենքի) մեջ ասված և, վոր ու բիշների աշխատանքը շահագործողները խորհուրդների ընտրության ժամանակ ձախի իրավունք չունեն:

Խորհուրդը գյուղի մեծ ուժն եւ Խորհրդի մեջ մուտք գործելով, կուլակը նրան կծառալեցներ իր շահագործման և չքավորների դրությունը վատացնելու նկատակներին: Հողաշինարարության—հողի վերաշինության—ժամանակ կուլակներն ոգտվելով իշխանությունից, լավ հողերն իրենց ձեռքը կզցելին: Զբավորներին արտօնյալ գներով փայտեղին չելին տա, ինչպես վոր արդարվում և խորհրդավին որենքներով: Բոլոր հողալին վեճերը կը լուծվելին կուլակների սպաին:

Բացի դրանից, խորհուրդները կուլակների ձեռքն ընկնելով, գյուղացիներին ճիշտ կերպով հարկաման չնյին յենքարկի, կաշխատելին ապորինի կերպով շատ հարկեր առնել չքավորներից և սակավազոր միջակներից, իսկ իրենց յեղբայրների—կուլակների, ամուր տնտեսատերերի վրա թեթև հարկեր կդնելին: Միմյանց կոգնելին հարկերից թագցնել իրենց վարը, անսասունը և գյուղատնտեսական ինվենտարը:

Մինչդեռ Խորհրդավին իշխանության որենքներով կուլակները պետք ե ավելի շատ հարկեր տան, քան միջակները: Որի-

Նակի համար՝ 1917 թվին գլուղացիական տնտեսությունները պետք ե վճարելին միասնական գլուղատնտեսական հարկի. —

Ամբողջ տնտեսության լուրաքանչյուր 100 ռուբլի յեկամը-տից լուրաքանչյուր շնչին (լուրաքանչյուր բերանին) 30 ռուբլի յեկամուտ ընկնելու դեպքում — 2 ռ. 30 կ.։

Յուրաքանչյուր 100 ռուբլի յեկամտից լուրաքանչյուր շնչին 50 ռուբլի յեկամուտ ընկնելու դեպքում — արդին 2 ռ. 40 կ.։

Ամբողջ տնտեսության լուրաքանչյուր 100 ռուբլի յեկամը-տից լուրաքանչյուր շնչին 100 ռուբլի յեկամուտ ընկնելու դեպ-քում — 12 ռ. 70 կոպեկ։

Կ՞նյաքես և գյուղատնեետական հարկը վեճարում Ռմակի որչանի հին ռուսական գավառում։

Գյուղացիների՝ ըստ յեկամտի ցածր խմբակը յուրաքանչյուր 100 ռուբլի յեկամտին վճարում և 2 ռուբլի հարկ։

Գյուղացիների՝ ըստ յեկամտի բարձր խմբակը յուրաքանչյուր 100 ռուբլի յեկամտին վճարում և 15 ռուբլի հարկ։

Տնտեսությունը վորքան շատ յեկամուտ ունենա, նրանից ալնքան ալելի շատ մաս պետք է հատկացնի պետությանը, վոր-պես միասնական գյուղատնտեսական հարկի Հասկանալի յե, վոր ամենամեծ յեկամուտն ունի կուլակալին տնտեսությունը, վորն ավելի շատ ցանք և անում, ավելի շատ ինվենտար և անասուն-ներ ունի, քան միջակը կամ չքավոր գյուղացին։

Մենք կարդացինք, վոր կուլակալին տնտեսություններն անում են: Կուլակների անումը կանգնեցնելու համար Խոր-եղային իշխանությունը մեծամեծ հարկեր և զնում կուլակ-ների վրա։

Համ կոմունիստական կուսակցության XV համագումարը 1927 թ. դեկտեմբերին իր ունեցած նիստում վորոշել և ունենոր կուլակալին տնտեսությունների հարկերն ավելացնել։

Խորհրդային իշխանությունը հողի վաճառքն արգելում եւ Կուլակը սովորաբար շատ ինվենտար և անասուն ունի և կարող և ավելի շատ հող մշակել, քան թե ինքն ունի։ Ցեթե հողի ա-ղատ վաճառք թուլատրվեր, կուլակները գյուղի չքավորներից հողը կգննին և նորից կսկսեր գյուղացիությունը քայլալիք և հողագուրկ դառնալ, մի բան, վոր Խորհրդային իշխանությունը թուլ տալ չի կարող։ Վոր կուլակը կսկսեր չքավորների հողերը գնել, յեթե Խորհրդային իշխանությունը հողի վաճառք թուլ

տար, լեռնեռում և այն բանից, վոր կուլակները ներկայումս կապա-  
լով տա հոդ են վերցնում այն չքավորներից, վորոնք հնարա-  
վորություն չունեն իրենց հողերը մշակելու Միջին հաշվով կա-  
պալով արվող հողի համարլա մեկ լեռորդ մասը վերցնում են  
կուլակները Հողի վաճառքն արգելվը—գլուղի քալքաբման և  
կուլակի աճման դեմ՝ Խորհրդային իշխանության մղած պալքարի  
միջոցներից մեկն ե:

Կուլակին սեղմելով, կուսակցությունն ու Խորհրդային իշ-  
խանությունն ամեն կերպ ոգնում են գլուղի չքավորներին և սա-  
կավազոր միջակներին՝ գուրս գալու աղքատ դրությունից և ա-  
զատվելու կուլակների ստեղծած ստրկական վիճակից:

Սակայն թնջորների լու դիմում Խորհրդային իշխանու-  
թյունը չքավորներին և միջակներին կուլակների ստեղծած ստըր-  
կացումից ազատելու համար:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ կուլակներին գյուղական խորհրդի համար ըն-  
րուրյուն կատարելու իրավունք չի ուժում:

2. Ինչպե՞ս և Խորհրդային իշխանությունը սահմանափա-  
կում կուլակուրյան անումբ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆԸ ՉՔԱՎՈՐՆԵՐԻՆ,  
ՅԵՎ ԱՐՏՈՂՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԿՆԵՐԻՆ

Նախ և առաջ Խորհրդային իշխանությունը չքավորների  
հիմնական մասսային հարկերից ազատեց: 1926—27 թվին գյու-  
ղատնտեսական հարկից ազատվեցին մոտ 7 միլիոն չքավոր տըն-  
տեսություններու Բոլոր գյուղացիական տնտեսությունների մեկ  
քառորդից ավելին հարկից ազատվեցին: 1927 թ. հոկտեմբերին  
կենտրոնական Գործադիր Կոմիտեն մի մանիքեստ հրատարակեց  
(Հոկամբերերբան հեղափոխության տասնամյակի առթիվ): Աղդ մա-  
սիփեստով գյուղատնտեսական հարկից ազատվեցին բոլոր գյու-  
ղացիական տնտեսությունների (ի հարկե ամենաչքավոր և աղ-  
քատ) դարձալ  $10^{\circ}/_0$ -ը: Ազնպես վոր ներկայումս գյուղացիական  
ծխերի մեկ լեռորդից ավելին գյուղատնտեսական հարկ չի վճա-  
րում: Բայց զբա փոխարեն ամրող հարկերի մեծ մասն առնվում  
է կուլակներից:

Հեղափոխությունից առաջ, ցարական ուժիմի որոք հարկե-  
րի ամրող ծանրությունն ընկնում եր գյուղի չքավորների և մի-

չակների ուսերի վրայ Գրուղացին լուրաքանչուր, տարի միմիայն հոդի հարկ եր տալիս լուրաքանչուր զեսլատինին 1 ս. 50 կոպ. Սակայն բացի հոդալին հարկից, ցարական կառավարությունը գլուղացիներից զանազան դլամարկեր եր առնում: Անեն մի արական շնչին ընկեռում եիին 9 ոսուրյու (վոսկով) զանազան տեսակի հարկեր: Գլուղացին վորքան ավելի աղքատ եր, կառավարությունն այնքան ավելի շատ բաժին եր վերցնում նրա հոդից ստացվող լիկամուտներից իրեւ հարկ:

Ալ և դրությունը Խորհրդադին իշխանության որոք Ներկայումս զյուղացիուրյունը օտա իից հարկ և տալիս, բան ցարի ժամանակ, չնայած վոր զյուղացին այժմ ավելի լավ և ապրում, բան պատերազմից առաջ և ավելի շատ լիկամուտ և ստանում:

Հարուստ, կուլակային անտեսություններն իրենց լիկամտի 15-% մինչև 25% -ը հարկ են վճարում:

Միջակ գլուղացիական անտեսությունը հողահարկի, գլխահարկի, զեմստավալին հարկի համար տալիս եր ամբողջ լիկամտի մոտ 30% -ը՝ Խորհրդացին իշխանության որոք հարկերը կազմում են միջակ գլուղացու լիկամտի շատ չնշին մասը – 4-% մինչև 10% -ը: Նայած լիկամտին:

Սակայն հարկերից ազատվելը դեռ բավական չեւ Աներամեօս և զեռ ոգնուրյուն ցույց առ չափութերին յեզ միջակներին, վորպեսզի եռամեն իրենց աներամեօս և հոգածինարարությունը բարելավին: Առաջին հերթին աներամեօս և հոգածինարարությունը – հողացրվածությունը, հողերի հեռու և մանր-մունր լինելը – ԽՍՀՄ-ի գլուղական անտեսության ամենամեծ դժբախտություններից մեկն եւ Մեր լիքրում շատ կան այնպիսի գլուղացիական անտեսություններ, վորոնք 10–15 և ավելի լի հողակառորներ ունեն զանազան տեղերում: Կան նաև այնպիսի անտեսություններ, վորոնք մինչև 100 կտոր հող ունեն:

Անհողաշինարարությունը գլուղացիությանը կործանում եւ Միջնակների (Թեյկա) պատճառով իզուր տեղն ահագին հողեր են կորչում: Նեղ հողաշերտում կատարվող աշխատանքը վոչ թե աշխատանք եւ, այլ տանջանք – լծկանը շարժվելու տեղ չունի: Շատ և շատ գլուղերի մարգազետինները տասից տասնհինգ վերստ հեռու յեն գտնվում գլուղից, մինչդեռ այդ գլուղերի կողքին, մոտիկում գտնվող հողերից ոգտվում են ուրիշ գլուղերի գլուղացիները:

Հողի սահմանավորման պատճառով գլուղացիների միջև անսահման վեճեր և կոիքներ են տեղի ունենում: Դատարաններում հարկութ հաղարավոր հողային խնդիրներ են քննվում:

Ամբողջ Խորհրդային միության մեջ միանգամից, լերկու-լերեք տարվա ընթացքում չի կարելի հողաշինարարություն կատարել։ Արդ աշխատանքը դժվար է և պահանջում է անազին միջոցներ և տասնյակ հազարավոր հողաշափ-աշխատավորներ, վորոնք մեր լերկում գեռ շատ ու շատ քիչ են։

Բայց հողերի մի մասն՝ արդեն հողաշինարարման և լենթարկված Միմիայն ԽՍՖԽՀ-ում տասը տարվա ընթացքում (1918 թ. մինչև 1927 թ.) արդեն հողաշինարարման ի լենթարկված 100 միլիոն հեկտարից ավելի, դրանից լերեսուն միլիոն հեկտարը ներգրավված հողաշինարարություն է, իսկ 76 միլիոն հեկտարը՝ միջուռդյան շինարարություն։

Հասկանալի իե, վոր արդ քիչ եւ Հողաշինարարման և լենթարկված մեր լերկում դեռևս աճրողջ հողային տարածության միմիայն մեկ ութերորդ մասը։

Հողաշինարարությունն արագացնելու համար Խորհրդային իշխանությունն այդ գործին տարեցարի ավելի շատ միջոցներ և տրամադրում։ Հոկտեմբերյան հողափոխության տասնամյակի առթիվ ԽՍՀՄ-ի հգի վորոշել եւ չքավոր և սակավազոր միջակ տնտեսությունների հողաշինարարությունը կատարել պետության հաշվով և ալդ գործին լրացուցիչ կերպով 1927/28 թ. հատկացնել 10 միլիոն ռուբլի։

Խորհրդային իշխանությունն իր գլխավոր ուշադրությունը դարձնում է չքավոր և սակավազոր միջակ տնտեսությունները հողաշինարարման լենթարկելու վրա։ Կուսակցության XV համագումարը վորոշել ե՝ «Հողաշինարարությունը կատարելիս պաշտպանել չքավոր գյուղացիների շահերը նաև հող հատկացնելու դեպքում», ալիքներն, վորպեսզի չքավորներին և սակավազոր միջակներին գյուղին մոտիկ և լավ վորակի հողեր տրվեն։

Ի հարկե, առաջին հերթին հողաշինարարություն է կատարվելու այն չքավոր և միջակ տնտեսություններում, վորոնք միանալով կազմել են կոլոնտեսություններ, գյուղատնտեսական ընկերություններ, արտելներ և կոմունաներ, վորոնք հողն ավելի լավ են ոգտագործում, լավ են մշակում և որինակ են հանդիսանում այն գյուղացիների համար, վորոնք գեռես անհատական տնտեսություն են վարում։

Բացի հողաշինարարությունից, Խարեւագային իշխանությունը մեծ ոգնություն է հասցնում չքավոր յեզ սակավազոր միջակներին՝ սերմով, լծկանով յեզ ինվենտարով։

Մենք արդեն կարդացինք, վոր տասը տարվա ընթացքում գլուղացիությանը 200 միլիոն փութ սերմվարկ և տրվել վերջին տարիներում ցանելու սովորական սերմերի կարիքը պահանձել է: Սակայն մեր գլուղացիությունը լավ վորակի սերմեր չունի, յեղածը ցեղավոր սերմեր չեն և մեծ բերք տալ չեն կարող: Վատ սերմերը վերջին տարիները փոխարինվում են լավ տեսակի սերմերով, վորոնք մշակվում են խորհրդային սերմատու տնտեսություններում: 1925/1926 թ. գլուղացիությանը բաժանված է յերկու միլիոն փթից ավելի տեսակավոր սերմեր, իսկ 1926/1927 թվին՝ արդեն յերկու անգամ ավելի—4 միլիոն փութ:

Ամեն տարի գլուղացիներին ավելի և ավելի շատ բարձր վորակի ցեղային անասուններ են տրվում: 1924 թ. ցեղային խոռշոր յեղներավոր անասուն և տրված գլուղացիներին 2,500 զլուխ, իսկ 1925 թ.՝ արդեն մոտ 5000 զլուխ: Ցեղային խոզ՝ 1924 թ.—15 հազար, 1925 թ.—27 հազար: Տեսակավոր սերմերը և ցեղային անասունները գլուղացու տնտեսությունն զգալիորեն բարելավում են:

Խորհրդային իշխանությունը չքավոր և միջակ գլուղացիության տնտեսությունը բարելավելու համար մեծ ոգնություն և հացնում նրան վարկերով և դրամական փոխատվության միջոցով: Ցուրաքանչյուր օտրի Խորհրդային մարմինները տասնյակ միլիոն ռուբլի վարկեր են օալիս գլուղացիներին՝ աճասուն, ինքնենար զնելու յեզ այլ տեսնական կարիքների համար: Վարկերի մեծ մասը օրվում և չքավորներին, ապա միջակներին: Վարկերն ոգնում են չքավորներին իրենց տնտեսությունը բարելավելու:

Շատ մեծ նշանակություն ունի ինվենտարով ոգնությունն ցույց տալը, մանավանդ աշխատանքի յեռուն շրջանում:

Ամենից շատ չքավորները կուրակների ոգնությանը դիմում են նրանից՝ ձի, գութան և կալսիչ ստանալու համար: Վորպեսզի կարելի լինի ոգնել սակավազոր գլուղացիներին կուրակների ստեղծած ստրկացումից ազատվելու համար, Խորհրդային իշխանությունը կազմակերպել և վարձակայաններ, վորտեղից չքավորն ու միջակը կարող են դաշտալին աշխատանքների ժամանակ չնշին վարձով հարկավոր գլուղատնտեսական գործիքներ վերցնել: Թեև այդ վարձակայանները չեն կարող սպասարկել բոլոր կարիքավոր գլուղացիներին գլուղատնտեսական գործիքներով, այնուամենալիք նրանք հակալական ոգնություն են հացնում գլուղի այն

Հքավորներին, վորոնք ամենից շատ լծկանի և ինվենտարի կարիք ունեն:

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ենչույթ և հարկավոր գլուղում հոդաժինաւարություն կատարել:

2. Ենչույթ և Խորհրդային իշխանությունն ոգնում չեա-  
վոր անձեռնորդութեաբեց:

ԽՆՉԳԵՇ ԵՆ ԽՈՐՀՏՆՑԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱԴՆՈՒՄ  
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԼ

Վերջին տարիները խորհենեսությունները —խորհրդային տնտեսությունները —մեծ ոգնություն են հասցնում չքավորներին ինվենտարով: Այս, իրեւ որինակ, Շեքչենկովի, Կրասինի, Կալինինի, Ռդեսալի շրջանի (Ռէկրայնայում) «Զերվոնա Զիրկա» և Վուխովյաշչեյ սոլոցեա խուտորների գաղթական գլուղացիների նամակը: «Մենք գաղթականներս, —գրում են գլուղացիք, —մեր խորին շնորհակալությունն ենք հալտնում Խորհրդային իշխանությանն այն հսկայական ոգնության համար, վորք նա ցուց տվեց մեզ մեր տնտեսության վերականգնման գործում: Մեր մեծամասնությունը —չքավորներս առանց ձիու, առանց ինվենտարի չեցինք կարողանում մեզ հատկացրած հողերը մշակել և ստիպված ենք այդ հողը կապալով տալ քարթու-կուլակներին լերքի մի մասը նրանց տալու պայմանով:»

Այն փոքր վարկերը, վոր մենք ստանում ենք կառավարությունից, ուտում ենք, և ամեն տարի ավելի և ավելի աղքատանում: Այս տարի մեզ մոտ չեկավ ուկրայնական խորհուրնությունների միության ներկայացուցիչը և առաջարկեց մեզ փոխանակ դրամական վարկերի, մեր հողերը արակտորներով մշակել: Բոլոր գաղթականները, բացի առանձին կուլակներից, համաձայնություն տվին, թեև քիչ ելին հավատում, վոր աշխատանքը տնտեսավարի կկատարվի:

Ի մեծ ուրախություն մեզ և ի մեծ տրտմություն կուլակների վարեցինք բոլոր խամ հողերը ու ցել դարձրինք. աղքախոտերից մաքրելու համար 5—6 անգամ հողը վարեցինք և ցաքանեցինք և վերջապես ամբողջ դաշտը մտքուր ցորեն ցանեցինք: Այժմ կուլակներն արդեն տրակտորների խմբի աշխատանքի վրա չեն ծիծաղում: Այս տարի (1927 թ.) գլուղացիները մեր ուայո-

նում, անձրեներ չինելու պատճառով, համարլա աշնանացան չարին, իսկ այս հողերում, վորտեղ արգեն ցանված ե, դեռևս ծիրեր չկան: Եսկ մեր գաղքականական ցելած դաշտերում կանաչին են տալիս տանջյակ գեսյատիններով այնպիսի երազակի ցորեններ, ինչպիսին գոյուրյուն չունեն ամենահարուս գերմանական զագուրճերում:

Բացի աշնանացան ցորենից, տրակտորները գարնանացանի բոլոր հողերը կրկին անգամ հարկեցին: Մեզ մոտ չկա մի զեսաւտին հողամաս, վոր մշակված չինի և կապալի տրված լինի: Մեզ մոտ չկա մի չքափոր, վոր միքանի գելատին ցելի աշնանացան չունենաւ:

Յեզ հաջորդ, 1928 թվին, Շելչենկոյի խորհանտեսությունը նույնպես տրակտորներով մշակեց չքափորների հողերը: 1928 թվի հուլիսի սկզբում գյուղացիական դաշտերի գարնանացանները, վորոնք մշակված ելին խորհանտեսությունների տրակտորներով, ավելի լավ դրության մեջ ելին, քան մյուս գյուղացիական դաշտերի գարնանացանները: Խորհանտեսությունը լիովին կատարեց գյուղացիության հետ կապած իր բոլոր պայմանները:

Գործնականում համոզվելով, թե ինչ հսկալական ոգում և տալիս հողը տրակտորվ մշակելը, Ողեսսայի շրջանի շատ հողային ընկերություններ խնդրում են հողը տրակտորներով մշակելու համար իրենց հետ պայմանագրեր կնքել: Մեծ քանակությամբ շքավոր և միջակ տնտեսությունների հողեր մշակելու համար խորհանտեսությունները լրացուցիչ տրակտորներ են ուղարկվում:

Յեզ Խորհրդային միության շատ վալերում շատ հողային և գյուղատնտեսական ընկերություններ, խորհանտեսություններ, միություններ նույնպես վորոշել են, ինչպես Ողեսսայի շրջանում, անցնել գյուղացիական հողը տրակտորներով մշակելու յեղանակին: 1928 թվին Սկոպինի և Միջին-Ոկայի գյուղատնտեսական միությունները վորոշել են գյուղացիական գաշտերը մշակելու համար կազմակերպել երակուրային կալոններ: Գյուղական տնտեսության մեջ աշխատող տրակտորների թիվը աճում է: Արդեն 1927 թ. ԽՍՀՄ-ի գյուղերում և ավաններում աշխատում ելին մոտ 30 հազար տրակտոր: Ի՞նչարկե, այնպիսի մի հսկա յերկրի համար, ինչպիսին Խուսաստանն է, —այդ շատ չեն Գյուղական տնտեսության տրակտորների կարիքը բավարարելու համար ներկայումս ԽՍՀՄ-ում կառուցվում են նոր հատուկ տրակտորային գործարաններ:

Խորհրդակին իշխանության հողմից չքավորներին ու միջակ-ներին ցուց տրվող ոգնությունը, վոչ միայն բարելավում և զլու-դացիական տնտեսությունները, այլ հողը տրակտորներով, հա-վաքող մեքենաներով (հաց և խոտ հնձող մեքենաներ) մշակելը զլուզացիներին ցուց և տալիս զլուզական տնտեսությունը միաս-նարար և կորեկտիվ լեզանակով վարելու ամրող ոգուածը:

### ՀԱՐԹԵՐ ԶՐՈՒԹՅԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ ոգու և օալիս զլուզին օրակառը:

2. Ինչո՞վ խորհմանեանուրյունները կարող են ոգնել զլու-դացիական տնտեսությունների բարձրացմանը:

ԿՈԼԵԿՏԻՎԱՅՈՒՄԸ — ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՐԵԼԱՎՎԵԼՈՒ ԱՄԵՆԱՃԻՇՏ ՄԻՋՈՑՆ Ե

Քլուզացիական հողերը տրակտորներով հանրորեն մշակելու առաջին իսկ տարում, զլուզացիներն սկսում են հասկանալ տըն-տեսությունը միասնական լեզանակով վարելուց ստացվող շահն ու ոգուածը և զլուզական տնտեսությունը միասնական լեզանա-կով վարելու համար նրանք հավաքվում և կազմում են կոլեկ-տիֆլոն և ընկերություններ։ Ողնոսայի շրջանի գաղթականներն իրենց նամակի վերջում գրում են՝ «այն աշխատանքից հետո, վոր մենք տրակտորներով են կատարել, այլեվս յենք ցանկանում ցավոց մասն տնտեսություն ունենալ յնպ վորուել ենք կազմա-կերպել հանրացված օրակառային սննդուրյուն, վորի մեջ չե լինելու գյուղացիական առանձին ցանքակառներ։ Մեզ համար այլպիսի տրակտորային տնտեսություն կազմակերպելու պար-տականությունն արգեն իր վրա է վերցրել Տարազ Շեքչենկովի անվան խորհնանտեսությունը, վորի հետ մենք պայմանագիր՝ ենք կապել։»

Ճիշտ այլպիս ել Ռիազանի նահանգում, «Յամսկալա ալորո-դա» ցեղացին անտեսության ընթիվ ընկերոջ գեկուցամից հետո, վորը վերաբերում եր ցեղացին տնտեսության՝ չքավորներին առ-վուտի (լոնջալի) և կերի ճակնդեղի (բագուկի) սերմերով և զլու-դացիական սերմերը զտելու միջոցով ոգնություն հասցնելուն, — իսպեցկի գլուղի զլուզացիները ցանկություն հայտնեցին կազ-մակերպել զլուզական ընկերություններ և խնդրում են խորհ-նանտեսության կոմունիստներին այդ գործում աջակցություն ցուց տալ իրենց։

Հարյուր հազարավոր գյուղացիական տնտեսություններ արդեն անցել են հողի կողեկտիվ, միասնական մշակման յեղանակին: Առանձնապես ուժեղացել ե գյուղացիների ձգտումը զեպի կոլտնտեսությունները վերջին ժամանակներու Համարյա ամեն որ Խորհրդային միության լեռքեմն այս, լեռքեմն այն անկյունում հարյուրավոր գյուղացիներ մեքենական ընկերություն, կոլտնտեսություն կամ գյուղական տնտեսությունը միասնական յեղանակով վարելու համար վորևս այլ միություն են ստեղծում: Հարյուր հազարավոր չքավորներ և միջակներ արդեն համոզվել են, վոր միանալը և կոլտնտեսություններ կազմելն այն միակ հուսալի միջոցն ե, վորով գյուղական տնտեսությունը բարելավվում ե:

Կոլտնտեսությունների մեծ մասի բերքը նույնպես ավելի բարձր է, քան անհատական գյուղացիական տնտեսություններինը: Եատ կուլնտեսություններ մեկ գեսլատին ցանքից մինչև 200 փութ հաց են վերցնում: Կոլեկտիվի անդամ չքավորն իր գաշտից ավելի շատ հաց և այլ գյուղատնտեսական մթերքներ և ստանում: Ալդ պատճառով ել նա քիչ կախում ունի կուլակից և մինչև բերքի հասնելը հացի համար կուլակի ձեռք ու վոտքը չի ընկնի: Բացի գրանից, կոլեկտիվ տնտեսությունները հնարավորություն ունեն վաճառելու համար շուկա գուրս բերելու ավելի շատ մթերքներ, քան անհատական տնտեսությունները—միջակները և նույնական կուլակները: Կուլակային տնտեսությունը միջին հաշվով ծախում է ամբողջ բերքի  $20^{\circ}/_{\circ}$ ՝ իսկ շատ կոլտնտեսություններ ծախում են բերքի մինչև  $35^{\circ}/_{\circ}$ ՝

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Զերծո՞ւ յե արդյօք չբավորներին հողի կունկսիվ յեղանակով մօակնելուն անցնելը:

2. Ինչո՞ւ այդ անցումը ձեռներու յե կուլակներին:

**ԿՈՌՊԵՐԱՑԻԱՆ ԳՅՈՒՂԸ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ ՏԱՆՈՂ  
ՈՒՂԻՆ ԱՆՑՆՈՒՄ և ԿՈՌՊԵՐԱՑԻԱՑԻ ՄԻՋՈՎ**

**ԴԵՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՏԱՆՈՂ  
ՈՒՂԻՆ ԱՆՑՆՈՒՄ և ԿՈՌՊԵՐԱՑԻԱՑԻ ՄԻՋՈՎ**

Գլուղի և քաղաքի շաղկապն իրագործվում և ամենից առաջ արդյունաբերական ապրանքները գլուղատնտեսական մըլթերքներով փոխանակելու շնորհիվ Առևտուրը սերտորեն քաղաքը կապում և գյուղին, գյուղը՝ քաղաքին, Հեղափոխությունից առաջ քաղաքի և գյուղի միջև նույնպես կապ գոյություն ուներ: Սակայն այն ժամանակ գյուղի և քաղաքի միջնորդը հանդիսանում եր առևտուրականը, վաճառականը, կապիտալիստը: Քաղաքում արդյունաբերությունը պատկանում եր կապիտալիստներին: Կապիտալիստներն ել կապ ելին պահպանում գյուղի հետ: Գլուղի հետ կապ ունենալու նրանց նպատակը հարստանալն եր ներկալումս արդյունաբերությունը գտնվում և բանվորական պետության ձեռքին: Ծնորհիվ դրա բանվորական պետության ձեռքին և գտնվում նաև փոփանակության մի զգալի մասը: Բանվորների նպատակն ե քաղաքի և գյուղի միջև ստեղծել այնպիսի փոխանակություն, վորը թե արդյունաբերությանը ոգուտ տա և թե գյուղական տնտեսությանը, թե բանվորներին և թե գյուղական և մեր ամբողջ սոցիալիստական շինարարության շահերին ծառալի: Յեվ ահա այդ նպատակին և ծառալում կոռպերացիան, վորը քաղաքի և գյուղի միջև տեղի ունեցող փոխանակման մեջ տարեցտարի ավելի և ավելի մեծ դեր և խաղում, մասնավոր առևտուրականին ասպարիզից դուրս գցելով:

Գլուղի համար ամենից կարենոր են մասնավոր կոռպերացիալի լերկու բնագավառները՝ սպառողականը և գյուղատնտեսականը:

Սպառողական կոռապերացիան գլուզացուն արդյունաբերական ապրանքներ և մատակարարում, մասնավորին գերազանցելով: Նա պայքար և մղում կուլակ առեարականների հետ, խախում և նրա զիրքը գլուզում և կապում և գլուզական տնտեսությունն արդյունաբերության հետ:

Գլուզատնտեսական կոռապերացիան կարգավորում և հողի հանրորին մշակումը, անասունների նկատմամբ հանրորորին խնամքունենալը, գլուզացիական մթերքների բնդհանուր սպառումը, տարածում և խոշոր մեքենաներ, կառուցում և ընդհանուր ջրազացներ, մի խոսքով—միացնում և գլուզացիական տնտեսությունները, նպաստում և նրա մեջ կոլեկտիվ աշխատանք մտցնելուն և իր վերջնական նպատակն եւ անհատական գլուզացիական ձխերը միացնել և գարձնել կոլեկտիվ: տնտեսություններ:

Գյուղատնտեսական կոռապերացիաի հարյուր մարզուն քննկեռում եւ.—

	1925 թ.	1926 թ.
Առանց ցանքի . . . . .	34,4%	31,4%
2-ից մինչև 8 դեսլատին ցանք ունեցող 58,2%		59,3%
8 դեսլատինից ավելի ցանք ունեցող . 7,4%		9,2%

Մեր լերկրում, վորտեղ 2<sup>ժ</sup> միլիոնից ավելի գլուզացիական տնտեսություններ կան, կոռապերացիան և այն ել գլուզատնտեսական կոռապերացիան, ունի խոշոր նշանակություն: Միմիայն կոռապերացիաի ոգնությամբ գլուզացիներն իրոք կկարողանան գլուզական տնտեսությունը շատ բարձրացնել, կառուցելով սոցիալիստական գլուզական տնտեսություն և շատ հաճախակի կառավագիշտ ները կոռապերացիալի մեջ չեն մտնում և շատ վատ են անում: Բայց ական եւ լավ մտածել՝ համոզվելու, վոր կոռապերացիալի մեջ մասնակցություն ունենալը գլուզացու համար չափազանց ձեռնուու լի: Միմիայն կոռապերացիալին մասնակցելով նա կարող է արագ կերպով և իր տնտեսությունը բարելավել և ոգնել միը լերկը րի սոցիալիզմի կառուցմանը, քանի վոր կոռապերացիալի միջոցով գլուզացու մասնավոր շահը կապվում է սոցիալիզմի շինարարության շահերին:

Յեվ իրոք, վերցնենք պատերազմից առաջ լեղած գլուզացիական տնտեսությունը: Իր տնտեսության մեջ գլուզացին մթերքների մի մասն արտադրում եւ իր սեփական կարիքների համար, իսկ մի մասը՝ ծախելու համար: Յենթադրենք թե ծախելու համար արտադրեց վուշ (թել): Նա վուշի թել ունի 50 փուժ: Ի՞նչ

և անելու այդ թելը: Յեթե քաղաքը հեռու լի, նա այդ թելը տառնում և մոտակա առևտրական կենտրոնը, ինչպիս հաճախ և պատահում, և ծախում և առևտրական գնորդներին: Սակայն առևտրականը վուշն իր համար չի գնում: Նա գնում և գործարանին վաճառելու համար: Նա առնում և ծախում և ծախում և նրա համար, վորովեսպի զրանով փող վաստակի: Իսկ վորպեսպի վաստակի, նա պետք և գլուղացուց վուշն ավելի հօան գնի: Յեթե գլուղացին այդ գնով չծախի, առևտրականը չի գնի: Գլուղացին ինքն իր ապրանքը չի կարող գործարան տանել, վորովնետե կամ գործարանն և հեռու լինում, կամ լիթե մոտիկ ել ե, դժվար թե նա այդ ապրանքը գնի: Գործարանին ձեռնուու չե, վոր փոքր քանակությամբ վուշ գնի, վորը կարող և նաև լավ տեսակավորված չինել: Նա միանգամբ հարլուրավոր և հազարավոր փթերով և գնում: Այդպիսով գլուղացին ուղի-չուղի պետք և իր վուշը ծախի գնորդին: Գլուղացին այդ բանում կորցնում ե, իսկ գնորդը շահում և արդյունաբերության հետ կապ և հաստատում վոչ թե գլուղացին, այլ գնորդը: Ահա թի ինչ և ստացվում:

Յեզ ներկայումս, արդեն իսկ մեր պայմաններում, հեղափոխությունից հետո, գլուղացիները լիբրեթն նույն այս մեռվ ել, մասնավոր գնորդի միջոցով արդյունաբերության հետ կապ են հաստատում: Յեզ ինարկե, այդ սխալ եւ Մեր խորհրդացին պայմաններում վլուղացու համար միակ ճիշտ միջոցը-կոռպերացիայի միջոցով գործելը և կոռպերատիվ կազմակերպելն եւ Այդ ժամանակ վուշ ունեցող ըոլոր գլուղացիներն այդ վուշը կտանեն կոռպերատիվ (և հարկավոր չե հեռու տանել): Կոռպերատիվում կոռտակվում և մի քանի հարյուր և նույնիսկ հազար փթերով վուշի թելը կոռպերատիվ այդ թելը տեսակավորում, մամլում և ուղարկում և գործարան ծախելու Ոգուտն անմիջական եւ գլուղացիներն իրենք իրենց կոռպերատիվի միջոցով արդյունաբերության հետ կապ են հաստատում և հնարավորություն չեն տալիս գնորդին նրանց աշխատանքով հարստանալու:

Թելը վորքան լավ ե, վորքան լավ և մշակված, վորքան ավելի լավ և տեսակսվորված, այնքան նրա զինն ավելի բարձր ե: Իսկ լավ թել ստանալու համար պետք և լավ սերմ ցանել: Թելը լավ մշակման լինթարկելու, լավ տեսակավորելու համար հարկավոր են մեքենաներ: Անհատական գլուղացիական տնտեսության ուժից վեր և մեքենաներ գնելը, հաճախ նույնիսկ նա չի կարողանում լավ սերմեր ճարել: Իսկ կոռպերատիվը հեղուս-

թլամր և սերծեր և մեքենաներ ձեռք բերում, Գյուղացիները վուշը վաճառելուց ավելի մեծ ոգուտ կունենան, վորովհետեւ նրանց ունեցած վուշը բարձր վորակ և ունենալու:

Կավ սերմերը լավ ել թել են տալիս: Վորակնեղի այդ թելի բերքը լավ լինի, պետք ե հազը լավ մշակման լենթարկել հարկավոր են արհեստական պարարտացումներ, հարկավոր և ծիչտ յեղանակով ցանք կատարել և այլն Այդ նույնպես պահանջում է գյուղատնտեսական մեքենաներ, այսինքն այն, վոր առանձին տնտեսությունը ձեռք բերել չի կարող: Այդ ամենը միմիայն կոռպերատիվը կարող և անել: Յեվ դարձյալ գյուղացու, կոռպերատիվի անդամի վուշից ստացվող յեկամուտը կաճի, քանի վոր նա տվելի շատ բերք կստանա:

Յեվ բացի այդ, աշխատանքն ել խնայողության կենաթարկվի: Բավական և հիշել այն, թե վորքան ժամանակ և խում ձեռքով վուշ քրքրելը, թե ինչպես և փոշին մարգու աչք քոռացնում, թե ինչպես են մարգու ձեռքերն արյունվիկ լինում: Բավական և հիշել թե վորքան ծանր աշխատանք պահանջվում հասարակ չարջիչով աշխատանք կատարելու համար: Իսկ մեքենայով աշխատանք կատարելիս այդ ժամանակը շահվում և և գյուղացին կարող և այդ ժամանակը ողտագործել ուրիշ աշխատանքներ կատարելու համար: Վորոշ շրջաններում գյուղացիական տընտեսությունները խստորեն տուժում են հողի չոր լինելուց կամ թե ճահճային լինելուց: մի տեղ հողը վոռոգման կարիք ունի, մի ուրիշ տեղ՝ չորացման: Ասանձին գյուղացիական տնտեսությունը հնարավորություն չունի վոռոգման և չօրացնելու աշխատանքներ կատարելը: Այդպիսի աշխատանքներ հնարավորություն ունեն կատարելու միմիայն կոռպերացված տնտեսությունները:

Վերջապես մի հանգամանք ևս: Յուրաքանչյուր գյուղացի լավ գիտի, զոր, որինակ, ոսլան (կրախմալը). ավելի թանգ և, քան կարտոֆիլը: Այլ խոսքով, մշակված արտադրանքը հում նյութից ավելի թանգ եւ Ավելի ձևնատու յե ոսլան ծախել, քան կարտոֆիլը: Սակայն ոսլա ստանալու համար պետք ե կարտոֆիլն ոսլալի գործարանում վերամշակման լենթարկել: Ամեն մի գյուղացի այդպիսի գործարան կառուցել չի կարող: Սակայն, լավ և սկզբում կարտոֆիլը վորպես կարտոֆիլ վաճառելուց ամբացած գյուղացիական կոռպերատիվն այդպիսի գործարան պատրաստել կարող ե: Յեվ դարձյալ գյուղացիական տնտեսությունների յեկամուտը մեծանում եւ Յեվ հետևապես, իրենք՝ տնտեսություններն են բարելավվում:

Կոռպերատիվը կարող է գործն սկսել փոքրից, կարող և ըս-  
կսել զյուղացիական տնտեսության մթերքներն սպառելուց, կա-  
րող և անտեսությունը բարելավելու և բերքատվությունը մեծաց-  
նելու համար անցնել սերմեր և մեքենաներ դնելու գործին,  
կարող և կազմակերպել առանձին զյուղացիական տնտեսություն-  
ներին վոչ մատչելի աշխատանքներ (միլիորացիա և այլն), կա-  
ռուցել զյուղացիական տնտեսություններից ստացվող հում նյու-  
թի համար գործարաններ և այլն:

Բացի դրանից, ինչպես հայտնի լի, ներկայում գյուղացիա-  
կան տնտեսությունների վարկավորումը կատարվում է կոռպե-  
րացիայի միջոցով: Են վմբ գյուղացին իր տնտեսությունը բա-  
րելավելու համար վարկի կարեք չի զգում: Բավական ե միայն  
մտածել այն բոլորի մասին, ինչ վոր ասվել ե, վորպեսզի հաս-  
կանալ վոր կոռպերացիային չմասնակցող գյուղացիները դրա-  
նով հենց խոշճնդուած են հանդիսանում գյուղացիական տնտեսու-  
թյան զարգացմանը: Նրանք զրկում են իրենց գյուղացիական տնտեսությունը բարձրացնելու հնարավորությունից, նրա ար-  
դյունավետությունը մեծացնելուց և հետեւապես, իրենց կյանքը  
բարելավելուց: Սակայն դրա հետ միասին կոռպերացիայի աշխա-  
տանքի մեջ իմաստ կերպով պետք ե հետեւի, վոր այստեղ ունե-  
վորները և կուլակները զերիշնող չհանդիսանան, վորպեսզի  
նրանք կոռպերատիվի աշխատանքին այն ընթացքը չտան, վոր  
դրանով իրենց շահերը պաշտպանեն և հարվածնեն չքավորների  
ու միջակների շահերին: Պետք ե հետեւել, վոր կոռպերացիայի  
աշխատանքում խեղաթյուրման չենթարկվի դասակարգակին գի-  
ծը, և դրան հասնել կարելի լի չքավոր և միջակ գյուղացիներին  
կոռպերացիայում ակտիվ աշխատանքի շուրջը համախմբելու մի-  
ջոցով, չքավորների հետ ունեցած աշխատանքն ամրացնելու մի-  
ջոցով, վորպեսզի այստեղ նույնպես նա բանվոր դասակարգի  
հենարանը դառնա:

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՅԻ ՀԱՄԱՐ

Ա. Ի՞նչ նօտեակություն ունի կոռպերացիան գյուղական  
տնտեսության զարգացման համար:

Ի՞նչՊԵՐ Ե ԿՈՂՊԵՐԱՑԻԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՄ ԳՅՈՒՂԾ

Մեր կոռպերացիայի աշխատանքի վերաբերյալ մի քանի ո-  
քինակները ցուց կտան, թե ինչ ե տալիս կոռպերացիան գյու-  
ղացիական տնտեսությանը և թե ինչպես կոռպերացիայի միջո-

ցով գլուզը դիմում և դեպի խորհրդային և հանրական տնտեսությունը:

Մոսկվայի նահանգի, Վոլոկոլամի գավառի Ռամենկե գյուղում, կոռպերացիան ընդգրկել է գյուղացիական տնտեսության համարյա բոլոր կողմերը Միանալով և գյուղատնտեսական ընկերություն կազմելով, գյուղացիներն անցել են ութզաշտա սիստեմի: Հոյզ վարում են տրակտորներով, Բացառապես տեսակավորված սերմեր են ցանում: Հատուկ սերմահողամասերում ցանում են վարսակի, վուշի և առվույտի տեսակավոր սերմեր: Ակսել են գործադրել նաև հանքային պարաբաններութեր (սուլպերֆուֆատ): Բերքի բերկու լեռնորդը հավաքում են մեքենաներով: Այդ ամենը շատ շուտով և բերքատվությունը բարձրացրել: մեկ գետափին աշորան (րօյք) տալիս և 85 փութ, վարսակը—100-ից մինչև 180 փութ, կարտոֆիլը—1.500 փութ, առվույտը—300—400 փութ և այլն ներկայումս հանրային գործածություննեն արգեն տրակտորը, բարդ կալիելու, տեսակավորելու և այլ մեքենաները: Հասարակությունը բազմացնում է ցեղային ձիեր, պահում է ցեղային ցուլեր, անասունների ճիշտ կերակրում և կատարում և այլն: Կաթի սպառումը կատարվում է կաթնային ընկերության միջոցով: Կազմակերպվում և անասնապահությունը բարձրացնելու աշխատանքը համար վերահսկիչ միությունն է կտտարի ուղերի լավացման միասնական աշխատանք: Հասարակությունը միասնաբար կառուցել է հանրային մեքենաների շենք, տեսակավոր սերմերի պահեստ, հատիկազտիչ կետ և այլն: Հրդեհների գեմ պայքարելու համար կազմակերպված և հրակալուն շինարարության ընկերություն, վորն ունի լերկու ազլուսի գործարան: Գոյություն ունի նաև վարկային ընկերություն:

Հայուր գյուղացիական տնտեսություններից գյուղահետական կոռպերացիայի մեջ կա ԽՍՀՄ-ում առանց Շւկրայինայի: —

1924 թ.

1927/1928 թ.

Դյուղատնտեսական կոռպերացիայում կան	7%	32,9%
Դյուղատնտեսական կոռպերացիայում չկան	93%	61,1%

Տնտեսության կոռպերացման և բարձրացման համապարհին աեղի ունեցած արդարիսի հաջողությունները վոչ միայն բարելավում են գյուղացիների դրությունը, այլև բարձրացնում

են զյուղի կուլտուրանու Գյուղի 40.0 մարզկանցից միմիայն 4 հոգի ծերունի լին անգրագես մնացել Կա առաջին տատիճանի դպրոց, զյուղացիական լերիտասարդության դպրոց, ակտիվ գյուղատեսական խմբակ, 4 զեսլատինանոց մշտական փորձա-ցուցադրական հողածառ և այլն:

Կոոպերացիալի լերկորդ որինակը տալիս և Կաշիրի գավառի Կոլոմնա գյուղը Յերկու տարվա ընթացքում առաջներում չետամնաց և ցաք ու ցրիվ այդ զյուղը զարձավ կոլտնտեսություն (կոլեկտիվ տնտեսություն), «Նոր Կոլոմնա» արտել Յեվ Խսկագես, մեր առաջ կանգնած և մի եռ գյուղ. բացի անսառւներից և շենքերից, ամբողջ տնտեսությունը զարձավ հանրային: Մինչև 1924 թիվն այնտեղ թագավորում եր լիսաղաշարը: Ներկայումս արտելն այդտեղ մտցրել և լոթագաշտան սիստեմ, լեռեքնուկ և արմատապտուղներ ցանելով: Հողի մշակումն ու քերքի հավաքումը կատարվում և կոլեկտիվ լեղանակով: Այդ հնարավորություն և տվել ոգտվելու տրակտորով և կատարելագործված մեքենաներով: Արտելն ունի տրակտոր, կալող, հնձող, լերկու խոտհար, լերկու ցանող, լերկու քամհար մեքենաներ և այլն: Սերմերն ամբողջովին տեսակավորվում են: Սկսել են գործածել նաև հանքային պարարտանութեր: Այդ այն հետեանքն ունեցավ, վոր նոր-կոլոմնացիները ներկայումս մեկ զեսլատինից ստանում են 100 փութ (պատերազմից առաջ 48 փութ) աշորա, 104 փութ (պատերազմից առաջ 34 փութ) վարսակ և այլն:

Կազմակերպվեց նաև մելիորատիվ ընկերություն, Բոլոր զյուղացիները վարկային ընկերության անդամ են: Մնացել և հանրացնել անսառւնը—և այդ խնդիրը գյուղացիները դրել են իրենց առաջ. նրանք աշխատում են վարկ ստանալ հանքային անսառւնների բակ կառուցելու համար:

Այսպես, խորհրդային պետության ոգնությամբ և աջակցությամբ գյուղատում կոոպերացիան զարգանում է:

### ԴՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԵԶ ԿՈՌՊԵՐԱՑԻ ՍՈՑԻԱՑԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՐԸ

Գյուղացիական տնտեսությունների միանալը կոոպերացիայով, նպաստում և գյուղական տնտեսության զարգանալուն: Յեվ այդ դեռ բավական չեւ Գյուղացիները կոոպերացիալի միջոցով անմիջական կապ հաստատելով գործարանների և արդյունարերության հետ, ասպարիզից դուրս են գցում առևտրական գնոր-

դին Խնչպես սպառողական կոռպերացիայի զարգանալու դեպքում մասնավոր առևտրականը միանգամայն անպետք և դառնում կլուղում, այնպես ել գլուղանեսական կոռպերացիայի զարգանալով մեծաքանակ գնորդը գլուղում անհետ վոչինչ չունի Կոռպերատիվը նրան սպանում եւ Ալսպիսով, կոռպերացիան մեր յերկրում ծառալում և առևտրականներին ասպարիզից դուրս գցելու մի միջոց։ Սակայն կոռպերացիան միմիայն առևտրականին չի հարգածում, այլ հարգածում և նաև կուլակին։ Խոկ դյուզում, ինչպես հարտնի լի, կուլակը և առևտրականը հաճախ նույն գեմքն են հանդիսանում։

Մենք արգեն տեսանք, վոր գլուղացիական տնտեսությունների միանալը կոռպերացիայով, նպաստում և դյուզական արնատեսութիւնն ավելի արագ բարձրանալուն և զարգանալուն։ Կոռպերացիան նպաստում ե, վոր մեքենաները գլուղ մուտք գործեն։ Կոռպերացիայով միացված անագին տնտեսությունները տարեցտարի ավելի և ավելի լին մեծացնում իրենց արդյունավետությունը Խոկ կուլակը կարող և հաջողություն ունենալ միմիայն այնտեղ, վորանդ տիրում և աղքատութիւնն և խեղճությունն Յեկ իրոք, ինչու կուլակը հնարավորություն ունի չքավորին ստրկացնելու։ Պարզ ե, վոր կուլակն իր ստրկացնող ողակը կարողանում և չքավորի վիզը գցել այն պատճառով, վոր չքավորն ապահոված չեւ Չքավորի տնտեսությունն անզոր և նրան կերակրելու, այդ պատճառով ել չքավորն իր վիզը մտցնում և կուլակի ողակի մեջ, վորպեսզի գոնե տաժանակիր աշխատանքով կարողանա մի բան աշխատել։ Յեկ չքավորի տնտեսությունը վորքան ավելի ամրանա և զարգանա, չքավորն այնքան ավելի քիչ կարիք կունենա կուլակի հետ կապվել։ Գլուղի աղքատությունն ու խեղճությունը վերացնելը մահացու հարգած և կուլակի համար։ Յերբ աղքատությունն ու խեղճությունն անհնետանա, կանհետանա նաև այն խարազանը, վոր չքավորներին քշում և դեպի կուլակների ցանցը։ Խոկ գլուղի աղքատությունը կարող և վոչչացվել միմիայն աշխատավոր գլուղի միացյալ ջանքերով։ Չըքավոր և միջակ տնտեսությունները զարգացնելու լավագույն միջոցը՝ կոլեկտիվ աշխատանքին, խոշոր հանրային տնտեսության առավելությունների ողագործելուն անցնելոն եւ Կոռպերացիայի և կորոնտեսությունների ողնութիւնը անտեսությունը բարձրացնելով, ոգնելով բանվոր գասակարգին՝ սոցիալիզմ՝ կառուցելու գործում, անցնելով տնտեսությունները սոցիալիստու-

բեն կառուցելու էեղանակին, գլուզը քայլ առ քայլ ասպարիզից դուրս կմղի աղքատությունը և դրա հետ միասին՝ նաև կուլակությունը:

Վոր ալդ ամենը ճիշտ է, հաստատվում ե գլուզաանտեսական կոռպերացիալի աշխատանքի փորձով: Վերցնենք, որինակ, ԽՍՀՄ-ի կաթի, հում նյութի և յուղի արաագրությունը: Գլուզաանտեսական կոռպերացիան ներկայումս ընդգրկում է այդ արաագրության  $90^{\circ}/\phi$ -ը: Յեվ այստեղ, փորտեղ կոռպերացիան և գործում, մեծաքանակ կնորդն արդեն անհետացել է: Կաթի կոռպերացիան գլուզացիական անտեսությունների արդյունավետությունը խիստ կերպով բարձրացրել է: Միքրիի լուղն իր վորակով աշխարհի լավագույն յօւղերից մեկն է: Խոկ արտասահմանաւան շուկայում այդ լուղն եժան և ծախվում: 1922/23 թ. մեր յուղն Անգլիայում վաճառվում եր փթին 8 ռ. 50 կ: ավելի հժան, քան գանիստականը: Խոկ 1924/25 թ. այսինքն լերկու տարի անց, նույնպես ավելի եժան եր, սակայն այս անգամ արդեն 6 ռ. 50 կոպեկով: Խոչչի և բացատրվում այդ: Այդ բացատրվում և նրանով, վոր մեր յուղը պատրաստվում է վատ, պապենական և անկուլուր լեղանակով: Մենք մեր լետության համար ահազին հարկ ենք վճարում: Խոկ լերը 1922/23 թ. մինչև 1924/25 թ., լերեք տարվա ընթացքում, կաթի կոռպերացիան ավելի խոշոր կաթնաշրջաններում մեծ լուղի գործարաններ կառուցեց, մեր յուղի գինը բարձրացավ, անկուլուրականության հարկը պահպանեց: Գլուզացիական անտեսությունն ակսեց սահմանալ մի փութ յուղին 2 ոսուրլի ավելի: Յեվ ներկայումս կաթնատնտես կոռպերացիան բոլոր ջանքերը լարում է, փորպեսզի: կաթնամըթերքների լավ մշակումով յուղի գինը բարձրացնի: Խոկ առաժմ մենք ալդ շենք սահմանում: Յեթե մենք հաշվենք, թե գլուզացիները յուղի վատ մշակման պանճառով վերոնիշալ լերեք տարվա ընթացքում ինչ են կորցրել, մենք կատանանք 20 միլ ոսուրլու հասնող մի ահազին գումար: Այդ գումարով կարելի լի դնել 6.665 հատ արակառը իրենց գութաններով, ունդալներով, ցանող մեքենաներով և պահեստի մասերով: Ահա, թե ինչ են կարցրել գլուզացիները կոռպերացիալի անբավարար զարգացած լինելու պատճառով: Կաթնառատ շրջաններում այդ արդեն լավ են համեցել և կոռպերացիան ալդ տեղերում արագ և զարգանում, նպաստում ե գլուզական անտեսության արագ բարելավմանը և աղքատությունը գլուզից վարելուն, զրանով կուլակին աստիճանաբար մեռցնելով:

Կոռպերացիալի աճումը մասնավոր առևտրականին ասպարիզից դուրս և զցում նաև ցեղաքանակի թվերին։ Կոռպերատիվ առևտրությունը կազմում էր՝

1923/24 թ.	ԽՍՀՄ-ի ամբողջ տոհմարի	$28^0/0$	իսկ մասնավ.	$41^0/1$ )
1924/25 »	»	$37^0/0$	»	$27^0/0$
1925/26 »	»	$42^0/0$	»	$23^0/0$
1926/27 »	»	$47^{1/2}/0$	»	$18^0/0$

Ի՞նչ են ասում այդ թվերը։ Նրանք ասում են, վոր լուրաքանչյուր տարի կոռպերատիվ առևտրի շրջանառությունը մեծանում է, իսկ մասնավորինը փոքրանում է։

Կոռպերացիան ասպարիզից դուրս և մղում մասնավորին։

Կոռպերացիան վորքան ավելի լի զարգանում, գլուղական տնտեսությունն այնքան ավելի լի նրա միջոցով սերտորեն կապվում արդյունաբերությանը։ Թուրքիստանի բամբակագործական շրջաններում արդեն սերտ կապ և հաստատված արդյունաբերության և գլուղական տնտեսության մեջ, կոռպերացիան այնտեղ զարգացած և և բազմակողմանի ոգնություն և հացնում գլուղացիական տնտեսություններին։ Բամբակագործական կոռպերատիվների արակտորները վարում են դպրացիության հողերը։ Ի հարկե, առայժմ կոռպերացիան գենուս չի կարող տրակտորներով բավարարել գլուղացիության ըոլոր հողերի մշակման պահանջները։ Մյուս կողմից ել գլուղացու դաշտը ժամանակակից լեղանակով և արագ մշակելուց շատ բան և կախված։ Գլուղացիական տնտեսությունների բարելավումը մեծ կախում ունի վարելուց։ Հարուստ դպրացին ունի լավ քերք և ստանում է ժամանակին։ Լավ քերք և ստանում։ Հարկավոր ել, վոր չքավորն ել վարը ժամանակին անի և նույնպես ավելի լավ քերք ստանա։ Յեվ ահա կոռպերացիալին բամբակկոմի միջոցով ողնության և զալիս արդյունաբերությունը։ Արդյունաբերությունը գլուղացիական զաշտերը վարելու համար տալիս և իր տրակտորները։ Յերբ վարը վերջացած ել, գլուղացիները ցանքի սերմերն ստանում են կոռպերացիալի միջոցով։ Եթե կոռպերացիան քիչ սերմեր ունի, բամբակոմն այդ պակասը լրացնում ել կոռպերացիալի միջոցով գլուղացիները զաշտերի համար ստանում են նաև պարարտանյութեր։ Յերբ բամբակը պտտրաստ ել, գլուղացիներն սկսում են հավաքել և կոռպերացիալի ու բամբակկոմի նույն տրակտոր-

1) Մնացած  $0^0/0$ -ը կազմում է պիտական առևտրությունը։ 1923/24 թ. այդ առևտրությունը կազմում էր  $31^0/0$ , 1924/25 թ. —  $36^0/0$  և 1925/26 թ. —  $35^0/0$ .

ները գալիս, հավաքում են բատրակն ու տանում պետական բաժնակազտիչ դործարանները Այսպիսով, արդյունաբերությունը կոռպերացիայի միջոցով սերտ կերպով հապօւմ և գյուղական տնտեսության հետ Գյուղական տնտեսությունն արագ կերպով տճում է, գյուղացու կյանքը բարելավվում է, քանի վոր արդյունաբերության հետ ունեցած ուղղակի կապով ապահովում և գյուղացու ուղղակի և ձեռնուու սպառումը, իսկ դժվարին ժամանակ՝ նաև արդյունաբերությանն ուղղակի ոգնություն հասցնելը:

Այսպիսով, կոռպերացիայի լայն զարգացումն ամեն կողմից գյուղացուն ձեռնուու լի: Կոռպերացիայի միջոցով գյուղացին իր մթերքները ձեռնառ կերպով և սպառում և ձեռնուու կերպով և արդյունաբերական տպրանքներ գնում: Կոռպերացիայի միջոցով նա հետուրյամբ և վարկ ստանում: Կոռպերացիայի միջոցով հեշտությամբ և մենենաներ ձեռք բերում: Կոռպերացիայի միջոցով գյուղատեսական եռում նյուրը վերամշակելու համար կառուցում և գործառներ: Կոռպերացիայի միջոցով կազմակերպում և այնպիսի աշխատանքներ,—ինչպես որինակ, զաշտերի վոռոգման, ճահճճներ չորացնելու և այլն,—վոր առանձին գյուղացիական տնտեսությունը չի կարող այդ անել: Կոռպերացիայի միջոցով գյուղացին մասնավոր առեվտրականին ասպարիցից զուրս և գցում: Կոռպերացիայի միջոցով նա բարձրացնում է իր յեկամուտը: Կոռպերացիայի միջոցով նա գյուղական անեսուրյունը սեր կերպով կապում և արգյունաբերության հետ: Կոռպերացիան գյուղացու անեսական օտեներին լրիվ բավարարություն և սալիս: Այդ բոլորից զատ կոռպերացիան ամենալավ ձեռվ պաշտպանում և չքավորներին և միջակներին՝ կուլակներին ստրկանալուց: Այժմ տեսնենք, թե ինչ ձեռվ և պաշտպանում:

Կոռպերացիան ապացուցում է գյուղացուն, վոր նրա համար խոշոր և հանրալին տնտեսությունն ավելի ձեռնառ լի, քան մասնավոր և մանր տնտեսությունը նախ և առաջ գյուղացիները կոռպերատիվով միանում են իրենց մթերքները,—վուշը, յուղը, կանեփը, բամբակը և այլն,—ավելի ձեռնուու գնով սպառելու համար: Հետզհետե նրանք համոզվում են, վոր ամենից ձեռնուու լի լավագույն վորակի մթերքներ վաճառքի հանելը: Այդպիսի մթերքներն ավելի թանգ են և շատ ել յեկամուտ են տալիս: Սակայն լավագույն վորակի մթերքներ վաճառքի հանելու համար, պետք և ունենալ ալդպիսին: Իսկ ունենալու համար պետք և լավ սերմեր ցանել, հողը լավ պարարտացնել, վարել

Հնձել և մշակել մեքենաներով, Այսպիսով, գյուղացիները լուրջ մթերք վաճառքի դուրս բերելու համար անցնում են բարելավված մեքենայական մշակման։

Սակայն մեքենան վոչ թե մեծ արդյունք և տալիս այն ժամանակ, յերբ նա ամբարում կամ ծածկի տակ վեր և ընկած, այլ այն ժամանակ, յերբ աշխատում եւ Փոքրիկ տնտեսության մեջ նրան լրիվ աշխատանքով ծանրաբեռնել չեն կարող Մանր արնատեսությունը յերբեք չի կարելի ամբողջովին մեքենայացված տնտեսություն զարձնել Մանր անտեսության մեջ ձեռքի աշխատանքը միշտ ել մեծ տեղ և գրավելու, իսկ մեքենան կարիք կլինի գործադրել յերբեմն Իսկ մենք գիտենք, թե վորքան ձեռնուու յե այն անտեսությունը, վորի մեջ գլխավոր տեղը զրավում և մեքենայական աշխատանքը և միմիայն փոքրիկ ոժանդակական տեղը—ձեռքի աշխատանքը Գյուղացիները, յերբ սկսեն մեքենաներով աշխատել հետզհետե կհասկանան, և այդ բանում կհամոզվեն իրենց սեփական փորձով, Այդ ժամանակ նրանք միքայլ ել առաջ կգնան, Փախանակ կոռպեկրացիայով միացված մանր տնտեսությունների, կտտեղձեն խոշոր կոլեկտիվ տնտեսություններ, հանրային գյուղատնտեսական արտադրություն՝ հիմնված մեքենայական աշխատանքի վրա։ Յեվ արդարիսի տնտեսությունից մինչև սոցիալիստական տնտեսությունը մի քայլ և մնում, իսկ սոցիալիզմի ժամանակ վոչ մի ստրկացում զուրծյուն չունի—վոչ կուլակային, վոչ կապիտալիստական և վոչ ել կարգածատիրական ստրկացում, Այսպիսով, կոռպեկրացիայի միջով և անցնում այն ճանապարհը, վորը տանում և գեպի գյուղի աշխատավոր խավերի—չքավորի և միջակի—շահերի ապահովումը։

Գյուղի աշխատավոր խավերի շահերը պահանջում են—վորքան կարելի շուտ անցնել գեպի սոցիալիզմը տանող այլ ճանապարհը, իսկ դրա համար նրանք պետք եւ լայն ընթացք տան կոռպեկրացիայի շինարարությանը և նրա բարձրագույն տեսակեներին—կոլտնտեսություններին։ Մեր ինսպիրը պետք եւ լինի վոչ թե սօփել, վոր գյուղացիական տնտեսությունները խորհունտեսություններով միանան, այլ նրանց վրա ազդեցությունը դորձել համոզելու յեվ խորհունտելու միջոցով։ Մեր յերկրում կա 2± միլիոնից ավելի գյուղացիական տնտեսություն, Ուզդակի հնարավոր չեն նրանց լուրաքանչյուրին առանձին-առանձին ողնության համեմել Այդ հեշտությամբ կարելի ին անել, յերբ նրանք կոռպեկրացիայով և մանավանդ կորոնտեսություններով միացել և

խոշօր խմբեր են կազմելը Դժվար և տաել, թե ինչ պահանջներ ունեն առանձին ցաք ու ցրիվ գլուղացիական տնտեսությունները Մեկին կացին և պետք, մլուսին՝ գութան, մի էրդորդին՝ ձի, մլուսին՝ ցաքան և ալին: Հնարավոր չե՛լուրաքանչլուր փոքր տնտեսության պահանջները հաշվի առնելի իսկ լերը առանձին տնտեսությունների ալդ պահանջները կոռպերատիվն և անում, նա միանվածից մեծ քանակությամբ կամ մեծ գումարով ապրանքներ և պահանջում:

Գևառությունը գլուղական տնտեսությանն ոգնել կարող և, ոգնում և և ամեն տարի քանի զնա, ալնքան ավելի և ավելի կոդնի Մենք արդեն քազմից ասել ենք, վոր մենք աշխատում ենք մեր անտեսությունը կառուցել նախորոք մտածված ծրագրով (պլանով), կոռպերատիվ միավորումների բոլոր խոշոր պահանջները կառավարությունը մացնում ե՛ և մացնելու լի ժողովրդական տնտեսության զարգացման իր ծրագրի մեջ Այսպիսով, կոռպերացիալի միջոցով գլուղական տնտեսությունը նույնապես կարող է ծրագրով զարգանալ, ինչպես և արդյունաբերությունը Յեկ ամեն տարի, նախորոք նույնիսկ միքանի տարի առաջ գլուղացիները կարող են իմանալ, թե զիտղական անտեսությունը բարեկավելու զործում, իրենց կրանքը բարելավելու գործում իրենք վորքան առաջ կդնան: Յեկ մեզնում շինարարական աշխատանքը տեղի կունենա առանց դադարի և առանց խոչընդուների: Սակայն նորից ենք կրկնում, վոր այդ բոլորի համար պետք և կառուցել և ամրացնել կոռպերացիան:

Սակայն, մի բան պետք և լավ հիշել, Գյուղացիական կոռպերացիան վոյ մի լավ բան չի կարող առև, յերե իօխանությունը բանվոր զասակարգի ծեճում չի իմա, յերե արզյունաբերությունը բանվորական կառավարությանը չպատկանի չեվ յերե այդ պետական արզյունաբերությունը չզարգանա: Տեսնենք, թե կապիտալիստական լերկրներում ինչ և կատարվում: Այնտեղ նույնապես գլուղացիական կոռպերացիա կա: Յեկ ինչ և կատարվում այնտեղ Այնտեղ, ինչպես որինակ, Դանիայում, վորտեղ կոռպերացիան կուլակալին և, կոռպերացիայի բոլոր բարիքներից ոգտվողը կուլակությունն եւ Այնտեղ չքափոր զիտղացիությունը և միջակների մի մասը չեն կարող կոռպերացիա ստեղծել, քանի վոր կապիտալիստաները նրանց դեմ պայքարում են: Վարկ չեն տալիս նրանց և արդյունաբերական ապրանքներ տալիս պահանջում են կանխիկ դրամ: Կառավարությունները նրանց մը

ծամեծ հարկեր են դնում և այլն: Իսկ յեթե չքավորներին հաջողգի կոռպերատիվ ստեղծել, աբդպիսի կոռպերատիվն այն ժամանակ կարող է աշխացություն ստանալ, յեթե նա ոգնի կապիտալիստներին, վորպեսզի նրանք զյուղի աշխատավորներին թարանեն: Աւատի կապիտալիստական յերկրներում կոռպերացիան կուրակացին ընուզթ և ստանում: Այդ կոռպերացիան այն վերաբերմունքն ունի գեղի գլուղացիությունը: Ինչպես ձեռնարկատերը և տնտեսատերը զեղի բարբակը: Նա զառնում և կապիտալիստական ձեռնարկութերի մի հավելվածը: Վոչ թե զյուղացիներն են զեկավարում կոռպերատիվին, այլ կոռպերատիվը ինքն և զյուղացիների վզին փաթաթում իր—հաճախ միանգամայն վոչ ձեռնուու—պայմանները: Կոռպերացիան արդյունաբերության, բանկերի, և պետական իշխանության միջոցով կապիտալիստներին յենթարկվելով և նրանց ձեռքին գործիք հանգիստանալով, չի նպաստում գլուղացիական տնտեսությունների մասսական բարձրացմանը և բարելավմանը: Ընդհակառակն, նա ոգնում և կուրակներին, վորոնք կոռպերացիայով միացած, չքավոր և միջակ գլուղացիներին շահագործում են: Կապիտալիստական յերկրների կոռպերացիան դյուղի շերտավորումն ուժեղացնում և և նպաստում և մի տնտեսության քայլարմանը, վորպեսզի մի ուրիշ տնտեսություն հարստանա:

Յեզ միմիայն մեր յերկրում, վորտեղ իշխանությունն ու արդյունաբերությունը բանվորների ձեռքին են գտնվում, կոռպերացիան ծառալում և գյուղի աշխատավոր խավերի շահերին և հակառակ և կուրակներին: Մեր յերկրի բանվոր դասակարգը համառ պայտքար և մզում ամեն տեսակի ճշշման և շահագործման զեմ, այդ պատճառով ել նա կոռպերացիան այնպես և կառուցում, վորպեսզի նա հանգիստանա կուրակի դեմ կովելու մի գործիք: Բանվորական խորհրդալին իշխանությունը բանկերի և արդյունաբերության միջոցով ոգնում և միմիայն այնպիսի կոռպերացիալին, վորը նպաստում և չքավոր և միջակ տնտեսությունների զարգացմանը: Այդ իսկ պատճառով առ այժմ միմիայն ԽՍՀՄ-ումն և կոռպերացիան ծառայում գլուղացիական տնտեսությունների լայն մասսաների բարձրացման համար իրրե միջոց և նրանց դուրս բերելով ազքատ զրությունից, ցաք ու ցրիս ու բաժան-բաժան լինելուց կանգնեցնում և սոցիալիստական շինարարության լայն ճանապարհի վրա:

1. Կ՞նչ անելիքներ ունի կոռպերացիան զյուղացիական սքնականիան բարձրացման գործում յեվ ինցպես և կատառում այդ անելիքները:

2. Ի՞նչո՞ւ յէն կոռպերացիան ապահովում աշխատավոր գյուղացիության տնտեսական հասարակական շահերը:

3. Կ՞ո՞չ առընդություն կա ԽՄՀՄ-ի յեվ կատիսալիօտական յերեխների կոռպերացիայի միջեւք:

4. Ի՞նչո՞ւ յեն մենք կոռպերացիան աճվանում դեպի սոցիալիզմը տանող ճանապարհ:

### ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայումս կոռպերացիան մեր յերկրում բավականին առաջ ե գնացել Բավական և մատնանշել այն փաստը, վոր սպառողական կոռպերացիան Շ միլիոնից ավելի անդամ ունի Մոռավորապես ալղքան անդամ ել ունի գյուղատնտեսական կոռպերացիան: Գյուղացիական տնտեսությունների մոտավորապես  $\frac{1}{2}$  մասը քաշված ե կոռպերացիայի մեջ:

Բավականաչափ հաջողություններ ունի կոռպերացիան նաև գյուղատնտեսական հում նյութի սպառման վերաբերյալ: Ազսպես, որինակ, գյուղացիների սպառվող ամրոցը գուշի  $30^0/_{\circ}$ -ը կոռպերացիայի միջոցով և անցնում: Գյուղացիության սպառվող ամրոցը լուղի  $53^0/_{\circ}$ -ը կոռպերացիայի միջոցով և անդի ունենում: Կոռպերացիայի միջոցով ծխախոտ, շաքարի ճակնդեղ և անցնում  $70-80^0/_{\circ}$ :

Տարեցտարի աճում և կոռպերացիայի մասնակցությունը նաև հացամթերման գործում:

Սակայն այդ նվաճումների կողքին կոռպերացիան ունի նաև մեծամեծ թերություններ: Սպառղական կոռպերացիայի գլխավոր թերությունը՝ առետրական մեծ վերադիրներն են: Ապրանքը գործարանից մինչև գյուղացուն հասնելը անազին քանակությամբ վերադիր ծախսեր են ավելանաւմ: Գլխավոր խնդիրը, վորի վրա ալստեղ պետք է ուշադրություն դարձնել, այդ ավելորդ ծախսերի կրճատման խնդիրն է: Այս և սպառղական կոռպերացիայի մոտակա ժամանակում կատարելիք գլխավոր խնդիրը:

Նույն թերությունն ունի նաև գյուղատնտեսական կոռպերացիան: Ստանալով գյուղացուց հաց, յուղ, ձու, ճարպ, գյուղատնտեսական հում նյութ, կոռպերացիան դրանց վրա մեծամեծ վերադիրներ և գալիս: Մինչև քաղաք հասնելն այդ մթերքների

կամ հում նյութի գինը համարյա թե լերկու անդամ բարձրա-  
նում եւ

Բացի մեծամեծ վերաղիր ծախքերից, կոռպերացիան ունի  
նաև այլ թերություններ: Զեղծարարություններ դեռ հաճախ են  
կտտարգում, թեև վերջերս մի փոքր պակասել ե, շնորհիվ նրա,  
վոր խորհրդային իշվանությունը խստորեն հետամտում և պատժի  
յի լինթարկում բոլոր զեղծարարներին: Քիչ չեն այն զեպքերը,  
լերը կոռպերացիայի վարչության ընտրված անդամները կոռպե-  
րացիայի մեջ ծառայություն են տալիս իրենց ազգականներին,  
վորով անտեղի ավելացնում են ծառայողների թիվը: Դեպքեր են  
լինում, վոր կոռպերատիվի ընտրովի անդամներն ապրունի կեր-  
պով ոգովում են վարկով:

Մի շարք կոռպերատիվներում աշխատանքը չեն կարողա-  
նում լավ վարել և ավագի չեն առնվում ընակչության պա-  
հանջները: Գյուղացիները սկավառակավոր ցաքանի պահանջ են  
ունենում, իսկ կոռպերատիվը զսպանակավոր ցաքաններ ե ստա-  
նում: Գյուղացիներին անհրաժեշտ են գութաններ, իսկ կոռպե-  
րատիվը բերել ե տալիս բուկ լցնող գործիքներ (օԿУЧНИКИ) և  
այլն: Ուրիշ խոսքով ազգանքների լավ ընտրություն (ասորտի-  
մենտ) չի կատարվում:

Հաճախակի յել այնպես ե լինում, վոր կոռպերատիվն առե-  
տրով ե տարգում: որինակ, վուշի սպառումով ե զրագված: Աստի-  
ճանարար կոռպերատիվի միջոցներն ավելանում են: Յեզ նա  
փոխանակ արդ միջոցները վուշի սերմեր ձեռք բերելու վրա զոր-  
ծագրելու, գործ ե զնում վուշ քրքրող մեքենա և այլ բաներ ձեռք  
բերելու վրա, սկսում ե աղ, նավթ, սապոն վաճառել և այլն: Այլ  
խոսքով, շեղվում ե իր բուն անհիքից և զբաղվում ե այնպիսի  
բանով, վոր պիտի զրազվի սպառողական կոռպերացիան:

Սակայն ամենից վատն այն ե, լերը կոռպերատիվն ընկնում  
և կուլակության ձեռքը կամ կոռպերատիվի վարչությունը կու-  
լակային զիծ և վարում: Այդ ժամանակ կոռպերատիվը միանդա-  
մայն կորցնում ե չքավորի միջակի համար իր նշանակությունը  
և դառնում ե կուլակության ձեռքին զրուղի վրա իշխելու մի  
զործիք:

Կոռպերացիայի այդ բոլոր թերությունները կարող են վե-  
րացվել միայն մի միջոցով: այդ միջոցը բատրակային, չքավո-  
րական և միջակների մասսաների այն ակտիվ մասնակցությունն  
ե, վոր նրանք պետք ե ունենան կոռպերացիայի ընտրովի մար-

մինների աշխատանքն ստուգելու և աշխատավոր մասսաների  
 ակտիվ կոռպերատիվ աշխատանքի մեջ։ Կոռպերացված բնակչու-  
 թյունը մինչև այժմ գեռես հեռու լի կանգնած ակտիվ կոռպերա-  
 տիվ աշխատանքից։ Հաճախ կարելի լի լսել, վոր գանգատվում  
 են, թե կոռպերատիվը վատ և աշխատում։ Սակայն շատ քիչ և  
 պատահում, վոր այդ դժգոհները դուրս են գալիս փայտերերի  
 ժողովներում մատնանշելու արև կամ այն թերությունները։ Յու-  
 րաքանչյուր փայտեր պետք և հետաքրքրվի կոռպերատիվի աշ-  
 խատանքի ընթացքով այնպես, ինչպես իր տնտեսության ընթաց-  
 քով և հետաքրքրվում։ Յուրաքանչյուր փայտեր պետք և գի-  
 տենա՝ թե ինչ և գնում կոռպերատիվը, ինչ և ծախում, ինչ գնե-  
 րով, վորաեղ, ինչ վերադիրներ և անում ապրանքների վրա, վոր-  
 տեղ և պահում այդ ապրանքները, ինչպես և այդ ապրանքներն  
 սպառում, վորքան արժե խանութի վարձը, վորքան փող և ծախու-  
 մում ծառայողների և փարչության վրա, ինչպես ևն ապրանքներն  
 սուցվում, ինչ արժե նրանց փոխազրությունը և այլն։ Գյուղա-  
 ցին այդ բոլորն իմանալով, կարող և մտածել և ցուց տալ, թե  
 կոռպերատիվի աշխատանքի մեջ վմբտեղ և մնա տեղի ունեցել և  
 ինչպես վերացնել այդ վասար։ Փայտերերի առանց այդ մասին  
 տեղեկություն ունենալուն, առանց նրանց՝ կոռպերատիվի աշ-  
 խատանքում մասնակցություն ունենալուն, կոռպերատիվը գեռ  
 լիրկար կարող և տառապել ամեն տեսակի թերություններով։ Կոմմ-  
 յերիտամիությունը պետք և քննության առնի իր անդամների՝ կոռ-  
 պերատիվ աշխատանքին մասնակցելու, նրանց կոռպերացման,  
 չքավորներին ու միջակներին կոռպերացիայի մեջ քաշելու խըն-  
 դիրը, իրեն իր կարեռագույն խնդիրներից մեկը։

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ քերուրյութեներ ունի մեր կոռպերացիան։
2. Ինչպե՞ս կովել կոռպերացիայի քերուրյութեների գեմ։

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԳՆԱԿԱՆՆ Ե  
ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՊԵՏՔ Ե ԱՐԴՅՈՒԹ ԴՅՈՒՂԻՑ ՓԱԽՉԵԼ,

Մելիտոպոլի շրջանի մի խուլ զյուղացի կոմիերիտական Յարկինը բռնված եր կասկածամտություններով։ Նրան թվում եր, թե դժվար է և համարյա թե անհնար ե գյուղի կոմիերիտականին և լավ հասարակական գործիչ, և՝ որինակելի տնտեսատեր դառնալը։ Իսկ լիթե այդ այդպես ե, —մտածում եր Յարկինը, —ուրեմն զյուղի կոմիերիտմիությունը վոչ մի ոգուս չի կարող առլ, և նրա մեջ մտնում են միմիայն կարցերիստները և մորթեպաշտները։ Յարկինը վորոշում ե գիմել իր կենարանական կոմիտեյին նրանից խորհուրդ հարցնելու և նրան մի մեծ նամակ և գրում։ Ահա այդ նամակը\*).

«Միրելի՛ ընկերներ,

Միշտ և ամենուրեք ասում են, վոր կոմիերիտականը պետք ե լինի հասարակական գործիչ և միաժամանակ իր տնտեսությունը վարի որինակելի ձևով։ Լենինն ասում ե, վոր կոմիերիտմիությունը պետք է կոմունիզմի համար ասպազա կառուցողներ դաստիարակի, վոր կոմիերիտմիությունը պետք ե կուսակցության ոգնականը լինի, պետք և մասնակցի թե այնանեղ և թե այսանեղ Յեկի ինչ ասես, վոր նրա վզին չեն փաթաթում։ Ես զարմանում եմ, ի՞նչպես կարելի լի միայն այդպես ասել Յեթե հաշվենք՝ վորքան պարտականություններ են դրվում կոմիերիտականի վրա, պետք ե, վոր այդ կոմիերիտականը գերբնական ուժի տեր լինի, վոր կարողանա այդ բոլորը կատարել։

\* ) Այդ նամակը շատ յերկար է, ուստի բերվում է վոչ ամբողջովին, այլ նրանից քաղվածքներ։

Առաջին հերթին ինքնիրդ փորձեցեք զլուզում ապրել  
և միմյանց հետ կապել լերկու խնդիր՝ լինել հասարակական  
աշխատող և որինակելի անտեսատեր Արդ, իսկապես, կան-  
քում կապել չի կարելի, վորքան կուզես գեղեցիկ իոռքեր և  
բարձր ֆրազներ և հարուստ լեզու բանեցրու և ևալ հասա-  
րակական գործիչ դառնալ, կնշանակի ձեռք քաշել զլուզա-  
կան անտեսությունից: Յեթե դուք կասեք, վոր արդ ալդպես չե,  
ապացուցեք կանքի որինակներով:

Ահա, որինակ լիս, կոմիերիտականս ապրում եմ իմ  
մոր հետ: Յես ունեմ ձի, կով և այլ մանր անտեսությունն  
Յես զարձա լավ հասարակական գործիչ: Ինձ ընտրում են,  
տունք, թեկուզ ՓՈԿի-ի քարտուզար: Յես ամեն որ պետք ե  
այնտեղ լինեմ: Հարց ե առաջ գալիս՝ կարող եմ լիս այն ժա-  
մանակ ինքս անտեսություն վարել Յեկ խեղճ կոմէրիու-  
տականն այնպիսի փորձությունների լին լինթարկվում, վոր  
նիստերի, ժողովների, ծանրաբեռնութիւնների և այլ պարտակա-  
նությունների փոթորկի մեջ կարգում ե իր անտեսությու-  
նից և գառնում պորտֆելավոր մարդ:

Ահա թե ինչու զլուզացին իր լերեխալին չի թույլ տա-  
լիս կոմիերիտամիության մեջ մանելի Խոկ լեթե մեծ ուշադը-  
րություն չդարձնես կոմիերիտամիության գործին, --կմեղադը-  
րեն, վոր սառը վերարեմունք ունես զեպի գործը, վոր  
կոմիերիտական պարտականություններդ չես կատարում: Յեկ  
ալդ ըոլորի մեջքը նրանումն ե, վոր պարապում ես զլուզա-  
կան անտեսությամբ և կապված ես նրա հետ:

Գլուզական անտեսությունը շատ մեծ ժամանակ ե  
պահանջում: Նույնիսկ լիթե նրա մեջ աշխատես ամբողջ  
որը և կոր տարին, —ժամանակը չի հերիքի: Խոկ դուք դեռ  
ուզում եք դրան ավելացնել նաև լավ հասարակական գոր-  
ծիչ լինելու պարտականությունները:

Ինչ կերպ ել դարձնես, կրկնում եմ, ալդ լերկու բա-  
ներն իրար հետ կապել չես կարող:

Յես շատ մտածեցի ալդ բանի վրա, զրվեցի կոմիերիտ-  
միության մեջ, լիս այդտեղ մտա սովորելու — սովորելու լիս  
նինիզմը, զլուզական անտեսությունը և շատ բան սովորե-  
լու նապատակով, սակաւն տեսա, վոր ալդ ամենը սովորել չի  
կարելի: Լերկու նապաստակի լետեկց ընկնողը մեկին ել չի  
բանի:

Դուք մի դատեք, ընկերներ, նրանով, վոր համագումարներում պատգամավորներն ամբողջովին բռնված են վողելորությամբ. նրանց մեջ այդ վոգելորությունն առաջ և զայիս շրջապատի ազգեցությամբ: Նույնպես մի դատեք նաև ակներով. ձեզ գրում եւ առաջավոր կոմիերիամիությունը, իսկ չեղ վոր մեծամասնությունը լուս եւ:

Յեզ այսպես, բնկերներ, յես շփոթվել եմ, վորովհետեւ մինչև այդ չեմ ունեցել ճիշտ լենինան գիծ:

Յես խնդրում եմ Համեկնեմ-ի Կե-ին լեզրայրական ձեռք մեկնել ինձ, թե չե՞ յես կլորչեմ: Յես, ախուամենալիվ, կարծում եմ, վոր գուք ունիք գեպի նշանակված նպատակները տանող վորոշ զիծ և վորոշ ճանապարհ:

Ասացեք, թե յես ինչ պետք եւ անեմ, վոր զգամ, թե վոտքերիս տակ ամուռ հող ունեմ, վորպեսպի հավատացած լինեմ, թե ախուամենալիվ մենք համակըու յենք սոցիալիզմին: Գրեցեք ինձ մի ընդարձակ նամակ, կամ թե խորհուրդ տվեք, թե այդ առթիվ ինչպիսի գրքեր պիտի կարդամ: Յես կորցնում եմ իմ հավատը գեպի սոցիալիզմը, և զեպի այն, վոր կոմիերիամիությունը գործունեալ է և լավ: Սակայն յես առաջմ կոմիերիամիությունից գուրս չեմ յեկել և ձեզանից խորհուրդ եմ խնդրում ինչ անեմ:

Կենտրոնական կոմիտեն շատ հազվադեպ եւ այդպիսի նամակներ ստանում: Շատ հաճախ գլուղի կոմիերիականները գրում են ուղղակի այն մասին, վոր իրենք ուղում են գլուղից քաղաք փոխվել, ասելով՝ թե քաղաքներում կարելի յե թե սովորել և թե լավ ապրել վոր ախտեց, քիչ եւ մնում թե ասեն, գետերը կաթեն հորդում, իսկ մեզ մոտ գլուղում, աղտոտություն, աղքատություն և խավար և տիրում: Լավ կլինի թողնել գլուղի կյանքը, արհամարեն նրան և արշավել քաղաք:

Յեզ ահա, հարկավոր եւ քննել այդ հարցը, թե իրավացի յե արդուք Յարկինը. իսկապէս գլուղի կոմիերիականը գլուղում վոչինչ չի կարող անել, ճիշտ կլինի արդոք, յեթե կոմիերիականները լքեն գլուղը և խմբերով քաղաքները թափվեն:

Դժվար չե հասկանալ, վոր այդ ճիշտ չի լինի: Ամենից առաջ քաղաքում նրանք ամեններն տանելի կլանք չեն ունենալու: Թեև մեր արդյունաբերությունն աճում ե, թեև ամեն տարի գործարաններում տասնակ հազարավոր նորանոր բանվորներ են ընդունվում, սակայն մեզ մոտ գեռես կա ահագին թվով, միլիոնից

ավելի գործադուրկ բանվորների մի բանակ: Նրանց բոլորին մեկ կամ լերկու տարում զործ տալ լերեկք չի հաջողվի: Իսկ լեթէ դրուզի կոմիերիտական մասսաները զլուզից քաղաք թափվեն, նրանք դրանով միմիայն գործադուրկների բանակը կավելացնեն: Տառնկակ կամ հարլուրավոր մարզիկ միմիայն կարող են ալս կամ այն կերպ աշխատանք զտնել, իսկ մէտաների զբությունը շատ վատ և լինելու և թերեւս զլուզի կրանքը նրանց համար զըախա թվա:

Բարդ ալդ չի կլիսավորը: Գլխավորն այն ե, վոր լուրաքանչչուր զլուզացի, լուրաքանչչուր կոմիերիտական իր դրուզում, իր շենում կարող և մեծապես ոգտավետ լինել թե կուսակցությանը և թե խորհրդակին իշխանությանը և միաժամանակ կարող և ողնել զլուզի չքավորներին զուրս գալու: Իրենց ծանր զբությունից: Այդ գործը, ինարկե, դժվար զործ եւ Այսանդ Յարկինը կատարեցան արդարացի յի: Սակայն չե վոր առանց աշխատանքի վոր չինչ չի արգում:

Ի՞նչ կնշանակի լավ կոմիերիտական լինել զլուզում և քաղաքում: Ենինն արդ հարցի պատասխանը մեզ տվել եւ Նա այսպես և սովորեցրել: «Պետք և կոմունիտական յերթառարգության միուրիունն իր կրուրյունը, իր ուսումը յեվ իր զատիարակուրյունը միացնի բանվորների յեվ զլուզացիների աօխատանինին, չպետք և նա փակվի իր զպրոցի պատերի մեջ յեվ սահմանափակվի միմիայն կոմունիտական օրենք յեվ բռույրներ կարգալով: Միմիայն բանվորների յեվ զլուզացիների հետ աօխատելով ե, վոր կարելի յի իսկական կոմունիտաս զառնալու:

Իսկ ի՞նչ և նշանակում ալդ: Այդ նշանակում ե, վոր վատ ե, լերը կոմունիտան իրեն հեռու յի պահում այն գործից, վորով լուրաքանչչուր բանվոր և լուրաքանչչուր զլուզացի զրադիում ե: Պետք և կողք-կողքի աշխատել նրանց հետ և բացի գրանից՝ աշխատանքի մեջ նրանց համար հանդիսանալ իրեն որինակ և իրեն նմուշ: Միմիայն ալդ կերպ կարելի յի իսկական կոմունիտատ գառնալ:

Վերցրեք քաղաքի կոմիերիտականին. Նա գործարանում պետք ել լինի առաջինը: Նրա գործն այն ե, վոր ոժանդակի արդ դրունարերության արագ զարգանալուն, վորպեսզի շատ ապրանք արտադրվի և վորպեսզի նրանք վորակով լինեն բարձր և հժան դին ունենան: Նրա գործն ե լինելու կոփի մղել այն բանի համար, վոր մեր հիմնարկներում բլուրովը զակասից պակասի, վոր մասսա-

Ները լաբնորեն հասարակական աշխատանքի մեջ քաշվեն, վոր-  
նրանց կուլտուրական մակարդակը բարձրանաւ:

Իսկ ի՞նչ պետք է անի գյուղի կոմիերիտականը: Նրա գործն  
այն ե, վոր ովնի կուսակցությանը՝ գուրս բերելու գյուղը դա-  
րավոր աղքատությունից ու խավարից՝ նոր ճանապարհի վրա,  
դարձնելու միջինավոր մասն և ցաք ու ցրիվ գյուղացիական  
անտեսությունները մեծամեծ կոլեկտիվներ, ովնելու գյուղի չքա-  
վորներին, վոր չընկնեն կուլտակների ստրկացման տակ, թույլ  
չտալ կուլտակին իր ձեռքը ձգերու խորհուրդները և կոռպերացիան,  
մի խոսքով թույլ չտալ նրան, վոր նորից գյուղի տնօրենը լինի:

Այդ խնդիրները, ինչպես տեսնում ենք, շատ մեծ խնդիրներ  
են: Իրոք, գժվար ել և նրանց իրազործումը Մանավանդ գժվար  
և այն կոմիերիտականի համար, վորը գենես միաժամանակ ու-  
ղում և բարձրացնել և պետք և բարձրացնի իր անտեսությունը:  
Մակայն նրան տասն անգամ ավելի հեշտ կլինի աշխատել տնտե-  
սության մեջ և զրազվել հասարակական կյանքով, ինթե միայն  
հաջողվի նրան անհատական տնտեսությունից անցնել կոլեկտիվ  
անտեսության:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

Ա. Ինչո՞ւ պետք է իր օնտեսության աօխատանքը կապել հա-  
սարակական աօխատանքի հետ:

2. Պե՞սէ և արզյօն կոմիերիտականները գյուղից բաղադ  
գնան:

#### ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԲ ՎԵՐԱԿԱՌՈՒՅԹՈՒՄ ԵՆ

Նախկին զրուցներից մեկում մենք խոսել ենք այն մասին,  
թե ինչու չքավոր և միջակ գյուղացիները պետք եմիանան և կո-  
լեկտիվ տնտեսություններ կազմեն:

Ցեվ իրոք, նրանք իրենց համար լավ կյանք ստեղծելու այլ  
միջոց չունեն: Մենք կամենում ենք աղքատ, խեղճ և խավար  
Ռուսաստանը դարձնել հարուստ և կուլտուրական: մի յերկիր:

Իսկ ի՞նչպես կարելի լե այդ անել: Կարելի՞ լե այնպես ա-  
նել, վոր յուրաքանչյուր առանձին փոքր տնտեսություն հարստա-  
նաւ:

Վճռ, այդ անհնարին և, քանի վոր նա շատ լետամնաց տնտե-  
սություն և այդ տնտեսությունը վարելն այնքան ձեռնտու չի:

զորքան խոշորը։ Յեթե բոլոր տնտեսություններն ըստ իրենց ուժի և խմբի բաժանենք, մենք կտեսնենք, վոր ամենասակավագոր տնտեսությունը Պակովի նահանգում մեկ գետատինից միջին հաշվով տալիս և միմիայն 31 փութ աշորա (րօյք)։ Ի՞րկը որդ խումբը տալիս և 40 փութ, իսկ 6-րդ, ամենազորեղ խումբը տալիս և արգին 60 փութ։ Հետեւապես, վորքան մեծ և տնտեսությունը, այնքան նաև ձեռնաու լի:

Սակայն կարող են զանազան խոշոր տնտեսություններ լինել։ Խոշոր անտեսությունը կարող և պատկանել կուլակին։

Արդյոք պետք և մենք նրան ոգնենք։ Կարող ենք մենք ուժ տալ կուլակային տնտեսության զարգացմանը։

Իհարեկե, վոչ։ Իզուր չի ասվում, թե «հալալ աշխատանքով քարե պարատ չես շինի»։ Կուլակն այն պատճառով և աճում, վոր իր հարեւան չքավորին և միջակին քամում և. լեռընն իր հարեւանին պարտքով աված սերմի դիմաց ստանում և նրա ըերքի մեկ լեռընը, իսկ լեթե աշխատանքի ժամանակ ձի լի տալիս, այսուեկ արգեն նա միանդամայն քամում և նրան։ Յեվլիթե խորհրդային իշխանությունը ուժ առ կուլակային տնտեսության զարգացմանը, այն ժամանակ խորհրդային և բուրժուական իշխանության մեջ տարբերություն չեր լինի։

Մենք առաջադրում ենք խոշոր տնտեսության զարգացումը, ըալց այնպիսի տնտեսության, վորտեղ վոչ թե կուլակն և հարկադրում բատրակին աշխատել իր՝ կուլակի համար, այլ միատեղ աշխատում են չքավորներն ու միջակները։ Սա կոլեկտիվ տնտեսությունն եւ։ Այսպիսի տնտեսությունն ունի խոշորի բոլոր առավելությունները։ Նրա մեջ չկան միջնակներ, և գյուղացին ստիպված չի լինում իր ժամանակն ու ուժերը վատնել գնալ-գալու վրա։ Նրա մեջ կարելի լի շատ ոգտավետ կերպով ոգտագործել վոչ միայն ձիեր և գյուղատանտեսական գործիքներ, այլ նույնիսկ, վոր ամենակարևորն ե, գործադրել գյուղատնտեսական այնպիսի բարդ մեքենաներ, վորոնք ուժեղ կերպով մեծացնում են տնտեսության լեկամուտները։ Նրա մեջ սատացվում և նաև շենքերի խնայողություն, և վերջապես, խոշոր կոլեկտիվ տնտեսության մեջ կարելի մատնել աշխատանքի բաժանում, —ամեն մեկը կկատարի աշխատանքի միայն վորոշ մասը, վորը նույնպես կոգնի ավելի արագ և ավելի լավ աշխատանք կատարելուն։

Գյուղացիությունը հատզհետեւ սկսում և հասկանալ կոլեկտիվ տնտեսության ոգտակարությունը։ Վերջին տարվա ընթացքում

կոլտնտեսությունները շատ արտգ են աճում: ԾԱՄՀՀ-ում՝ 1927 թ. վերջին կար 13 385 կոլտնտեսություն, իսկ 1928 թ. աճուանը՝ արդեն՝ 27.000,—ավելի քիչ, քան մի տարվա ընթացքում կոլտնտեսությունների թիվը յերկու անգամ ավելացավ:

Նաև եք վորե ամրապնդված կոլտնտեսության, և դուք կտեսնեք, վոր գլուղացու կլանքն այնտեղ ավելի լավ ե, քան միանձնյա չքավորի մոտ: Մի լրագրում պատմվում է ուրախան տառնյակ կոմունաների մասին:

Նախ քան պատերազմը Շատրովի շրջանը հաւանի էնք մուշտակի և կաշվի արտադրությամբ: Հարյուրավոր գլուղական հարուստներ կալին, վորոնք յերկհարկանի տներ ելին վաստակել և իրենց հաստիկ կանանց ջրշան մորթուց կարած թանգագին քուրքեր ելին հաղցնում:

Կոչակը հեռացավ թե չե, Շատրովի և Խոհասկի շրջաններում մեկը մլուսի յետեից տարերանորեն գլուխ բարձրացրին գլուղացիական կոմունաները: Գլուղական կուսակցականները սիրիբեցիներին հատուկ կայծաքարի համառությամբ շարժվեցին գեղի նոր կլանքը, իսկ նրանց հետեւցին նաև անկուսակցականները:

Իրենց խրճիթների մնացորդները փոխադրում ելին վայրի, անմարդաբնակ տեղեր, շտապ կերպով ինվենտար ելին սարքում, և կարճ ժամանակում ճահիճների և յեղենու թփուտաների մեջ սկսեցին սելին տալ նրանց ցանքերը, առանց սահմանագծերի:

Յերբ կոմունաների վրայով անցավ կուրակային ապստամբության կրակը, շրջակա գլուղացիներն իրենց գլուխները թափահարում ելին թարմ ավերակների վրա. —

Ե՞ս, նմի վոր «կոմունը» հայից ընկալ:

Սակայն «կոմունը» հալից չնկավ, ալլ նոր հուռթերով լցվեց: 10 կոմունա միացան «Շատրովի կոլտնտեսությունների միություն» ցուցանակի տակ:

Կոլեկտիվների հողերը հիսուն կիլոմետրանոց տարածություն են գրավում: Վազ գարնանից սկսած դաշտերում 12 «Փորձոն» և ծխում: Իսկ աշնանը կալերում չխչխկում «Միութենական» բարդ կարսիներ:

Կոմունաների տեղամասերը լցված են տաշեղներով, սղոցներն ու ռանդաները մնացած են, կոմունարների գարբնոցներում կայծեր են թռչում: Շատրովի միությունը կառուցում և ախոռներ, ջրաղացներ, հանրակացարաններ, ընդհանուր սեղանա-

աներ, լեռեխաների մսուրներու Միութիան մոտ 200 անդամներ իզարձանս անհավատ մարդկանց ապրում են մեկ կյանքով և մեկ մարդու նման:

— Մենք, լեռկու լեղբալըներու միմյանց հետ չենք վարվում, իսկ նրանք նույն ժամին աշխատանքի լին դուրս գալիս, նրանց ամեն ինչն ընդհանուր է և չին կապում:

1.300 հեկտարից ավելին ամբողջովին մեքենաներով և մշակվում: Յերեքնուկն աճում և առատ, չտեսնաված բերքեր են լինում, սովորական սիրիրական կովը լեռկու և լեռեք կիթ կաթ և տալիս:

Խուլ դյուղերում այսպիսի գուշակություններ են անում.

— Գանձարանը նրանց ոռոճիկ և տալիս, ինարկե կապըն:

— Աստծուց հրաժարվել են, ինարկե հարկ չեն տա:

— Նրանք կուսակցության համար են աշխատում և վոչ թե իրենց համար:

Սակայն լավում են նաև այսպիսի ձայներ.

— Գեղ կանգնի, գերան կկոտրի:

— Իսկ ինչու, քեօի ջան, զու լել կոմունա չես մտնում: Թեսին լեռկար գորում և իր փրչոտ գլուխը, աշքերը մարում են և նա անհույս պատասխանում է:

— Ինչքան վատ լինի, իմն ե:

Այդ պատենական ասացվածը նրա առաջ քիչ արգելասիթ հանգամանք չե զեպի կոմունան: «Իր» տունը լինի, թող առանց կտրի լինի, «իր» արտը լինի, թող վարուժ չլինի:

Սակայն, այնուամենայնիվ, յուրաքանչյուր տարի մարդիկ տասնյակներով բազիսում են կոմունայի զոները, արհամարհելով թե գլուղական բամբասանքները, թե աստծուն և թե «իր տուն ու տեղը»: Սակայն կոմունայի գուռն ամեն ժամանակ նրանց առաջ չի բացվում, վորովհետեւ շատրովյան միության ամենամեծ դժբախտությունը — հողի պակասությունն եւ: Մի շարք կոմունաներում համարյա մինչև 20-ի չի հասնում հողամաս ունեցողների թիվը: Հողաշինարարության ժամանակ կոմունային բաժին են հանել մի փոքրիկ կտոր հող, և ավելին — մինչև 1932 թիվը — մինչև նոր հողաշինարարությունը՝ կոմունան կես հեկտար հող ել չի ստանաւ: Իսկ զետի միությունն են գալիս նոր տասնյակ կոմունարներ:

Յերեկոները կոմունալում լեռգում են: Սեղանատունը գարձոնի նվազեց գորդում եւ Այդ ուրախացող ժողովուրդը կոմունարական լեռիտասարդությունն եւ կոմունա մտնողների մեջ կան ընտա-

Նիքավորներ, հասակավոր տղամարդիկ, սակայն դրանք հաճախ բատրակներն են - չքափոր լերիտասարդությունը: Մի շաբք կոռմունաներում կոմունարները համարյա բոլորն ել «անմորում» են:

Ոժիգինի կոմունայում կոմիերիտական բջիջը շարունակ բզում է՝ խորհրդին՝

— Պետք է լերեխաներին անջատել, պետք և նրանց մանկական անկյուն տալ:

Յեվ նրանք իրենց նպատակին հասան: Յերեխաները փոխազդեցին արևկող մի սենյակ, և զրվեցին կոմունարներից մեկի հոգատար հսկաղության տակ:

Երեք կոմունայում կոմիերիտականերն աշխատանքից հետո ազատ ժամանակ փորձադաշտեր ելին ցանում և գոլլուկ (Խմելք) ելին տնկոտում: Թյուրքական կոմունայի ազատ հոգամատում կանաչին են տալիս մատաղ խնձորները, տանձերը — շատրովցիներն այդպիսի բան չելին տեսեր Արդ կոմիերիտական շարաթորդակի արդյունքն է:

Յեվ ահա արդ տնտեսական հրաշները, — վորոնք ավելի պերճխոս են, քան բառերը, հարևան գյուղացիները գալիս են տեսնելու: Նրանք գալիս, շոշափում և դիտում են կովերի և խոզերի «պալատները» և քննության են առնում հողի բազմադաշտ մշակումը: Նրանք վորոշ գնահատման են լենթարկում՝ բաց վարդագույն լորկշիրի խողեր բազմացնող կոմունաները:

Ահա թե ինչպես են աշխատում ուրալական կոմունարները: Յեվ ալդ միայն Ռւրալում չե, ալլ այն բոլոր տեղերում, վորտեղ գյուղացիները խումբ կազմած համերաշխ և համառ աշխատանք են կատարում, չվախենալով վոչ մի աշխատանքից և կանգ չառնելով սկզբնական վոչ մի զժվարությունների առաջ, վառվում են կոլտնտեսությունների կրակները:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ կոլտնտեսությունները հետավորություն ունեն փոխել գյուղի կենցաղը:

2. Ինչո՞ւմ և կոլտնտեսության ուժը:

ԿՈՄՅԵՐԻ ՑՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԿՈԼԵԿՑԻՎԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿՆԵՐ և

Տյուրաքանչյուր կոլտնտեսության սանղծվելը մի հարցման և կուլակի համար: Քանի գեռ գյուղացիները չեն միտցել և կրեկուիկ կազմել, և նրանցից յուրաքանչյուրը քաշ և տալիս իր վո-

դրսելի տնտեսությունը, — կուլտկը կարող է նրանց հիմարացնել Յ նրանց հութը քամեր իսկ իբր գլուղացիները միասին աշխատում են կոլտնտեսության մեջ, ապա թող մի փորձի կուլտկը այնտեղ խցկվել, ենակես խրիկ կտան նրան, վոր այլես յիշես չգարձնի այնտեղ Ահա, թե ինչու կուլտկիները չեն սիրում կոլտնտեսությունները, թշնամացնում են գլուղացիներին նրանց հետ, անկուններում փսփսում են այն մասին, վոր իրը թե կոլտնտեսությունները կողոպտում են գլուղացիներին և այլն: Իսկ շատ տեղերում ել կուլտկիներն իրենք են փորձում խցկվել կոլտնտեսությունների մեջ, վորպեսզի այնտեղ ներսից վիժեցնեն այդ կոլտնտեսությունները, կոլտնտեսավարներին միմյանց հետ կըռվեցնեն և կոլտնտեսությունների ունեցվածքը քանուն տան:

Աւրեմն, գլուղը կոլեկտիվացման կարելի ի յենթարկել միմիայն կուլտկիների գեմ կատաղի և համառ պալքար մզելուց հետո և գլուղի կոմիերիամիությունը պետք է վճռական կերպով դուրս գա այդ պալքարին:

Վորքան կոլտնտեսություններն աճում են, այնքան կուլտկիները մոտենում են իրենց գախճանին: Զե՞ վոր կոլտնտեսություններ կառուցել — նշանակում ե գլուղը վերակառուցել սոցիալիստական յեղանակով, վոնչացնել շահագործման համար գորություն ունեցող պարարտ հողը, այսինքն վոնչացնել կուլտկին: Խոշոր մեքենաների և զիտության ոգնությամբ, ճիշտ միջոցներով աշխատել, կնշանակի աշխատել սոցիալիստորեն: Իսկ վորքան ամուր և քաղաքում և գլուղում զարգանում սոցիալիստական տընտեսությունը, ենքան մասնավորի և կուլտկի գործը վատ և լինում:

Յեվ միևնույն ժամանակ կոլտնտեսությունների զարգացումը ընդհանուր առմամբ հանդիսանում է իրրեկ գլուղական տնտեսության զարգացման ամենահուսատու միջոցը:

Ահա թե ինչու կոմիերիամիությունը պետք է զյուղում գառնա զյուղական սնեսեսուրյան կոլեկտիվացման առաջամարտիկը: Կոլտնտեսություններ կազմակերպել, կնշանակի մեկ կողմից աջակցել գլուղական տնտեսության արագ բարձրանալուն, մյուս կողմից ոգնել չքավորին՝ միջակի հետ դաշնակցած կովելու կուլտկի գեմ: Այդ պատճառով ել լավ և հասկանում և իր զասակարգալին խնդիրները լավ և լուծում կոմիերիամիության գլուղական այն բջիջը, վորը գլուղական տնտեսության կոլեկտիվացման աշխատանք և կատարում:

Այս զբուցի սկզբում մենք առաջ բերինք Ահնինի այն խոսքերը, թե մարդիկ կարող են կոմունիստ դառնալ այն դեպքում միայն, իբր մասնակցեն բանվորների և գյուղացիների պայքարուն Այդ խոսքերը գյուղի կոմիտիտականի համար նշանակում են՝ թե նա կուրակի դեմ կռվելով, չքավորին ոգներով, կողեկտիվ տնտեսություն կառուցելով սովորում ե խսկական կոմունիստ դառնալ:

Այդ շատ հիանալի յին հասկացել գյուղի շատ կոմիտիտական բջիջներ, Ահա գյուղական տնտեսության կոյեկտիվացման նրանց աշխատանքի միքանի որինակներ:

Համեմատի Փուլինվի բջիջը (Ոմուտնինի գավառ) կազմակերպում և գավառում առաջին կոմունան: Արդեն գնված և գյուղատնտեսական ինվիճակում:

Թուրյատ-Մոնղոլիայում Մեծ Բախրայնակալա և Բոխան-Զազլինսկալա կոմունաների շուրջը կոմիտիտականները նոր տնտեսություն են կազմակերպում: Նրանք շրջագալում են ուլուսները (գյուղերը) և ապիտացիա յին մղում կողեկտիվի համար:

Պակովի շրջանում նորից 3 կոմիտիտական կոմունա չե կազմված լիակատար հանրայնացումով և կազմված են 33 կոլտնտեսություններ:

Աբուխանվի կոմունալում (Յարանի գավ.) անդամների մեկ յերրորդը կոմիտիտականներ են: Կոմունայի ղեկավար աշխատավորները նույնպես կոմիտիտականներ են: Կոմունան ունի արդեն յերկու տրակտոր, շոգեաղաց, սղոցագործարան, մանկական առուն, գրադարան և իր գյուղատնտես:

Տեչենի մարզի Նատերեշնի շրջանի տղաները կազմակերպել են բոստանա-ազգեգործական ընկերություն, Հին-Առջենի շրջանում—45 տնտեսությունից բաղկացած մի բոստան: Մարզի կոլտնտեսությունների ղեկավարների յերեք քառորդը յերեք տրակտորուններ:

Սեմիպալատինսկի շրջանի կոմիտիտամիության նախաձեռնությամբ հիմնված և յերկու կոմունա—Գլուրոկի և Ռովարովսկի գյուղերում:

Կուբանի Իլսկի ստանիցալում յերիտասարդությունն սահեծածել է հողը միասնաբար մշակելու ընկերություն: Սուխիլե Զելյասի գյուղում 4 կոլտնտեսություն—ընկերություններ են կազմակերպված լազումսկալա, Կրմովսկալա, Ռևստ-Լարինսկալա ստանիցաներում:

Աւան. Միզգվեգիցկայա շրջանում (Ստալինգրադի նահանգ): Երիտասարդության մասնակցությամբ ստեղծված են յերկու նոր կոլյանտեսություններ:

Այստեղ գեռնս շատ ալղպիսի որիակներ կարելի է բերել, սակայն ալսքանն ել բավական ե ապացուցելու, թե ինչպես են կոմիտեիտականները կարողանում մասնակցել կոլեկտիվ տնտեսության մեջ:

Յեղ մենք այժմ կարող ենք կոմիտեիտական Յարկինի հարցերին պատասխանել:

Ինչպես ե, կարծիք ե գլուղի կոմիտեիտականը լինել ե՛ լավ հասարակական գործիչ և լավ տնտեսատեր: Պարզ ե, վոր կարող ե, յերե նա անհատական անենությունից անցնի կոլեկտիվ քննության: Յերբ կոմիտեիտականը կոլտնտեսություն ե կառուցում, և աշխատում ե նրա գաշատերում, նա հասարակականորեն մեծ կարենություն ե արժեք ունեցող գործ և կատարում: Այդպիսի կոմիտեիտականը լավ հասարակական գործիչ ե, քանի վոր սոցիալիզմի կառուցման գործի ամենակարևոր խնդիրներից մեկը գլուղացիական տնտեսության հանրախացումն ե: Միևնույն ժամանակ նա լավ, որինակելի տնտեսատեր ե, վորովհետև կոլանուելությունը պատկանում է նրան, նրա ընկերներին և բոլոր նրանց, ովքեր ձեռք-ձեռքի տված նրանց հետ միասին կոլտնտեսության մեջ աշխատում են: Հետեւապես, Յարկինը վոչ թե պետք ե հեռանա միություննից, վոչ թե պետք ե հուսահավիր, այլ մասնակցություն ունենա կոլեկտիվ տնտեսության շինարարությանը և դրանով լուծի իրեն տանջող կասկածամությունները:

Զպետք ե կարծել, վոր այստեղ գործը միմիայն տնտեսական-աշխատանքով ե սահմանափակվում: Վորպեսզի կոլտնտեսությունը զարգանա, վորպեսզի կոլակները նրան կուլ չտան, հարկավոր ե, վոր կառավարությունը նրան ոգնի: Ենշանակե, կոլտընտեսությունն կառուցողը պետք ե մտահոգված լինի այն բանով, վոր գլուղվորհուրդն ու շրջգործկոմը կուլակալին տարրեր մուտք չգործին: Ճիշտ ալղպիս ել պետք ե հոգ տանել կոլտնտեսությունների լուսավորության մասին, քանի վոր նրանք վորքան լավ դրագետ լինեն, այնքան ավելի լավ կըմքրուն հողի մշակման նոր յեղանակները: Ուրեմն ալստեղ աշխատանքը բազմազան ե, և գուղի ամեն մի կոմիտեիտական ալստեղ կարող ե գտնել այնպիսի աշխատանք, վորն իրեն ամենից շատ ե գուրք գալիս:

Յեղ վերջապես, վորպեսզի գլուղացիությունը հասկանա իսո-

շոր, կոյեկտիվ տնտեսության տռավելությունները, պետք և նրաներսում կատարի խոշոր հասարակական և կուլտուրական աշխատանք:

Մյուս հարցին ել մենք կարող ենք այժմ պատասխանել կարգ՝ են զյուղի կոմիերիտականները քաղաք փախչել: Մինք տեսանք, վոր յեռանդում, ընդունակ կոմիերիտականները զյուղում աշխատել կարող են: Այդպիսի կոմիերիտականները դժվարություններից չեն վախճանում, այլ թեերը քշտած՝ անցնում են զյուղացիական կյանքը նոր, սոցիալիստական յեղանակով կառուցելու գործին: Այդպիս, և միմիայն այդպիս պետք և վարպի իսկական կոմիերիտականը:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

Ա. Խնչո՞ւ կոլեկտիվ տնտեսության աջականքը հասարակական աշխատանք ե:

#### ՓՈՔՐ ԳՈՐԾԻՑ ՄԻ ԽՈՐԾԻՐ

Ի՞նչ պետք և անի կոլտնտեսության կոմիերիտականն ու կաղմակերպիչը, Խնչից պետք և սկսի գործը: Առաջ շատ կոմիերիտական բջիջներ այսպիս ելին վարդում, հավաքվում, խորհրդակցում և իրենք ելին կոլտնտեսություն կազմում, ասելով, թե մենք կկառուցենք, իսկ զյուղացիները հետո կզան և մեղ միմիանան:

Կոմիերիտականները կոլտնտեսություն ելին կառուցում, իսկ զյուղացիները քթների տակ ծիծաղում ելին, ասելով թէ՝ կտեսնենք: Յերբեմն իսկապիս, Տաճրովի, Ստալինգրադի և այլ նահանգներում յերիտասարդությանը հաջողվում եր իրենց նպատակին հասնել: Սակայն հաճախ յերիտասարդներից կազմված կոմունան քանդվում եր: Ամառն աշխատում ելին, բայց հենց վորագունը զալիս եր, կոմունաների մի մասի բանակ գնալու ժամանակը հասնում եր: Բացի դրանից, յերիտասարդությունը տնտեսական մեծ փորձ չուներ և դժվար եր նրան զլուխ հանել այնպիսի մեծ և բարդ մի գործից, ինչպիսին կոմունաների կառուցումն ե:

Յիշ, թե ինչու զժգար թե լավ հետեվանք ունենա զործը, յերե կոմյերիտականներն իրենք կառուցեն կոլտնտեսություններ: Նրանց գործն այն պետք և լինի, վոր դառնան առաջամար-

տիկներ, հախաձեռնություն հանդես բերեն, առաջինն իրենք մտնեն կոլանտեսությունները, սակայն այդ գործը կատարեն զուղացիների հետ մեկտեղ և վոչ թե առանց նրանց:

Սակայն զուղացուն զոռով զեպի կոլտնտեսություն քաշել չի կարելի: Այստեղ բռնությամբ վոչինչ չի կարելի անել, այլ ազգիսով ավելի շուտ կարենոր գործին վնաս կհասնի: Պետք և համոզել զուղացուն կոլեկտիվ տնտեսության ոգտակար լինելը, առանել նրան հարնան կոլտնտեսությունը և ցուց տալ նրան, թե այնտեղ ինչպիս են աշխատում: Հետզհետե ժողովներում, հավաքություններում, խճիթ-ընթերցարանում և պատի լրագրերում ազիտացիա մղել կոլտնտեսություն կառուցելու համար, որինակներով և փաստերով ապացուցել խոշոր կոլեկտիվ տնտեսության առավելությունները: Արագ, հապճեպ կերպով, թոշելով և հարգածային էղանակով դործել չի կարելի: Առա, թե վորաեղ և ասված թե՝ «տասը չափիր, մեկ կարիր»: Հեշտ և, իհարկե, լիզվով ասել, թե մեկ հարգածով տասը կոլտնտեսություն կարելի յի կազմակերպել Բայց հետո, յերբ դրանք տապալվեն, արդեն այնս վոչ մի կերպ չի կարելի զուղացիներին քաշել զեպի կոլտնտեսությունները: Պետք և խիստ հաշվի առնել բոլոր տնտեսական հնարավորությունները, հաշվել բոլոր միջոցները, լավ ծանոթանալ հողամասերի հետ, մանրամասնորեն պարզել վարկեր և մերենաներ ստանալու հնարավորությունը և այնուհետև նոր ձեռնարկել կոլտնտեսության, ահա այն կանոնը, վորով պետք և առջնորդվել:

Յեկ յերբեք պարուագիր չե, վոր գործն անմիջապես կոմունա կառուցելուց սկսել կարելի յե սկսել, նաև միավորման ավելի պարզ ձևերից:

Զգեստք և խորշել վոչ մի փոքր գործից: Պետք և կազմակերպել թե մեքենաների ընկերություն, թե հողը միասնաբար մշակելու արտելներ և թե ամեն տեսակի սկզբնական միավորումներ: Նույնիսկ այնպիսի մի փոքրիկ գործը, ինչպիսին և հարգաշը (միասին վար անելը), այդ ես կարող ե իր ոգուտը տալ զուղացիների տնտեսական միավորման գործին:

Իսկ այնուհետև պետք և ձգտել հասարակ միավորմաներից անցնել ավելի բարդ միավորումների՝ արտելներից՝ կոլտնտեսություններին, փոքր կոլտնտեսություններից՝ խոշորներին: Յեկ ահա, դուրս և գալիս, վոր կոլեկտիվ տնտեսության զարգացման գործում զուղի կոմիերիտականների առաջ լերկու խնդիր և դրված:

համի՝ ավելի ընդարձակ կերպով զարգացնել այդ զործը, ամեն կերպ մեծացնել ամեն տեսակի գլուղատնուսական միավորումների թիվը, և յերկրորդ՝ խորը կերպով զարգացնել այդ զործը և սկզբնական, ամենահասարակ միավորումները դարձնել ավելի բարդ միավորումներ։

Սակայն, ինչպես հաճախ և պատահում յերիտասարդ տղաների հետ, սկզբնական քայլերն անելիս նրանք բավականին լինուանդ ունենում են, իսկ յերբ արգեն կուռնուսութիւնը կազմում են, զործն սկսում և վատանալ Դոնի Ռոստովում կոմիերիտական-կոլտնտեսավարների խորհրդակցութիւնն ելին հրավիրել, վարտեղ պատգամավորները շատ այնպիսի բաներ պատմեցին, վորոնք կարծես թե կոմիերիտականին չեն սազում։

Կոմիերիտական-կոլտնտեսավարները հաճախ աշխատանքը վիժեցնում են իրենց չքանութիւնը և պարագ-սարապ ման գալով։

Այս բանն այն ամենամեծ մեղադրանքներից մեկն եր, վորին արժանացավ կոմիերիտամիութիւնը Դոնի Ռոստովում տեղի ունեցած կոլտնտեսական յերիտասարդութիւնն յերկրավին խորհրդակցութիւն ժամանակ։ Այդ մեղադրանքը պատահական չեր և վոչ ևլ յեզակի։ Յերիտասարդութիւնը—վորը սովորաբար հանդիսանում և կոլեկտիվացան գործում իրքու առաջամարտիկ—այդ խորհրդակցութիւնն մեջ յերեան հանեց մի շարք այլանդակ փաստեր, վորոնք հարվածում ելին կոլեկտիվ տնտեսութիւնների թե տնտեսական և թե կենցաղավին կառուցվածքին։

— Մենք չենք հետեւում գոյութիւն ունեցող կոլտնտեսութիւնների գրականութիւնը և չենք ոգտագործում արդեն զործող միավորումների գործնական որինակները։

— Կան մի շարք գյուղեր, վորտեղ կան 5 - 6 կոլտնտեսութիւններ, վորոնք գործունելութիւնն ընդարձակ ասպարեզ են ներկայացնում կոմիերիտամիութիւնն համար։ Սակայն թնչվես պետք ե ուսութիւնահրել և ուղղութիւնն տալ նրանց, ոգնել նրանց առաջադիմութիւնը, այդ բանը գոյութիւնն չունի այնտեղ։

Մի շարք քջիջներ կոլտնտեսութիւնների վերաբերյալ խընդերները քննութիւնն ելին դնում գուտ ռենի համար։ բավական է վոր քննութիւնն ելին դնում, վերջացավ, միայն թե մի կերպ ազատվեն այդ խնդիրներից, ասած լինելու համար, թե տեսեք, մենք ենք ենք ալդպիսի խնդիրներով զրադգում։

Տերսկարա ստանիցալում կոլեկտիվը ծուլացել և ժամանա-

կին բոստանը ջրել, վորի հետեանքով բերքը խիստ նվազ և լեղել:

Վորոնցովսկով գլուղում աշխատանքի յեռուն շրջանում, յերբ զուղացիներն շատապ կերպով սերմեր ելին տեսակավորում և և ու են կողմն ելին վագում տոպքակներ ճարելու, կոմիերիտամիության բջիջը թատրոնի փորձ եր կատարում:

Խորհրդագության պատգամավորները սուր քննադատության ելին լինթարկում իրենց կազմակերպություններին:

Քիչ չեն այն կոմիերիտականները, վորոնք խոսքով ագիտացիամ լին լինթարկում մասսաներին, սակայն գործով անձնաւուր են լինում, կամ թե նախաձեռնություն են յերևան բերում միմիայն ՄՈՊԲ-ի և «Կորչի անգրագիտությունը» ընկերության գծով և ալին Արտակ զժվար չե «նախաձեռնություն յերևան հանել», հարկավոր և միմիայն ցուցակ կազմել և ընկնել փող հարել... Յեզ կոլտնտեսություններում կոմիերիտականներն իրենց պարագ-սարապությամբ վարակում են նաև անկուսակցականներին:

Արժե՞ այդպիսի կոմիերիտական-տնտեսավար դառնալի ինարկե, զոչ Յեթի դու կոմիերիտական ես, մտել ես կոլեկտիվի մեջ, և մանուվանդ կազմել ես արդարիսին, ապա և պետք և այդ գործի մեջ լինես առաջինը, պետք և կարգապահության, աշխատասիրության և կողեկտիվության լավ որինակ գառնաս: Իսկ յեթե կոմիերիտականներն աշխատանքի մեջ ծույլ լինեն, նրանց որինակին կհետեւն նաև անկուսակցական յերիտասարդ տղաները, մեկ ել յետ կնայես, կտեսնես, վոր կոլտնտեսության միայն ցին ու փառըն և մնացել, ամեն բան թոցըրել են:

Կուլակներին ել հենց եղ պիտի: Նրանք իրենց մատները դեպի այդպիսի կուսանտեսություններն են ցցում, թե տեսեք՝ թե ինչպես տնտեսությունն ավիրպեց: Իսկ այդ վատ որինակը գլուղցու աչքի առաջն ե, նա իր աչքերին ավելի յե հավատում, քան ուրիշների խոսքերին, և այդպիսի գեղքից հետո նրան զոռով ել չես կարող գեպի կոլտնտեսություն քաշ տալ:

Կնշանակե, վոր կոմիերիտականները քիչ գործ չունեն կատարելու կոլտնտեսության ներսում: Պետք և այդտեղ և՛ դիսցիպլինան պահպաննել, և՛ կոլտնտեսությունների կենցաղի գործը կազմակերպել թե մսուր և լվացարան կառուցել, թե ընդհանուր ակումբ շինել վորպեսզի գլուղացիները կոլտնտեսության մեջ ավելի լավ ապրեն, քան առաջ ելին ապրում: Իսկ ամենազլիս-

վորը՝ անհրաժեշտ ե, վոր կոլտնտեսութիւնն ընդարձակվի և զարգանա, վորպեսզի տարեցտարի մեծանան նրա սեփական կապիտալները, վորպեսզի նա բոլոր գլուղացիներին որինակ ծառալի, թե ինչպես պետք ե դաշտում աշխատել:

Յեվ որինակ պետք ե վերցնել վոչ թե այն կոմիերիտական-կոլտնտեսավարներից, վորոնց հաջողում ելին Դոնի Ռոստովի խորհրդակցության մեջ, այլ՝ Զվենիխովորովի գավառի, Պետրովսկի շրջանի կոմիերիտական Ռւլլանովից:

Այդ կոմիերիտականը կոլտնտեսութիւնն ե կազմակերպում, դուրս ե գցում արդտեղ խցկված կալվածատիրովը, վերջ ե տալիս արդտեղի սկզբան խառնտէլչությանը, կոռպերացման ե յինթարկում նրա անդամներին և հանրացման ե ինթարկում թե ամբողջ աշխատանքը և թե սպառումը: Մեկ տարվա ընթացքում կոլտնտեսության կենդանի և մեռյալ կապիտալի արժեքը 3,790 ռուբրուց բարձրանալով համառում ե 9 հազար ռուբրուց ավելի մի դումարի: Տարեկանի բերքը գլուղացիականից 40% ով բարձրանում ե:

Յեվ ել ինչ: Կոմիերիտական Ռւլլանովը չի կորցնում իր հույսն ապագայում ել ավելի ընդարձակելու տնտեսութիւնը: Նա ներկայումս աշխատում ե, վոր իրար մոտիկ գանվող յերեք տընտեսությունները միանան և գառնան մի խոշոր տնտեսութիւն: Այդ գեպքում նա մտածում ե աշխատանքի լայն ծրագիր մտցնել, յուրաքանչյուր կոլտնտեսություն ոգտագործել ավելի ձեռնուուգնվ, նրանցից ամեն մեկում զանազան կուլտուրայի ցանքեր աննել վորպեսզի կարելի լինի լծկանն ու մեքենաներն ավելի ճիշտ կերպով ոգտագործել: Կոլտնտեսություններն արդեն համաձայնել են միանալ և միասին տրակտոր բերել տար:

Ահա, թե ինչպես պետք ե աշխատել: Կոմիերիտական Ռւլլանովն ամբողջ կոլտնտեսացին յերիտասարդ ությանը ցուց և տալիս աշխատանքի ընդորինակելի, բարեխիղճ, իրական կոմունիտական որինակ:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ենչից պետք ե սկսել կոլտնտեսության կազմակերպումը:

2. Ենչողես պետք ե լինի կոմյերիտականը կոլտնտեսության մեջ:

ԿՈՄՅԵՐԻՏՄԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԵՋ

Մենք մինչեւ այժմ խոսել ենք կոլեկտիվ տնտեսությունների մասին: Մակար խորհրդացին գաշտերում ներկայումս կա-

ոռոցվում և աճում են նաև խոշոր պետական տնտեսությունները — խորհեածեսուրյունները։ Կառավարությունը վորոշիլ և մոտակա 5 տարում ազատ հողային ֆոնդերում կառուցել ալնպիսի խոշոր խորհանտեսություններ, վորոնք շուկա շարտեն 100 միլիոն փութ հացահատիկ։

Յեզ այդ գործը հեշտ դորձ չեւ։ Արդեն այս տարվանից գործի լին անցել Հյուսիսային կովկասում, Սամարայի և Սարատովի նահանգներում արդեն տեղի լին ունենում նոր խոշոր խորհանտեսությունների աշխատանքներ։

Յեզ ի՞նչ, միթե զբուղի կոմիերիտականները պետք և իրենց հեռու պահեն այդ խոշոր գործից։ Վաչ, առաջին իսկ տարուց նրանց ոգնությունն անհրաժեշտ է։

Հեշտ չեւ, ահապին թվով մարդիկ են հարկավոր նոր խորհանտեսությունների համար։ Այդ հինգ տարվա ընթացքում պետք ե արդ տնտեսությունների համար ճարել 200 ոգնական գլուղատնտեսներ, 1,550 առանձին տնտեսությունների գլուղատնտեսներ և վարիչներ, 2,500 մեխանիկ-տրակտորավարներ, 20,000 տրակտորավարներ և 52,000 ձշտական բանվորներ։ Յեզ բացի զրանից, գաշտալին աշխատանքների լեռուն շրջանում պետք ենաև սեղոնային բանվորներ հրավիրել։

Միմիայն այն խորհանտեսությունների համար, վորոնք այս տարի կազմակերպվում են, պահանջվում և 1500 տրակտորավար, 150 մեխանիկ և մինչև 800-ի հասնող նորոգություն անող վորակլր բանվորներ։ Սկզբնական շրջանում այդ աշխատավորները տալիս են գործարանները, իսկ հետո (այդ արվում ենաև ներկայում) տրակտորավարների և մեխանիկների կազմ պատրաստելու համար բացվելու լին ահազին թվով դասընթացներ։

Ի հարկե, նոր խորհանտեսությունների վոչ թե բոլոր բանվորներին, այլ նրա մի մասին կատ գլուղի կոմիերիտմիությունը։ Սակայն պետք ե այդ գործը կազմակերպել, վորապես նա ինքն իր զիխու տեղի չունենաւ։ Լավագույն յերիտասարդներին պետք ընտրել և ուղարկել դասընթացները սովորելու, վորապես դասընթացները վերջացնելուց հետո, այդ յերիտասարդները խորհանտեսության դաշտերում կարողանան պողպատե ձին—տրակտորը ղեկավարել։

Թվում ե թե զբուղի կոմիերիտմիությունը կկարողանա վոչ միայն տրակտորավարներ և մեխանիկներ տալ, այլ կտա նաև

զգուղատնտեսներ: Զե՞ վոր հաճախ և պատահում, վոր կոմիերիտականը թողնում և զցուղը ու դնում և սովորելու և իր ընկերներին հրաժեշտ տալիս, խոստանում և սովորելուց հետո վերադառնալ զյուղ և նրան առաջ տանել: Սակայն պահանջված ժամանակամիջոցում ուսումն առնելուց հետո նա չի ուզում քաղաքի կյանքին հրաժեշտ տալ: Մեզնում քիչ զգուղատնտեսներ չկան, փորոնք, փոխանակ խորհրդալին դաշտերի բերքատվությունը բարձրացնելու, քաղաքի գրասենյակների շեմքերն են մաշում:

Հսկայական խորհնտեսությունների կառուցումն իրենց տրակտորների շարաններով, մեքենայացված աշխատանքով, հացահատիկների գործարաններ ստեղծելը, ահա այն գեղեցիկ և պահանջանակը, վորը զյուղի կոմիերիտամիությունը պետք և դնի իր այն անդամների առաջ, վորոնց նա ուղարկելու լի քաղաք սովորելու:

Հացահատիկների այդ գործարանների նկատմամբ կոմիերիտամիության զյուղի բջիջը ճիշտ այն գերն և խաղալու, ինչ վոր ֆարբիկա-գործարանային բջիջը իր ձեռնարկության նկատմամբ:

Յեկ արգեն ըստ ինքան հասկանալի լի, վոր բջիջը պետք և ամենագործունյա և ամենակենդանի մասնակցությունն ունենա խորհնտեսությունների ամբողջ կյանքում, քննի նրա արտադրական ծրագրը, հսկի, վոր իզուր տեղը փողեր չվատնվին, ոգնի զեկավարներին, վորպեսզի նրանք խորհնտեսությունը դարձնեն իսկապես որինակելի և կուլտուրական անտեսություն:

Յեկ այդ գործն այն աստիճանի գժվար մի գործ և, վոր զեկովարը մենակ, ասանց խորհնտեսության ըորոր բանվորների ակտիվ աջակցության, վոչինչ չի կարող անել: Յեկ կոմիերիտականները պետք և ոգնեն այդ զեկավարին՝ ստեղծելու հացահատիկների գործարաններ:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Խնչպե՞ս և կոմիերիտամիությունն ոգնում խորհնտեսություններ կառուցելուն:

ԿՐԿՆԱՊԱՏԿԵԼ, ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԴԱՇՏԵՐԻ ԲԵՐՔԱԾՎՈՒԹՅՈՒՆԸ

Հասկանալի լի, վոր թե կողեկտիվ և թե խորհրդալին տընտեսություններում մշակվող հողն առաջմ մեր ամբողջ հողի փոքր

աւան և կազմում։ Մինչեւ արժմ ահագին քանտկությամբ և յիշիոնավոր անհատական գլուղացիական տնտեսություններ իրենց բախտին թողնված, իրենց ձիով, իրենց փոքր գլուղատնտեսական ինվենտարով փորում են փոքրիկ հողամասը, մշակում են նրան նահապետական լիղանակներով և նրանցից աննշան բերք են ստանում։

Այդպիսի անհատական տնտեսատիրոջ հողը հաճախ չի տալիս մեկ լիբրորդը նրա, ինթե ալդ հողը մշակվեր ճիշտ լեզանակներով։ Չքավոր գլուղացին և ամենաթուլլ միջակները չեն կարողանում իրենց հողամասից կուշտ ապրուստ դուրս բերել։

Յեվ ահա, մեզանից ամեն մեկի մեջ կարող ե ալսպիսի հարց ծագել թե՝ կողեկարիվ անտեսությունը զարգացնելով մենք պետք ե միանդամալն մոռանանք անհատական տնտեսության տեր գլուղացուն—չքավորին և միջակին, չպիտք ե ոգնենք նրանց բարձրացնելու իրենց գաշտերի բերքատվությունը։ Այդպես չե, ի հարկին։ Մենք ալպիսի քաղաքականություն չենք բանեցնում և չենք ել քանիցին։

Մենք ալպիս չենք վարվի այն պատճառով, վոր վորքան շատ հաց արտադրվի լիբրում, այնքան ամբողջ լիբրին ընդհանուր առմամբ հարուստ կլինի։

Գլուղական տնտեսության դանդաղ աճումով դժվարանում և նաև արզունաբերության զարգացումը։ Հացի արտադրության մեծանալը լիբրում պետք ե ոգնի, վոր հայթայթման այնպիսի դժվարություններ չառաջանան, ինչպես վոր առաջացան 1958 թ. սկզբին և վորոնք պատճառ դարձան հացամթերման գործում գիմել արտակարգ միջոցների։ Բացի դրանից, բերքատվությունը պետք ե բարձրացնել նաև նրա համար, վորպեսզի գլուղատնտեսական մթերքներ արտահանենք արտասահման և վորպեսզի հնարավորություն ունենանք այնտեղից մեծ քանակությամբ մեզ անհրաժեշտ մեքենաներ և սարքավորում ստանալ։

Մենք պետք ե ոգնենք անհատական տնտեսատեր գլուղացուն—չքավորին և միջակին, բարձրացնելու իրենց տնտեսության բերքատվությունը և արդյունաբերությունը նաև նրա համար, վորովնետե Խորհրդային իշխանությունը հոգ և տառում գլուղացիության լայն աշխատավոր մասսաների բարեկեցության մասին։ Խորհրդային իշխանությունը կոիվ և մզում կուլակի ղեմ, վորը վոչ թե իր աշխատանքով, այլ ուրիշների քրտինքով և իրեն կապիտալ հավաքում, սակայն և Խորհրդային իշխանությունը միա-

ժամանակ մտահոգված ե նրանով, վոր չքավոր և միջակ գլուղացիները ներկալում ավելի լավ ապրեն, քան ապրում ելին առաջ:

Ահա, թե մենք ինչու յենք մեր առաջ խնդիր դնում—բարձրացնել զլուղացիական դաշտերի բերքատվությունը! Այդ գործն անհնարին չեւ: Չեւ վոր արտասահմանի շատ յերկրներում բերքը յերեք անգամ ավելի շատ ելինում, քան մեզանում: Յեվ ալդպես ե վոչ թե այն պատճառով, վոր այնտեղի զլուղացիների հսղն ավելի լավ ե, այլ այն պատճառով, վոր նրանք ավելի լավ են աշխատում, վոր նրանք տրակտորներ են բանեցնում, քիմիական պարարտանութեր գործածում, աշխատում են իրենց զլուղատնեմների զեկավարությամբ, համախ նրանցից խորհուրդներ են հարցնում և խիստ կերպով պահպանում են այդ խորհուրդները:

Կան մի շաբք միջոցներ, վորոնք առանց վորեն ծախսի կարող են բավականին բարձրացնել զլուղական տնտեսության բերքատվությունը:

Սերմերը յենթարկել ֆորմալինի թունավոր ազդեցության—ահա այդ միջոցներից մեկը:

Կանխահերկ—ահա յերկրորդ միջոցը:

Բոլորովին հրաժարվել արորից և ամեն տեղ փոխարինել նրան գութանով—ահա յերրորդ միջոցը:

Գլուղացիությանը գլուղատնեսի միջոցով ողնություն հասցնել—չորրորդ միջոց:

Այդ միջոցներից շատերը գործադրելն ենքան ել դժվար չեւ, իսկ դրանց գործադրելուց մեծ արդյունք կստացվի: Հյուսիսային կովկասում մոտերքս տեղի ունեցավ բերքատվությունը բարձրացնելու համագումար: Այնտեղ գուրս յեկան զլուղացիներ և ասացին, վոր այդ միջոցներից մի քանիսը կառավարությունը պիտք ե անցկացնի պարտադիր ձևով: Յեվ արդեն ինքնըստինքլան հասկանալի յեւ, վոր այդ միջոցները կիրառելու միջ մեծ ոգուտ կարող են տալ գլուղի կոմիերիսականները: Ազիտացիայի, նախաձեռնության միջոցով, իրենց սեփական տնտեսության որենքներով կարող են նրանք գլուղացիներին շատ շուտով շուռ տալ գետի հողը կուլտուրական յեղանակներով մշակելու կողմը:

Սակայն այստեղ միության յուրաքանչյուր բջիջի առաջ կարող ե կանգնել այսպիսի մեծ և բարդ մի խնդիր: Իսկ ի՞նչպիս վարվել այն կոմիերիսականների հետ, վորոնք անընդհատ բարելավելով իրենց սեփական անհատական տնտեսությունը, մտա-

ծել անգամ չեն ցանկանում մտնել կողեկտիվները։ Զե՞ վոր մեր միության մեջ կոմիերիտականների 80.000-ից ավելին—ինքնուրույն տնտեսատերեր են։ Յեղել են այնպիսի դեպքեր, վոր իրենց տնտեսությունն սկսել են կուլտուրական ձեռվ մշակել, և վերջացրել են նրանով, վոր դարձել են իսկական կուլակներ։ Մի կոմիերիտականի մասին տղաները «Փուրնալ կրեստանսկոյ մոլոդիք»-ում դրել են հետեւալը։

«Պոչինկովսկայա մարզի Սմոլենսկի գավառի լավագույն կուլտուրական—կոմիերիտականը համարվում է կոմիերիտական-տնտեսատեր Գուտմանը։

Կոմիերիտական դպրոցում քիչ թե շատ ուսում տոնելով, Գուտմանը լրջորեն անցավ իր տնտեսությունը բարձրացնելու գործին։ Անցավ բազմազատ սիստեմին, ճիշտ սերմափոխության, սկսեց ճիշտ կերպով պարարտացնել և մշակել հողը, և, իհարկե, ամեն բանում կատարելով գլուղատնտեսի խորհուրդները։

Կոմիերիտական բջիջը Գուտմանին ոգնում եր։ Այս տարի գարնանը բջիջի ժողովում լսվեց Գուտմանի հաշվետվությունը։ Նրան ցուցումներ և առաջադրություններ ելին արել ցանքը կատարել տեսակավորված սերմերով, կատարել տնտեսության արդյունավետության հաշվառում, անասուններին կերակրել նորմա-լով, անասունների բակն առաստաղել ու լուսավորել, նրա մեջ վենափլյացիա մտցնել, անասուններին կերակրել դանիական լի-դանակով, արմատապտուղների փորձեր կատարել Այդ բոլոր առաջադրությունները Գուտմանը կատարել եր հաջողությամբ։

Ներկայումս Գուտմանն ունի յերկու կաթնատու կով, ցեղադին ցուլ, յերկու ձի—հասարակ և ցեղադին։ Յերբ Գուտմանն սկսել ե անասուններին կերակրել նորմալով, կերի արժեքը կը ընակի չափով պակասել ե, իսկ կիթը 40 տոկոսով մեծացել ե։

Գուտմանը շատ արմատապտուղներ և ցանել—համարլա մի դեսատին։ Արմատապտուղների բերքը չեղել ե լավ—2.000 փութ։ Ներկայումս Գուտմանի անասուններն արմատապտուղներով ապահովված են այնպես, վոր ձմեռվա պահանջը բավարարելուց զատ, դեռ ավելանալու յին։ Գուտմանն առաջինն եր, վոր ալդ շրջանում սկսեց շարքացանով ցանք անել և ցանեց (ձրի) գլուղացիների արտերը, քանի վոր իրենք գլուղացիները չելին կարողանում շարքացան մեքենան բանեցներ։ Այսպիսով, նա ցանել և 4<sup>1</sup>/<sub>2</sub> դեսատին։ Բայց մենք կարծում ենք, վոր գլուղական տնտեսությունը բարձրացնելու՝ Գուտմանի լավ սկսած գործն իր

դարձակետին գեմ և առնում ամենավճռական մի խնդրի, թե  
մինչև ուր պետք է աճի ինտենսիվիստ-կոմիերիտականի, կուտու-  
րական-կոմիերիտականի տնտեսությունը:

Գուտմանն ունի ցեղային անասուն, վորը բացի իր տնտե-  
սությունից, կարող և ուրիշների անտեսությանն սպասարկել:  
Գուտմանի անտեսությունը միջակ անտեսությունից անցնում ե-  
նուր պետք է շարունակի աճել այդ անտեսությունը:

Մահմանափակվել նրանով, վոր նա գյուղատնտեսական և  
սպառողական կոռպերատիվի անգամ ե, չի կարելի: Գուտմանի-  
որինակելի անտեսությունը, նրա փորձը պետք և կազմեն գյու-  
ղատնտեսական կոլեկտիվի համար իրքի միջուկ, այն կորիկտի-  
վի, վորի կազմակերպման համար թե Գուտմանը և թե շրջանի-  
բոլոր կոմիերիտականները պետք և ինքնան բերեն իրենց ջանքե-  
րը: Մինչդեռ հողաշինարարության ժամանակ Գուտմանը նույն-  
իսկ ծպտուն չի հանում գյուղացիների առաջ հողաշինարարու-  
թյան կոլեկտիվ ձևերի մասին»:

Ցեղ Բնչ, արդարացի՛ յեն արդյոք աղաներն իրենց նամա-  
կով, թե վոչ: Անպայման արդարացի յեն Կուլուուրական-տնտե-  
սատեր կոմիերիտականն անպայման պետք և դաւնա կոլեկտի-  
վացման առաջամարտիկը, այլապես նա հետզհետե կսկսի իր կոմ-  
իերիտականի գեմքը կորցնել:

Անհատական գյուղացիական տնտեսությանը, չքավորներին-  
և միջակներին պետք և ողնել, վորպեսզի նրանք իրենց զաշակը-  
բերքատվությունը բարձրացնեն. այս պարտականությունն ըն-  
կում և վոչ միայն խորհրդային իշխանության, այլև գյուղի կոմ-  
իերիտության վրա: Բայց լուրաքանչյուր կոմիերիտական պետք  
և ձգափ իր տնտեսությունը միացնել և կոլեկտիվացնել գյու-  
ղացիների անտեսությունների հետ: Այսպես պետք և լուծի այ-  
խնդիրը լուրաքանչյուր կոմիերիտական քիջ և միության լուրա-  
քանչյուր առանձին անդամ:

#### ՀԱՐԵՄ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Պետք և արդյոք կոմիերիտականը բարելավի իր անհնա-  
կան օնտեսուրյունը:

2. Ինչումն եր Գուտմանի սխալը:

ԳՅՈՒՂԻ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԸ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ  
ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԴԱՐԲՆՈՑՆ Ե

Գյուղի կոմիերիտականները չեն կարող գյուղական տնտե-  
սության վերակառուցման վերաբերյալ իրենց ամբողջ աշխա-

տանքը կատարել, յիթե նրանք չունենան անհրաժեշտ գլուղաւանտեսական գրագիտություն:

Եսկ ինչպես պետք ե ձեռք բերել այդ գրագիտությունը: Այդ գործում կարող են ոգնության հասնել գլուղաւանտեսական խմբակները, վարոնց թիվը այս բովելիս գլուղում արդեն մեկ ու կես տասնյակ հազարից անցնում է:

Խմբակներում կոմիերիտական և անկուսակցական յիրիտասարդությունը սովորում է, թե ինչպես պետք ե բարձրացնել մեր յիրկիր գլուղական տնտեսության բերքարավությունը: Այդ գործում խմբակներին ողնության են հասնում գլուղաւանտեսները, զրքերն ու թերթերը, կա նույնիսկ հատուկ թերթ՝ «Сам себе агроном» անունով, վորը խորը թափանցել ե գլուղի կանքի ներարկ: Յուրաքանչյուր խմբակ ձգտում է ուսումնասիրել իր շըրջանի կամ իր ռարոնի առաջնակարգ կուլտուրական տնտեսությունների փորձը, վորպեսզի վորքան կարելի լի այդ փորձը լայնորեն տարածել: Գլուղացիների մեջ իր աշխատանքը խմբակը կատարում է յիրկու ճանապարհով: Նախ՝ պատմությունների, զրուցների, դասախոսությունների, գեկուցումների միջոցով, և յիրկորդ՝ ցուցադրման միջոցով: Լուրաքանչյուր խմբակ աշխատում է հիմնել մի փորձի անկյուն, վորով գլուղացիները կարող են սովորել, թե ինչպես պետք ե լավ աշխատանք կատարեն:

Խմբակները սովորաբար սկսում են փոքր բանից: Մի տեղ գոմն են տաքացնում, մի այլ տեղ նորմալով կովեր են կերակրում, մի յիրորդ տեղում փորձադաշտում և խմբակի անդամների տնտեսության մեջ արմատապուղներ են տնկում: Սակայն սկսելով փոքրից, խմբակն իր համառ աշխատանքով այնտեղ է հասնում, վոր շատ տեղերում արդեն շատ գլուղեր անցնում են բազմադաշտ սիստեմի:

Ել ավելի ողուած են տալիս կոմիերիտականներին և ամրող գլուղի յիրիտասարդությանը՝ գլուղաւանտեսական գիտություններ ստանալու գործում՝ գլուղի յիրիտասարդության զպրոցները, կամ ինչպես նրանց կրծատ ձեռվ անվանում են, գլուղի կոմիերիտաները: Ներկայումս արդեն այդ զպրոցների թիվը մոտենում է հազարի և լուրաքանչյուր տարի այդ թիվը մեծանում է Անցյալ տարի «Բեղնոտա» թերթը կազմակերպեց զպրոցների զննում: Ահա այդ զննության թղթակցություններից վերցրած մի քանի թվեր, վորոնք ցուցը են տալիս, թե ինչ ոգուած կարող են տալ այդ զպրոցները գլուղական տնտեսությունը վերակառուցելու գործում:

14 դպրոց, զբաղվելով հացանատիկների մաքրման գործով, մաքրել են 34.881 փութ հացանատիկ

23 դպրոց անսառուններ կերակրելու փորձ են կատարել 219 տնտեսության մեջ.

42 դպրոց բնակչությանը կերակրելու գործ են կազմակերպել 429 անգամ:

8 դպրոց տաքացրել են անսառունների 170 բակ.

7 դպրոց գլուղացիական տնտեսության մեջ հիմնել են 163 փորձահողամաս և մարզ.

5 դպրոց բազմադաշտ սիստեմի փոխադրել են 6 գլուղ.

18 դպրոց կազմակերպել են 24 գլուղատնտեսական միավորում.

16 դպրոց կազմակերպել են մեծահասակների համար 16 լի-րեկույան գլուղատնտեսական զասընթացներ.

12 դպրոց կազմակերպել են 21 լիկելալան.

4 դպրոց կազմակերպել են 11 խրճիթ-ընթերցարան և կար-միր անկյուն:

Իր գորության կարճ ժամանակվա ընթացքում գլուղի կոմ-յերիտը դարձել ե գլուղական տնտեսության վերակառուցման ամենաուժեղ գործիքներից մեկը. Սակայն, այնուամենայնիվ այդ դպրոցներն ունեն յերկու խոշոր պակասություն, վորոնց աչքա-թող չպետք ե անել:

Առաջին պակասությունն այն է, վոր դպրոցը քիչ, շատ քիչ ուշադրություն և դարձնում գլուղական տնտեսության կոլեկտիվաց-ման գործի վրա: Նաղեժդա կոնստանտինովնա Կրուպսկայան գրել ե մեկ անգամ, թե՝ «Գլուղացիական յերիտասարդության դպրոցը սովորողներին վոչ միայն պետք է իրերի պարզ գաղափար տա, վոչ թե նրանց ուժեղ ձեռքեր տա, այլ այդ դպրոցը պետք ե կըր-թի սովորողների կամքն այնպես, վոր նրանք ամեն բանում միա-սին և ընդհանուրի ոգտին գործեն, նա պետք ե նրանց ոժտի՝ վորքան կարելի լի մեծ թվով մարդկանց ընդհանուր աշխատանքի մեջ քաշելու կարողությամբ.. գլուղացի յերիտասարդության կանքը և պարապմունքներն այնպիսի հիմքերի վրա պետք ե դրված լինին, վոր կարելի լինի նրան սովորեցնել կուլտուրա-կան կոռպերատոր դառնալու»:

Յեկ իսկապես, դպրոցներում վոչ միայն գործն ալղպես չի դրված, այլ հաճախ յերիտասարդների պարապմունքների կոլե-կտիվացման վրա շատ քիչ ուշադրություն ե դարձվում: Յերիտա-

սարդներին չեն սովորեցնում, թե ինչպես պետք և գլուղացիական տնտեսությունը միացնել:

Գլուղացի լերիասարգության դպրոցների մլուս պակասությունն այն է, զոր ամեն ժամանակ չքավորների լերեխաներին չի հաջողվում այդ դպրոցներում սովորել:

Եերկու տարի առաջ դպրոցների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը ցուց է տվել, զոր ուսման ամրողջ և տարվա ընթացքում ավարտում են հարյուրից միմիայն 15-ը, և այդ ավարտողներն ել հենց միջակ և ունեսոր գլուղացիների վորդիներն են: Չքավորների վորդիների լերկու լերբորդն ուսման առաջին տարին թողել և դպրոցը և հեռացել:

Ինչու յե ալդպես լինում: Վորովհետեւ չքավորի վորդուն դժվար և հաճախել դպրոց, վորը շատ հաճախ գլուղից 7—8 վերստ հեռավորության վրա յե գտնվում: Ես ինչ ե, վոտնաման չկա, ես ինչ ե, հագուստ չկա. մեկ ել տեսնում ես ձմեռն անցավ, բայց նա բոլորովին չսովորեց:

Այդ զրությունից գուրս գալու համար պետք և դպրոցներին կից ստեղծել հանրակացարաններ և դպրոցներում սովորող չքավորների ու բարակների լերեխաներին զրամական ոգնություն ցուց տալ: Արդեն ներկայումս դպրոցների կիսին կից ստեղծված են հանրակացարաններ և այս տարի ոգնություն ստացող չքավոր լերեխաների թիվը մեծացել է: Սակայն չպետք և միայն հույսը պետության միջոցների վրա դնել: Տեղերում յուրաքանչյուր կոմիերիտական բջիջ կարող է թե նոր հանրակացարան ունենալ և թե թոշակառուների թիվը շատացնել, հարկավոր և միայն սեր և կամք ունենալ:

Ուրեմն, յեթե կոմիերիտ դպրոցը վերացնի իր այդ լերկու պակասությունները, յեթե նա ուշադրություն դարձնի կոլեկտիվացման վրա և նա ամրողովին մատչելի դառնա չքավորների լերեխաներին, այն ժամանակ նոր գլուղի կառուցողների համար իսկական գարենոց կդառնա:

Մենք մոտենում ենք մեր զրուցի վերջին: Մենք տեսանք, զոր գլուղի կոմիերիտականների առաջ բացվում և աշխատանքի մի անսահման հօրիզոն: Նրանց առաջ բացվում են՝ գլուղը սոցիալիստորեն վերակառուցելու, միլիոնավոր մանր-մունը գլուղացիական տնտեսությունները մեքենաների ոգնությամբ աշխատող խոշոր տնտեսություններ դարձնելու ամենալայն հնարավորություններ:

Արդ միավորումը պետք է գյուղին կերպարանափոխի. Աղքատությանը պետք է փոխարինի լիությունը. կեղտը և անգրագիտությունը պետք է ճանապարհ տան կուլտուրականությանը. խավար և ծխոտ ճրագին պետք է փոխարինի լիլիչի պայծառ լամպը. Այդ խնդիրն այնքան արժեքավոր, այնքան մեծ խնդիր է, վորի մասին վոչ մի կոմիերիտական կասկած ունենալ չի կարող. Յարկինն իրավացի չեւ Կարելի լի և անհրաժեշտ է, վոր կոմիերիտականն իր ամբողջ ուժերը, իր կամքը նվիրի գյուղի վերակառուցման գործին, գրանումն և նրա կոմունիտական պարտականությունը:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչով կարող ե գյուղատնեսական խմբակն ոգնել զյուղի կունկիսիվացմանը:

2. Ո՞ւմ յեվ ինչպես և պատրաստում զյուղի յերիտասարդուրյան գյուղը:

## ԳՅՈՒՂԸ ՅԵԿ ՔԱՂԱՔԸ

**ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ ՅԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՅԵՐԿԻՐ Ե**

Ամեն մի լերկում, վորոնց թվում նաև մեր ԽՍՀՄ-ում, ժողովրդական տնտեսությունը բազկացած է արտադրության լերկու հիմնական ճյուղերից—արդյունաբերական արտադրությունից և գյուղատնտեսական արդյունաբերությունից: Յեթե մենք մեր ժողովրդական տնտեսության այդ լերկու ճյուղերն իրենց մեծությամբ իրար հետ համեմատենք, մենք հեշտությամբ կնկատենք, վոր ԽՍՀՄ մեծ մասամբ հանդիսանում են իրքն գյուղատնտեսական մի լերկիր:

Խորհրդակին գլուզը 1928 թվին ուներ 121 միլիոն մարդ (զբանից հասակավորներ 65 միլիոն), վորոնց ճնշող մեծամասնությունն աշխատում եր գյուղական տնտեսության մեջ. իսկ քաղաքի բնակչության թիվը հասնում եր 26 միլ., վորից արդյունաբերության զանազան ճյուղերում (չհաշված ծառալողները) աշխատում ելին  $\frac{8}{1}/2$  միլիոն մարդ: Այսպիսով գյուղական տնտեսությունն ընդգրկում եր աշխատավորների մեծ մասը: Յեթե մենք վերցնենք արտադրված արտադրանքների արժեքը, արտեղ ևս գերակշռելու լի գյուղական տնտեսությունը: 1927—28 տնտեսական տարում\*) արդյունաբերությունը տվեց 9 միլիարդ ռուբլու արտադրանք, իսկ գյուղական տնտեսությունը՝ 11 միլիարդ ռուբլու: Այսպիսով, մեր լերկիրն ավելի շատ գյուղատնտեսական ապրանք է արտադրում, քան արդյունաբերական:

Արդեն այդ միքանի թվերը ցուց են տալիս, թե վորքան մեծ նշանակություն ունի գյուղական տնտեսությունը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության մեջ: Գյուղական տնտեսությունը Խորհրդակին Միության տասներկ միլիոն աշխատավոր բնակչու-

\* Տնտեսական տարին հաշվում են կտամբերի 1-ից մինչև մյուս հոկտեմբերի 1-ը:

թլան համար հանդիսանում ե իրբն գոյութիւն աղբուը: Արտադրելով 4 միջիարդ փթից ավելի հացահատկեղեն,  $2\frac{1}{2}$  միջիարդ փթից ավելի կարտոֆիլ, մոտ 2 միջիարդ փութ բանջարեղեն, միրգ և ալյն, նա զոչ միայն սննդամթերքով գլուղի բնակչութիւն կարիքն ե բավարարում, այլև բավարարում ե արդյունաբերութիւն մեջ աշխատող բանվորներին, Կարմիր բանակին և ամբողջ քաղաքակին բնակչութիւնը:

Մեր գյուղական տնտեսութիւն մեջ յուրաքանչյուր տարի արտադրվող սննդամթերքներն ամբողջովին ԽՍՀՄ-ի մեջ չեն սպառվում, ավելցուկների մի մասն ամեն տարի յերկրից արտահանվում ե արտասահման և փոխարինվում ե այնտեղ մեզ անհրաժեշտ ապրանքների, գյուղավորապես արգունաբերութիւն և գյուղական տնտեսութիւն համար անհրաժեշտ արտադրութիւն կործիքների հետ: Բացի զրանից, գյուղական տնտեսութիւնը տալիս ե արդյունաբերութիւն համար անհրաժեշտ հում նյութ (կաշիներ, կանեփ, գուշ, ճակնդեղ, բամբակ, ծխախոտ և այլն): Անապին թվով Փարբեկաները և գործարանները վերամշակում են գյուղատնտեսական հում նյութը, դրանով աշխատանք, հետեապես և ապրուսաի միջոցներ հայթալիքնով տասնյակ հազար բանվորների: Խորհրդակին իշխանութիւնը ձգտում է ապահովել գյուղական տնտեսութիւն հետագա աճութիւն ու զարգացութիւն:

#### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԻ

Գյուղական տնտեսությունն առաջ տանելու համար անհրաժեշտ ե իմանալ այն ուղիները, վորոնցով ժողովրդական տնտեսութիւն ալդ մասը կարող ե մեր յերկրում զարգանալ: Մեր ժողովրդական տնտեսությունն եկմենովին տարբերվում է այլ յերկրի ժողովրդական տնտեսությունից: Այդ յերկրների ժողովրդական տնտեսութիւնն բոլոր ճյուղերը—Փարբեկանները, գործարանները, գյուղատնտեսական փերմանները և ձեռնարկումները—կենտրոնացած են առանձին մարդկանց ձեռքերում: Մեզ շրջապատող յերկրների մեջ այդ մասնավոր մարդկանց թիվը համեմատած բնակչութիւնն մնացած մասի հետ, մեծ չե: Այդ մասնավոր մարդկի, կամ այդ մարդկանց միավորումները տնտեսությունը վարում են իրենց անձնական պատասխանատվութիւմը, վարում են աճանապես հարուսանալու նպատակով: Այդ յերկրների ժողովրդական տնտեսութիւնն մեջ բանվորների՝ կապիտալիստների զեմ ունեցած կովի հետ միասին մշտական կոիվ և տեղի

ունենում հակ առանձին ձեռնարկատերերի միջև։ Այդ կոփը կոչվում է մրցակցական կոխվ, մրցություն։

Կապիտալիստական լերկրներում, այն ամենը, ինչ արտադրվում և առանձին ֆարբիկաներում և գործարաններում, շուկայի և վաճառքի համար եւ Ազգ լերկրներում, գրել եւ լենինը, «գործարանատերը և արհեստավորը, կարվածաերն ու ունեոր զյուղացին արտագրում են այս կամ այն գործը, անասուն են բազմացնում և ցորեն են ցանում ծախելու և փող վաստակելու համար»։ Փողը կապիտալիստական լերկրներում հանդիսանում է իբրև գլխավորուժ։ «Փողի հետ փոխանակվում են մարդկալին աշխատանքի բոլոր և ամեն տեսակի արտադրանքը»։ Փողով կարելի յեւ գնել, ինչ ասես։ Փողով կարելի յեւ գնել նույնիսկ մարդուն, այսինքն, ստիպել չքավոր մարդուն աշխատել նրա համար, ով փողունի։ Առաջներում գլխավոր ուժը հողն եր, ով հող ուներ, թե ուժի տեր եր և թե իշխանության։ Այժմ գլխավոր ուժը դարձել է փողը, կապիտալը» (Լենին)։

«Փողի պատճառով,—գրում եր Լենինը հեղափոխությունից առաջ,—ներկայումս բոլորը միմյանց դեմ կատաղի կոխվ են մղում։ Ամեն մեկն աշխատում և հժան գնել, թանգ ծախել, մեկը մլուսից ուզում և առաջ ընկնել, վորքան կարելի յեւ ավելի շատ ապրանք ծախել, ապրանքի զինը ցցել, միմյանցից թաղցնել սպառման ձեռնոտու վայրը կամ ձեռնոտու առեսուրը»։ Փողի համար տեղի ունեցող այդ ընդհանուր մրցության մեջ ամենից ծանր դրություն և ստեղծվում մանր մարդկանց—մանր արհեստավորին մանր զյուղացու համար, նրանք շարունակ կանգնած են լինում հարուստ վաճառականի կամ հարուստ զյուղացու հետեւ։ Նրանք լերբեք վորեե պաշար չունեն, նրանց ապրուստն որական են, նրանք ստիպված են յուրաքանչյուր նեղության և դժվարության դեպքում իրենց վերջին ապրուստից զրկվել կամ աննշան գներով վաճառել իրենց լծկան անասունը։ Ընկնելով վորեե կուլակի կամ վաշխառուի ճանկը, նրանք քեչ դեպքերում են ազատվում նրանցից և մեծ մասամբ վերջիվերջո քայլալման են յենթարկվում... իսկ հարուստ մարդիկ գնալով ավելի յեն հարստանում փողի համար տեղի ունեցող այդ կովում»։

Կապիտալիստական լերկրներում ամեն մեկը կովում և բոլորի զեմ։ Այդ պայքարում անգամ կանգ չեն առնում իրենց հակառակորդին ավերելու, նցան ուղղակի կողոպտերու, հրդեհերու, նույնիսկ սպանելու առաջ։ Ժողովրդական տնտեսության մեջ

ալդ անդրադառնում և մի շարք աննպատակ և անպետք ծախսում-ների ձեռվէ:

Որինակ, բավական և ցուց տալ, վոր կապիտալիստական լերկրներում կապիտալիստները հարցուրավոր միլիոն ոռուրլիներ են ծախսում իրենց ապրանքները ոեկամի լենթարկելու և զովելու համար: Ժողովրդական տնտեսությունը համաչափ կերպով չի զարգանում: Ուժեղ կերպով զարգանում են արտադրության այն ճյուղերը, վարոնցից հաջողվում և մեծամեծ վաստակներ ըստանալ, և մի կողմ են զցվում կամ ուժեղ կրծատման են լինելարկվում այն արտադրությունները, վարոնցից քիչ ողուտ կա: Շահի լեռներից ընկնելով, կապիտալիստները և առևտնարակ առանձին ձեռնարկատերերն աշխատում են վորքան կարելի յի շատ ապրանք արտադրել, առանց նկատի ունենալու այն հանգամանքը, թե կարիք կամ արդյոք արդյան շատ արտադրել և առանց հաշվի առնելու այդ կարիքը: Ուստի և արտադրության մի շարք ճյուղեր ունենում են ապրանքների ավելցուկ, այդ ապրանքները գնողներ չունեն: Այդ ժամանակ հանգին թվով ֆարբիկաններ և զործարաններ են փակվում, բանվորները փողոց են շարուվում, ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացումը կանգ և առնում:

Այսպիսով կապիտալիստական լերկրներում ժողովրդական տնտեսությունը տարվում և առանց ընդհանուր հաշվառման, հիմնված փողի համար իրար միս ուտելու, ապրանքների սպառման և հում նյութի շուկա ձեռք բերելու կովի վրա: Ժողովրդական տնտեսության այզպիսի զարգացման հետ միասին մշտագիստեղի յեւ ունենում թուլիրի մասսական քայլքայում և աղքատացում և ուժեղների հարստության հանգին աճում: Ժողովրդական հանտեսությունը, վորց պետք և ծառայի լայն ժողովրդական մասսաների կենսական մակարդակը բարենրացնելուն յեվ բարելավելուն, կապիտալիստական յերկրներում զառնում և փոթրամասնուրյան համար հարստանալու աղբյուր, իսկ ժողովրդական մասսաների մեծամասնուրյան համար աղքատանալու յիշ բայցայվելու աղբյուր:

Մեր լերկրում, ԽՍՀՄ-ում, ժողովրդական տնտեսությունը կառուցվում և այլ ձեռվէ: Խորհրդային Միության արդյունարկությունը  $80^0/_{\circ}$ -ով,  $\frac{4}{5}$  -ով համբայնացված և, այսինքն առնված և մասսավոր եերերից յեվ զարգած և հանրային սեփականություն: Այդ հիմնովին փոխել և մեր ժողովրդական տնտեսության

կառուցումը, համեմատած կապիտալիստական լերկրների ժողովը՝ գական տնտեսության կառուցվածքի հետ Այդ պատճառով և մեր մոտ արդյունաբերական արտադրության բնագավառում զայլի չափով վոչնչացված են մասնավոր յեղանակով հարաս- տալու հետավորությունները։ Հանրայնացած արդյունաբերու- թյունը ծառայում է լայն աշխատավոր մասսաների, և վոչ թե առանձին մասնավոր մարդկանց կարիքներին Գյուղատնտեսա- կան արտադրության բնագավառում մեկը մյուսի հաշվին հարցու- տանալու արդեն հնարավորությունները դեռ ևս ավելի մեծ չափով դոյլություն ունեն, քան արդյունաբերության բնագավառում։

Թեև մեր լերկրի գլուղական տնտեսությունը գլխավորապես րազմացած և առանձին մասնավոր մանր և չնշին գլուղացիական տնտեսություններից, սակայն այդ տնտեսությունները կառուց- ված են արդեն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հասա- րակական սեփականություն դարձած, հանրացված հողի վրա, այնպիսի հողի վրա, վորը չի կարելի վոչ գնել և վոչ վաճառել։

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ նպատակ ե գնում իրեն կապիտալիստ, սեղծելով գործառնությունը։

2. Ի՞նչ ե նօանակում մրցում։

#### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդական տնտեսությունը հանդիսանում է իրքու մի բարդ սիստեմ և բարդ մեխանիզմ, վորի մեջ նրա առանձին մա- սերը պետք է լինեն համաչափ և ամուր կերպով մեկը մյուսին հարմարեցված։ Կապիտալիստական լերկրներում ժողովրդական տնտեսության մեջ այդ մեկ մասը մյուսին «հարմարեցնելը» կարող և անդի ունենալ վոչ այլ կերպ, քան յեթե ապրանք արտադրողների միջն տեղի ունեցող մրցության պարագա- րով, կրծատելով արտադրության այն ճնուղերը, վորտեղ քիչ ոգուտ և ստացվում և ընդարձակելով այն ճյուղերը, վորտեղ շատ ոգուտ և ստացվում։ Մեր լերկրում ժողովրդական տնտեսությու- նը կապիտալիստաների և կալվածատերերի ձեռքից խլված և լայն բանվորական մասսաների կարիքներին ծառայեցնելու համար։ Այդ հանգամանքն ստիպում է մեզ ժողովրդական տնտեսությու- նը կառուցել այնպիս, վոր նա ամենալավ ձեռվ, ամենամեծ չա- փով, աշխատանքի, ուժերի և միջոցների ամենափոքր վատնու-

մով բավարարի ալդ պահանջները, իսկ ալդ այնպիսի տնտեսավարություն և պահանջում, վոր կարելի լինի ժողովրդական տնտեսության զանազան մասերի միջն կազ հաստատել՝ պրոլետարական պետության կողմից ժողովրդական անտեսությունը դիտակցորեն զեկավարելու հիման վրա:

Ժողովրդական տնտեսության առողջ աճման հիմնական պայմանը հանդիսանում է նրա զանազան մասերի այնպիսի զարգացումը, իերք ըստ հանարավորության ավելի խիստ կազ և ստեղծվում ալդ մասերի միջն և ամրող ժողովրդական տնտեսությունը զարգանում և սոցիալիզմի ուղղությամբ: Որինակ, չե կարելի գուղական տնտեսությունն անջատել արդյունաբերությունից: Գյուղական տնտեսությունը և արդյունաբերությունը վոչ միայն սերտ կերպով միմյանց հետ կապված են, այլ մեկն առանց միուսի գոյություն ունենալ չի կարող, ժողովրդական տնտեսության ալդ մասերի զարգացումը պետք է լինի համաշափ:

Վերցնենք այսպիսի մի հասարակ որինակ: Ասենք, արդյունաբերությունն ու գյուղական տնտեսությունը միմյանցից անջատվեցին: Արդյունաբերությունն սկսեց կառուցել բամբակագործական ֆաբրիկաներ, իսկ գյուղական տնտեսությունն սկսեց ուժեղ կերպով արտադրել վոչ թե բամբակ, այլ վուշ: Գյուղական տնտեսության համար պահանջումն է գութան, գերանդի, իսկ արդյունաբերությունը դրանց արտադրությամբ չի զբաղվում, այլ սկսել և ահագին քանակությամբ կրկնակոշիկ և թուղթ արտադրել: Ի՞նչ կստացվի: Բամբակագործական ֆաբրիկաները կանգ կառնեն, քանի վոր բամբակ չկա, իսկ վուշը չսպառվելու պատճառով գյուղացու շտեմարաններում կփտի, ֆաբրիկայի պահստաները լիքը կլինեն կրկնակոշիկներով և թղթով, դաշտը չի կարելի մշակել, քանի վոր գութան չկա, իսկ անասունի համար ձմեռվա կերի պատրաստություն չի կարելի տեսնել, վորովհետեւ գերանդի չկա: Ահա, թե ինչ հետեանք կունենա, յերբ արդյունաբերությունը գյուղական տնտեսությունից անջատվի և գյուղական տնտեսությունը՝ արդյունաբերությունից: Ժողովրդական տնտեսության ալդ յերկու բնազավառը միմյանց հետ սերարեն կապված են և չեն կարող միմյանցից անջատվել, առանց իրարմեծ կամ համաշափ, այսինքն ժողովրդական տնտեսության առանձին մասերի աճումն ու զարգացումն այնպես պետք է տեղի ունենա, վոր ամրող ժողովրդական տնտեսությունը վորքան կարելի լե արագորեն առաջ գնա:

Վերցնենք մեր գլուղական տնտեսության մեջ հատիկի և հացի արտադրությունը՝ Արդյունաբերությունը մեր յերկրում աճում է։ Մեծանում է արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը։ Աճում է քսողաքի բնակչությունը։ Ընդարձակվում են տեխնիկական հում նկութ արտադրող և հացի պահանջ առաջադրող շրջանները։ Այդ բոլորը միասին առած մեծացնում են հացի պահանջը՝ իսկ հացի արտադրությունը զարգանաւմ և դանդաղ կերպով։ Դրա հետեւանքով ել պետական հացամթերությունները դանդաղում են, իսկ այդ գժվարություններն աշխատում են թշրիմին՝ կուրտին ու բուրժուան՝ ոգտագործելու։

Այնու տարի մեր յերկրում պետության և կոռոպերացիալի միջոցով մթերվող հացը քանի գնում, ավելանում եր և մանավանդ այս տարի։ Մինչդեռ հենց այս տարի մենք հացամթերման մեծամեծ գժվարությունների հանդիպեցինք։ Հացը չեր բավականացնում։

Պարզ է, վոր հատիկալին գլուղական տնտեսության զարգացումը արդյունաբերության և քաղաքի բնակչության աճմանը միանգամայն չի համապատասխանում, յերկրում ապրանքագին հացի արտադրության աճումը հացի պահանջի աճումից յետ և մնում։

Զպե՞տք ե արդյոք այստեղից այն լեզրակացությունը հանել, վոր արդյունաբերությունը մեր յերկրում չափազանց արագ և աճում։ Յեկ լավ չե՞ր լինի արդյոք նրա զարգացումը վորոշ չափով կանգ տռնել տալ, վորպեսզի գլուղական տնտեսությունն արդյունաբերության զարգացումից յետ չմնար։ Վոչ, յերբեք նախ չնայած վոր արդյունաբերությունն այդպես արագ տեմպով և զարգանում, չնայած վոր ապրանքային հացի արտադրության աճումը յերկրում (նույնպես և գլուղատնտեսական հում նյութի մի քանի տեսակների) չի հասնում հացի պահանջի աճմանը, այնուամենայնիվ յերկրում նկատվում ե ապրանքային սովոր, արսինքն այնպիսի գրություն ե տիրում, վոր յերկրում արտադրութող ապրանքները չեն բավարարում նրանում ունեցած ապրանքային պահանջը։

Արդյունաբերության զարգացման դանդաղեցումը միմիայն ապրանքների մեծ պակաս կառաջացներ, իսկ այդ ձեռնտու չե վոչ միայն բանվորների, այլև գլուղացիների համար։ Արդյունաբերության զարգացման թափի դանդաղեցումը կանգ առնել կտար նաև գլուղական տնտեսության զարգացումը, քանի վոր գլուղ-

կան տնտեսության զարգացումը սկըտ կերպով կապված ե գլու-  
ղատնահասական մեքենաներ, արակտորներ, արհեստական պա-  
րարտանյութիր արտադրելու հետ և այնու Արդյունաբերության  
զարգացման դաշտաղեցումն այդ կողմից ևս կհարվածեր գլուղա-  
կան տնտեսությանը: Վերջապես, արդյունաբերության արագ զար-  
գացումն ամերող միջազգային պայմանների հետեւանք և: Վոր-  
քան արագ և աճում մեր արդյունաբերությունը, այնքան ավելի  
է ամերանում ԽՍՀՄ-ի պաշտպանունակությունը, այնքան ավելի  
գժվարանում և կապիտալիստներին մեր գեն նոր պատերազմ  
սկսելը, թեև, ինարկե, մեր հաջողությունները նրանց մեջ ավելի  
ցանկություն են առաջացնում նորից գենքը ձեռքին Խորհուրդ-  
ների լիրկրի վրա հարձակվելու:

Գերոնիշյալ բոլոր պատճառների հիման վրա կասկած չկա,  
վոր լիրկրում ապրանքալին հացի արտադրության լեռ մնալը  
հացի պահանջի աճումից, պետք և վերացնել վոչ թե արդյունա-  
բերության զարգացման տեմպը գանդաղեցնելով, այլ լիրկրում  
ապրանքալին հացի արտադրությունը բարձրացնելով: այդ բարձ-  
րացումը կապված է ինչպես անհատական գլուղացիական տըն-  
տեսությունների զարգացման հետ, այնպես ել առանձնապես կոլ-  
տնտեսություններ, խորանականություններ կազմակերպելու միջո-  
ցով զարգացող խոշոր գլուղացնութեական արտադրության հետ,  
վորի մասին մենք խոսել ենք նախորդ զրուցներում: Մի այլ մի-  
ջոց—կըճատել արդյունաբերությունը կամ զանդաղեցնել նրա  
զարգացման տեմպը—կարող են միմիայն բանվորների և գլուղա-  
ցիների թշնամիներն առաջարկել:

Ճուղ տալու համար, թե ինչպիսի կապ գոյություն ունի  
արդյունաբերության և գլուղական տնտեսության միջև, վերցնենք  
նաև իրեն որինակ բամբակի արտադրությունը: Բամբակագործա-  
կան շրջաններն այնքան բամբակ չեն արտադրում, վոր բավա-  
րարի մեր թղթի արդյունաբերական կարիքներին: Սոտավորա-  
պես միմիայն արդյունաբերական կարիքի կիսին հազիվ և բա-  
վարարում մեր տեղական բամբակը: Մյուս կեսը մենք պետք ե  
ձեռք բերենք արտասահմանից: Իսկ այդ մեզ համար ամեննեին  
ձեռնտու չեն Մեր գլուղական տնտեսությունը կարող եր բամբա-  
կով ամբողջովին բավարարել մեր արդյունաբերության կարիք-  
ները: Յեվ քանի վոր այդ այդպես չե, քանի վոր գլուղական տըն-  
տեսությունը տալիս և բամբակի պահանջվող քանակի միմիայն  
50%՝, ուստի այն միջոցները, վոր մենք կարող ելինք գործա-

որել արդյունաբերության համար արտասահմանից մեքենայական սարքավորում ձեռք բերելու համար, մենք ծախսում ենք բամբակի վրա: Գյուղական տնտեսության մեջ բամբակագործական ձևողի զարգացած չլինելու պատճառով արդյունաբերությունը, նրա հետ նաև ժողովրդական տնտեսությունը, կրկնակի տուժում է, թե հում նկութը հերիք չի անում և թե փող և ծախսվում բամբակի վրա, առանց վորի զննման մեր զործն առաջ զնալ չի կարող: Բացի դրանից, մենք պետք ե շատ զգուշ լինենք թղթի արդյունաբերության հետագա զարգացման զործում, վորպեսզի այնպիսի զրության առաջ կանգնած չլինենք, վոր ֆարբիկաները շատ լինեն, իսկ նրանց համար հում նկութ չճարվի: Արտասահմանից զնումներ կատարելու մեր միջոցները սահմանափակ են, արդյունաբերության ընդարձակումը պահանջում ե հում նյութի նորանոր գնումներ կատարել իսկ փողը հերիք չի անում: Ուրեմն նոր ֆարբիկաներ կառուցելու համար զեռ պետք ե սպասել: Իսկ գերկում ապրանքային սով ե—չիթը և կառեղենը չեն բավականացնում: Ստեղծվում ե մի անելաննելի գրություն, վորից գուրս դալ կարելի յե զյուղական տնտեսության բամբակագործական ձևողը զարգացնելով և հասցնելով նրան թղթի արդյունաբերության զարգացման մակարդակին:

Այդ յերկու որինակով մենք տեսնում ենք, թե ինչպես արդյունաբերության զարգացումը կանգ ե առնում յեզ սայրախում ե, յերբ զյուղական տնտեսությունը զարգացած չի լինում: Մական մյուս կողմից արգյունաբերության անզարգացած լինելը հույնապես արգել ե հանգիստում զյուղական տնտեսության զարգացմանը: Գյուղական տնտեսության մեջ արտադրվում ե լուղ: Շատ տնտեսություններում այդ կատարվում ե տնալին չեղանակով — հասարակ խնոցով միջոցով: Իսկ յեթե վորեն աեղ կոռպերատիվներում կան լուղի փոքրիկ զործարաններ, նրանցում յեղած արտադրության տեխնիկան միանգամայն անպետք ե: Այդ զործարանները լավ կաթի գործիքներ, ամանեղեն և սաղցարաններ չունեն: Յուղագործարնեստավորները վորակապես ցածր են: Արտադրության մեջ զուղություն ունեցող մի շարք մանր տեխնիկական պակասություններն այն հետեանքն են ունենում, վոր մեր լուղը կեղտոտ ե լինում, աղը տեղը չի լինում, յատ զույն և մի շարք այլ վատ հատկություններ ե ունենում: Վերջիվերջո համաշխարհալին շուկալում մեր լուղի փութը դանիական լուղից 6—8 ոուրլի եժան և ծախվում: Իսկ իր ընական հատկություն-

Ներով մեր լուղն ավելի արժեքավոր է, քան դանիականը: Յուղագործության արդյունաբերության վատ զարգացած լինելու պատճառով գյուղական տնտեսության մեր լուղ արտադրող շըրջանները փթին 6—8 ոուրլի կորցնում են:

Վերցնենք մի այլ որինակ: Գյուղական տնտեսության զարգացումը պահանջում է գյուղատնտեսական արտադրության մերքենայացում, մասնավորապես պահանջվում է գյուղական տնտեսության մեջ մտցնել տրակտոր: ԽՍՀՄ ում տրակտորներ են արտադրվում միմիայն լենինգրադի «Կրասնի Պուտիլովեց» գործարանում: Այդ գործարանը տարեկան տալիս է 3 հազար տրակտոր, իսկ արակտորների տարեկան պահանջը հասնում է տասնյակ հազարների: Պարզ է, վոր ավյալ գեղագում արդյունաբերության անզարգացած լինելը դանդաղեցնում է գյուղական տնտեսության զարգացումը: Հասկանալի լի, վոր տրակտորների արտադրությունը պետք է հասցնել գյուղական տնտեսության պահանջի մակարդակին:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ մեր յերկրում հացը հերիք չի անում:

2. Ինչպես ե արգյունաբերության բույլ զարգացումը խանգարում գյուղական տնտեսությանը:

ՊԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՂԵԿԱՎԱՐ ՄԱՍՆ Ե

Այսպիսով ժողովրդական տնտեսության շահերն ամրող ջովին պահանջում են, վոր նրա առանձին մասերը գործություն ունենան և զարգանան համաշափ կերպով, միմյանցից չանցառվելով յեզ մեկը մյուսին լրացնելով ու ամրացնելով: Նույն անհրաժեշտ է ասել նաև ժողովրդական տնտեսության այլ մասերի վերաբերյալ, որինակ՝ տրակտորի: Յեթե մեր լերկում աճի ապրանքների արտադրությունը, սակայն տրանսպորտը չզարգանա, չմեծանա մեծ քանակությամբ ապրանք փոխադրելու հնարավորությունը, ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացումը կանգ կտոնի:

Ուստի մենք ձգում ենք մեր տնտեսությունը վարել նախապես հօգած ծրագրով: Գետական պլանալին հանձնաժողովը (Գետպլան) հաշվի լի առնում մեր ժողովրդական տնտեսության տարեկան արդյունավետությունը, հաշվի լի առնում լերկորի բնակ-

չութիւն կարիքները, պարզում ե, թե մեր ժողովրդական տնտեսութիւն վեր մասերում անհամաշխափություն և նկատվում և ալդ տվյալների հիման վրա վորոշում ե, թե ինչ ուղղությամբ պետք ե արածագրվեն միջոցները, ժողովրդական տնտեսության վո՞ր ճյուղերն ամրանալու կարիք են զգում, թնչալիս նոր ճյուղեր պետք ե կազմակերպվեն, վոր ճյուղերն առալժմ կարելի լի առաջ տանել առանց նրանց վրա միջոցներ վատնելու և այլն։ Մեր ժողովրդական տնտեսության պլանավորման այդ աշխատանքը պահաս զժվարությունների լի հանդիպում այն մասում, վորը վերաբերվում է արդյունաբերությանը։ Արդյունաբերությունը, ինչպես արդեն ասվեց, իր զգալի մասով պատկանում է պետությանը, բացի զբուանից, արդյունաբերության մեջ մենք բացառապես գործ ունենք խոչըն արտադրության հետ, ուստի ժողովրդական տնտեսության այդ ճուղն ավելի հեշտ և հաշվառման լինթարկել և հեշտությամբ և լինթարկվում պլանավին զիկավարման։

Նատ ավելի դժվար ե և բարգ 23 միջինանոց ցաք ու ցրիվ գլուղական տնտեսության հաշվառման գործը։ Ամեն մի մանր-մունը գլուղական տնտեսություն հաշվի առնել չես կարող Բացի դրանից, ժողովրդական տնտեսության այդ բնազավառում մեր զասակարգակին թշնամին—կապիտալիստաը անհամեմատ ավելի ուժեղ է, քան արդյունաբերության մեջ, և նա ձգտում է մեր հաշվինքը շփոթել և դարձնել իր ոգտին։ Ուստի գլուղական տնտեսության պլանավորման գործում պետք ե ոգտվել միջին հաշվինքերով (կլոր թվերով) և նրան ժողովրդական տնտեսության պլանավին զեկավարման ընդհանուր հունի մեջ քաշելու համար գործադրել ներգործելու կողմանակի միջոցներ։

Դյուղական տնտեսությունը պլանային յեղանակով դեկավարելու ամենակարեվոր միջոցներից և կոոպերացիան յեկ արգութարերությունը։

Վերը մենք ասացինք, վոր մեր լիրկում գլուղական տընտեսությունը գերակշող տեղ ունի և իր մեծությամբ արդյունաբերությունից անցնում եւ Սակայն այդ դեռ չի նշանակում, վոր գլուղական տնտեսությունը ԽՍՀՄ-ում զեկավար դեր է խաղում, վոր նա ժողովրդական տնտեսության առաջնորդող մասն եւ Մեր ժողովրդական տնտեսության մեջ առաջնորդող մաս և հանգիստում խօսոր հաթերայնացված (սոցիալիստական) արդյունաբերությունը։ Այդ արդյունաբերությունը մեր ժողովրդական տնտեսության հրամակովի դրության մեջ և և վճռական դեր է խաղում։

Արցյունաբերերության ուժը նրա մեջ է, զոր նա գերազանցութեա բաղկացած է խոռոր չեվ հզոր սնեսական ձեռնարկեանքից: Խոկ խոռոր չեվ հզոր սնեսասրբութեան առեվարի ժամանակ ուսւկայի միջոցով մանր սնեսասրբութեանը լենքարեկելով իրենց, դեկավարում են նրանց:

Խոկ ինչու ին խոշոր տնտեսություններն իրենց լենթարկում մանր տնտեսություններին: Ահա թե ինչու: Խոշոր տնտեսությունը գործադրում է մեքենայական աշխատանք, խոկ մեքենայական աշխատանքը ձեռքի աշխատանքից շատ ու շատ ձեռքնուու լի, ձեռքի աշխատանքից ավելի եժան և նստում: Արինակ 10 արակտորը 10 որվա ընթացքում վարում էն 403 հեկտար (370 դիմ) խամ տարածություն: Խոկ այդ նույն աշխատանքը կատարելու համար պահանջվում է 1000 ձի, 500 կրկնագութան: Գյուղի դարբինը մի կտոր պողպատից կացին և շինում 5—6 ժամվա ընթացքում, խոկ Ռւբալի մետաղագործական գործարաններում բազավուն պողպատից մեքենայորեն կացին պատրաստեն ընդամենը մեկ բոպե լի խլում, ալիսինքն այն ժամանակամիջոցում, յիրը գարբինը պատրաստում է մեկ կացին, մեքենան արտադրում է 300—360 հատ: Ահա հենց աշխատանքի այդ բարձր արտադրողականության, արտադրության մեծ եժանության մեջ և կայանում խոշոր արգյունաբերության զորությունը:

Խոշոր մեքենայական տնտեսության ուժն զգում է զոչ միայն մանր տնտեսությունը, այլև այն խոշոր տնտեսությունը, վորն աշխատում է վոչ թե մեքենայով, այլ ձեռքով: Վերցնենք, որինակ, յերկու տնտեսություն, վորոնցից մեկում աշխատանքը կատարում է արակտորի միջոցով շարժման մեջ զրված կալսիչ մեքենան, խոկ մյուսում այդ նույն աշխատանքը կատարվում է ձեռքով: Առաջին տնտեսության մեջ, վորոնց զործագրվում է տրակտորն ու կալսիչ մեքենան, աշխատում են 8 մարդ. Կրանցից մեկը պետք է հանենի տրակտորի աշխատանքին, յերկուսը պետք է հարդը քաշեն, յերկուսը պետք ե հացահատիկը վերցնեն և այն: 1 ժամվա ընթացքում նրանք կկալսեն չ00 փ. հացահատիկ: Յենթադրենք, թե բանվորներին հարկավոր և այդ ժամի համար վճարել 50 ական կոպեկ, ուրեմն ընդամենը կվճարվի 4 ոռուրի: 1 ժամվա ընթացքում տրակտորում վառվող նյութը և մեքենայի մաշվելը նստում է 6 ոռուրի: Ընդամենը 10 ոռուրի, այսինքն 1 փութ հացահատիկին ծախս ե ընկնում 5 կոպեկ:

Ալժմ տեսնենք, թե ինչ արժի այդ աշխատանքը ձեռքով կա-

տարելը: Մեկ ժամում 200 փութ հացահատիկ գուրս բերելունամար հարկավոր և 150 բանվոր, աշխատ լուրացանչուրին 50-ական կողեկ, ընդամենը 75 ռուրի: Դուրս բերված մեկ փութ հացահատիկը նաև 37<sup>1/2</sup> կողեկ:

Ազճմ լենթաղրենք, թե արդ լերկու տնտեսությունն ել հացահատիկն ուղարկում են շուկա վաճառելու: Նրանցից վորը կարող և ավելի եժան վաճառել հացահատիկը և ովակի ոգուտ կատանա: Պարզ է, վոր այն անտեսությունը, վորին կալսելը նատել և փիթին 5 կողեկ և վոչ թե 37<sup>1/2</sup> կոպ: Ահա այդ եժանուրյամբ ե, վոր խոօսու մենենայական սննդարյունները շուկայում իրենց են յենթարկում մանե սննդարյունները յեվ ձեռնով տէխատող խոօսու սննդարյունները: Շուկարում ամեն մեկն աշխատում և զնել ավելի եժան: Խոշոր մեքենայական անտեսությունը կարող և ավելի շուտ եժան ապրանք տալ և մեծ քանակությամբ: Իսկ մյուս տնտեսություններն ակամայից պետք և իրենց ապրանքների զները հարմարեցնեն այն զներին, վոր սահմանում են խոշոր անտեսությունները, պետք և հպատակին իոնշոր տնտեսությունների շուկայում ունեցած վճռական դրությունը:

Այս և ժողովրդական անտեսության մեջ խոշոր արզյունաբերության ունեցած վճռական զերի գլխավոր պատճառը: Արզյունաբերության զիլավոր ուժը մեքենայական արտադրությունն ու խոշոր անտեսությունն ե:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Ա. Ինչո՞ւ յե հարկավոր ժողովրդական սննդարյան համար միասնական ծրագիր (պահ):

Տ ինչո՞ւ յե արզյունաբերությունը հանգիսանում ժողովրդական սննդարյան առաջական առաջական:

#### Ի՞ՆՉՊԵՍ Ե ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ահա խոշոր սոցիալիստական արդյունաբերության այդ ուժն է, վոր Խորհրդային պետությունն ոդտագործում և զրուցական անտեսությունը ղեկավարելու և նրան պլանային ազդեցության յենթարկելու համար:

Ի՞նչ միջոցներով և կատարվում այդ աշխատանքը:

Այդ աշխատանքն ստիպմամբ և բարձրից հրաման տալու ու հրամայելու միջոցով չի կատարվում: Ճիմճական միջոցն այն է,

վոր պետք է ձգեմ սնանապես օհեագրզուիլ շավոր յեվ միջակ զյուղացիուրյանը եռանով, թե ոգաօվես յեվ նպատակահարմատ և զարգացնել զյուղանասնական արտագրուրյան այն նյուղերը, վորոնցով օհեագրզոված և արդյունաբերուրյունը:

Եր հերթին արդյունաբերուրյունը ծավալում յեվ ընդարձակում և արտագրուրյան այն նյուղերը, վորոնցով օհեագրզոված և զյուղական սնանասուրյունը:

Գլուղացու տնտեսական շահագրզովածության միջոցներից մեկը հանդիսանում է կոնտրակտացիան: Այդ կիրառվում և այսպիս Որինակ, վուշի արդյունաբերությունը կարիք ունի, վոր գյուղական տնտեսությունը ապահովի նրան վուշով: Վուշ արտադրող շրջաններում վուշամշակության արդյունաբերության ներկայացուցիչներն առանձին գյուղացիների և ամբողջ գյուղերի հետ վուշ մատակարարելու պայմաններ են կնքում: Ազգ պայմաններով գյուղացիները պարտավորվում են ցանել, իսկ արդյունաբերության ներկայացուցիչը պարտավոր ենթացած ամբողջ բերքը դնել համաձայն պայմանագրով վորոշված և պայմանավորված դների: Պայմանագրերը կնքվում են սովորաբար ցանքից առաջ պայմանագրով վորոշվում և վուշի ցանքալին տարածությունն ընդարձակել և գյուղացիներին ինաշխիք ապագա բերքի ցանքի ծախսերի համար կանխավճար (ավանս) և տրվում (փողի մի մասը տրվում է կանխապես): Այսպիսով կոնտրակտացիաի միջոցով միանդամայն ինքնակամ կերպով գյուղացիներն ընդարձակում են տեխնիկական մշակութների (կուտուրանների) ցանքալին տարածությունը նշված ծրագրի (պլանի) համաձայն:

Պլանային ազգեցության նույն նպատակին և ծառայում մթերութիւնների ժամանակ արդյունաբերության մթերող որդանների կողմից գործադրվող գների բաղաբանուրյունը: Գյուղատնտեսական հում նյութի արտադրության այն ճյուղերում, վորոնցում ցանքալին տարածությունն անբավարար ե արդյունաբերության համապատասխան ճյուղերի ծանրաբեռնման և զարգացման համար, գործադրվում ե մթերման գների բարձրացում: Այսպես, ընթացիկ տարվա (1928 թ.) աշնանից հացահատիկների արտադրությունն ընդարձակելու գործով գյուղացիությունը շահագրգու նպատակով գյուղատնտեսության հացահատիկների արտադրանքների գները բարձրացված են: Գյուղական տնտեսությունը պլանային ազգեցության յենթարկելու մի միջոց և հանդիսանում նաև արդյունաբերության միջոցով՝ գյուղատնտեսական

ինպինոտար և մեքենաներ ձեռք լերելու համար տրվող զանազան արտոնությունները Յենթաղբենք, թե բամբակագործական շրջանները հնարավորություն ունեն առաջին հերթին արտոնլալ պալաններով արակտորներ ստանալու։ Այդ արվում և այն նպատակով վորպեսզի զյուրություն տրվի այդ շրջաններում բամբակի հերթերն ընդարձակելու։ Նույն նպատակին և ծառայում արդյունարերության՝ գյուղական տնտեսության վորոշ ճյուղերին ցույց տրվող ուղղակի ոգնությունը Գյլարամբակկոմը միջին-ասիական, հանրապետությունների բամբակագործությամբ զրադվող զեկյաններին (գյուղացիներին) տալիս և ցանելու սերմեր, նրանց գաշտերը հերկելու համար տալիս և արակտորներ, բամբակը զտելու համար՝ բամբակագործիչ մեքենաներ և այլն։

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ե՞նչ և նօանակում կոնյակացիա յեզ ինչո՞ւ յե արդյունաբերությունը մացնում այն։
2. Ե՞նչ նօանակություն ունի գների բաղաբականությունը։

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀԱԳՐԳՈՎԱԾ և ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՄԲ

Այդպիսի միջոցներով և ապահովվում արդյունարերության գյուղական տնտեսության վրա ունեցած պլանային ազդեցությունը և այդպես և տեղի ունենում ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի զարգացումը, վորով ամենաարագ կերպով բարձրանում և ամրող ժողովրդական տնտեսությունը և վորը զարգանում և սոցիալիստական ուղղությամբ։ Ժողովրդական տնտեսության արագորեն առաջադիմելու գործով շահագրգոված են թե բանվորները և թե գյուղացիները։ Այդ գործում նրանց շահերը միջանց զուգացիպում են։

Վերցնենք մի որինակ։ Գյուղում ահագին թվով գործազրդություն կա թագնված (ինքրագործական գերբնակչություն)։ Այդ թագնված գործազրկությունն ստեղծվում և գյուղական տնտեսության՝ առանձին մասն և մունք տնտեսությունների բաժանվելով։ Մասն տնտեսություններում գործը կատարել կարող են 2—3 հոգի, իսկ ընտանիքի մյուս անդամներն ազատ են։ Գյուղը խստորեն շահագրգոված և, վոր ավելորդ բանվորական ուժն ոգտագործվի։ Այդ ուժը կարելի յե ոգտագործել արդյունարերության կամ գյուղական տնտեսության

մեջ: Ալդ չի կարելի անել արդյունաբերության մեջ, մենք հնարավորություն չունենք մոտակա տարիներում արդյունաբերությունն այնպես ծավալել զոր կարելի լինի նոա մեջ քաշել մի քանի միլիոն նոր բանվորներ: Դյուղական տեսեսության մեջ բանվորական այդ ավելուր ուժի ոգտագործումը յնվ կարելի լի, յնվ անհրաժեշտ: Պահանջվում է միմիայն տեխնիկական հում նյութ արտադրող ձևուղերը զարգացնել:

Գյուղատնտեսները հաշվել են, զոր հացահատկալին կուլտուրաներ ցանած 1 դեպատին հողի համար պահանջվում է տարվա մեջ 10-ից մինչև 30 մարդկալին բանվորական որ. 1 դեպատին կարտոֆիլը պահանջում է 60—70 որ, կանիփը և վուշը՝ մոտ 100 որ, մեկ դեպատին շաքարի ճակնդեղը՝ 100—120 որ, ծխախոտը և բանջարեղինը՝ 250-ական որ և այնու ծիշտ արդյունք էլ մի դեպատին հողի վրա ծախսված բանվորական ուժը, յերբ տընտեսության մեջ պահվում են մսացու խոզեր և ապրանք հանդիսացող կաթնատու անաստաններ, մի քանի անգամ ավելի լի, քանի անասնապահության սովորական սպառողական ընուլիթի դեպքում անտեսության մեջ: Ահա տեխնիկական մեծաշխատ կուլտուրաների զարգացման այդ ուղղությամբ պետք է ոստագործվի գյուղի ավելորդ բնակչության աշխատանքը: Ալդ զործի ողտավեառությունը գյուղացիության համար անվիճելի լի: Ալդ կուլտուրաները մեծ չափով զարգացնելը փոփոխության կենթարկեր լերկրագործության ամրող սիստեմը: Կփոփոխվեր ցանքաշրջանառությունը, լերկրագործության մեջ կմուցվելին շարքանիքը բուշակեր և խոտաբուշակեր: Ալդ առաջ կրերեր անասնապահության մեծացում: Իսկ ալդ ամրող կապահովեր գյուղական անտեսության բերքատվության, ապրանքայնության, հետեապես նաև արդյունավետության բարձրացումը:

Միենուն ժամանակ արդյունաբերությունը բավարար քանակությամբ նում նյութ ստանալով, կարող եր ավելի արագ կերպով զարգանալ և քաղաքից դեպի ֆաբրիկաներն ու գործարանները քաշել հազարավոր նոր մարդկանց: Մենք արտասահմանից յերեք հում նյութ չենինք ներմուծի, մենք հնարավորություն կունենալինք հացի փոխարեն արտահանել այնտեղ արդյունաբերական հում նյութ: Հում նյութը թանդ արժե, և մենք կկարողանալինք արտասահմանից շատ մեքենաներ ստանալ, վորոնցով կվերասարքավորելինք արդյունաբերությունը և գյուղական տընտեսությունը մեքենայացման կենթարկելինք:

Գլուղացին թէ իրը կը ուղատնտեսական մթերքներ ու հում-  
նկութ վաճառող, և թէ իրը արդյունաբերական ապրանքներ-  
գնող շահագրգոված և արդյունաբերութլան զարգացմամբ: Մեր-  
էրկրում կա ապրանքային սով: Արդյունաբերութլունը չի բա-  
վարարում արդյունաբերական արտադրանքների այն պահան-  
ջը, վորն առաջադրում և գլուղացիութլունը: Մասնավորապիս,  
զլուղացին պահանջում և մանուֆակտուրա, մետաղագործական  
ապրանքներ և նա մշտապես բավարար քանակով չի կարող ալդ-  
պիսի ապրանքներ ստանալ: Մեր լիրկրում ապրանքային սովն  
առաջացել և նրանից, վոր հեղափոխութլունը բարելավել և աշ-  
խատավոր զլուղացու կյանքի պայմանները, այն զլուղացու, վորը  
շնորհիվ ալդ պայմանների, արդյունաբերական ապրանքների մեծ  
պահանջ և անում: Հեղափոխութլունից առաջ զլուղացիները կաշ-  
վածատերերին կապալավարձ ելին տալիս 500 միլիոն սուբլոց  
ավելի մի գումար: Տասնյակ միլիոններ եր ծախսվում կալվածա-  
տերերից զնովող հոգերի համար: Ցարական կառավարութլունը  
զլուղացիութլունից  $1\frac{1}{2}$  միլիարդ սուբլոց ավելի տարեկան հարկ,  
սուբք և բաժ եր ստանում: Ցուրաքանչլուր տարի զլուղացիու-  
թլունը՝ դաշտերը կերցնելու, կալվածատերական անտառներից  
սունկեր և պտուղներ հավաքելու, անսասունների արտօնավայրերի  
և ջրաբրիների համար և այլն կալվածատերերին վճարվում եր  
100 միլիոն սուբլոց ավելի: Խորհրդակին իշխանութիւնն որոք  
կալվածատերական կողովուտը զլուղից իսպառ վերացված և  
Հարկերը խստարեն պակասել են: Ցեվ ներկայումս զլուղը տարե-  
կան  $1\frac{1}{2}$  միլիարդ սուբլոց պակաս պետական հարկ ու բաժ և  
սուլիս, քան տալիս եր նա կալվածատերերին և նրանց կառա-  
վարութլանը: Ահա զլուղացիների գրաններում մնացած ալդ  
 $1\frac{1}{2}$  միլիարդ սուբլուն, չհաշված խնայողութլունները, զլուղն  
արդյունաբերական ապրանքների լրացուցիչ պահանջ և առաջա-  
դրում: Իսկ մեր արդյունաբերութլունն ընդհանուր առմամբ առ-  
ալժմ զենևս նախապատերազմյան մակարդակից քիչ և անցել-  
ալդ պատճառով ել նա զենևս չի կարողանում բավարարել զլու-  
ղի աճած պահանջը: Գլուղացին, վորպես արդյունաբերական ա-  
պրանքների զնորդ, շահագրգոված և արդյունաբերութլան զար-  
գացմամբ:

Գլուղացին արդյունաբերութլան զարգացմամբ շահագրգոված  
և նաև՝ մի ալ կողմից: Արդյունաբերութլունը մեզ ժառանգու-  
թլուն և մնացել կապիտալիստներից իմպերիալիստական և քաղ-

քացիական պատերազմից հետու Նա պատերազմից առաջ և լ վաս  
եր սարքավորված, վորովհետև կապիտալիստները գերադասում  
ելին բանվոր զասակարգի վրա ունեցած ճնշումը մեծացնել, փո-  
խանակ իրենց ձեռնարկություններում կատարելազործված զաղ-  
գահ և մեքենա գնել Այդ վատ սարքավորման մեջքն և լ պատե-  
րազմը կոտրեց. ներկայումս նա հաճախակի կոտրտվում և և մա-  
սերի փոփոխություն, նորոգություն և պահանջում և այլն ժար-  
րիկաների և գործարանների շենքերը խարխրիլ են և նույն-  
պես կապիտալ նորոգություն և վերանորոգություն են պահան-  
ջում: Մաշված մեքենաները պետք և փոխարինել նորերով: Այդ  
բոլորը խիստ կերպով մեծացնում են արդյունաբերության ծախ-  
սերը և բարձրացնում են ապրանքների արժեքը: Արագ կերպով  
ապրանքների զները կարող են իշեն այն գեպերում միայն, յերե-  
մենք կառապահանք մեր արգյունաբերությունն արագ կերպով  
վերասարեավորել նորագույն կառարելազործված սարքավորու-  
մով, կառարելազործված զազգահներով յեվ մերենաներով: Սա-  
կայն արդյունաբերության տեխնիկական մակարդակի բարձրա-  
ցումը դանդաղում և այն պատճառով, վոր մեղնում մեքենաշի-  
նական արդյունաբերությունն ալիքան ել զարգացած չե, և մենք  
ստիպված ենք արտասահմանից մեքենաներ գնել, սակայն  
դրա համար մենք բավականաչափ միջոցներ չունենք: Բնական  
է, վոր մենք պետք և հոգ տանենք վորքան կարեիր յե արագ  
կերպով զարգացնելու մեր մեքենաշինական արդյունաբերու-  
թյունն ու նրա հետ կապված տնտեսության ճյուղերը (մետա-  
ղաքործություն և այլն), վորպեսզի զարգացնենք ծանր արդյուն-  
աբերությունը, առանց վորի արտադրության միջոցների ար-  
տագրության հիմքը գնել չես կարող և այդ կարևորագույն խըն-  
դրում չես ազատվի արտասահմանյան շուկայի կախումից:

Յեվ եթան ապրանքով շահագրգուված զուղը կատարելազես  
շահագրգուված չե միմիայն զյուղացու արդյունաբերության այն  
ճյուղերի զարգացումով, վորոնք արտադրում են զյուղացու սպառ-  
ման համար գործածության առարկաներ—չիթ, լուցկի, կաշվեղեն,  
շաքար, մակարոն, ալիքնքն արդյունաբերության այն ճյուղերը,  
վորոնք կազմում են թեթև արդյունաբերությունը:

Մեր յերկրում գոյություն ունեցող ապրանքային սովը տա-  
րածվում և նաև զյուղական տնտեսության համար անհրաժեշտ  
սարքավորման, ինվենտարի և մեքենաների վրա: Թեև մեր յեր-  
կրում զյուղատնտեսական մեքենաների և գործիքների արտադրու-

թրունը համեմատած նախահեղափոխության ժամանակի հետ ավելի քան լիբրու անգամ մեծացել ե, այնուամենայնիվ պահանջիրավականաշափ աճման հետևանքով նրանց պակասություն և զրացվում: Մեքենաշինական արդյունաբերության զարգացումը վոչ միայն ապրանքների և դրանց թվուր նաև գյուղատնտեսական ինվենտարի վների իջեցում և առաջ բերում, այլև առաջ երերում գյուղատնտեսական մեքենաշինական աճում, գյուղին ուժգնորեն մեքենա լի մատակարարում և գյուղական անտեսությունն արագ կերպով մեքենալայցման և լինթարկում:

Գյուղացիությունը թե՛ արդյունաբերական ապրանքների զներն իջեցնելու տեսակետից, թե՛ գյուղական տնտեսության արտադրողականությունը բարձրացնելու տեսակետից, թե՛ գյուղական տնտեսությանը գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ և այլն մատակարարելու տեսակետից և թե՛ ԽՍՀՄ-ի պաշտպանունակությունը բարձրացնելու տեսակետից նույնպես շահագրգույթ և ծանր արդյունաբերության զարգացմամբ (մետաղագործություն, մեքենաշինություն, ածուխ, նավթ, քիմիական արդյունաբերություն), շահագրգույթ և ԽՍՀՄ-ի ինդուստրացմամբ:

Արդյունաբերության աճումով անընդհատ բարձրանում ենրա կողմից գյուղատնտեսական հում նկութիւ վերաբերյալ արգողմատական պահանջը:

Այդ հում նկութիւ սպասումը մեծացնում և գյուղական տընտեսության շրջանառու միջոցները, հնարավորություն և տալիս, վոր գյուղական տնտեսությունն անընդհատ աճի և հետեւապես բարձրացնում և գյուղի լայն աշխատավոր մասսաների կյանքի մակարդակը:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ և նօանակում հողային զերբնակչուրյուն յեկ ի՞նչ-պես պետք է նրան վերջ տալ:

2. Վորո՞ն են մեր յերկրի ապրանքային սովի պատճեռը:

3. Ինչո՞ւ յե գյուղացին տակարգության արգյունաբերության զարգացումով:

#### ՊԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅԱՆ ԼՇԱԿՆ Ե

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր արդյունաբերության և գյուղական տնտեսության շահերը խիստ սերտ կերպով միմյանց հետ կապված են: Ժողովրդական տնտեսության մի ճյուղի զար-

դացումը, առանց մլուս ճյուղի զարգացման, անհնարին և Արդյունարերության զարգացումը, առաջ բերելով գլուղական տնտեսության զարգացում, նպաստում և գլուղի աշխատավոր բնակչության կանքի մակարդակի բարձրացմանը և կանքի պարմաների բարելավմանը: Յեզ ընդհակառակը — գլուղական տնտեսության զարգացումը, արդյունարերության զարգացման համար հաստատում և լուրջ բազա ստեղծելով, մեծացնում և բանվոր դասակարգի թիվը և նպաստում և նրա կյանքի պարմաների բարելավմանը: Արդյունարերության և գլուղական տնտեսության արդ փոխադրձ կապի վրա, յերկուստեք ունեցած նրանց փոխադրձ շահազրպավածության վրա յէ, վոր քաղաքի և գլուղի մեջ արդյունարերության և գլուղական տնտեսության մեջ և բանվոր դասակարգի և գլուղացիության մեջ շաղկապ և ստեղծվել: Գլուղը քաղաքի հետ շաղկապելու գործում զեկավար գերը պատկանում և խոշոր սոցիալիստական արդյունարերությանը նրա տընտեսական հզորությունը հնարավորություն և տալիս պլանային ագրեցության լենթարկելու առանձին ցաք ու ցրիվ գլուղացիական տնտեսություններին, կապելով նրանց զարգացումն արդյունարերության աճմար հետ: Կապիտալիստական յերկրներում արդյունարերությունը նույնպես առաջնորդող զեր և կատարում, ինչպես մեր լերկրում: Սակայն այնտեղ արդյունարերությունը գտնըվում և բուրժուազիայի ձեռքում, վորը խոշոր արդյունարերական տնտեսական ուժից ոգտվում և գլուղը կողոպտելու նպատակով իրեն լենթարկելու համար Կապիտալիստական յերկրում գլուղացին կեղեցման և լենթարկվում թէ վորպես արդյունարերական ապրանքների գնորդ, թէ վորպես գլուղատնտեսական հում նյութի և գլուղատնտեսական մթերքների վաճառող և թէ վորպես աշխատավոր:

Կապիտալիստական յերկրներում գլուղը տուժում և նաև վորպես արդյունարերության համար հում նյութի մատակարարող: Կապիտալիստները հում նյութը միասին գնելու համար ստեղծում են միություններ և իրար հետ պարմաններ են կապում: Նրանք հում նյութի արտադրության շրջաններն իրենց մեջ բաժանում են: Պարմանավորվում են միմյանց հետ ապրանքների դները մեկը մլուսից անկախ չըարձրացնել և այդպես համերաշխ ճակատով հարձակում են գործում գլուղի վրա: Նրանք չափազանց ցածր գներ են նշանակում: Յեթե գլուղացին չի համաձայնվում իր հում նյութը ծախել ցածր գնով և վորոշել և իր ապրանքը

բարձր գներով ծախելու համար արտասահման ուղարկել, միեւնունն և զրանից վոչինչ չի զուրս գաւ Արտասահմանի հետ տեղի ունեցող ամբողջ առեառը կատարվում և խոշոր կապիտալիստների միջոցով և նրանց վրայից անցնել չի կարելի: Գյուղացին գանգում և բուրժուազիալի ճանկերում և ստիպված և նրան իր հում նութե տալ այն գներով, վոր նա ին նշանակելը

Իր մթերման քաղաքականությամբ Խորհրդային պետությունն իրազործում և գների վորոշ քաղաքականություն: Պետությունը սահմանում և վորոշ զին, վորով նա հաց յեվ այս կամ այն տեսակի հում նյութ և գնում: Այդ գները սահմանվում են, ինչնելով ինչպես գյուղատնտեսական արտադրության տվյալ ճյուղի զարգացման շահերից, այնպես ել ամբողջ ժողովրդական տընտեսության զարգացման և բանվոր գասակարգի ու գյուղի չքափորների՝ միջակի հետ ունեցած դաշինքի ամրացման շահերից: Այդ գներն այնպես են սահմանվում, վոր մեկ կողմից նրանք ընդունելի լինեն գյուղացու համար, նպաստեն արտադրության տվյալ ճյուղի զարգացմանը, իսկ մուս կողմից նրանք արդյունաբերության ուժից վեր չլինեն և խոչընդու չհանդիսանան նրա զարգացմանը:

Պարզ և, վոր գների այդպիսի քաղաքականությունը միակ ընդունելի քաղաքականությունն և թե բանվորների տեսակետից և թե գյուղացիների (ինարկե, վոչ կուլակների) տեսակետից: Եթե գները խիստ ցածր լինեն և գյուղացիների համար բացարձակութեն անընդունելի, այդ առաջ կը երի գյուղական տնտեսության տվյալ ճյուղի կրճատում: Իսկ այդպիսի կրճատումը կհարվածի նաև արդյունաբերության համապատասխան ճյուղին: Կտուժի վոչ միայն գյուղացին, այլև բանվորը: Եթե զինը չափազանց բարձր և արդյունաբերության տվյալ ճյուղի ուժից վեր լինի, այդ կտահմանափակի արդյունաբերության գործունելությունը, վորով մեծ հարված կտանա վոչ միայն բանվորը, այլև գյուղացին:

Գյուղացին կապիտալիստական լերկրում շահագործվում և իրեւ աշխատավոր: Կողոպտելով գյուղացուն թե նրանից բան առնելու: և թե նրան վորեւ բան ծախելու ժամանակ, ընդության լուրացնում և նրա աշխատանքը: Նա վարկերի և ստրկական պարմաներով և այլն գյուղացուն ստրկացնում եւ Զարմանալի չե, վոր գյուղացիությունը կապիտալիստական լերկրներում մասսաներով քայլալվում և աղքատանում եւ Բուրժուազիան ոգտվում և խոշոր արդյունաբերությամբ՝ գյուղացուն կողոպտե-

լու, գյուղական տնտեսությունն ոգտագործելու իր շահերի համար: Ուստի կապիտալիզմի զարգացումը հսկայական անդունք ե բաց անում բաղադի ու գյուղի մեջ: Կուլտուրական բաղադին հակագրվում ե անգրագետ գյուղը: Գյուղական տնտեսությունը թեև զարգանում է, սակայն գնալով արդյունաբերությունից տվելի և ավելի լեռ և մնում: Դյուղի և քաղաքի միջն լեղած ալդ անդունզը խորտակել կարող է միմիայն սոցիալիզմը: Սոցիալիստական տնտեսության կառուցումը միմիայն հասարակության՝ դասակարգերի բաժանումը վոչչացնելը չե, վոր նախապատրաստում ե: Նա նախապատրաստում ե նույնպես վոչչացնելու գյուղի և քաղաքի միջն լեղած անդունզը:

Ուստի մեր յերկրում, ԽՍՀՄ-ում, արդյունաբերության և գյուղական տնտեսության մեջ աիրող փոխհարաբերություններն այլ են, քան կապիտալիզմի ժամանակ: Մեր ժողովրդական տընտեսությունը ծառայում է վոչ թե առանձին մարդկանց հարստանալու շահերին, այլ սոցիալիզմի կառուցման շահերին, աշխատավորների կարիքները լավագույն լեղանակով բավարարելու գործին: Այդ պատճառով ել մեր արդյունաբերության և գյուղական տընտեսության փոխհարաբերությունները հիմնված են մեկը մըուսին փոխագարձորեն ողներու վրա: Խորհրդային արդյունաբերության դեկավար դերն ոգտագործվում է պլանավին ազգեցության լինթարկելու գյուղական տնտեսությունը, նրան վերակառուցելու նպատակով: Նախորդ զրուցներում արդեն պարզվեց, վոր առանձին մանր ու մունք տնտեսություններից բաղկացած մեր գյուղական տնտեսությունը հանդիսանում է իրեւ սակավ արտադրող և սակավ արդյունավետ տնտեսություն, վոր չափազանց ցածր արդյունք տալով, աշխատանքի հսկայական վատնում և պահանջում: Նախորդ զրուցներում պարզվեց, վոր այդ հետամնացությունից գյուղական տնտեսությունը կարելի լի գուրս բերել միմիայն նրան սոցիալիստական ճանապարհի վրա կանգնեցնելով, միմիայն գյուղի չքավորներին և միջակներին սոցիալիստական յերկրագործության շինարարության մեջ քաշելով: Պետական արգյութաբերությունը հանգիսանում ե նայել այն լծակը, վորի ոգնուրյամբ գյուղական տնտեսությունը դա նգաղ ալդ ասին ասինանաբարար փոխագրվում ե սոցիալիզմի սելսերի վրա: Արդյունաբերության գյուղական տնտեսության վրա ունեցող ազգեցությունը մեր յերկրում բացի ալդ նպատակից, այլ նպատակ չի հետապնդում: Այդպիսի ազգեցություն ունենալով, մեր

արդիունարկրությունը ծառալում և գլուղի աշխատավոր բնակչության լայն մասսաների շահերին:

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչպես են կապիտալիստներն ոգևում արզյունաբերության՝ զյուղական սննդության համեմատությամբ ունեցած առավելություններից:

2. Ի՞նչ նպառակի յե ծառալեցնում Խորհրդային իօխանությունը պետքյունարեցության՝ զյուղական սննդության համեմատությամբ ունեցած առավելությունները:

---

## ՑԱՆԿ

### ԶՐՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ

Եջ

#### ՎԵՐԱԺՈՒՐՅՈՒՑ

Մեր խնդիրը — հասարակությունը սոցիալիստորեն կառուցելին ե . . . . .	5
Գլուղում խոշոր կոլեկտիվ տնտեսության անցնելը ԽՍՀՄ ինդուստրացումը . . . . .	8 13
Սոցիալիստական շինարարության թշնամիները . . . . .	15
Սոցիալիստական տնտեսության աճումը ԽՍՀՄ-ում Կուլտուրական հեղափոխություն . . . . .	19 22
Համեմ վորպես սոցիալիստական շինարարության գեկալար, իսկ կոմիերիտամիությունը իրրե նրա ող- նականը . . . . .	26

### ԶՐՈՒՅՑ ՑԵՐԿՎՈՐԴ

#### ՊՐՈԼԵՏԱԿԱՆ ԹԵՇԵԽՈՎՈՒՅՄԱՆ ԽԵՆԳԻՐԵԵՐԸ

Պատերազմն ավելից զբուղական տնտեսությունը . . . . .	30
Գլուղական տնահառության հետամնացությունը . . . . .	33
Գլուղական տնտեսությունը հեղափոխությունից առաջ . . . . .	35
Գլուղացիության քայլակումը . . . . .	37
Կուլտուրական աճումը . . . . .	39
Հոկտեմբերյան հեղափոխությունը և գլուղացիու- թյունը . . . . .	42
Հողը գլուղացիներին . . . . .	44
Գլուղացիության հավասարեցումը . . . . .	46
Ո՞վ եր հաց ծախում հեղափոխությունից առաջ . . . . .	47
Ապրանքային հացի քանակը պակասել ե . . . . .	49
Խոշոր տնտեսությունը մանր տնտեսությունից ա- վելի ձեռնառու լի . . . . .	53
Կարմղ և արդյոք գլուղացին իր տնտեսությունը բարելավել . . . . .	55
Խորհանտեսություններ . . . . .	58

## ԶՐՈՒՅՑ ՑԵՐՌՈՐԴ

Եջ

Չըսավորը, միջակը և կուլակը . . . . .	60
Խորհրդավին գյուղի չքավորը, միջակը և կուլակը . . . . .	62
Բանվորների և գյուղացիների դաշնոքը . . . . .	69
Կուլակները գյուղի սոցիալիստական վերակառուց- ման ամենավոխերիմ թշնամիներն են . . . . .	72
Աշխատավոր գյուղացիությունը գյուղը վերակառու- ցելու գործում հանդիսանում և բանվոր գասա- կարգի գաշնակիցը . . . . .	75
Պայքար կուլակի դեմ և ոգնություն չքավորներին Խորհրդավին իշխանության ոգնությունը չքավորնե- րին և արտանությունները միջակներին . . . . .	77
Ի՞նչպես են խորհանտեսություններն ոգնում գյու- ղացիությանը . . . . .	79
Կոլեկտիվացումը — գյուղական տնտեսությունը բա- րելավելու ամենաճիշտ միջոցն է . . . . .	83
	85

## ԶՐՈՒՅՑ ՑՈՐԾՈՐԴ

Կոռպերացիան գյուղը վեպի սոցիալիզմ և անող ուղին և

Դեպի գյուղական տնաենության բարձրացումը տա- նող ուղին անցնում և կոռպերացիայի միջով . . . . .	87
Ի՞նչպես և կոռպերացիան վերակառուցում գյուղը . . . . .	91
Դյուղի սոցիալիստական վերակառուցման մեջ կոռ- պերացիայի ունեցած դերը . . . . .	93
Կոռպերացիայի թերությունները . . . . .	101

## ԶՐՈՒՅՑ ՀԻՆգԵՐՈՐԴ

Կոմյերիօմիությունը կաւսակցութան ոգնականն և գյուղի վե-  
րակառուցման գործում

ՊՄտք և արդուք գյուղից վախչել . . . . .	104
Կոլտնտեսությունները գյուղը վերակառուցում են . . . . .	108
Կոմյերիօմիությունը գյուղական տնտեսության կո- լեկտիվացման առաջամարտիկն է . . . . .	112
Փոքը գործից մի խորշիր . . . . .	116
Կոմյերիօմիությունը խորհանտեսություններ կա- ռուցելու մեջ . . . . .	120
Կըկնապատկել գյուղական դաշտերի բերքատվու- թյունը . . . . .	122
Դյուղի լերիտասարդության դպրոցը նոր գյուղի կա- ռուցողների դարրնոցն է . . . . .	126

Մեր լերկիրը լերկրագործական լերկիր և . . . . .	121
Ժողովրդական տնտեսությունը կապիտալիզմի ժամանակ . . . . .	132
Արդյունաբերություն և գյուղական տնտեսություն Պնտարդյունաբերությունը ժողովրդական տնտեսություն զեկավարման մասն և . . . . .	135
Ինչպես և արդյունաբերությունը զեկավարում գյուղական տնտեսությունը . . . . .	140
Գյուղացիությունը շահագրգոված և արդյունաբերության զարգացմանը . . . . .	143
Պնտարդյունաբերությունը մեր լերկրի սոցիալիստական վերակառուցման լծակն և . . . . .	145
	149


---



5. Վորպեսպի կարելի լինի խմբակի անդամներին լրագիր կարգակ սպորտիցնել և իր աշխատանքում ընդուագործել այն տեղեկությունները, վար լրացիրը զարգում և, անհրաժեշտ և հանձնարարել խմբակի անդամներին հաջորդ զրուցի համար նյութեր, հավաքել վոչ միայն տեղական կունքից, այլև թերթերից:

6. Վորպեսպի կարելի լինի ստուգել, թե խմբակի անդամներն ինչ չափով են լուրացը կարգացած զրուցի զիմանքոր միտքը, լուրաքանչչուր զրուցի վերջում զրված են հարցեր, վորոնց պետք և պատասխանել Ամենից լավ և ընդունել հարցերին պատասխան տալու հետեւալ կարգը, հարցը բարձր կարգացվում է, խմբի անդամները նրան հերթով պատասխանում են, այդ պատասխանները քննության են տանիքում և վերջն այլ հարցի համար ընդհանուր պատասխան և մշակվում: Այդ պատասխանը հարցի հետ միասին զրվում և պարագաների արձանագրության մեջ, իսկ խմբակի լուրաքանչչուր անդամ զրում և իր տեսրակում:

Խմբակի անդամներն իրենց ձեռք բերած զիմելիքները պետք եւ աշխատեն իրենց գործնական աշխատանքում կիրառել: Դրա համար լուրաքանչչուր պարագաների վերջում պետք և խմբակում քննել այն խնդիրը, թե ինչ կարող ե ըջիջն անել իր աշխատանքի այս կամ այն բնագավառը բարելավելու համար:



ԳԱԱ Համարար Գիլ. Գրադ.



FL0003120

A II  
23797



ԳԻՒԼ 70 ԿՈՊ.

464.